[illegible]

[illegible]

891.99
Ե-40

1911

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Կուլտուրա», Վելեամինովսկայա, 18.
1911

1440
19 NOV
891·99
G-40

91·99
-40

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Կուլտուրա" Վելեամինովսկայա 18.
1911

10.07.2013

46222

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
УССР-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

9 647-43

I

189* թուի մեծ պասի նախավերջին շաբաթն էր, օրն երկուշաբթի, ապրիլ ամսի տաք, հիանալի մի օր։ Փոքրիկ եկեղեցու սպիտակ ներկուած պատի տակ, տախտակի նեղ նստարանի վրայ, նստած էին մի պառաւ և մի նորատի կին։ Նրանք սպասում էին ճաշի ժամերգութեանը։ Հագուստներից երևում էր, որ նրանք պատկանում են հարուստ դասակարգի։ Պառաւը հագնուած էր Թիֆլիսցի կնոջ տարազով, նորատին՝ եւրոպական։ Նրանք հարս ու սկեսուր էին։

Պառաւի գլուխը ծերութիւնից շարժւում էր անդադար կամ վերևից ներքև, կամ ձախից աջ, — կարծես «այո» կամ «ոչ» էր ասում,—և աչքերը ջրակալում էին շարունակ, թէև արտաքուստ նա շատ էլ ծեր կնոջ տպաւորութիւն չէր թողնում։ Բարութիւնն ու միամտութիւնը կաթում էր նրա փափուկ դէմքի ամեն մի խորշոմից, և այդ դէմքը մի

տեսակ բութ-պայծառ արտայայտութիւն ունէր։

Հարսը կըլինէր մօտ քսան-քսաներկու տարեկան։ Սկեսրոջ կողքին նստած՝ ամբողջ գլխով և ուսով բարձր էր նրանից։ Փետրազարդ և ծաղկազարդ փեղոյրի շրջապատն այնքան լայն էր առջևից, որ արևի տակ ստուեր էր ձգում նրա նիհար դէմքի վրայ քթից վերև։ Նա կատարեալ գեղեցկուհի էր, այն ուրոյն գեղեցկուհիներից, որոնց դէմքն առաջին իսկ անգամից խորապէս տպաւորւում է դիտողի հոգու մէջ և ինչ-որ քնած լարեր է շարժում այնտեղ մաքուր ու մելամաղձիկ, ինչպէս տեսքը սգաւոր գեղեցկուհու։ Անհագին թերթերունքների տակ պատըսպարուած նրա սևորակ աչքերը նայում էին կարծես թէ անդունդից և այնպիսի մի թախիծով, որ կարծես թէ նրա հետ ծնուել, նրա հետ էլ պիտի մեռնէր։ Նա հագնուած էր ինտելիգենտ կնոջ պարզութեամբ ու ճաշակով և նստած էր շիտակ՝ նեղ նստարանի ծայրին, ըստ երևոյթին զգուշանալով, որ եկեղեցու պատի սպիտակ ջրաներկը չկպչի մէջքին։

Երկինքը բարձր էր, շատ բարձր և իր բարձրութիւնից նայում էր ներքև բաց-փիրուզի անփայլ կապոյտով։ Արևի ճառագայթները հուրհրատում էին եկեղեցու և զանգակատան կաթուղիկէների եռանկիւնիները ծածկող արծաթագոյն թիթեղների մէջ։ Հարևան խար-

խուլ տան կտրան ծայրին, նորաբոյս առատ կանաչի մէջ կանգնած էր հագիւ մի ամսական սպիտակ մի գառ ականջները սուր ցցած, նայում էր դէպի եկեղեցու բակը, մայում էր յամառօրէն, և նրա սուր ձայնը զիլ արձագանք էր տալիս գարնանային պարզ օդում։ Ծտերը խմբովին թևերի ամբողջ թափով շեշտակի գալիս նստում էին բակի մէջ տընկուած հակակի ծառերի վրայ, ճւճւում-ծլլում էին արևի ճաճանչների տակ պծծին-պծծին տուող մատաղ տերևների մէջ և յանկարծ, կարծես մի ազդանշանով, պոկ էին գալիս բոլորը միասին ու կորչում օդի մէջ եկեղեցու վրայով կամ կողքերով։ Օդը շարժւում էր անդադար ինչ-որ անհանգիստ հունչով— մերթ սառն, մերթ տաք։ Այդ՝ ձմեռն էր, որ իր օրհասի վերջին շունչն էր փչում, և գարունն էր, որ իր տաք շնչառութեամբ բնութեան վերածնութիւնն էր աւետում։

Եկեղեցին գտնւում էր քաղաքի աղմկալի կենտրոններից հեռու, և բակում հանգուցիչ անդորրութիւն էր տիրում։ Բակն երեք կողմից շրջափակուած էր տներով, իսկ չորրորդ կողմը, զանգակատան ետևը, մի փոքրիկ ձոր կար, որը ծառայում էր աղբանոցի տեղ։ Այդտեղ քջուջ էր անում ժամկոչի թխսկան հաւը ձուից նոր ելած իր բազմաթիւ ճուտերով, իսկ աքաղաղը, չափազանց ծանրաշարժ ու բրդոտ ոտներով, կանգնած էր աղբանոցի ծայրին հպարտ ու յանդուգն և իր

տաղջ թօքերի ամբողջ ուժով ծուղրուղու էր կանչում, արձագանք տալով յայտնի չէ որտեղից, բայց շատ հեռուից լսուող մի ուրիշ ծուղրուղուի, որին նա ուշի-ուշով ականջ էր դնում իր ամեն մի կանչից առաջ։

Կամաց-կամաց հաւաքւում էին ժամաւորները—մեծ մասամբ կանայք և մեծ մասամբ պառաւներ։ Նրանք մտնում էին բակը հանգիստ քայլերով, երեսները խաչակնքում էին անկանոն, համբուրում էին եկեղեցու դուռը և, որովհետև դեռ վաղ էր, ցրւում էին արևի ախորժելի ջերմ ճառագայթներով ողողուած բակում։

Բակը մտաւ մի զառամեալ ծերունի՝ կոլոլուած ձմեռուայ խիստ խունացած վերարկուի մէջ, որի մաշուած փեշերի ծայրերից տեղ-տեղ դուրս էր պրծել դեղնած սպիտակ բամբակը։ Ծերութիւնից երկուտակուած էր այն աստիճան, որ վերարկուի փեշերն առջևից գրեթէ քսւում էին գետնին, իսկ ետևի փեշը տարօրինակ կերպով բարձրացել և երեւան էր հանում նրա չորիկ-մորիկ ոտները, որոնցից մէկի վրայ բարակ շալուարի պատառոտուն տոտը մտել էր կիսակօշկի՝ հնութիւնից լայնացած ճտի մէջ։ Կարճ ձեռնափայտին դիմհար տալով, նա մօտեցաւ եկեղեցու դռանը, գլխարկը վերցրեց, երեսը խաչակնքեց երեք անգամ երկարատև ընդհատումներով, յետոյ ծանրօրէն նայեց այս ու այն կողմը իր սպիտակախառն թաւ յօնքերի

տակից, և նրա ցրուած հայեացքը կանգ առաւ եկեղեցու պատի տակ նստած երկու կնոջ վրայ։

— Ջաքա՞ր,—կանչեց այդ կանանցից պառաւը, իր ջրակալ ժպտուն աչքերով նայելով նրան և գլուխը շարժելով վերևից ներքև։ Նրա ձայնը նմանում էր կոտրուած և կոծկուած ամանի ձայնի։

Ծերունին գլխարկը կամաց ծածկեց և մօտեցաւ նրանց։

—Օսա՞ն... Մանէ՞... Աչքս չի կտրում, չճանաչեցի։ Բարի օր ձեզ։

Մանէն իր և սկեսուրի միջև տեղ բաց արեց և հրաւիրեց ծերունուն, որ նստի։

Ծերունին նստեց։

—Ժամ էք մանգալի՞,—հարցրեց նա։

—Հա, ուզում եմ շաբաթ օրը հաղորդուի, —ասաց Օսանը։

—Ղազարոսի յարութեան օրը։ Լաւ է։ Բաց պատարագ է։ Բաց պատարագին հաղորդուելը լաւ է։ Աստուած ընդունելի անի։ Դու է՞լ, Մանէ,—դիմեց ծերունին նորատի կնոջը։

—Ոչ,—պատասխանեց Մանէն մի քիչ շփոթուելով և իսկոյն աւելացրեց.—բժիշկն ինձ արգելել է պաս պահել։

—Վնաս չունի,—նկատեց ծերունին մեղմօրէն։—Պաս ուտելը մեղք չէ. երբոր ստամոքսը չի վերցնում, մեղք չէ։ Մեղքը վատ գործն է, վատ խօսքն է։

Ծերունին սկսեց հարցուփորձ անել իր բարեկամների առողջութեան մասին։

—Մենք լաւ ենք,—ասաց Օսանը։—Դու ոնց ես։ Քանի ժամանակ է մեր կողմը չես անցկենում։

--Է՜, Օսան, ինձ էլ կասե՞ն ոնց ես,—արտասանեց Զաքարը ծերունիներին յատուկ անտարբեր դժգոհութեամբ։—Քարշ եմ գալիս, էլի, սրա-նրա դռանը աղքատ Ղազարոսի պէս, մինչև որ տեսնենք՝ երբ է Աստուած հոգիս առնում։ Բեզարել եմ, Օսան, շատ եմ բեզարել. ձեզ խօ բեզարացրել եմ ու բեզարացրել։

—Ի՞նչ բեզարացրել, ի՞նչ ես ասում։

—Չէ, Օսան, ես գիտեմ՝ ինչ որ ասում եմ։ Հոգի ունեմ Աստծուն տալու, ուղիղը պէտք է ասեմ։ Որդիդ, Գրիգոր Սերգէյիչը, շատ պատուական, շատ աղա մարդ է, շատ նեղ օրերիս է վրայ հասել, անչափ շնորհակալ եմ, բայց... մինչև ե՞րբ, ի՞նչ պարտական է...

—Այդ մի՛ ասիլ, Զաքար, այդ մի՛ ասիլ,—մեղմօրէն կշտամբեց նրան Օսանը, և նրա անդադար շարժուող գլուխը մի րոպէ կանգ առաւ։—Ինձ ասեցիր, նրան չասես. շատ կընեղանայ։

Ծերունին նայեց կողքին նստած Մանէին։

—Եկել է՞ Գրիգոր Սերգէյիչը,—հարցրեց նա։

—Ոչ,—պատասխանեց Մանէն։

Ծերունու գլուխը կախ ընկաւ ձեռնափայտի գլխին դրած ձեռքերի վրայ։ Կարճ ժամանակ նա լռում էր թախծալի մտախոհութեամբ։

—Ասում ես՝ մի ասիլ, Օսան,—խօսեց նա, կարծես, ինքն իրեն։—Ախր ո՞նց չասեմ։ Ես էլ որ չասեմ, բաս ո՞վ ասի։ Ես էլ որ չասեմ, քարերը կըբղաւեն, ոնց որ ասուած է աւետարանի մէջ։ Ես մի աղքատ, անտէր-անտիրական մարդ՝ ձեռից-ոտից ընկած... գիտե՞ս, թէ նրա բարի հոգով տուած մի քանի մանէթն ինչ արժի ինձ համար... Կար ժամանակ,—գիտես, էլի,—ես էլ շատ հազարներ էի խաղացնում ձեռումս... առնում էի, ծախում... փողը ջրի պէս էր գալիս ու գնում։ Գդակս ծուռ դրած՝ ոչ ցաւ ունէի, ոչ դարդ. կարծում էի, թէ աշխարհն իմս է... Բայց հիմի՞... ի՞նչ եմ. — մի աղքատ Ղազարոս. մտիկ եմ տալիս, թէ ո՛ր հարստի սուփրէն են թափ տալիս, որ գնամ շների հետ,—մեղա՜յ քեզ, Աստուած,—փշրանքները հաւաքեմ ուտեմ... Փող էլ ունէի, տուն էլ ունէի, կնիկ, որդիք... ամեն բան ունէի, ոչինչ պակաս չէր, բայց... ամեն բան էլ գնաց ձեռիցս, ամեն բան, ոչինչ չմնաց, ու մենակ ես մնացի Յովբ Երանելու պէս, որ ասեմ՝ փառք, հազար փառք քեզ, Տէ՛ր, դու տուեցիր, դու էլ առար. երևի մի մեղք ունէի, որ ինձ պատժեցիր։

Ծերունին աչքերը բարձրացրեց դէպի երկինք և կարճ ժամանակ մնաց այդպէս լուռ

ու խորհրդաւոր. նրա շրթունքները ցնցւում էին կամաց, լուռ աղօթողի պէս։

Մանէն կողքից նայում էր նրա կեռ քթին, աչքի վրայ առիւծի ճանկի պէս խոնարհուած թաւամազ յոնքին, հին մագաղաթի պէս չորացած ու ճաքճաքած այտին և զգում էր, որ չափազանց խղճում է այդ թշուառ, անզօր ծերունուն։

—Բայց որդիդ, Օսան, Գրիգոր Սերգէյիչը, գնում է այն ճանապարհով, որ Տէրն ինքն է ցոյց տուել,—շարունակեց ծերունին, ցուցամատը բարձրացնելով դէպի երկինք։ -- Աստուած տալիս է նրան, և նա էլ ինձ պէս խեղճերին է տալիս։ Նա ուսում ունի և իր ուսումովը շատ առաջ կըգնայ։ Ասենք հիմիկուայ ուսումը... լաւ է չլինի, քան թէ կայ։ Հրէն իմ եղբօր որդին, Աշոտը... նա էլ ուսում ունի, գրում է, բայց մէկ-մէկ որ ականջովս է դիպչում, թէ ինչեր է գրում, մազերս բիզ-բիզ են կանգնում. ասում եմ՝ փառք քեզ, Աստուած, ինչ որ չէինք իմացել, այն էլ ենք իմանում... Մի կտոր հաց էր տալիս, այն էլ կտրեց ու իսկի հարցնում է՞՝ կենդանի եմ, մեռել եմ, ինչով եմ ապրում, որտեղ եմ ապրում, — ո՛ր ասես։ Էգուց էլ որ գլուխս վէր դնեմ (մեռնեմ), իսկի էլ չի ամաչիլ, որ կրծքիս աման դնեն (ժողովարարութեամբ թաղեն)։

—Բա՛, ինչի՞, ի՞նչ ես ասում,—զարմացաւ Օսանը։

—Չգիտեմ, Օսան ջան, չգիտեմ...Երևի այդ էլ իմ արած լաւութեան փոխարէնն է։ Հինգ տարեկան երեխայ էր, որ հայրն ու մայրը մեռան. վերցրի պահեցի, ուսումի տուի. հիմի որ մարդ է դառել, ինքն ունի, ես չունեմ, հիմի... է՛հ, Աստուած բարի տայ իրան, Աստուած բարի տայ։ Ես այսօր կամ, էգուց չէ, բայց մարդ մարդու լաւութիւնը չպէտք է մոռանայ, ուր մնաց հարազատ եղբօր որդին...

Մանէն ուշի-ուշով ականջ էր դնում ծերունուն, և նրա յոնքերի միջև խստօրէն գծուած բնորոշ մի խորշում ցոյց էր տալիս, որ ինչ-որ խիստ անախորժ բան է զգում նա հոգեպէս։ Բայց նա ամենևին չէր խառնում սկեսրոջ ու ծերունու խօսակցութեանը և, ըստ երևոյթին, աշխատում էր ուշադրութիւնը կենտրոնացնել իր ոտների տակ գետնի մէջ թաղուած մի հին գերեզմանաքարի վրայ, որի մակերեսը հաւասարեցրած էր գետնին և կողքերից, այս ու այնտեղ, նոր սկսել էին ծիլեր արձակել խոտի հատ ու կէնտ փնջեր։ Գերեզմանաքարի վրայ քանդակուած էր եպիսկոպոսական խոյր, գաւազան կրենդէլի պէս ծռուած երկճիւղ օձագլուխներով և ինչ-որ քառանկիւնի մի բան —անշուշտ աւետարան, որի բաց երեսների վրայ մեծ դժուարութեամբ կարդացւում էին հետևեալ խօսքերը՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգու-

ցից զձեզ»: Հնութիւնը, անձրևներն ու արևը և մարդկանց ոտներն իրենց անխուսափելի աւերածութիւնն էին տարածել այդ սրբազան նկարների և աւետարանական խօսքերի վրայ, իսկ բուն արձանագրութիւնն այն աստիճան մաշուել էր, որ բոլորովին անընթեռնելի էր դարձել:

Նորանոր ժամաւորներ էին գալիս, և եկեղեցու խաղաղ բակը հետզհետէ կենդանութիւն էր ստանում: Զաքարն իր խարխուլ ձայնով դեռ իր գանգատն էր անում եղբօր որդուց Օսանի ու Մանէի մէջ տեղը կզացած, և Մանէն, ներքին անախորժութեամբ լսելով նրան, դեռ դիտում էր եպիսկոպոսական գերեզմանաքարը, երբ նրանց առջև բուսնուեց պառաւ, կմաղքացած մի կին հնամաշ, տեղ-տեղ կարկատած սև հագուստով, խունացած սև քիշմիրի մի շալ գլխին:

—Բա՛, Հոռոմսիմ,—բացականչեց Օսանը:

Հոռոմսիմն ընդհանուր բարև տուեց և աչքերով տեղ որոնեց նստարանի վրայ, որ նստի: Նստարանն այնքան կարճ էր, որ չորրորդ անձի համար տեղ չկար նստելու, ուստի Մանէն շտապեց վեր կենալ:

—Վո՛յ, չէ՛, չէ՛, Մանէ ջան, նստիր, —կանչեց Հոռոմսիմը և աշխատեց թոյլ չտալ, որ նա վեր կենայ:

Բայց և այնպէս Մանէն վեր կացաւ, իսկ Հոռոմսիմը նստեց, և երկուսն էլ մնացին ոտի վրայ:

—Այս ո՞րտեղ ես, մեծ պասն անցկացաւ, քեզ ժամումը չտեսայ,—ասաց Օսանը:

—Վա՛յ իմ խեղճ գլխին. ես այն օրումն եմ, Օսան ջան, որ ժամ կամ պատարագ միտս գայ,—պատասխանեց Հոռոմսիմը վերին աստիճանի խղճուկ ձայնով, որը, սակայն, ամենևին չէր համապատասխանում նրա ահագին աչքերի անախորժ փայլին, ոսկրացած դէմքի անդադար ձգձգուող մկանունքներին և վերին աստիճանի եռանդալից շարժումներին, որոնք խիստ կռուարար կնոջ տպաւորութիւն էին գործում:

—Ի՞նչ է պատահել:

—Էլ մի հարցնիլ, Օսան ջան, էլ մի հարցնիլ. իմ որդու արարմունքն ինձ ողջ-ողջ գերեզման դրեց:

—Էլի գժութիւններ է անո՞ւմ:

—Վո՛յ, այնպէս գժուի նրան գժուեցնողը, ոնց որ ես գիտեմ,—բացականչեց Հոռոմսիմն այնպիսի ահարկու մի եռանդով, որ կարծես թէ այդ էր նրա սրտի միակ ամենամեծ բաղձանքը: Յետոյ նա ձեռքերը ծալեց կրծքին, աչքերն աղօթողի պէս ձգեց եկեղեցու պատն ի վեր և շարունակեց.—Խնդրել եմ Մայր Աստուածածնից, որ նա այրուի, այրուի, այրուի, ոնց որ մենք ենք այրում-փթոթւում անկրակ նրա պատճառով: Խնդրել եմ Տէր Ամենակալից, որ նրա օրն ու կեանքն այնպէս խաւարի, ոնց որ մեր կեանքն է խաւարել նրա պատճառով. սև ու մութ լու-

սանայ նրա գլխին կարմիր Զատիկը, ինչ որ սև ու մութ է արել նա մեր օրերը...

—Ի՛հ, լաւ մի դու էլ,—նկատեց Օսանը մնահաւատի սարսափով։—Եկեղեցու պատի տակն էլ այդպէս կանիծե՞ն։

—Լաւ չի, Հոռոմսիմ, լաւ չի,—նկատեց իր կողմից Զաքարը։—Քրիստոսն ասել է...

—Ի՞նչ է ասել Քրիստոսը,—յանկարծ բղաւեց Հոռոմսիմը ծերունու վրայ այնպիսի կատաղութեամբ, որ խեղճի խօսքը մնաց բերանում։—Քրիստոսն ասել է՝ տուն-տեղ թող, մայր, կնիկ, որդիք մոռացիր, քաղցած-տըկլոր պահիր նրանց ու ինչոր աշխատես՝ տար բողերի փորն ածի։ Քրիստոսն ասել է՝ գնա հարբիր-տրաքուիր, կէս-գիշերներին տուն արի ու առանց պատճառի կնկանդ փայտի տակ դիր ջարդի՞ր։ Հա՞, Քրիստոսն այդ է ասե՞լ։ Բաս չանիծեմ նրան այդպէս գժուեցնողի՞ն։ Բաս չասեմ...

—Սպասիր, Հոռոմսիմ,—ընդհատեց նրա խօսքերի տարափն Օսանը։—Դու գիտե՞ս ով է որդուդ խելքից հանել։

—Ինչո՞ւ, դու չգիտե՞ս, Մանէն չգիտէ՞,—ասաց Հոռոմսիմը և, որովհետև Օսանն, ըստ երևոյթին, չգիտէր և զարմացած նայեց նրա զայրացկոտ աչքերին, աւելացրեց.—Այն լպստած, այն աննամուս ակուշերկէն է, էլի... Հեղինէ Սոլիկեանը—կտրուի նրա անունը։

—Բա՛,—բացականչեց Օսանը և ձեռքը բռունցք կազմած՝ դրեց շրթունքների վրայ

ի նշան ապշութեան։ Նա մեծ տարակուսանքով նայեց հարսի աչքերին, կարծես հարցնելով, թէ մի՞թէ նրան յայտնի էր այդ բանը։

Մանէն խուսափեց սկեսրոջ այդ հայեացքից և մեքենայաբար նայեց դէպի հարևան կտուրը, որտեղ գառը նորից սկսել էր մայել յամառօրէն։

—Սոլիկենց Ստեփանի աղջիկը... կըճանաչեմ,—ասաց Զաքարը, կարծես, ինքն իրեն։

—Ա՛յ, սև մահը ճանաչի նրան, գետինը գնեմ նրա անունը,—սրտանց վրայ բերեց Հոռոմսիմը և արագօրէն նստեց Օսանի կողքին։—Ես զարմանում եմ ձեզ վրայ, Օսան,—աւելացրեց նա յանդիմանօրէն.—ախր այն աննամուսին դուք ինչ էք տուն թողնում։

—Վա՛յ, Հոռոմսիմ ջան, պարտական լինեմ, թէ սրանից աւել ես իմացած լինեմ նրա արարմունքը։ Ասենք՝ այն գլխից ես չեմ հաւանել նրան. ժամանակ-անժամանակ ներս կընկնի, չաչանակի պէս կըխօսի, լիրբ-լիրբ կըծիծաղի, պապիրոս կըքաշի, դուրս կըտայ, ինչոր բերանը գայ, ոչ մեծ կըհարցնի, ոչ պստիկ։ Բայց դէ պստկուց հարսիս ընկերուհին է եղել, ուսումնարանում միասին են սովորել, գալիս է, դուռը խօ ետ չե՞մ դնիլ երեսին։

—Որ դուռն երեսին ետ չես դնիլ, խօ կարո՞ղ ես ասել, որ դա ջահել աղջկայ արարմունք չէ։ Բո ջահել աղջիկը, ապա աղջիկն այդպէս աննամուս բաներ կանի՞։ Ախր այս-

պէս բան չի լինիլ, Օսան ջան, Մանէ ջան։ Այնպէս գժուեցրել է այն տղին, այնպէս գժուեցրել, որ էլ աչքով աչք չունի կնկայ վրայ։ Շատ անգամ, կէս-գիշերներին, տուն է գալիս հարբած-տրաքուած, էլ ինչ ուշունցներ ասես՝ չի տալիս այն մեղք ու կրակ աղջըկան. Թէ որ այն խեղճը մի ձայն էլ հանում է, պրծաւ. շունը կապիր, նրան բաց թող։ Մինչև հիմի ծեծել չէր իմանում, հիմի այդ էլ է սովորել փուչ-փչանալուն։ Վարժապետութիւնից ձեռք վեր առաւ, մտաւ հաշուապահ, երկու ամիս էլ չդիմացաւ, կռուեց դուրս եկաւ, մի տարի պարապ-սարապ թրև եկաւ, յետոյ մտաւ բանկը, այնտեղ էլ չպահեցին, դուրս արին. վերջը կնկայ փողերը խարխըելով դուրս բերեց բանկից, գնաց Մոսկով, թէ՝ ուսումս կիսատ է, պէտք է լրացնեմ։ Մոսկովում ինչ արաւ, ինչ չարաւ— չեմ իմանում. երեք տարուց յետոյ յետ եկաւ, սկսեց գրել լրագրներումը։ Ասում են լաւ փող է վերցնում, բայց մի գրոշ, մի սև գրոշ ասես տուն բերում է՞, որ աչքներս կոխենք։ Աստուած է վկայ, օր է պատահում, որ տանը մի կտոր հաց չի լինում երեխանց ձայնը կտրելու համար. ողջ ձմեռը շան պէս կռնկռնալով ենք անցկացրել. տան քրէհը հաւաքուել, տանիցը դուրս են անում։ Մինչև այս հասակս ես վարձկան չեմ բանել ուրիշի դռանը, հիմի այդ էլ եմ անում,—կորչի նրա նամուսը.—այն խեղճ աղջիկն էլ, մի

օր լաւ, տասն օր հիւանդ, օր ու գիշեր մէկ արած՝ հալած մոմ է դարձել ասեղի ծայրին շատ մտիկ տալուց։ Բայց դէ մեր վերցրածն ինչ պէտք է լինի, որ հինգ փոր կշտացնի։ Իսկ նա, փուչ-փչանալուս, ինչ որ աշխատում է, բոզերի փորն է ածում։ Սա օրէնք է՞։ Հը՞, ձեզ եմ հարցնում, սա օրէնք է՞։

— Է՜, ժամանակ, ժամանակ,—արտասանեց Զաքարը ծերունիներին յատուկ անտարբերութեամբ և գլուխը շարժեց։

—Ասում եմ՝ ա՛յ որդի, ինչի՞ ես այդպէս անում, — շարունակեց Հռոփսիմը։ — Ես, ասենք, պառաւել գնացել եմ, բայց այս խեղճ ջահել աղջկայ օրն ինչի՞ ես մթնացնում։ Ի՞նչ է արել քեզ, որ համ տկլոր ու քաղցած ես պահում, համ էլ ծեծում ու ջարդում։ «Թէ որ չի ուզում, ասում է, տկլոր ու քաղցած մնայ, թէ որ չի ուզում, ասում է, ծեծուի ու ջարդուի, թող, ասում է, ուր ուզում է՝ գնայ. ես դրան պահողը չեմ»։

—Բա՛, — արտասանեց Օսանը և նորից ձեռքը բռունցք կազմած՝ դրեց շրթունքի վրայ։

Հռոփսիմը ձեռքերը դոինջ արեց ծնկներին և, իր եռանդալից աչքերով նայելով Օսանին, շարունակեց, կարծես Օսանի տեղ մօտը նստած լինէր իր որդին.

—Հիմի չես պահո՞ղը, ասում եմ, երբոր խեղճ աղջկայ [illegible] ծուծը քամեցիր։ Հիմի չես պա[illegible]ի բաժինքի

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна

փողերը դուրս բերիր տարար լակեցիր, — քթովդ դուրս գայ: Թէ որ պահողը չէիր, ասում եմ, բաս ինչի՞ ուզեցիր, ինչի՞ այդ խեղճ աղջկայ մեղքն ընկար: Հօ՞ր: «Այն ժամանակն, ասում է, ջահէլ էի, աշխարհք չէի տեսել, խելքս բան չէր կտրում. հիմի ամեն բան տեսել եմ, խելօքացել եմ»:—Տօ՛; դա խելք է՞, ասում եմ, որ մարդ տուն-տեղ մոռանայ, երեխերքին քաղցած-տկլոր պահի, կնկանը ծեծած-ջարդած ու ինքն աննամուս աղջըկերքի ետևից թրև գայ: Հօ՞ր, դա խելք է՞: Ասում եմ՝ բաս որ ժամումը տէրտէրը հարցրեց «տէ՞ր ես» ու դու էլ, լիզուդ չչորացաւ, ասեցիր «տէր եմ», բաս չէիր իմանո՞ւմ, որ մինչև գերեզմանը տէր պէտք է լինես ու անտէր չթողնես: Հօ՞ր, բաս այդքանն էլ չէիր իմանո՞ւմ: «Այդքանն էլ որ իմանայի, ասում է, իսկի ժամ էլ չէի գնալ: Ժամըս ո՞րն է, ասում է, տէրտէրս ո՞րն է: Վեքսէլ խօմ չեմ տուել, ասում է, որ պարտքս բկիցս բռնած ասնեն. մի խօսք է, էլի, ասել եմ. ասեցնել են տուել, ես էլ ասել եմ. ամենքն ասում են, ես էլ ասել եմ»: Դէ արի ու բան ասա: Ի՞նչ ասեմ: Հօ՞ր, ձեզ եմ հարցնում, ի՞նչ ասեմ:

Զաքարը գլուխը բարձրացրեց և նայեց Հոռոմսիմի զայրացկոտ ու տարակուսալից դէմքին:

—Ա՛յն տաս, թէ՛ որդի, Աստծու ճանապարհիցը դուրս ես գնացել, հոգիդ սատանի

փայ ես անում,—ասաց նա ծանր ու հանդիսաւոր ձայնով:—Ասա նրան, թէ վեքսէլը, թղթի մի կտորը, աւելի մեծ գին ունի՞, թէ Աստծու սուրբ սեղանի առաջ, խաչի ու աւետարանի վրայ տուած խօսքը:

— Ես, ասում է, Աստուած - մատուած, խաչ-մաչ չեմ ճանաչում, չէ՛,—աղաղակեց Հոռոմսիմն իր բարկացկոտ աչքերը փայլեցնելով ծերունու վրայ:

—Տեսնում ե՞ս... բաս ասա թուրքացել է, էլի,--նկատեց Օսանը:

—Ականջ դիր, Օսան, ինչ եմ ասում,—ասաց Զաքարը, կամաց շօշափելով նրա թևը:
—Ամեն Աստծու օր ես ժամ եմ գալիս, իսկ կիրակի օրերը ճաշին Վանքն եմ գնում, որովհետև պատարագին լաւ ժամ են ասում: Վանքի բակը որ մտնում եմ, տեսնում եմ լիքն է մեր ջահէլներով: Օտար մարդը որ մտիկ տայ, կասի՝ ինչ ժամասէր են այս հայ ջահէլները: Բայց որ հարցնես՝ իսկի մէկը մտնում է՞ պատարագ տեսնելու, երեսը խաչակնքելու, մոմ վառելու, աղօթք անելու: Բան չունե՞ս: Մտնողն էլ այնպէս է պահում իրան Աստծու սուրբ տաճարի մէջ, որ կասես իրանց տանը լինի: Երեսը խաչ հանել, մոմ վառել, ծունկ չոքել, աղօթել խօ չկայ ու չկայ. որ չամաչեն, պապիրոս էլ կըքաշեն: Հիմի Հոռոմսիմի որդին էլ դրանցից է, էլի: Կարծում ես, մենակ դա է՞: Ու մենակ տղերքը չեն, Օսան. աղջկերքն էլ են այդպէս:

—Ա՛յ, հիմիկուայ աղջկերքի նամուսն էլ այնտեղ գետինը դնեմ,—սրտանց վրայ բերեց Հոռոմսիմը։—Դիփ դըրանք չեն ջահէլներին գժուեցնողը՞։ Ի՞նչն էր իմ որդունը. տասը ինչ նամազուլներ էլ որ անէր, էլի տան պատին էլ գիտէր, կնկայ պատին էլ. իսկ իմ տասը կըհամարձակուէ՞ր մի աւելորդ խօսք ասել։ Իսկ հիմի՞, ինչ որ կապուել է այն աննամուսի հետ... Շատ անգամ այնպէս սրտի եմ գալի, Օսան ջան, որ ասում եմ դուրս անեմ տանից, էլ մօտ չթողնեմ. ջհանդամը—ուր ուզում է՝ կորչի. տանից այն էլ չկայ ու չկայ, թող իսկի չլինի. գոնէ այն մեղքուկրակ աղջիկը կըհանգստանայ։ Մէկ էլ ասում եմ՝ չէ, մարդ մէջ գցեմ, ծիլ գիտէ, ջահէլ է, ինձնից չի քաշւում, գուցէ ուրիշներից քաշուի, խելքի գայ։ Օսան ջան, մի որ տեսնես նրան, չես կարող խրատի՞։

—Խրատի՛, -բացականչեց Օսանը, և նրա գլուխն սկսեց աւելի շարժուել։ — Ես ա՛յն լափն ածեմ գլխին, որ ասի թէ հա։ Ափսոս, որ ես այդ բաները վաղ չեմ իմացել։ Հա՛յ գիտի հա, բաս իմ որդին ջահէլ չի եղել, էլի, որ այդ նամազուլները չի արել։ Վա՛յ, Աստուած ոչ անի. այն օրը սև մահ լինէր իմ գլխին։

—Օսան ջան, թէ որ դու այդ բանը կանես, հէնց իմանաս, թէ մի գերի ես ազատել,—ասաց Հոռոմսիմը, և այս անգամ նրա կոռւարար ձայնը հնչում էր լացագին։—Դու

էլ, Մանէ ջան, այն... այն... լաւ աղջկան տաս՝ ինչ ես ուզում մեզանից, ինչի՞ ես մեր մեղքը վեր առնում։ Մանէ ջան, ախր չես իմանում. մի օր որ գաս տեսնես մեր հալը, լաց կըլինես, Աստուած է վկայ. քարն ինչ է, քարն էլ լաց կըլինի։

Արտասուքի կաթիլները մէկը միւսի ետեւից դուրս էին ցայտում յարատև զրկանքներից ու վշտից կմախքացած այդ պառաւ կնոջ աչքերից և արագօրէն գլորւում նրա խորշոմած այտերի վրայով, ադամանդների պէս շողշողալով արևի ճառագայթների տակ։

Մանէն կանգնած էր լուռ ու անշարժ և նայում էր նրան տամուկ աչքերով, շրթունքները պինդ սեղմած իրար, ըստ երևոյթին զսպելով իրեն, որ ինքն էլ լաց չլինի այդ խեղճ պառաւի աղէկտուր խօսքերը լսելիս և առատ արտասուքները տեսնելիս։

—Շատ լաւ, — ասաց նա յանկարծ. — ես կըտեսնեմ նրան... անպատճառ կըտեսնեմ։

Արևն աւելի ու աւելի տաքացնում էր օդն ախորժելի ջերմութեամբ։ Վերևը, եկեղեցու տանիքի վրայ, նստած էին երկու աղաւնի ուռած-փքուած և ղուղուռնում էին իրենց քնաբեր խուլ ձայնով։ Եկեղեցու պատի ետեւից, բակի միւս կողմը, լսւում էին ժամաւոր կանանց բարձրաձայն խօսակցութեան և երբեմն ծիծաղի ձայներ։

Վերջապէս, եկաւ քահանան — նոր-նոր ապուամպը դուրս եկած մի նորընծայ, մէջ-

քին խիստ հուպ տուած փայլուն փարաջայով և փափուկ կատարի նոր գլխարկով։ Յետոյ եկաւ տիրացուն — տէրտէրից շատ աւելի հաստակով մի մարդ՝ խիստ մազակալած տգեղ դէմքով, արբեցողի պղտոր ու կարմիր աչքերով, ամառուայ հնամաշ վերարկուով և տիրացուներից անբաժան հովանոցը ձեռքին։ Եկեղեցուց փութկոտ քայլերով դուրս եկաւ ժամկոչը «հասարակը» տալու։ Դա գլուխն առաջ ընկած, կուրծքը ներս ընկած մի ժիր ծերունի էր ահագին սապատով և սև մահուդի այն աստիճան խունացած չուխայով, որ մէջքին՝ սապատի վրայ կարծես մամուռ էր բսել և արևից խանձուել։ Փոքրիկ զանգակները — մէկը բարիտոն, միւսը տենոր — հնչում էին չափաբերական շեշտերով՝ տամ-տիմ-տամ, և նրանց ձայները գիլ ծկլթոցով կարծես պոկ էին գալիս ինչ-որ խեղդող մի բանից, ուրախական աղաղակով դուրս թռչում զանգակատան կաթուղիկէի նեղ կամարներից, բազմերանգ թելերի պէս հիւսւում իրար հետ, սլանում ազատ օդի մէջ և շնչասպառ մարում արագօրէն, կարծես ողբալով, որ իրենց գոյութիւնն այդքան կարճատև է։

II

Հոռոմսիմի որդու և Հեղինէ Սոլիկեանի միջև եղած կապը թէև վաղուց յայտնի էր Մանէին, բայց նա իբրև կրթուած կին՝ իրեն միանգամայն հեռու էր պահում նրանց անձնական գործերին միջամտելուց և չտեսնելուն էր տալիս նրանց աւելի քան մերձաւոր յարաբերութիւնները։ Նա շատ լաւ ճանաչում էր թէ Սեդրակ Նասիբեանին և թէ Հեղինէ Սոլիկեանին, մանաւանդ վերջինիս. գիտէր, որ երկուսն էլ ազատ, անկախ հայեացքների տէր անձեր են, ամեն տեսակ նախապաշարումներից հեռու և, ինչպէս ասում էր Հեղինէ Սոլիկեանը, «բուրժուական բարոյականութիւնը» ժխտող։ Բայց երբէք չէր կարծում, որ նրանք, այդպիսի անձեր լինելով հանդերձ, զուրկ կլինեին խղճահարութեան ամենատարրական զգացումից անգամ և ընդունակ կլինեին զոհ բերելու իրենց յանցաւոր կրքին մի ամբողջ անմեղ ընտանիք։ Այս պատճառով Հոռոմսիմի պատմութիւնը այն աստիճան վրդովել էր նրա հոգին, որ նա վճռեց այդ օրն իսկ տեսնել ընկերուհուն և լրջօրէն խօսել նրա հետ։ Այդ դիտաւորութեամբ երեկոյեան դէմ դուրս եկաւ տնից։

Հեղինէ Սոլիկեանն ապրում էր երեք սենեակից բաղկացած վարձու մի բնակարանում իր մեծ քրոջ՝ Սալոմէի հետ, որը խուլ

ու համր պառաւած մի օրիորդ էր մօտ քառասուն տարեկան, ականջների մէջ շարունակ բամբակ խրած։ Հայր, մայր, եղբայր նա չունէր, ունէր միայն այդ մի հատիկ քոյրը, որին սիրում էր ոչ այնքան նրա համար, որ իր քոյրն էր, որքան նրա դժբաղդութեան համար։ Իսկ Սալոմէն, աշխարհային բոլոր վայելքները մոռացած, նոյն իսկ արտաքին աշխարհից միանգամայն կտրուած, հոգով-մարմնով նուիրուած էր փոքրիկ բրոջը, որին սիրում էր առանձին մի քնքշանքով և նայում էր նրա վրայ մօր պէս։ Թւում էր, թէ նա ուրիշ ոչ մի հոգացողութիւն չունի, բացի միայն այն բանից, որ այն սակաւաթիւ ժամերին, երբ Հեղինէն տանն էր լինում, ոչ մի բանի պակասութիւն չզգար, դժգոհութեան ոչ մի առիթ չունենար։ Սալոմէի ամբողջ աշխարհայեացքը պարփակուած էր տան չորս պատերի մէջ։ Տան գործերին նուիրուած էր ֆանատիկոսի եռանդով և օրնիբուն զբաղուած էր մաքրելով, լուանալով, եփելով, թէև ծառայ ունէին. մնացած ժամանակը զբաղւում էր կամ իր հնամաշ շորերը կարկատելով, կամ գուլպա գործելով, կամ իր անթիւ ծաղկամաններով, որոնցով լիքն էին բոլոր լուսամուտները և պատշգամբը։

Այժմ էլ, երբ Մանէն գնաց նրանց տուն, Սալոմէն ինչ-որ բան էր շինում խոհանոցում, և Մանէն անցողակի տեսաւ նրան թևերը

քշտած և թաց գոգնոցով։ Երևի իր այդ անկարգ վրութիւնից քաշուելով, Սալոմէն դուրս չեկաւ հիւրերի մօտ, բայց նրա փոխարէն սենեակից գնդակի պէս դուրս նետուեց ինքը Հեղինէն--դեռ ևս շատ ջահել մի աղջիկ ոսկէ պենսնէով, մինչև ուսերը խուզած գանգուր մազերով, առանց կորսէի, գիրուկ, կլորիկ, ցածրահասակ, տեղնուտեղը եռանդ, կրակ ու ծիծաղ, կարծես չարաճճի մի տղայ լինէր աղջկայ շոր հագած։

—Մանէ ջա՛ն, այս ո՞ր քամին է քշել քեզ իմ կողմը,—կանչեց նա, իր փափլիկ կարճ մատներով առնելով նրա ձեռքերը։—Ի՞նչ լաւ է, որ եկել ես. ես մեռայ մենակութիւնից, թէև նոր եմ վերադարձել տուն և այնքան յոգնած եմ, որ քիչ էր մնում պառկէի քնէի։ Արի մի պոռշդի անենք։

Եւ նա բարձրացաւ ոտների ծայրերի վրայ, որ հասնի Մանէի շրթունքներին։

—Դէ, շամփուր խօ չես կուլ տուել, մի քիչ կռացիր, է, որ հասնեմ։ Եղբօրդ պէս բարձրացել ես, կարծես թէ ուզում ես... ձոր քաղել։

Մանէն ծիծաղեց ակամայ և խոնարհուեց Հեղինէի դէմքի վրայ։ Հեղինէի այդ անկեղծ ուրախական ընդունելութիւնը մոռացնել տուեց նրան այն վրդովմունքը, որով եկել էր կռուելու ընկերուհու հետ։

Մանէի շրթունքները մի քանի անգամ պինդ համբուրելուց յետոյ, Հեղինէն, մի ձեռքով

բռնած նրա ձեռքից, միւսով քթի վրայ ուղղելով պենսնէն, ներս տարաւ նրան ծաղկամանների երկայն շարանի միջով, նստեցրեց բազմոցի վրայ և ինքն էլ, արջի քոթոթի պէս թրմփալով, տեղաւորուեց նրա կողքին։

—Երէկ եղբօրդ էի հարցնում, թէ ի՞նչ է պատահել քեզ, հիւանդ խօ չե՞ս, որ չես գալիս ինձ մօտ։

—Եղբօ՞րս,—զարմացաւ Մանէն։

—Հա՛, Վահանին։

—Մի՞թէ նա այստեղ է։

Հեղինէն սկզբում ինքը զարմացաւ Մանէի այդ հարցի վրայ, յետոյ յանկարծ բարձրաձայն ծիծաղեց։ Ծիծաղելիս նրա փափլիկ այտերի և լիքը կզակի վրայ մատնեհարներ էին գոյանում։

—Այ քեզ բա՛ն... Մի՞թէ նա դեռ չի եկել քեզ մօտ։

—Չէ։ Ես մինչև անգամ չգիտէի, թէ այստեղ է։

—Ի՞նչ ես ասում,—բացականչեց Հեղինէն, և նրա ծիծաղը սաստկացաւ։—Իսկ նա ասում էր, թէ բոլորովին ողջ և առողջ ես, թէ արդէն սկսել ես Զատկուայ համար պասքաների պատրաստութիւններ տեսնել, թէ ինձ համար ինչ-որ մի սիւրպրիզ ես պատրաստում... մի խօսքով՝ խօսում էր այնպէս, որ կարծես թէ հէնց նոր քեզ մօտ էր եղել։ Եւ բոլորովին լրջօրէն, գիտե՞ս։ Հա՛, հա՛, հա՛... Ի՞նչ մազալու մարդ է։ Չափազանց հաւանում եմ

նրա բնաւորութիւնը։ Սուտ կըխօսի հէնց միայն նրա՛ համար, որ սուտ խօսած լինի և զուարճանայ, թէ ինչպէս դիմացինը ճշմարտութեան տեղ է ընդունում իր սուտը։ Դուրս է գալիս մի տեսակ «գեղարուեստը գեղարուեստի համար»։ Ա՛յ, եթէ դու ունենայիր նրա բնաւորութեան գէթ մի հազարերորդ մասը, այսինքն կեանքի և մարդկանց վրայ նայէիր նրա պէս հեգնօրէն, այդպէս... չէիր լղարիլ, թէև խորհուրդ էլ չէի տալ, որ նրա պէս չաղանայիր։ Սոսկալի բան է դառել, որ տեսնես։ Առաջը կանգնած՝ ուղղակի թզուկ էի երևում ինքս իմ աչքում, թէև ես էլ մսի մի գունտ եմ։ Իսկ բարձրութի՜ւնը... Սիրտըս ասում էր՝ թռչեմ նստեմ ուսին լաւ տեսնելու համար մա՞րդ է, թէ մի այլ արարած աժդահաների ցեղից։ Ա՜խ, ինչպէ՜ս կուզէի, որ նա իմ եղբայրը լինէր։ Նրա հայեացքից, յետոյ խօսակցութեան տոնից այնպիսի մի բան ես զգում, որ կարծես թէ խտըղտում են կոներիդ տակ. համ ախորժելի է, համ անախորժ, համ ծիծաղում ես, համ զայրանում, բայց ընդհանրապէս գժի պէս ուրախ ես ըզգում քեզ։ Որ նրա մարմնի ահագնութիւնից չըվախենամ, անպատճառ կըսիրահարուեմ, արևս վկայ։ Խտտած ժամանակ մի քիչ որ պինդ հուպ տայ, ճխիլ-մխիլս կըհանի։ Նրա համար կատուի խաղ կըլինի, ինձ համար մկան մահ։

Եւ, շատ սրամիտ համարելով իր այդ հա-

մեմատութիւնը, Հեղինէն շարունակեց ծիծաղել, բայց Մանէն չժպտաց անգամ։ Առիթը շատ յարմար էր, որ Մանէն խօսք բանար իր ացելութեան նպատակի մասին, և Հեղինէի վերջին խօսքերն այն աստիճան ցինիքական թուացին նրան, որ քիչ մնաց ընկերուհու երեսովը շպրտէր՝ «մէկը բաւական չէ՞, որ երկրորդն էլ ես ուզում ունենալ». բայց զսպեց իրեն և ասաց.

—Սպասիր, մէկ գայ ինձ մօտ. այնպէս կուեմ որ...

—Իսկ ես, որ քո տեղ լինիմ, վրայ կընկնեմ և այնքան կըպաչպչեմ, որ երեսի կաշին կըպոկեմ։ Ես եղբայր չունիմ և չեմ ունեցել, բայց որ ունենամ, զգում եմ, որ գժի պէս կըսիրեմ։

Հեղինէն վերկացաւ, մի պապիրոս առաւ սեղանի վրայ դրած թղթի արկղիկից, վառեց և նորից նստեց Մանէի մօտ։

—Ուրի՞շ, ասա, է, ի՞նչպէս ես։ Այսօր... Սպասիր, այս ի՞նչ ես քսել վզիդ։ Երեսդ մի քիչ այն կողմն արա։ Ա՜խ, երա՜կդ է։ Իսկ ես կարծեցի թանաք ես քսել։ Դէ, մի՞թէ կարելի է այդքան լղարել։ Մարդդ դեռ չի՞ վերադարձել հանքերից։

—Ոչ։

—Գիտե՞ս, այսօր հիւանդանոցի լուսամուտից տեսայ քեզ սկեսուրիդ հետ։ Ասացի՝ փառք քեզ, Աստուած, ահա մի օր, երբ իմ սիրուն թռչնիկը դուրս է թռել վանդակից

գարնան հրաշալի օդում ճախրելու։ Բայց մի բան հարցնեմ. ի՞նչ հաճոյք ես զգում, որ առանց պառաւի՝ տանից դուրս չես գալիս։ Վախենո՞ւմ ես, ինչ է, որ... Բաղամեանը յանկարծ բռնի ու փախցնի...

Մանէն յօնքերը կիտեց և հայեացքը ձգեց ծնկներին։

—Դու, երևի, մեզ տեսել ես այն ժամանակ, երբ մենք ժամ էինք գնում կամ ժամից գալիս,— ասաց նա բաւական սառն կերպով։

—Ժա՞մ... ի՞նչ ես ասում։ Ճաշին էր, որ ձեզ տեսայ։

—Այո, մեծ պասին ճաշին էլ են ժամ ասում։

Հեղինէն յանկարծ իր փափլիկ ձեռքը խփեց աւելի ևս փափլիկ թշին։

—Ա՜խ, ճիշտ որ... հիմա խօ մե՜ծ պաս է։ Յիշո՞ւմ ես, մեծ պասին որ մեզ, աշակերտուհիներիս, ժամ էին տանում հաղորդելու։ Տէրտէրը պպզում էր սիւնի տակ, իսկ մեզ թխական հաւի պէս հաւաքում էր իր շուրջը և կրկնել տալիս «Մեղայի» խօսքերը. «որկրամոլութեամբ և մասամբ նորին, բղջախոհութեամբ և մասամբ նորին, գինուութեամբ և մասամբ նորին, ստնահարութեամբ և մասամբ նորին...»։ Յիշո՞ւմ ես, որ ես փռսկոցս չէի կարողանում պահել, իսկ դու կմշտում էիր կուռս թէ՝ սուս կաց։ Դու մինչև այժմ էլ մնացել ես նոյնը, իսկ ես... Ա՛յ, ինչ է նշանակում մեծանալ և Աստծու ճանապար-

հից հեռանալ։ Բաւական չէ, որ այլևս չեմ ապաշխարում, այլ և մոռացել եմ ապաշխարութեան օրերը։ Վա՜յ, հազար վա՜յ իմ հոգուն. Սաթայէլը կպրի կարասը կըկոխի ու կըհանի։ Այն ժամանակ հազար «վա՜յ, նանի ջան» կանչի, ո՞վ է օգնողը։ Երանի քեզ, որ ժամ էլ ես գնում, պաս էլ ես պահում, հաղորդւում էլ ես։ Քեզ համար պատրաստ է Աբրահամի գոգը, իսկ ինձ համար սանդարամետը։ «Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ. գի անթիւ են յանցանք իմ, աններելի են մեղք իմ և... և... և...»։ Դէ, միտս գցիր, է, տեսնում ես մոռացել եմ։

Եւ Հեղինէն չարաճճի կերպով խթեց Մանէի կողքը։

Մանէն խիստ սառնօրէն վերկացաւ նրա մօտից և հեռացաւ դէպի լուսամուտը, որի բաց փեղկի ապակիները բոցավառւում էին մայր մտնող արևի հրավառ ճաճանչներից։ Նա զգում էր, որ ընկերուհու մասամբ անհոգ, մասամբ հեգնական, մասամբ ցինիքական և ընդհանրապէս բաւական անձնապաստան տոնը հետզհետէ գրգռում է իրեն այն աստիճան, որ նրա սանձարձակ-ծաղրական լեզուն նողկանքի պէս մի բան է ազդում իրեն։

Հեղինէն նայեց նրա ետևից, պապիրոսի ծուխը հանեց քթածակերից և ուրախ քըրքըջաց։ Նրա ծիծաղի մէջ լսւում էին անախորժ սուր ծկլթոցներ, չձիւթած սռնու ծըղ-

ծւոցի պէս, և ծիծաղելիս նա բարձրացնում էր դէմքը, կարծես կամենալով պէնս-նէն ամուր պահել քթի վրայ, որ վայր չընկնի ծիծաղի պատճառած ցնցումներից։

—Զարմանալի է, ինչո՞ւ ես նեղանում,— բացականչեց նա։ — Մի՞թէ ճիշտ չէ, որ դու արդար ես, իսկ ես մեղաւոր, որ դու դրախտը կըգնաս, իսկ ես դժողքը։

Մանէն կամաց դարձաւ և շատ լըջօրէն նայեց ընկերուհու պենս-նէին, որի ետևից չէին երևում նրա աչքերը, որովհետև պենսնէի պարզ ապակիները պլպլում էին լուսամուտի ապակիներից անդրադարձող արևի պայծառ լոյսերի տակ։

—Ես զարմանում եմ քեզ վրայ, Ելէն,— ասաց նա։—Դու կրթուած աղջիկ ես, նոյն իսկ բարձր ուսում ես ստացել. մի՞թէ այնքան չես հասկանում, որ կան բաներ, որոնց եթէ չես հաւատում, գէթ պիտի գիտենաս յարգել և, յամենայն դէպս, չծաղրել։

—Այսի՞նքն։

—Մի՞թէ կարելի է ծաղրել մի բան, որ միլիոնաւոր մարդկանց հոգեկան միակ ամենաբարձր մխիթարութիւնն է կազմում...

—Կրօնական զգացո՞ւմը՝ ուզում ես ասել։

—Այո՛, կրօնական զգացումը, — շեշտեց Մանէն։—Այդպէ՞ս են անում Եւրոպայում, ուր գնացել ման ես եկել դու։

Հեղինէն պապիրոսն արագօրէն դրեց մոխրամանի վրայ և վեր կացաւ։ Մանէի խօ-

սակցութեան լուրջ տոնը, ըստ երևոյթին, ազդեց նրան, և նա ինքը լուրջ դէմք առաւ։

—Դու ի՞նչ գաղափար ունիս Եւրոպայի մասին,—ասաց նա։ — Չլինի՞ կարծում ես այնտեղ մղդսիններ չկան։ Սխալւում ես, սիրելիս։ Իսկական մղդսի ուզում ես, արի տանեմ քեզ Եւրոպա։ Թէ չէ մերոնք ի՞նչ են.— անամօթ կեղծաւորներ և անհաւատներ։ Գլադստոնի պէս մի ազատամիտ մարդու գրասեղանի վրայ հրէն, ասում են, հոմ-ուլի կողքին աղօթագիրք է դրուած միշտ։ Իսկ Տոլստոյի գրուածքները խօ ինքդ էլ ես կարդում. մի տող կըգրի՞, որ մէջը Աստուած չլինի։

—Եւ ի՞նչ է ապացուցանում այդ,—հարցրեց Մանէն։

--Այս այն է ապացուցանում, իմ սիրունիկ տիկին, որ Երուսաղէմումն էլ են շներ հաջում։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ դու ինձանից յարգանք ես պահանջում դէպի կրօնական զգացումը, ես մի օրինակ կըպատմեմ քեզ իմ պրակտիկից։ Մի անգամ ինձ կանչում են մի ծննդաբեր կնոջ մօտ՝ տգէտ տատմօր փչացրածն ուղղելու համար։ Մի խեղճ ու կրակ արհեստաւորի կին էր։ Գնում եմ և ի՞նչ տեսնում. ուշաթափ ծննդաբերի գլխին տղամարդի ահագին մի փափախ և բարձի տակ սոխ շարած մի շամփուր, իսկ բուխարու վրայ մի գիւժին վառած մոմ։ Ի՞նչ ես կարծում, ի՞նչն էր թելադրել այս ծիծաղելի բաներն անելու։

—Պարզ նախապաշարումը և սնահաւատութիւնը։

—Եւ ոչ կրօնական զգացումը, որ մայրն է բոլոր նախապաշարումների և սնահաւատութիւնների։ Չէ՞ որ կրօնը,—ո՛րն ուզում ես վերցրու,—ինքնին արդէն հսկայական մի նախապաշարում և սնահաւատութիւն է։ Եւ ո՛ւր էր, թէ նա բաւականանար միայն պատուական միամիտ և անվնաս նախապաշարումներով։ Մինչդեռ մենք գիտենք, որ նա անհաշիւ աղէտներ է բերել մարդկութեան գլխին։ Խօ գիտես ինչ բան է կրօնական մոլեռանդութիւնը. մարդիկ դուրս են գալիս հոգեկան նորմալ դրութիւնից, խելագարւում են, գազանանում և կամ իրենց են չարչարում ու մորթում, կամ ուրիշ իրենց նման արարածների։ Ոչ մի համաճարակ հիւանդութիւն, ոչ խոլերան, ոչ ժանտախտը և ոչ նոյն իսկ ամենամեծ պատերազմներն այնքան զոհեր չեն տարել, որքան տարել և տանում է նոյն իսկ մեր ժամանակում կրօնական մոլեռանդութեան համաճարակը։ Յիշիր քրիստոնէութեան առաջին դարերը, ինկուիզիցիան. յիշիր իսլամականութեան կատաղի բռնկումները, կամ թէկուզ հէնց բուդդայականութիւնը, որը թէև ուրիշի մի մազին անգամ չի դիպչում, չի գործում քրիստոնէութեան և մահմեդականութեան պէս հրով ու սրով, բայց դրա փոխարէն ուտում է

ինքն իրեն, կամաց-կամաց ծծում, մաշում և մահացնում իր իսկ օբյեկտին։ Դեռ ևս ոչ մի կրօն աշխարհիս երեսին ոչինչ չի վերածնել, ոչ մի բանի կեանք ու կենդանութիւն չի տուել, այլ միայն կործանել է, կործանել շարունակ և շարունակ մահ ու աւեր է տարածել իր շուրջն ամենակուլ վիշապի պէս…

Մանէն նորից դարձել էր դէպի լուսամուտը և նայում էր դուրս։ Նրա առաջ բացուած էր ամբողջ արևմուտքը և քաղաքի մի մասը սարալանջին՝ իր իրար վրայ կուտակուած տներով, որոնց բազմերանգ տանիքները կարծես թէ դարսուած էին իրար վրայ ձկան թեփի պէս։ Արևմուտքում, լերան քամակին, մի ամբողջ ֆէյերվերկ էր վառուած անշարժ ու հուրհրատին. Նոր մայր մտած արևը հուժկու թափով դուրս էր շպրտել լերան ետևից իր բոցավառ ճաճանչները հսկայական հովհարի պէս, և այդ ճաճանչներն ադամանդեայ երկայն ասեղների նման ցցուել էին երկնքի վրայ անշարժ կանգնած նոսր ամպերի մէջ։ Լեռը հսկայական մի ստուեր էր ձգել իր լանջին կուտակուած տների վրայ, և խաղաղ, հետզհետէ զովացող օդը կարծես թէ լցուած էր ոսկու փոշով։

Մանէն մտատու հայեացքով նայում էր իր առաջ բացուած այդ հրաշալի տեսարանին, սրտի մէջ զգալով ինչ-որ անորակելի յոյզեր ու կրքեր, և ետևից լսում էր Հեղինէի

ձայնը, որը ճռնչում էր ծղրիդի պէս ջղերը գրգռելու չափ երկար, յանդուգն ու յամառ։ Նա զգում էր, որ ընկերուհու առածների մէջ ճշմարտութիւններ շատ կան, բայց և, միևնոյն ժամանակ, մի անորոշ բան նրա հոգու խորքում բողոքում և չէր ուզում հաշտուել այդ ճշմարտութիւնների հետ։

Յանկարծ նա ցնցուեց իրանի վրայ զգացած ինչ-որ անախորժ մի բանի շփումից,— կարծես մէջքին օձ էր ուզում փաթաթուել,— և միևնոյն ժամանակ ականջի մօտ լսեց Հեղինէի հեգնական ձայնը.

— Ճշմարիտ չե՞մ ասում արդեօք, իմ սիրունիկ տիկին։

— Զզւեմ,— կամաց արտասանեց Մանէն և, արագօրէն ազատելով իրանը նրա անախորժ գրկախառնութիւնից, սկսեց անցուդարձ անել սենեակում ջղային քայլերով։

— Զզւե՞ս… Ինչպէս չզզւես,— բացականչեց Հեղինէն։— Գիտեմ, բայց հին մտքերդ շարունակում են քշել քեզ իրենց ճանապարհով։ Ես քեզ շատ լաւ հասկանում եմ. քո մէջ կատարւում է հնի և նորի կռիւը։ Բայց եթէ չես ուզում այդ կռուի զոհը դառնալ, պէտք է միանգամից անցնես այդ երկու հակառակ և մէկը միւսին ոչնչացնող տարրերից ամենազօրաւորի կողմը, որը նորն է, ի հարկէ։ Այլապէս կոմպրոմիսները չեն օգնիլ։ Ասենք, այդ բանն այժմ շատ դժուար է քեզ համար,

որովհետև մի անգամ արդէն այնպիսի մի յիմարութիւն ես արել, որ...

Մանէն կանգ առաւ ակամայ և զարմացած նայեց ընկերուհու աչքերին։

—Ի՞նչ յիմարութիւն։

—Որ ամուսնացել ես։ Ի՞նչ բան է ամուսնութիւնը կնոջ համար.—անխորտակելի մի շղթայ, որ պինդ կապում է նրա ոչ թէ միայն ձեռքն ու ոտքը, այլ և սիրտը, հոգին, ուղեղը—ամէն բան։ Ի՞նչ բան է ամուսնացած կինը.—ստրուկ, փալաս, տան զարդ, տղամարդու հեշտասիրութեան առարկան, նրա անկողնի ընկերը միայն, և ուրիշ ոչինչ, ոչինչ, ոչինչ...

—Դու զզուելի գաղափար ունիս ամուսնութեան մասին,—նկատեց Մանէն նողկանքով։

— Ոչ, սիրելիս, ես ճիշտ այն գաղափարն ունիմ ամուսնութեան մասին, ինչ գաղափար որ նա պարունակում է իր մէջ։ Մնացածը կամ կեղծիք է, կամ անհասկացողութիւն, կամ ինքնախաբէութիւն։

—Ուրեմն ամուսնութիւնը դու... անբարոյականութիւն ես համարում։

—Ես աւելի զօրաւոր բառով կարտայայտեմ այդ։ Ամուսնութիւնն ես պոռնկութիւն եմ համարում...

—Ելէն...

—Այո, պոռնկութիւն.. սրբագործուած պոռնկութիւն, որով ամուսնութիւնն աւելի ևս զզուելի պիտի լինի հասկացողի համար,

—բացականչեց Հեղինէն և, ինչպէս երևում էր նրա վառուող աչքերից, ամենևին կատակ չէր անում։—Ամուսնութիւնը պոռնկութիւն չի լինիլ այն ժամանակ միայն, երբ կինը մարդկային իրաւունքների տեսակէտից համահաւասար աստիճանի վրայ կըլինի կանգնած տղամարդու հետ կեանքի բոլոր ասպարէզներում և երբ կինը ծախու առարկայ չի լինիլ, այլ տղամարդու պէս ազատ ընտրող։ Ցոյց տուր ինձ, խնդրեմ, մի կին, մի հատիկ կին, որ ամուսնութեան գործում ազատ ընտրող լինի հանդիսացած։

—Եթէ խօսքդ իմ մասին է, կարող եմ հաւատացնել քեզ, որ «այո» ասելիս ոչոք չի բռնաբարել իմ կամքը։

Հեղինէն քրքջաց իր ձայնի անախորժ ծկլթոցներով։

—Եւ դու, ա՛յ միամիտ, կարծում ես, թէ կարո՞ղ էիր ասել «ոչ»,—բացականչեց նա։—«Ոչ» չէիր կարող ասել, որովհետև նախ՝ այդ բառը վաղուց ջնջուած է կնոջ բառարանի միջից և երկրորդ՝ եթէ «ոչ» ասէիր, այդ միևնոյնը կըլինէր, թէ ինքդ քեզ սովամահի դատապարտէիր։ Մի՞թէ այնքան չես հասկանում, որ սոցիալական այժմեան պայմաններում կինն ամուսնանում է նրա համար միայն, որ ինքն իրեն կերակրել չի կարող, որովհետև նրան չեն սովորեցրել և թոյլ չեն տալիս իր հալալ քրտինքով հաց ճարելու։ Ուստի բոլոր, այսպէս կոչուած,

օրինաւոր ընտանիքների աղջիկները ստի-պուած են ամուսնանալ, այսինքն ճարել մի տղամարդ, որ պահէ իրենց, այլապէս նրանց կըմնար կամ կուսանոց մտնել, կամ անառականոց: Բայց որովհետև կուսանոցների դռներն աւելի նեղ են, ուստի եզրակացութիւնը պարզ է... Ահաւասիկ, սիրելիս, այդ է եղել բուն պատճառը, որ դու տուել ես «այո», և ոչ թէ այն, որ ոչոք չի բռնաբարել քո կամքը: Կամքի բռնաբարումն այն կոպիտ ձևով, ինչ ձևով որ հնումն էր կատարւում, մեր ժամանակում չկայ, ի հարկէ, նոյն իսկ գիւղերում. բայց դրա փոխարէն կայ այժմ այդ գերերջանիկ հնութեան հետևանքը, որ աւելի սարսափելի է: Այդ հետևանքը հոգու և մտքի մասամբ բռնի և մասամբ կամաւոր ա՛յն շղթայումն է, որի մէջ կաշկանդուած՝ կինը չի հասկանում իր դրութիւնը կամ, եթէ հասկանում էլ է, չի իմանում ինչ անի, ինչպէս դուրս գայ այդ դրութիւնից, և կամայ-ակամայ մնում է միշտ նոյն կամազուրկ, նոյն ճնշուած, նոյն բռնաբարուած ողորմելի ստրուկը տղամարդու, իր տիրոջ ձեռքին:

—Բայց խօ դու դէմ չե՞ս ամուսնութեանը, —հարցրեց Մանէն զարմացած ոչ այնքան նրա խօսքերի, որքան այն լրջութեան վրայ, որով պաշտպանում էր նա իր մտքերը:

—Ես դէմ եմ միայն ամուսնութեան այժմեան հարեմական կարգերին, որոնց մէջ

կինը նկատւում է ոչ աւելի, քան ծախու մի ապրանք, առանց որևէ իրաւունքի, բայց մէկի ստրուկն ու հարճը լինելու անպայման պարտականութեամբ: Սա այնպիսի մի անբարոյականութիւն է, բարքերի այնպիսի մի այլասերումն, որ այժմեան ամուսնութեան դէմ սովորական պոռնկութիւնը, հաւատացնում եմ քեզ, շատ օրինաւոր, շատ ազնիւ մի բան է հանդիսանում: Սովորական պոռնիկ կինը ծախում է իր մարմինը և փոխարէնը փող է ստանում իր փորը կշտացնելու համար. բայց նա ազատ է, նա անկախ է, ոչ մի պարտաւորութիւն չի կաշկանդում նրան, նա վայելում է անհատի բոլոր իրաւունքները և, երբ կամենայ, կարող է վռնդել իրեն գնողին: Իսկ ամուսնացող բարոյական կինը, իրեն ծախելով հանդերձ, ինքն է փող տալիս գնողին և դեռ խաչ ու աւետարանով էլ պարտաւորւում ցմահ հնազանդ լինելու նրան, այսինքն նրա ստրուկը լինելու: Վերցնենք օրինակ քեզ...

—Ելէն, այդ ինչե՞ր ես ասում,—շշնջաց Մանէն այս անգամ պարզօրէն ապշած նրա յանդըգնութեան վրայ:—Ես խօ նրա համար չեմ եկել քեզ մօտ, որ վիրաւորես ինձ...

—Ա՜, ես այդպէս էլ գիտէի,—բացականչեց Հեղինէն ծիծաղելով:— Բուրժուական մորալն արդէն խօսեց քո մէջ: Բայց անհոգ կաց, սիրելիս. ես ամենևին միտք չունիմ քեզ վիրաւորելու: Ես միայն ուզում եմ օգ-

նել քեզ դուրս գալու կախարդական այն գրութիւնից, որի մէջ գտնւում ես դու Բադամեանի...

— Խնդրում եմ, այդ մասին ոչ մի խօսք,— խստօրէն ընդհատեց նրան Մանէն գունատուելով:

Հեղինէն նորից ծիծաղեց:

— Մի վախենալ, այդ մասին չեմ խօսելու, որովհետև գիտեմ, որ ինձ չես վստահանում, չնայելով որ ես քեզ անկեղծ սիրում եմ: Է՛հ, ինչ արած: Այդ աւելի վատ քեզ համար,—դառնօրէն և մի քիչ վիրաւորուած՝ աւելացրեց Հեղինէն:

Մանէն նորից մօտեցաւ լուսամուտին:

Արևն այժմ խորն էր մտել սարի ետևը և արագօրէն հանգցնում էր իր բոցավառ ճաճանչները: Հորիզոնի բազմերանգ գոյները քանի հեռանում էին արևմուտքից, այնքան աւելի խունանում և աննկատելի կերպով միանում էին երկնքի լեղակագոյն կապուտակի հետ: Հորիզոնից դէպի վեր, դէպի երկնակամարի խորքն էին լողում սպիտակ ամպի նուրբ քուլաներ—կարծես դաշտի մէջ արածելով հանգիստ դէպի իր գիշերային օթևանն էր գնում գառների ցրուած մի հօտ:

Հեղինէն նստեց բազմոցի վրայ, ոտը ոտի վրայ դրեց և շարունակեց.

— Քո վարմունքով դու միայն հաստատում ես, որ իմ ասածը ճշմարիտ է, այսինքն, որ քո հոգին ու միտքը շղթայուած են և շըղ-

թայուած այն աստիճան, որ չես ուզում թոյլ տալ ոչ մի ազատ կրիտիկա: Եթէ հոգիդ ու միտքդ շղթայուած չլինէին, այդպէս չէիր տանջիլ ինքդ քեզ, չէիր աշխատիլ սպանել քո մէջ ազատ սիրոյ զգացումը, այդ բանը յանցանք համարելով: Յիշո՞ւմ ես, մի անգամ ասացիր ինձ, թէ ամուսնացած կինն իրաւունք չունի սիրելու ուրիշ տղամարդու: Եւրոպացի կինը կըծիծաղէր,—եթէ աւելին չասեմ,—քո ասիական կլասիք այդ խօսքերի վրայ: Դրանից աւելի զօրաւոր ապացոյց չէիր կարող տալ, որ հոգիդ ու միտքդ շըղթայուած են ստրկական կեանքի և բուրժուական մորալի մի որոշ—ուզո՞ւմ ես ասեմ—կրօնական սնահաւատութեան մէջ, որից դուրս ամեն ինչ և ամենից աւելի ազատ սէրը սոսկալի մի յանցանք, մահացու մի մեղք է թւում քեզ: Ի՞նչ յանցանք, սիրելիս, ինչ մեղք: Ո՞վ է գրել այդ յանցանքի, այդ մեղքի կրիտերիումը: Ծննդաբեր կնոջ գլխին տղամարդու փափախ և բարձի տակ ոխաշար շամփուր դնող մեր պառաւնե՞րը: Ախր մէկ մտածիր, հոգիս. չէ՞ որ դրանք, այդ պառաւները, տոսական ամօթալի աւտորիտետներ են քեզ պէս կրթուած, ինտելիգենտ մի կնոջ համար: Մի քիչ կոչում արա քո առողջ դատողութեանը, այն կրթութեանը, որ ստացել ես, այն գրքերին, որ կարդում ես,—և կըտեսնես, որ պառաւական այդ ցնդաբանութիւնները մի ժանգոտ գրոշի ար-

ժէք անզամ չունին և ընդունակ են միայն հոգեկան ապարդիւն տանջանքներ պատճառելու: Ձե՞մ տեսնում, ինչ է, որքան փոխել, մաշել և ջղային են դարձրել քեզ այդ յիմար տանջանքները: Ոչինչ ինձ վրայ այնքան ծանր տպաւորութիւն չի գործում, որքան այն, երբ տեսնում եմ, որ եզներն իրենք են իրենց ոտով գնում և վզները լծան տակ կոխում: Այդպիսի տպաւորութիւն ես գործում դու ինձ վրայ: Հաւատա, սիրելիս, որ մարդ բնութեան ձայնից աւելի լաւ ղեկավար չի կարող ճարել իր համար: Իսկ բնութիւնն ամենից առաջ սիրում է ազատութիւն, անպայման ազատութիւն, ազատութիւն ամեն բանի մէջ: Եւ բնութեան ձայնն է միայն, որ ընդունակ է ցոյց տալու ուղիղ ճանապարհը՝ տարակուսանքների մէջ չմոլորուելու համար, միայն թէ մարդ ականջ ունենայ լսելու, հոգի ունենայ ըմբռնելու և խելք ունենայ հասկանալու: Բնութեան ձայնով եմ ես առաջնորդուել միշտ, և տես՝ ինձնից էլ ազատ, անկախ, կենսուրախ ու անհոգ արարա՜ծ...

—Բնութեան ձա՜յնը,—շշնջաց Մանէն, կարծես ինքն իրեն, մտասու հայեացքը հեռու հորիզոնին յառած:—Դրանով խօ անասուններն էլ են առաջնորդւում: Բայց մենք, որ մարդ ենք, Աստծու պատկերը կրող էակ, բանական, իմացական արարած, հապա ինչո՞ւ է մեզ տրուած ամենաբարձր այս շնոր-

հը—այս բանականութիւնը, այս իմացականութիւնը: Ինչո՞ւ հապա մեր գլխի մէջ գործում է այս ուղեղը, մեր կրծքի մէջ բաբախում այս սիրտը, երբ մենք էլ, անասունների պէս, պիտի ման գանք չորս ոտի վրայ և կոյր, կոպիտ, սոսկ բնազդից զատ ուրիշ աւելի բարձր, աւելի վեհ, աւելի նուիրական ու կարող ձայնի ղեկավարութիւն չպիտի ճանաչենք: Օ՛, ուրեմն քանդենք այս տըները, մարենք մեր օջախները, գահընկեց անենք հանճարներին, կործանենք նրանց ստեղծած տաճարները, հալածենք, ոչնչացնենք ամեն բան, ինչ որ բարձր է անասնականութիւնից, ինչ որ վեհ է և սուրբ, ինչ որ աստուածային կնիք է կրում իր վրայ: Ուրեմն մոռանանք, մոռանանք իսպառ, որ աշխարհիս երեսին կայ եղել Մէկը, որ իր սեպհական արիւնով հանել է մարդկութիւնն անասնականութիւնից, փըրկել է նրան հեթանոսութեան կապանքներից, բարձրացրել է նրան մինչև երկնքի տաղերը, և նորից իջնենք դէպի ցած, դէպի մեր նախկին վիճակը, գնանք անտառների մէջ դարման ուտենք, դաշտերի մէջ խոտ արածենք, թաւալգլոր գանք ցեխի մէջ և քաղցած ժամանակ յօշոտենք իրար, որովհետև այս է պահանջում բնութեան ձայնը... Ա՞յս ես պահանջում, հա՞, այս է քո պահանջածը,—բացականչեց Մանէն, յանկարծ ամբողջ մարմնով դառնալով դէպի Հե-

ղինէն, և նրա աչքերը փայլում էին ներքին բուռն յուզումից:—Մինչդեռ ես կասեմ, որ այն, ինչ որ դու ես քարոզում, սոփեստութիւն է, սուտութիւն է, կեղծիք է, դիմակ է միայն: Իսկ ճշմարտութիւնն այն է, որ դուք սարսափելի եսասէրներ էք, բանական արարածի պատկերը կորցնելու չափ եսասէրներ: Ձեզ անծանօթ է քրիստոնէական գթութեան, անձնուիրութեան, անձնազոհութեան, նոյն իսկ պարզ խղճահարութեան զգացումը, որովհետև դուք միայն ձեր անձի մասին էք մտածում: Դուք գոհ և երջանիկ լինէք, թէկուզ ուրիշները դժոխային տանջանքներ էլ կրեն ձեր պատճառով,--այդ ձեր հոգը չէ: Ահա թէ ինչ մարդիկ էք դուք:

Յուզումից շառագունել էր Մանէի դէմքը. վզի և քունքերի վրայ, նուրբ կաշու տակ, լցուել էին երակները. խոշոր աչքերը փայլում էին անկեղծ զայրոյթով: Նա այնքան գեղեցիկ էր այդ րոպէին, որ շատ էլ քընքոյշ զգացումներ չունեցող ընկերուհին նայում էր նրան ուղղակի հրճուանքով և իր շարժուն դէմքի չարաճճի ծամածռութիւններով կարծես աշխատում էր աւելի գըրգռել նրան, որ նա աւելի գեղեցկանայ:

Երբ Մանէն վերջացրեց, Հեղինէն վեր թռաւ, վազեց դէպի նա և գրեթէ բռնութեամբ տիրապետեց նրա ձեռքերին:

—Դու պաթոսով խօսել էլ ես իմանում,

ես այդ չգիտէի,—բացականչեց նա ծիծաղելով:—Հիանալի՛ էր: Երդւում եմ ազիզ արեւովդ, հրճուանքով էի լսում և մանաւանդ դիտում, որովհետև չես կարող երևակայել, թէ որքա՜ն գեղեցկանում ես զրգռուած խօսելիս: Երևակայում եմ, որ եթէ դերասանուհի լինէիր և մինչև տրագիքական դեր լինէիր կատարելիս, ո՛րպիսի փուրոր կըհանես քո այդ գեղեցկութեամբ, զայրոյթի այդ անկեղծ ոգևորութեամբ, կրծքային ձայնիդ այդ հրաշալի ինտոնացիաներով... Դէ, շատ մի խլլտար, ձեռքերդ բաց չեմ թողնելու... Քո այդ սիրուն մոնոլոգից յետոյ ես միայն մի բան եմ ուզում հարցնել քեզ. արդեօք իմ յայտնած մտքե՞րն են քեզ այդպէս գըրգռում, թէ ուրիշ որևէ մի բանով եմ մեղանչել քո դէմ:

—Իմ դէմ չէ, որ մեղանչել ես դու, այլ մեղանչում ես Աստծու դէմ:

—Ինչո՞վ: Որ ժամ չեմ գնում, պաս չեմ պահում, չեմ հաղորդւում և... սիրո՞ւմ եմ քեզ:

—Որ դու Նասիրեանի կնոջն ու մօրն այնպիսի աղէտալի վիճակի մէջ ես դրել,—ահա թէ ինչով ես մեղանչել Աստծու դէմ,—այլ ես չկարողանալով հանդուրժել Հեղինէի հեգնութիւններին, ուղղակի շպրտեց նրա երեսին Մանէն:

—Ինչ ասացի՞ր,—արագ հարցրեց Հեղինէն, բաց թողնելով Մանէի ձեռքերը, և

նրա ծիծաղկոտ դէմքը մի ակնթարթում լուրջ արտայայտութիւն ստացաւ՝ լի հետաքրքրութեամբ և զարմանքով։—Նաւթիրեանի կնոջըն ու մօրն, ասում ես... Ի՞նչ աղէտալի վիճակ... ինչ կապ ունին նրանք մեր խօսակցութեան հետ... Ես քեզ չեմ հասկանում։

Այն աստիճան անկեղծ էր Հեղինէի զարմանքը, որ Մանէն զղջաց, թէ ինչու ինքն այդքան փութացի եղաւ ընկերուհու հեգնական նկատողութիւնների դէմ և, նրանից վրէժ լուծելու պախարակելի զգացումից դըրդուած, այդպէս յանկարծ ու խստօրէն ասաց այն, ինչ բանի համար որ եկել էր ընկերուհու մօտ և ինչ որ կարելի էր ասել նրան աւելի մեղմօրէն։ Նրա զայրոյթը մեղմացաւ, և նա այս անգամ բարեկամական-յանդիմանական տոնով պատմեց այն բոլորը, ինչ որ լսել էր այսօր եկեղեցու բակում Համասիմից։ Պատմելիս աշխատում էր կարելոյն չափ շարժել Հեղինէի կարեկցութիւնը դէպի Նաւթիրեանի թշուառ ընտանիքը և ուրախութեամբ տեսնում էր, որ ընկերուհին լսում է մեծ ուշադրութեամբ և հետզհետէ լցւում բարկութեամբ։

—Ցա՛ծ, սո՛ր, զարշելի՛ մարդ,—բացականչեց Հեղինէն, այլևս չկարողանալով զըսպել իրեն, և ոտքի յուզուած՝ սկսեց անցուդարձ անել սենեակում արագ, փոքրիկ, ջըղուտ քայլերով, որի ժամանակ նրա ոտների տակ ճռճում էր յատակի մի տախտա-

կը։—Հաւատում եմ... կարծում ես չե՞մ հաւատում... բոլոր բաներին հաւատում եմ, ինչ որ պատմել է այն խեղճ պառաւը... հաւատում եմ, որովհետև այդ խօզի ճուտը, այդ չորացած ապուխտը ընդունակ է ամեն բանի... Ափսո՜ս միայն, որ ես այդ բաները չեմ իմացել, թէ չէ...

—Իբր թէ...

Հեղինէն արագ նայեց Մանէին և, իսկոյն քայլերի ընթացքը փոխելով, գնաց կանգնեց նրա առաջ։

—Մի՞թէ դու ինձ վրայ այն աստիճան վատ կարծիք ունիս, որ չես հաւատում ասածիս,—ասաց նա, խիստ լրջօրէն նայելով նրա աչքերին։—Ի՞նչ անեմ, երդուե՞մ, որ հաւատաս։ Ես քեզ լրջօրէն ասում եմ, որ առաջին անգամն եմ իմանում նրա այդ ցածութիւնները։ Եւ ո՞րտեղից պիտի իմանայի, ինքը խօ չէ՞ր պատմելու։ Թէ չէ, որ իմանայի... Չես կարող երևակայել, թէ ո՜րքան զզւում եմ այժմ նրանից, որովհետև չգիտես, ախր, թէ ո՜րքան աններես մարդ է, ո՜րքան յանդուգն, ո՜րքան լիրբ։ Այստեղս է հասցըրել, այ (Հեղինէն աջ ձեռքի ցուցամատը կոխեց իր չաղ կզակի տակ)։ Տի՛զ, կատարեալ մի տիզ. կպել, պոկ չի գալիս։ Իսկ դու, ո՞վ գիտէ, ինձ ես մեղադրում։ Շատ անգամ ուղղակի դուրս եմ անում, բայց նա, երեսը շան կաշի շինած, էլի շարունակում է թրև գալ ետևիցս. թէ ինչ է՝ մի անգամ գլուխս

քարոզիչ եմ տուել և... Ա՜խ, այս յիշողութիւնն ուղղակի զզուեցնում է ինձ։ Որքա՜ն անփորձ, որքա՜ն յիմար եմ եղել առաջ... Տե՛ս, տե՛ս, ա՛յ, նա գալիս է։ Որ ասո՜ւմ եմ։ Որ ասո՜ւմ եմ,—կրկնեց Հեղինէն, կարծես ֆիզիքական մի սուր ցաւից աղաղակելով։

Մանէն լուսամուտից նայեց դէպի փողոց և տեսաւ Նասիրեանին փոքրիկ, արագ քայլերով դէպի Հեղինէի բնակած տան դուռը դիմելիս։ Յետոյ բնազդմամբ նայեց ընկերուհուն և գրեթէ վախեցաւ—այն աստիճան փոխուած տեսաւ Հեղինէի դէմքը։

—Ես կըգնամ,—ասաց նա անհանգստացած։

Հեղինէն արագօրէն բռնեց նրա ձեռքից։

—Ո՞ւր... Չէ, սպասիր։ Դու պէտք է մնաս և տեսնես քո աչքով, որ ես երես չեմ տալիս նրան։ Ես հիմա եմ հասկանում, որ դու ինձ վրայ այդ աստիճան պայրացած ես այդ սրիկայի պատճառով։ Քո բարեկամութիւնն այնքան թանկ է ինձ համար, որ ոչ մի պայմանով չէի կամենայ, որ դու որևէ կասկած տանէիր ինձ վրայ։ Խնդրում եմ մնա։

—Ոչ, Աստուած է վկայ, լաւ կըլինի, որ...

—Միևնոյն է, չեմ թողնի,—ընդհատեց նրան Հեղինէն այնպիսի յամառութեամբ, որ Մանէն աւելորդ համարեց պնդել իր հեռանալու վրայ։—Ինչքան վատ գաղափար ուզում ես՝ կարող ես ունենալ իմ մասին, բայց որ կարծում ես, թէ այդ սրիկայի ա-

րարքների մէջ իմ մասը խառն է, այդ շատ ծանր է ինձ համար։

Խիստ յուզուած, նա պէնս-նէն պոկեց քըթից, թաշկինակով սրբեց ապակիները և նորից դրեց քթին։ Նա բոլորովին կերպարանափոխուել էր. սովորական չարաճճի, կենսուրախ արտայայտութեան հետքն անգամ չէր մնացել նրա դէմքին, և այդ կլորիկ ու փափլիկ դէմքի վրայ մսերը նկատելի կերպով ցնցւում էին ջղաձգաբար։ Նա գունատուել էր և փոքրիկ, կարծես մանկական բերանի կաս-կարմիր շրթունքները կծում էր փղոսկրի պէս սպիտակ ու պինդ ատամներով, իսկ ձեռքերը ետևը տարած՝ մսալի մատները բաց ու խուփ էր անում կատաղօրէն, կարծես պատրաստւում էր կատուի պէս յարձակուելու Նասիրեանի վրայ, հէնց որ նա մտնէր։

III

Ներս մտաւ Նասիրեանը—խորշոմած փոքրիկ դէմքով, երկարաթև սպիտակ փողպատով, խիստ նիհար, ըստ երևոյթին թոքախտաւոր, ցածլիկ, մօտ երեսուն տարեկան մի երիտասարդ, որի մէջ, սակայն, երիտասարդական ոչինչ չկար, բացի ջղային արագ քայլուածքից և խիստ սև ու խոշոր աչքերից, որոնք լի էին խիղախ համարձակութեամբ և ինչ-որ անզուսպ կրակով։ Նրա մի

յոնքը, աջը, վերեւ էր թռել, կարծես ապշել էր ինչ-որ բանի վրայ, և այդ կողմից նրա կիսադէմն աւելի երիտասարդական էր, աւելի գրաւիչ ու սիրուն, քան ձախ կողմինը, որի վրայ, յոնքի ու աչքի տակ, խորշումներն աւելի շատ էին, աւելի պառաւական և աւելի մռայլ ու գաղանապատ:

Մտնելուն պէս նա ուզում էր մօտենալ Մանէին, որ բարեւի նրան, բայց, տեսնելով Հեղինէի բռնած տարօրինակ դիրքը, կանգ առաւ զարմացած, որի ժամանակ նրա ձախ յոնքն էլ վերեւ թռաւ:

—Ինչո՞ւ ես եկել,— հարցրեց Հեղինէն, պենսնէի պարզ ապակիների միջից փայլեցնելով նրա վրայ կատաղութեամբ լի աչքերը:

Նասիրեանը սկզբում կարծես թէ շփոթուեց ոչ այնքան այդ հարցից, որ Հեղինէն տուեց իրեն երրորդ մի անձի ներկայութեամբ, որքան այն տարօրինակ փայլից, որ տեսաւ նրա աչքերի մէջ, և վերջին աստիճանի լարուած-թշնամական այն տոնից, որով նա տուեց իրեն այդ հարցը:

—Ի՞նչպէս թէ ինչու եմ եկել,— շշնջաց նա մեքենայաբար:

—Հա՛, ինչո՞ւ ես եկել, հարցնում եմ քեզ, —կրկնեց Հեղինէն ձայնը բարձրացնելով և մի քայլ առաջ դրեց:

Նասիրեանը տարակուսանքով նայեց Մանէին, կարծես թէ հարցնում էր՝ «ի՞նչ է

պատահել սրան», յետոյ իր խոշոր աչքերը նորից դարձրեց Հեղինէի վրայ և յանկարծ ծիծաղեց տարօրինակ խուլ ձայնով, այնքան տարօրինակ, որ նրա ծիծաղը կարծես ուրիշ նպատակ չունէր, բացի միայն այն նպատակից, որ թոքից խուխ պոկէ:

—Եկել եմ, որպէսզի թանկագին առողջութիւնդ հարցնեմ,— ասաց նա ու, արագօրէն հանելով թաշկինակը, թքեց մէջը:

—Իսկ մօրդ ու կնոջդ առողջութիւնը, իսկ զաւակներիդ առողջութիւնը երբեւիցէ հարցնո՞ւմ ես, պարո՛ն,— աղաղակեց Հեղինէն:

Նասիրեանը մի րոպէ լուռ նայեց նրան զարմացած. յետոյ, թաշկինակը կամաց կոխելով սիւրտուկի գրպանը, հարցրեց.

—Վաղո՞ւց է, որ հոգում ես մօրս, կնոջս և զաւակներիս առողջութեան համար:

—Ա՛յն ժամից, պարո՛ն, երբ իմացայ, որ դու նրանց հետ վարւում ես ամենաանխիղճ կերպով, ամենավերջին կինտօյի պէս:

Նասիրեանը յոնքերը սաստիկ կիտեց և կասկածանքով լի թռուցիկ մի հայեացք ձգեց Մանէի կողմը:

—Այդ ո՞ր ժամից է, համարձակւում եմ հարցնել, օրիո՛րդ,— ասաց նա իր մոխրագոյն փափուկ կաստորի գլխարկը դնելով աթոռի վրայ և շինծու հանդարտութեամբ երկու ձեռքով ուղղելով փողպատի թեւերը:

—Հէնց այս ժամից, պարո՛ն: Այս րոպէիս միայն իմացայ, որ դու ամենախայտառակ

կերպով ծեծում ես կնոջդ, պառաւ մօրդ դանէ դուռ ես գցել, զաւակներիդ քաղցած ու տկլոր ես պահում: Եւ դու ինտելիգենտ մարդ ես անուանում քեզ, և դու յօդուածներ ես գրում բռնութիւնների, անարդարութիւնների դէմ, և դու պաշտպան ես ցոյց տալիս քեզ ճնշուածներին, հալածուածներին, և քեզ արմատական հայեացքների տէր հրապարակախօս ես անուանում, քե՜զ, քե՜զ...

—Սպասի՛ր,—աղաղակեց Նասիբեանը, իր ահագին աչքերը յառելով Հեղինէի վրայ:—Այս դուք էք պատմել սրան, տիկին,—դարձաւ նա Մանէին արագօրէն:

Հեղինէն մի ոստիւնով թռաւ և կանգնեց նրա ու Մանէի մէջտեղ, ուղղակի Նասիբեանի քթի տակ: Նա դողում էր կատաղութիւնից, և պենս-նէն ցնցւում էր նրա քթի վրայ:

—Այո՛, այս տիկինն է պատմել, իսկ այս տիկնոջը պատմել է մա՛յրդ,—աղաղակեց նա:
—Ի՞նչ է, ուզում ես ուրանա՞լ: Հա՛: Այն խեղճ պառաւը կարծել է և այս տիկնոջն էլ այնպէս է հասկացրել, թէ ես եմ քեզ դըրդում, որ այդ անպիտանութիւնները գործես, ուստի սրա միջնորդութիւնն է խնդրել, որ քեզ չգժուեցնեմ, կարծես թէ խելքս գնում է քո այդ զզուելի դէմքի համար: Ահա՛ թէ, պարո՛ն, ո՛ր աստիճան յանցաւոր եմ հանդիսանում ես քո այդ գարշելի արարքների պատճառով: Եւ ինչո՞ւ համար,

որ հէնց սկզբից չեմ վանդել քեզ իմ մօտից շա՞ն պէս:

Մի ակնթարթում Նասիբեանի դէմքը սփրթնեց սպիտակ քաթանի պէս: Վայրկենական կատաղութեան ուժգին թափով նա բռնեց Հեղինէի ուսերից, ըստ երևոյթին պատրաստւելով դէն շպրտելու նրան կամ գլորելու իր ոտների տակ. բայց իսկոյն զսպեց իրեն և միայն սարսափելի յամառ ուժով կամաց հեռացրեց նրան իր առջևից, ամբողջ կատաղութիւնն արտայայտելով միմիայն ահարկու աչքերի և ձեռքերի խիստ լարուած մկանների մէջ: Չնայելով իր պըստիկ և նիհար կազմուածքին, նրա ոսկրացած ձեռքերն այնպիսի ոյժ էին հաւաքել իրենց մէջ, որ Հեղինէն իր մսեղ ուսերի վրայ սաստիկ ցաւեր զգաց և ճչալով դուրս պրծաւ նրա ձեռքերից, ճակնդեղի պէս կարմրատակած:

—Ինչպէ՞ս դու համարձակւում ես... ինչպէ՞ս դու համարձակւում ես,—աղաղակեց Հեղինէն լացագին, քթից պոկելով պենսնէն, և նրա աչքերից անզօր վիրաւորանքի և ծայրայեղ կատաղութեան արցունքի կաթիլներ դուրս ցայտեցին:

Նասիբեանը լուռ էր: Նա շնչում էր ծանր և իր ահարկու աչքերով խժռում Հեղինէին:

Մանէն պինդ կպել էր լուսամուտի տախտակին և զարմանքից ու վախից ցամաքել տեղնուտեղը:

—Խնդրում եմ, ներեցէք ինձ, տիկին,—դարձաւ նրան Նասիրեանը, աշխատելով կարելոյն չափ հանգիստ խօսել, և նրա շըրթունքները ցնցւում էին կատաղութիւնից:
—Ես շատ ցաւում եմ, որ այս օրիորդը ձեր ներկայութիւնն է ընտրել իր լուացքը լուանալու համար, և եթէ ես նոյն կեղտաջուրը չեմ թափում իր գլխին, դրա համար թող պարտական լինի ձեր ներկայութեանը: Բայց, երևի, մենք ուրիշ ժամանակ կըգտնենք մեր հաշիւները տեսնելու, ինչպէս որ հարկն է...

—Ա՞յդ ինչ սպառնալիք է,—կանչեց Հեղինէն, առաջ վազելով, բայց չհամարձակուելով մօտենալ նրան, որովհետև Նասիրեանը նորից ոլորեց նրա վրայ չարութեամբ լի իր ահարկու աչքերը, և նրա շրթունքների ջղային ցնցումը սաստկացաւ:

—Երևի այս օրիորդն ինձ ձեր առաջ ներկայացրել է իբրև մի փալաս, որի քթից բռնած՝ կարող է պար ածել, ինչպէս ուզենայ: Սխալւում է, շատ է սխալւում և ձեզ էլ սխալեցրել է, տիկին: Այդ դուք յետոյ կըտեսնէք, յետոյ կիմանաք...

—Դարձեա՞լ սպառնալիք, դարձեա՞լ,—աղաղակեց Հեղինէն, անզօր կատաղութիւնից ինքն իրեն ուտելով:

Սակայն Նասիրեանն այս անգամ նրան չնայեց անգամ: Նրա արտաքինն աւելի հանգիստ ու հպարտ կերպարանք առաւ և հայ-

եացքը լի հանգիստ արժանապատուութեամբ նայում էր Մանէի փեշերքին: Նա շարունակեց.

—Իսկ այժմ ես կամենում եմ մի երկու խօսք ասել ձեզ, տիկին, քանի որ դուք այսպէս թէ այնպէս խառնուել էք այս գործին: Որ մայրս պատմել է ձեզ իմ ընտանեկան վիճակը և ձեր միջնորդութիւնն է խնդրել, այդ բանին ես հաւատում եմ, ի հարկէ, որովհետև ագէտ կին է, անկիրթ կին է: Բայց որ դուք յանձն էք առել այդ միջնորդութիւնը, անշուշտ հաւատացած լինելով, թէ դրանով բարի գործ կըլինիք կատարած, այդ բանը,—ներեցէք, տիկին,—ինձ մի փոքր... զարմացնում է, որովհետև դուք ինտելիգենտ կին էք, կրթուած կին էք և պէտք է հասկանայիք, որ ուրիշի ընտանեկան գործերին միջամտելն առհասարակ լաւ բան չէ, թէկուզ այդ միջամտութիւնը լինէր նոյն իսկ ամենալաւ դիտումներով, ամենաբարի ըզգացումների թելադրութեամբ: Կնոջս ծեծում եմ, թէ պաշտում, մօրս դռնէ դուռ եմ գըցել, թէ պալատներում նստեցրել, զաւակներիս քաղցած եմ պահում, թէ շատ ուտեցնելուց տրաքեցնում,—այդ ոչ ձեզ է վերաբերում, ոչ այս օրիորդին և ոչ ուրիշ որևէ մարդու: Եւ ես ոչոքի թոյլ չեմ տալ, որ...

—Դուք ինձ վիրաւորում էք, պարոն,—շըշնջաց Մանէն այլշած:—Ես այդ մասին ոչինչ չեմ ասել ձեզ:

—Ճիշտ է, շատ ճիշտ է, դուք ոչինչ չասացիք ինձ այս մասին, բայց այս բոպէին ես «միջնորդութիւն» բառը լսեցի... Յետոյ, ձեր ներկայութիւնը մեր այս ընդհարմանը... Եւ, բացի դրանից, թոյլ տուէք ինձ մի քիչ աւելի սրտոտ լինելու. ես տեսնում եմ, որ դուք հաւատացել էք մօրս ասածներին և ձեր սրտում մեղաւոր էք համարում ինձ:

Մանէն այս անգամ շարժուեց տեղից, չըկարողանալով զսպել իր վրդովմունքը:

—Պարոն, եթէ չէք նկատում, որ ինքներդ ձեզ հակասում էք,—նկատեց նա խստօրէն:
—Այս բոպէին ասացիք, թէ ոչ ոք իրաւունք չունի խառնուելու ձեր ընտանեկան գործերին, մինչդեռ այժմ ձեր իրաւունքն էք համարում մանել ուրիշի սիրտը և քրքրել այնտեղ, թէ ինչ է մտածում ու զգում նա:

—Ներեցէք, տիկին, ես...

—Խնդրում եմ, թողէք ինձ հանգիստ:

Եւ Մանէն, սաստիկ յուզուած, դուրս գընաց արագ քայլերով:

Նախրեանը մնաց սառած իր տեղում՝ բերանը բաց, աչքերը չռած:

—Օ՜, օձ...թոյն...դժոխքի վիժմունք...Ե՞րբ պէտք է ազատուեմ քո այդ գարշելի դէմքից,—անհուն ատելութեամբ շշնջաց նրա քթի տակ Հեղինէն և դուրս վազեց ընկերուհու ետեւից:

Մանէին բռնեց նախասենեակում:

—Մանէ ջան, դու գնում ես:

—Ես սովոր չեմ այդպիսի տեսարանների և... ջղային եմ,—ասաց Մանէն, խուսափելով Հեղինէի աղերսող աչքերից և աշխատելով խլել յուզմունքից դողացող իր ձեռքերը նրա ձեռքերի միջից:

Հեղինէի աչքերը յանկարծ վառուեցին կատաղի վճռականութեամբ:

—Ես դուրս կանեմ նրան... փողոցից մարդիկ կըկանչեմ... ոստիկան կըկանչեմ...

—Ի՞նչ ես ասում... ի սէր Աստուծոյ,—շշնջաց Մանէն վախեցած:—Թող գնամ, աղաչում եմ թող...

—Սպասիր, Մանէ ջան: Մի վախենար, ոչինչ չեմ անիլ: Ես սաստիկ գրգռուած եմ, չեմ իմանում ինչ եմ ասում... Օ՜, դժողք, դժողք, կատարեալ դժողք... Այրւում եմ, խորովւում եմ, ուզում եմ մսերս կրծել, թէ ինչո՞ւ ֆիզիքապէս այսքան թոյլ եմ, ինչո՞ւ ձեռքերիս մէջ այնպիսի մի ոյժ չունիմ, որ բռնեմ կոկորդից և խեղդե՜մ... խեղդե՜մ... Սպասիր, մի փախչիր: Ոչինչ չեմ անիլ... դժբաղդաբար, ոչինչ չեմ կարող անել, ոչի՜նչ... արիւնս միայն ի զուր այսպէս կըպղտորեմ: Սպասիր: Գոնէ ասա, որ ինձնից նեղացած չես և չես մեղադրում ինձ:

Մանէն շատ լրջօրէն նայեց Հեղինէի աչքերին, որոնց յուսահատական-կատաղի փայլը փոխուել էր գրեթէ մանկական պաղատագին արտայայտութեան:

—Քե՞զ... Ոչ: Ես համոզուեցի, որ մեղաւո-

րը նա է։ Եւ նրա անամօթ սափհաստութիւնն էր, որ ինձ այսքան զրգռեց։

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, Մանէ ջան,— ասաց Հեղինէն, պինդ սեղմելով նրա երկու ձեռքերը։— Չես կարող երեւակայել, թէ որքան սիրում եմ քեզ և որքան թանկ է ինձ համար քո կարծիքը։ Լեզուիս մի նայիր. սիրտս շատ աւելի բարի է, քան լեզուս։ Գիտե՞ս ինչն է ինձ աւելի կատաղեցնում.— այն, որ ես կարծում էի, թէ ազատ եմ, ինչպէս երկնքի թռչունը, ինչպէս օդը, մինչդեռ տեսնում եմ, որ գլխից պատրաստել եմ այնպիսի մի բռնակալ, որպիսին չի կարող լինել նոյն իսկ մի դաղան-ամուսին, մի ճորտատէր։ Օ՜, հեռու է, հեռու է։ Ինչպէս երեւում է, դեռ շատ փորձանքներից պիտի անցնեմ ինձ կատարելապէս ազատ ու անկախ զգալու համար... Դէ գնա, ես քեզ չեմ ուզում պահել։ Ներիր, որ քեզ այսպիսի անհամ դրութեան մէջ դրի։ Նա ճիշտ էր ասում. քո ներկայութիւնը չպիտի ընտրէի լուացքս լուանալու համար։ Բայց այլ ես չեմ կարող համբերել, ո՛չ, չեմ կարող։ Դանակն արդէն ոսկորին է հասել։ Այս րոպէին այնպիսի լուացք լուանամ նրա գլխին, որ մէջը խեղդուի։ Դու գնա, իսկ ես հէնց այս րոպէին կը տեսնեմ այդ սրիկայի հետ իր սպառնացած հաշիւները։ Օ՜, նա դեռ չի ճանաչում ինձ... Գնա, ցտեսութիւն։

Երբ Մանէն շտապով դուրս եկաւ փողոց, վերեւից, բաց լուսամուտից։ նրա ականջին դիպան Հեղինէի կատաղի ծղրտոցները։ Այդ ձայները այնպիսի անհաճոյ գրգիռ պատճառեցին նրա ջղերին, ինչպէս խարտոցի կանչռտոցը սղոց սրելու ժամանակ։ Եւ նա շտապեց հեռանալ, ամօթահար այն բանից, որ այդ միջոցին խաղաղ փողոցով անցնող մի երկու մարդ կանգ առան տան դիմացը գտնուող մայթի վրայ և զարմացած ու հետաքրքրութեամբ նայում էին դէպի լուսամուտը։

IV

Հետեւեալ օրը, կէսօրից առաջ, Մանէն նամակ էր գրում ամուսնուն, երբ նախասենեակից նրա ականջին դիպաւ մի բամբ ձայն, որ հարցրեց դուռը բաց անող ծառային՝ «ո՞վ կայ տանը»։ Նա իսկոյն ճանաչեց եղբօր ձայնը և, գրիչը վայր ձգելով, դուրս վազեց։

Նախասենեակում նրա դէմ ելաւ Վահանը — հսկայամարմին և թիկնաւէտ մի երիտասարդ, կէս-այրուած մի հաստ սիգար բերանին։ Ծղօտէ լայնեզր գլխարկը յետ էր գցել ճակատից, որի վրայ քրտնքի առատ կաթիլներ էին դուրս ցայտել։ Հագած էր ուսերը խունացած դեղնագոյն ամառուայ վերարկու, որի ամենավերի կոճակն էր միայն

կցուած, իսկ փեշերը յետ էին քաշուել և երևան էին հանում նրա անսովոր հաստ փորը, որի վրայ աղեղնաձև կախ էր ընկած ժամացոյցի հասարակ մետաղի շղթան սևացած: Նա կըլինէր 30—35 տարեկան, սակայն երեսին մազ չկար ամենևին, որով շատ էր նմանում երեսը սափրած դերասանի: Գեղեցիկ ոչինչ չկար նրա արտաքինի մէջ, բացի միայն աչքերից, որոնք շարունակ ժըպտում էին ամենքին և ամեն բանի ուրախ հեգնութեամբ վերաբերուող բարեսիրտ մարդու քաղցր ժպիտով:

Բոյրը փարեց եղբօր վզին և կարօտի բուռն զգացման զեղումից լաց եղաւ:

Սակայն եղբայրն այդքան զգայուն չեղաւ. Նախ մեղմօրէն բռնեց քրոջ ձեռքերից, հեռացրեց նրան իրենից, յետոյ բերանից հանեց սիգարը և հարցրեց.

—Հը՞, ինչ է պատահել: Մեռա՞ծ էի, ինչ է, և յանկարծ յարութիւն առած ես տեսնում ինձ, Ղազարոսի պէս:

Մանէն ժպտաց և մատներով սրբեց արտասուքը:

—Գնա՜, ես քո քոյրը չեմ,—ասաց նա խռովուածի պէս, բայց դարձեալ ժպտում էր:

—Ա՛յ քեզ բան: Ինչո՞ւ:

—Ինչու... Որովհետև քանի օր է, որ եկել ես և նոր ես յիշում ինձ, ինչպէս միշտ:

—Ինչպէս միշտ: Ուրեմն էլ ինչու ես նեղանում: Եւ խօ յիշել եմ վերջապէս. դու

մ՛յդ տաս, Ղազարի քոյր, թէ չէ՝ մնացածը դատարկ բան է: Այսօր չլինի, վաղը լինի, ինչ վնաս: Մերը «եաւաշն» է: Ասիացի չենք: Բայց Աստուածդ սիրես, օգնիր, մի էս անտէրը հանենք:

Վահանը սիգարը դրեց բերանը, բաց արեց վերարկուի կոճակը, շուռ եկաւ և ձեռքերը մեկնեց դէպի քոյրը:

Մանէն բռնեց նրա վերարկուի թևերի ծայրերից, քաշեց, քաշեց և հազիւ կարողացաւ հանել:

—Դէ ասում ես. մեր «եաւաշը» որ չլինի, այսքան կըչաղանա՞նք. որ վերակուն չհանուի: Անտէրը հուպ է տալիս, է՜, կոներիս տակը: Երևակայիր, վեց տարի է, որ հագնում եմ, բայց էլի ափսոս գալիս է, որ դէն գցեմ: Իսկ ձեր այս շոգն էլ...

Վահանը գլխարկը կախեց վերարկուի վըրայ և թաշկինակով սկսեց սրբել քրտնած ճակատն ու շլինքը:

—Ես մի բանի վրայ եմ զարմանում և նեղանում քեզնից, Վահան,—նկատեց քոյրը լրջօրէն:

—Այսինքն:

—Ինչո՞ւ մեր տանը չես իջնում, որ գալիս ես Թիֆլիս:

—Կարծեցի նոր բան ես ուզում ասել: Մի վախենար, քոյրիկ ջան, թանկ հիւրանոցում չեմ իջած. վճարում եմ ընդամենը 75 կոպէկ:

—Ախր ինչո՞ւ, է:

—Որովհետև ես շատ եմ սիրում անկախութիւն տուած բանը։ Ես գիտես իմ նըշանաբանը. ոչ պարտաւորուել, ոչ պարտաւորեցնել։ Բացի դրանից, ես սարսափելի էգոիստ մարդ եմ. ուզում եմ աչքիցդ կարելոյն չափ հեռու լինել, որ աւելի շատ սիրես ինձ։ Բայց արի մի տեսնենք ոնց ես։ Ուղիղ մի տարի է, որ չեմ տեսել քեզ, անցած գարունքից։

Եւ եղբայրը քրոջ ձեռքից բռնած՝ ներս տարաւ։

—Աղջի ջան, շատ ես լղարել աչքումս,—ասաց Վահանը արևի պայծառ շողերով լուսաւորուած սենեակի մէջ լաւ դիտելով Մանէի դէմքը։—Եսկի չի երևում, թէ իմ քոյրն ես։ Ինչո՞ւ չես գալիս ինձ մօտ, որ չաղանաս։ Այս ամառ որ գաս, կլրտանեմ։ Հաւատա։ Մի քիչ տաք է մեր կողմերը, բայց վնաս չունի․ օդը առողջարար է։ Իսկ նոր գինեգործարանը արդէն պատրաստ է և այս տարի գինին պատրաստելու եմ արդէն ամենանորագոյն սիստեմով։ Այժմ եկել եմ մի քանի գործիքներ առնելու և այս քանի օրս այդ բանի ետևից էի ընկած։

—Լաւ, ո՞ւմ համար ես աշխատում այդքան։

—Աղջի համար։

—Դու ծիծաղում ես, բայց, տե՛ս, մազերդ արդէն սպիտակում են,—լրջօրէն նկատեց քոյրը, շօշափելով եղբօր մի քիչ երկարա-

ցած և սպիտակախառն մազերը քունքերի վրայ։—Ինչո՞ւ չես ամուսնանում։

—Որովհետև վախենում եմ լղարեմ։ Բացի դրանից, չէ՞ որ կինս էլ պէտք է աժդահա լինի ինձ պէս, իսկ այժմեան աղջիկներն ի՞նչ են ներկայացնում իրենցից,—ինչպէս գրում են ռուսերէն մատծող մեր գրողները․ —երեք շահանոց վառիկներ, այն էլ աղբանոցում քչուջ արած վառիկներ։ Բայց դու քոնն ասա։ Ո՞նց ես, լա՞ւ ես։ Լսեցի մարդդ նոր հանքեր է գտել, ճիշտ է։

—Ճիշտ է։ Այժմ նա այնտեղ է։

—Գիտե՞ս, ես նրան համ հաւանում եմ,. համ չեմ հաւանում. հաւանում եմ նրա եւրոպական ձեռնարկուի խիզախ ոգին, որը կարող է նրան շատ առաջ տանել. չեմ հաւանում նրա լրջութիւնը։ Լուրջ մարդիկ իմ մահն են։ Բայց ինձ մի բան է հետաքրքրում. ի՞նչպէս էք ապրում իրար հետ։

—Ի՞նչպէս թէ...

—Ուզում եմ ասել՝ սէրից-մէրից կա՞յ։

Մանէն սկզբում շփոթուեց, յետոյ ստիպեց իրեն ծիծաղել։

—Որովհետև, գիտե՞ս ինչու եմ հարցնում,—շարունակեց Վահանը,—նա սառը, դու տաք. նա, այսպէս ասած՝ ֆլեգմատիկ, դու սանգուինիկ։ Ի՞նչպէս են հաշտուում ձեր տեմպերամենտները։

—Շատ լաւ են հաշտուում, շատախօս։ Նախ նստիր, մի քիչ հանգստացիր,—ասաց քոյրը

և, եղբոր ձեռքից բռնելով, տարաւ նստեցրեց գրասեղանի մօտ։—Կամաց, չկոտրես,—բացականչեց նա ծիծաղելով, երբ աթոռը ճռճռաց Վահանի պնդագին մարմնի ծանրութեան տակ։

—Սրա համար չէի նստում, է,—ասաց Վահանը և թեքուեց գրասեղանի վրայ։—Այս ինչ է, գրականութեամբ ես պարապում։

—Ամուսնուս նամակ եմ գրում։

Վահանը ձեռքով ծածկեց նամակը։

—Կուզե՞ս ասեմ ինչ ես գրում։

—Ասա։

—«Սիրեցեալդ իմ Գրիշա, իմ անգինս, իմ պաշտելիս, իմ տէր և թագաւոր։ Մի՞թէ ինձ ուզեցիր նրա համար, որ բերես ձգես այս չորս պատերի մէջ և ինքդ հեռանաս, թողնելով ինձ սիրատոչոր, ինչպէս իր վարդի թփից պոկուած սոխակը վանդակի մէջ։ Մի՞թէ այն գանձերը, որ որոնում ես մայր հողի ծոցում, աւելի թանկ են քեզ համար, քան ես։ Ինչի՞ս են պէտք աշխարհիս թէկուզ բոլոր գանձերը, երբ դու մօտս չես, երբ ես մենակ եմ, տխուր, քո կարօտը քաշելով շարունակ։ Առաւօտ է գալիս իր քաղցրանուագ թռչուններով, իր ճաճանչափայլ արևով—ամեն ինչ մութ է թւում ինձ. գիշեր է գալիս իր շողշողուն աստղերով, իր հրաշափառ լուսնով—երկինքը թղպոտ է երևում աչքիս։ Եւ հեկեկում եմ ես սենեակիս մենութեան մէջ դառնագին ու վշտահար և տարածում

եմ ձեռքերս դատարկ օդի մէջ, շշնջալով՝ «ո՞ւր ես, ո՞ւր ես, արի՛, իմ սիրելի, արի՛, իմ պաշտելի, արի՛, իմ...» և այլն, և այլն, և այլն։ Ձեռքս կըկտրեմ, թէ այս ոճով և այսպիսի բան չես գրել։ Թո՛յլ կըտա՞ս կարդամ։

—Թոյլ եմ տալիս։

Վահանը վերցրեց նամակը և սկսեց կարդալ.

—«Ուզում ես՝ կարդայ, ուզում ես՝ չէ,—ինձ համար էլ այդ միևնոյն է,—բայց ես քեզ չեմ ազատիլ իմ հաշիւներից...»։ Սա ի՞նչ բան է։

—Կարդա՛, կարդա՛,—բացականչեց Մանէն, անկեղծ զուարճանալով այն խիստ կոմիքական արտայայտութեան վրայ, որ ստացել էր եղբօր դէմքը զարմանքից։

Վահանը շարունակեց կարդալ.

—«Անցեալ օր բանկից հանեցի ընթացիկ հաշուով 200 ռ.։ Այդ գումարից 48 ռ. տուի մայրիկի համար նոր վերարկուի, որովհետև այս շաբաթ հաղորդւում է. 15 ռ. տուի ինձ համար ամառուայ գլխարկի. 12 ռ. տուի խոհարարին անցեալ ամսուայ համար. 53 ռ. տուի քո գոված Սարիբէկեաններին, որոնք այնքան թաց փայտ էին ուղարկել, որ միայն մխում էր. 22 ռ. տուի...»։ Դէ, սա բանի նման չէ,—բացականչեց Վահանը, նամակը ձգելով գրասեղանի վրայ։—Այս ինչ յիմարութիւններ ես գրել։

Մանէն գլուխը ետ էր գցել և թուլանում էր ծիծաղից։

—Հ՛ը, ի՞նչ կասես,—ասաց նա.—ձեռքդ կտրո՞ւմ ես, թէ չէ։

Վահանը ուսերը վեր քաշեց։

—Օյինն եմ ասում, է՛։ Ես քեզ միշտ պոէտիք արարած եմ ճանաչել, և յանկարծ... վերարկու, խոհարար, թաց փայտ... Հիմա եմ հասկանում. ի զուր չէ, ախր, որ մատերիալիստի կին ես դարձել։

—Բայց ի՞նչ կասես, որ այդ մատերիալիստը չի ուզում իմ հաշիւները կարդալ և սաստիկ նեղանում է, որ ամեն նամակիս հետ մի երկար հաշիւ եմ ուղարկում իմ ծախսած փողերի մասին։

—Ի՞նչ կարող եմ ասել, բացի միայն այն, որ մարդ արարածը լի է հակասութիւններով։ Բանաստեղծութիւններն ատելով ատում եմ, բայց թարսի պէս մէկ էլ տեսար իրար ետևից շարւում են ուղեղիս մէջ չափաբերական շեշտերով՝ «Ո՛հ, ի՜նչ անոյշ և ինչպէս զով առաւօտուց փչես, հովիկ, ծաղկանց վրայ դուրգուրալով և մազերուն կուսին փափկիկ»։ Եւ մինչև անգամ սկսում եմ երգե՜լ, երևակայիր։ Եւ այս բանը միշտ պատահում է այն ժամանակ,—սա էլ շատ հետաքրքրական է,—երբ առաւօտները հագնում եմ կօշիկներս։ Պա՛հ, էլի մոռացայ,—յանկարծ բացականչեց Վահանը, ձեռքը խփելով ճակատին։

—Ի՞նչը։

—Եկածս օրից ուզում եմ նոր կօշիկ առնել, միշտ էլ մոռանում եմ։ Հոգուդ սատկեմ, այսօր, որ գնալիս լինիմ, միտս գցիր, թէ չէ խայտառակութիւն է։ Տես, է. կասես խողի դնչեր լինին,—ասաց Վահանը, ցոյց տալով իր մաշուած, ծամռուած և փոշեծածկ ահագին կօշիկները։—Լաւ, ի՞նչ ես ծիծաղում այդքան։

Մանէն յանկարծ դադարեց ծիծաղելուց, առաջ վազեց և, սաստիկ յուզուած, առաւ եղբօր ձեռքը։

—Վահան ջա՜ն... որ իմանաս որքա՜ն ուրախ եմ... որքա՜ն ուրախ եմ, որ եկել ես...

—Դէ, հիմա էլ սկսեցիր արտասուել... Նստիր։ Նստիր մի լաւ նայեմ։

Վահանն առաջ քաշեց մօտակայ աթոռը և քրոջը նստեցրեց իր դիմաց։

Մանէն շտապով սրբեց աչքերից դուրս ցայտած արտասուքի կաթիլները և նորից սկսեց ժպտալ։

Վահանը կարճ ժամանակ հետաքրքրութեամբ նայում էր քրոջ աչքերին, յետոյ ուսերը վեր քաշեց տարակուսանքով։

—Կանա՜յք... Անհասկանալի արարածներ եմ ասում, է՛։ Սֆինքսնե՜ր։ Մերթ ծիծաղ, մերթ լաց։ Կատարեալ գարնանային եղանակ. մերթ արև, մերթ անձրև։ Բայց չինի՞ թէ «արև է՝ վայ է, անձրև է՝ վայ է»։ Հ՞ը։

—Չեմ հասկանում ինչ ես ասում։

—Ուզում եմ տանել... Ո՞րտեղ է սկեսուրդ։

—Ժամումն է։

—Խօ չէ՞ք կռւում իրար հետ, ինչպէս ամէն հարս ու սկեսուր։

—Չէ։ Նա չափազանց բարի կին է, և ես շատ գոհ եմ նրանից։

—Է՛, փառք Աստծու։ Իսկ ամուսինդ... շատ ժամանակ է՞, հանքերումն է։

Մանէն մի քիչ շփոթուած, մի քիչ կասկածամտութեամբ նայեց եղբօր աչքերին, յետոյ բռնի կերպով ծիծաղեց և կամաց խփեց նրա ձեռքին։

—Դու քո՛ մասին պատմիր, քո՛. ի՞նչ ես շարունակ իմ մասին հարցնում,—ասաց նա։

—Իմ մասին ի՞նչ պատմեմ, քոյրիկ ջան։ Հացը բոլ, գինին բոլ, ուտում եմ, խմում, մթնում է՝ քնում։ Քեզ էլ նամակ չեմ գրում։ Դու էլ ջգրու ոչինչ չես գրում։ Ու երկուսս էլ քվիթ ենք դուրս գալիս։

—Սպասիր։ Ինչո՞ւ երէկ Հեղինէին խաբել ես, թէ ինձ մօտ ես եկել, մինչդեռ քո երեսն ես այսօր եմ միայն տեսնում։

—Որովհետև ապստամբ օրիորդներին ես շատ եմ սիրում։—Նա օրիորդ է, չէ՞։—Իսկ յայտնի է, որ ում սիրում ես, նրա հետ ուզում ես կատակ անել։ Նրա թխլիկ դէմքը որ տեսնում եմ, ուզում եմ այսպէս հինգ մատներովս բռնել, կամաց... այսպէս... շուռ տալ ու յանկարծ—հո՛պ—նորից գետնի վրայ դնել։

—Բայց գիտե՞ս, որ նա քեզ շատ է հաւանում,—ասաց Մանէն ծիծաղելով։

—Դրո՛ւստ,—բացականչեց Վահանը կոմիքական սարսափով։

—Նրա ահագին մարմնից որ չվախենամ, ասում է, անպատճառ կըսիրահարուեմ։

Վահանն աչքերը ձգեց առաստաղին և ձեռքերը բարձրացրեց։

—Փա՛ռք քեզ, Տէ՛ր,—արտասանեց նա որպէս թէ թեթևացած։—Ա՛յ, չէի կարծում, թէ չաղութիւնս, որից այսքան նեղւում եմ ես, կարող է փրկել ինձ այդպիսի մի մեծ վտանգից։ Մի հետաքրքրական բան են պատմում նրա կեանքից, չե՞ս լսել։

—Ի՞նչ բան։

—Պատմում են, որ իբր թէ մի անգամ, իր ապստամբ կաւալերներով շրջապատուած անցնում է եղել մի գինետան առաջով։ «Տղէրք,—ասում է,—ի՞նչ կըտաք մտնեմ մի բաժակ արաղ կոնծեմ»։—«Թէ որ կըմտնես,—ասում են կաւալերները,—մի-մի պաչ կըտանք»։—«Հա-ա՛,—ասում է,—դէ հիմի թամաշ արէք»։ Ու քո այդ fin de siècle օրիորդը ղորթ որ չի ուզում մտնել։ Այնպէս որ էլի կաւալերներն են ամաչում և կռնից բռնում ետ քաշում։

—Վահան, մի՞թէ չես խղճահարւում, որ նրա մասին այդպիսի... բաներ ես հնարում,—նկատեց Մանէն անկեղծ, մեղմ նախատինքով։—Չէ՞ որ, ուրիշ տեղ որ պատմես, կա-

րող են գտնուել մարդիկ, որ կըհաւատան։

—Հաւատացնում եմ, քոյրիկ ջան, այս պատմութիւնը ես չեմ հնարել։ Ես միայն իմ լսածն եմ պատմում։ Պատմողն էլ ո՜վ էր,—մի խաւարամիտ։ Ի դէպ, դու խաւարամիտ ե՞ս, թէ ազատամիտ։

Մանէն ծիծաղեց։

—Խաւարամիտ եմ։

—Թիւհ... Բանն ինքն արդէն հասում է։ Ա՛խ, ներողութիւն, քոյրիկ ջան. դու չէ, դու չէ։ Դու հոտաւէտ ես վարդի պէս։ Բայց թունդ խաւարամիտը քո մարդը պէտք է լինի, այ, ի փառս Հայաստանեայց կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցւոյ։ Ափսոս, որ լաւ չեմ ճանաչում նրան։ Չափից դուրս պեդանտ մարդ է երևում աչքումս։ Դրա համար սիրտս չի կպչում,—չնեղանաս խնդրում եմ։ Բայց և այնպէս պէտք է մի անգամ գնամ տեսնեմ ինչ բանի է։ Մեզնից հեռու կըլինի մօտ մի հարիւր վերստ։ Խօսքը մեր մէջ մնայ. բացի հանքարդիւնաբերութիւնից, վաշխառութեամբ էլ խօ չի՞ պարապում։

—Վահա՜ն, ի՜նչ չար լեզու ունիս,—նորից նախատեց նրան քոյրը, այս անգամ նկատելի կերպով նեղացած։

—Ես մեղայ Աստծու, ես մեղայ Աստծու... Բայց այս ի՞նչ տեսակ տուն ես պահում, ոչ մոխրաման կայ, ոչ լուցկի։

Մանէն վեր կացաւ, դուրս գնաց և երբ

նորից ներս մտաւ մոխրամանն ու լուցկու տուփը ձեռքին, Վահանը վերցրել էր գրասեղանի վրայ դրուած փառակազմ գրքերից մէկը և թերթում էր՝ հանգած սիգարն ատամների մէջ բռնած։

—Այս գիրքը կարդացել ես, ի հարկէ,—ասաց եղբայրը։

—Այդ ի՞նչ է։

—«Դոն Կարլոս»։

—Հա. անցեալ օրը վերջացրի։

—Այստեղ է ասուած, չէ՞... Ի՞նչպէս է անունը։

—Ո՞ւմ անունը։

—Թագուհու։

—Ելիսաբէթ։

—Հա՜։ «Ելիսաբէ՛թ, Ելիսաբէ՛թ, դու խլեցիր ինձնից իմ դրախտը, որպէսզի Փիլիպպոսի ծոցում փչացնես»։ Կարծեմ այսպէս է ասում, չէ՞, Դոն Կարլոսը։

Մանէն արագ մի հայեացք ձգեց եղբօր վրայ, յետոյ սկսեց ուղղել բազմոցի վրայ դրուած ձեռակար բարձիկները։

—Լաւ չեմ յիշում... Հա՜, կարծեմ այդպիսի մի բան կայ,—ասաց նա շինծու անտարբերութեամբ։—Բայց լսիր ինչ եմ ասում,—յանկարծ դարձաւ եղբօրը։—Երկա՞ր ես մնալու այստեղ։

Վահանը գիրքը ծածկեց և դրեց գրասեղանի վրայ։

—Ի՞նչ է, արդէն ձանձրացա՞ր ինձնից: Իսկոյն կըգնամ:

—Է՜հ,—պատասխանեց Մանէն ջղայնօրէն:—Ուզում եմ ասել Զատկին մեզ մօտ կըլինի՞ս:

—Այդ բանը գործերից է կախուած, քոյրիկ ջան. կարող է պատահել, որ հէնց վաղը գնամ, և կարող է պատահել, որ մի ամիս էլ մնամ, որովհետև գիւղատնտեսական ընկերութեան մէջ էլ մի քանի գործեր ունիմ:

—Կարող է պատահելը մի կողմը թող. ես ուզում եմ, որ դու մնաս... Հասկանո՞ւմ ես:

—Ոչ, չեմ հասկանում,—ասաց Վահանը սիգարը վառելով:—Այսինքն չեմ հասկանում, թէ ինչու ես ուզում, որ մնամ:

—Ախր մենակ ենք, մարդ չկայ: Գրիգորն էլ գրում է, թէ գործերն այնքան խառն են, որ Զատկին հազիւ թէ կարողանայ գալ: Էլ ի՞նչ Զատիկ, որ ամեն օրուայ պէս տխուր ու տաղտկալի պիտի անցկացնենք: Սա ի՞նչ կեանք է. մարդ չի իմանում ինչ անի, ուր գնայ, ում հետ խօսի: Այս գրքերն էլ որ չլինին, ես կըմեռնեմ ձանձրոյթից:

—Խեղճ, խեղճ քոյրիկս: Ախր գիտէի, որ նամակիդ մէջ այն չպէտք է գրէիր, ինչ որ գրել ես: Ես միշտ այն համոզումն ունէի, որ մատերիալիստի հետ ամուսնանալդ մի սխալ քայլ էր: Դու պէտք է պոէտի կին լինէիր, որ փեշը փեշից կարած՝ չհեռանար մօտիցդ, թէ չէ... Էլի՞ երեխայ չես բերում:

—Ո՛ւհ, էլի սկսեցի՞ր:

—Մի ղայրանար, քոյրիկ ջան. զաւակ որ ունենաս, ախր, այդպէս լացկան չես լինիլ: Բայց հանաքը մի կողմը մնայ. շատ ես լղարել: Այդ ի՜նչ է վիզդ. կարապ ե՛ս: Իսկ ականջներիցդ լոյսն այնպէս է թափանցում, որ կարծես կարմիր լապտերներ ես կախել: Բայց մի վախենար, դու դարձեալ սիրուն ես, այնքան սիրուն ու նազելի, որքան... Ելիսաբէթը: «Ելիսաբէթ, Ելիսաբէթ, դու խլեցիր ինձնից իմ դրախտը, որպէսզի...»:

Վահանը վեր կացաւ, մատով կամաց խըփեց քրոջ կզակին, ծիծաղեց և մօտեցաւ լուսամուտին:

Երկինքն երէկուայ պէս մաքուր էր ու բարձր. արևը նոյնպէս թափում էր ներքև իր տաք ու պայծառ շողերը: Դիմացը գըտնուած տան բաց պատուհաններից, վերին յարկում, դաշնամուրի ձայներ էին գալիս, պեդալի կրծքային թախծալի հնչիւններով հարուստ: Այդ պատուհաններից մէկի վրայ դրուած էր կլոր ու բարձր մի վանդակ, որի մէջ ճախրում էր մի դեղձանիկ առանց ձայն հանելու:

Վահանը ձեռքով արաւ քրոջը:

—Արի այստեղ:

Մանէն մօտեցաւ նրան:

—Տեսնո՞ւմ ես այն դեղձանիկը վանդակի մէջ: Ինչքա՞ն նման է քեզ... այն տարբերութեամբ միայն, որ դու ինքդ ես լալիս,

իսկ նրա տեղ լաց է լինում դաշնամուրի պեդալը։

Մանէն ոչինչ չասաց, միայն հարցրեց.

—Այսօր ճաշին մեր տանն ես, չէ՞։

—Թէ որ ուզում ես, կըմնամ։

—Մենք պաս ենք պահում այս շաբաթ. կուզե՞ս քեզ համար ուտիսուայ բան պատրաստել տամ։

—Ոչինչ չի հարկաւոր։ Այս մի օրը լոբի ուտելով քո չափ չեմ լղարիլ, մի վախենալ։ Այս սկեսուրդ չէ՞, որ գալիս է։ Այն ծերունին ո՞վ է հետը։ Կասես Բաղամեանի հօրեղբայրը լինի։

—Այո, նա է։

—Ժամիցն են գալիս։

—Այո։

—Ի՞նչ գտել են իրար։ Խեղճ մարդ։ Տես, է։ Sic transit qloria mundi!... Ի դէպ. այդ Բաղամեանները ի՞նչ ազգական են ամուսնուդ։

—Սկեսուրս այդ ծերունու քրոջ տալի աղջիկն է։

—Է՜, այդ շատ հեռու գնաց։ Այդպէս որ գնանք, ես ու դու էլ դալայ-լամայի ազգական դուրս կըգանք։

V

Ներս մտան Օսանն ու Զաքարը։ Զաքարը նախասենեակում հանել էր հնամաշ վերարկուն, որի տակ հագած էր Աստուած գիտէ քանի տարուայ երկարափեշ մի սիւրտուկ խիստ կեղտոտ ու ճմռուած։ Անդրավարտիկի կարճ տոտերից մէկը, ինչպէս միշտ, ներս էր պրծած կիսակօշկի լայնացած ճիտը, որի ականջի մի ծայրը պոկուել և կախ էր ընկել երկարումէկ։

Օսանը խիստ ուրախացաւ, որ Վահանին տեսաւ, բայց և բաւական յանդիմանեց նրան, որ քրոջը մոռացել է։

—Բաս ի՞նչպիսի եղբայր իմ, որ չմոռանամ,—նկատեց Վահանը կատակով։—Ո՞նց ես, ո՞նց, խնամի, դու ա՛յդ ասա։ Պառաւել ես։

—Հա՛, որդի ջան, պառաւել եմ։ Գլխիս ջրերը թուլացել են։ Աչքերիցս էլ ջուր է գնում։

—Ժամիցն ես գալիս, օղորմած կենայ։

—Այն ժամը պահի քու արևը, որդի ջան։

—Պարոն Զաքա՛ր։ Դո՞ւ ո՞նց ես։ Դու խօ բոլո՛րովին պառաւել ես։

—Բաս ուզում էիր, որ ջահէլանա՞մ, հէրդ լուս դառնայ։ Ես ա՛յն ցաւն ու դարդն եմ տեսե՞լ...

—Հա՛յ գիդի հա։ Միտդ է՞, որ Գէորգ աղի քարվանսարում ապրանքի հակերի գլխին կանգնած, տէր-ողորմեան ձեռիդ. մէկ-մէկ բաց անել էիր տալիս ու...

—Թո՛ղ, թո՛ղ,—շտապով ընդհատեց Վահանին ծերունին։—Այդ բաները մի՛, մի՛տս մի՛ բերի։

—Աւա՜ղ փառացն անցաւորի, չէ՞, պարոն Զաքար։ Պառաւներդ որ չլինէք, մեր ժամերը խօ փակուեցին։ Հը՞, պարոն Զաքար։

—Է՛լի որ, էլի որ,—պնդեց ծերունին։—Թէ որ աստուածպաշտութիւն մնացել է, էլի պառաւներիս մէջ է մնացել։ Ջահէլներդ էք, որ ոչ Աստուած էք ճանաչում, ոչ Քրիստոս։

—Բաս Հոգին Սո՞ւրբ։

—Ոչ էլ Հոգին Սուրբ։

—Դէ ո՞նց անենք, պարոն Զաքար, ասում են Աստուած չկայ։

—Ի հարկէ. որտեղ սատանայ կայ, այնտեղ Աստուած ի՞նչ ունի։

Վահանը ծիծաղեց։

—Ասում են սատանայ էլ չկայ ախր։

—Ասո՜ւմ են, ասո՜ւմ են... Ո՞վ է ասում։ Բաս ջահէլներդ ի՞նչ էք, որ սատանայ չէք։ Հիմիկուայ ամեն մի ջահէլի փորում մի-մի սատանայ կայ պպզած։

—Բաս իմ փորումը երկուսն էլ կըլինի, չէ՞, պարոն Զաքար։

Օսանն ու Մանէն ծիծաղեցին։ Զաքարը, որը խօսում էր ամենայն լրջութեամբ, իր թաւ յօնքերի տակից նայեց Վահանի ահագին փորին և նոյնպէս սկսեց ծիծաղել զառամեալ ծերունու անձայն ու դողդող ծիծաղով։

—Երեքն էլ կըլինի ու,—նկատեց նա։

—Ղորթ, ի՞նչ չաղացել ես, Վահան,—աչքով չտամ,—ասաց Օսանը։—Քոյրդ է՞, քանի գնում՝ լղարում է։

—Թող մի-երկու սատանայ կուլ տայ, նա էլ կըչաղանայ։ Չէ՞, պարոն Զաքար,—հարցրեց Վահանը և նստեց ծերունու կողքին։ Նա ձեռք տուաւ Զաքարին և էլ բաց չթողեց նրան։ Գիտէր ամենքին յարմարուելու և ամենքի հետ խօսելու ձևը և խօսակցին գրաւելու կախարդական մի ոյժ ունէր։

Ճաշի սկիզբը, Վահանի շնորհիւ, անցաւ ամենաուրախ տրամադրութեան մէջ։ Մանէն սիրով նայում էր եղբօր մշտածիծաղ աչքերին, դիտում նրա հանգիստ, ինքնավստահ շարժումները և անդադար քրքջում նրա կատակների վրայ։ Նոյն իսկ Զաքարը, որ թէ ծերութիւնից և թէ վշտից, ըստ երևոյթին, ամիշտ կորցրել էր ծիծաղելու ընդունակութիւնը, նա էլ ծիծաղի նման ինչ-որ անորոշ ձայներ էր արձակում անատամ բերանից։ Իսկ Օսանն ուղղակի չէր կարողանում կարգին ճաշել շատ ծիծաղելուց և թաշկինակով անդադար սրբում էր աչքերից գըլգլացող ջուրը։

Չնայելով իր հսկայ մարմնին, Վահանն ուտում և խմում էր համեմատաբար չափաւոր կերպով։ Պասուայ կերակուրները չէին դրա պատճառը և ոչ էլ այն, որ նա շատ ուտելու պահանջ չէր զգում, — ընդհակա-

ակը,—այլ այն, որ բժիշկները պատուիրել էին շատ չուտել։ Մինչդեռ Զաքարը չտես մարդու ագահութիւն էր ցոյց տալիս։ Եւ իսկապէս, երբեմն լաւ ուտել-խմելուն սովոր, այժմ շատ հազիւ էր պատահում, որ նա կուշտ փորով հաց ուտէր։ Այդ բանը գիտէր Մանէն. գիտէր, որ Զաքարը, ինչպէս միշտ, այս անգամ ևս եկել էր իրենց տուն յատկապէս իր քաղցած փորը կշտացնելու համար, ուստի նրա հոգացողութեան գլխաւոր առարկան այն էր, որ առատ կերպով կերակուր ու գինի մատակարարէ այդ դժբաղդ ծերունուն, մանաւանդ գինի, դէպի որը առանձին թուլութիւն ունէր ծերունին։

Զաքարի հետ կատակներ անելիս Վահանը խօսք բաց արեց նրա եղբօր որդու՝ Աշոտ Բաղամեանի մասին։ Ծերունին բորբոքուեց։ Գինին արդէն ընկել էր նրա գլուխը։ Նա ասաց, որ իր եղբօր որդու անունը չտան, որ Աշոտը «փարմասոն» է դառել, ժամ չի գնում, չի հաղորդւում, ուշունց է տալիս կաթողիկոսին, հակառակ է Գրիգոր Լուսաւորչի հաւատին, եկեղեցին ուզում է քանդել, պասը յիմար բան է համարում, մարդ ու կնոջ քարոզում է, որ իրարից բաժանուեն և ում հետ ուզում են՝ նրա հետ ապրեն և ուրիշ «այդ տեսակ բաներ»։ Օսանը լսում էր նրան զարմանքով, իսկ Վահանը զուարճանում էր ծերունու բորբոքման վրայ,

անդադար խթխթում նրան և ծածուկ աչքով անում քրոջը։ Մինչդեռ այդ անսպասելի միջադէպը յանկարծ փոխել էր Մանէի ուրախ տրամադրութիւնը։ Նրան այլ ևս դիւր չէին գալիս եղբօր կատակները, և ամեն անգամ, երբ Վահանը բորբոքում էր պակասամիտ ծերունուն իր եղբօր որդու վրայ աւելի խիստ բառերով յարձակուելու, Մանէն չէր կարողանում զսպել իրեն, որ յանդիմանական հայեացքներ չձգէ եղբօր վրայ։

Երբ սեղանը հաւաքեցին, Զաքարը պարզապէս արբած էր, այնպէս որ, երբ վերկացաւ, քիչ մնաց վայր ընկնէր· Վահանը բռնեց նրա թեւից և տարաւ պառկեցրեց փոքրիկ թախթի վրայ, իսկ Մանէն մի բարձ դրեց նրա գլխի տակ։ Ծերունին միանգամայն թուլացած՝ ինչ-որ մրթմրթաց, ըստ երեւոյթին օրհնեց քոյր ու եղբօր ցոյց տուած հոգացողութիւնը և գրեթէ իսկոյն էլ քնեց, խաղաղ փափսացնելով քթածակերից։ Օսանը նոյնպէս, իր սովորութեան համաձայն, հեռացաւ իր սենեակը մի քիչ «հանգստանալու», որպէսզի երեկոյեան դարձեալ ժամ գնար։ Իսկ քոյր ու եղբայր առանձնացան հիւրասենեակը։

Վահանը թիկն էր տուել ասեղնագործ թաւշեայ բարձիկներով և մետաքսեայ մութաքաներով զարդարուած բազմոցի վրայ և ծխում էր բերանից անպակաս սիգարը։ Ճաշից յետոյ մի տեսակ ծուլութիւն էր տիրել

նրա բոլոր անդամներին, և նա ընկած էր բազմոցի վրայ ծանր ու անշարժ, նեղուելով իր չաղութիւնից։ Ճաշասենեակի բաց դռնից լսւում էր պատի ժամացոյցի լեզուակի թիք-թաքը։ Այդ թիք-թաքը, ճաշից ծանրացած ստամոքսը, շուրջը տիրող անդորրութիւնը և բաւական տաք օդը քուն էին բերում նրա վրայ։

Մանէն նստած էր լուսամուտի առաջ և մտախոհ նայում էր դէպի փողոց։ Փողոցում, ուղղակի լուսամուտի տակ, ցցուած էր հեռախօսի սիւներից մէկը, որի վրայով անցնող կարմրաւուն երկաթալարերը մի տեղ շողշողում էին արևի տակ։ Փողոցը խաղաղ էր. հեռուից միայն լսւում էր երբեմն-երբեմն տրամվայի զանգակի ձայնը։ Այս սենեակից ևս երևում էր դիմացի տան պատուհանի վրայ դրուած վանդակը, որի մէջ դեղձանիկն առաջուայ պէս լուռ՝ ճախրում էր թառերի վրայ վերևից ներքև և ներքևից վերև աստիճանական կարգով։ Մանէն յիշեց եղբօր համեմատութիւնը և զարմացաւ, թէ որքան ճիշտ կերպով ըմբռնել էր նա իր դրութիւնը։ Միթէ, յիրաւի, ինքը նման չէ այդ խղճուկ թռչնակին։ Փակուած, միշտ փակուած, ցմահ փակուած, միշտ ձգտելով դէպի ազատութիւն և միշտ էլ անկարող լինելով իրագործել իր այդ ձգտումը։ Վանդակի ցանցերը չեն միայն, որ խանգարում են նրան, այլ և սովորութիւնը, անվստա-

հութիւնը, վախը և ցանցերից այն կողմը գտնուած անյայտութիւնը խորհրդաւոր ու ահաւոր, ինչպէս ամեն մի անյայտութիւն։ Բաց արա վանդակի դռնակը, և թռչնակը դէպի ազատութիւնն ունեցած իր բոլոր ձըգտումով հանդերձ թերևս դուրս չգայ այնտեղից և խծկուի մի անկիւն՝ վախեցած այն ահաւորութիւնից, որ ներկայացնում է դռնակից դուրս ազատութեան անյայտը...

—Ճիշտ որ աննախանձելի պիտի լինի դրութիւնդ...

Մանէն ցնցուեց և արագօրէն նայեց եղբօրը զարմացած, թէ մի գուցէ այն, ինչ որ մտածում էր, արտայայտել էր խօսքերով։

Վահանն առաջուայ պէս թիկն էր տուած հանգիստ, նայում էր ատամների մէջ բռնած սիգարի մոխրածածկ ծայրին և խաղացնում էր մի ոտը՝ միւս ոտի ազդրին դրած։

—Այս է, էլի, էն շրջանը, որի մէջ ապրում ես... այդ երկու պառաւները,—շարունակեց նա։—Բայց չէ, այնտեղ կան ուրիշներն էլ. fin de siècle կամ, ինչպէս կասի պոլսեցին՝ դարավերջիկ օրիորդ Սոլիկեան, նրան սրտակից և, եթէ չեմ սխալւում, կենակից Նասիբեան, յետոյ... ամենամեծ ռահվիրաներից մէկն առաջադիմականների բանակում—Բաղամեան... Երկու կողմից էլ քվինթ-էսէնցիա։ Սրանք ա՛յս են փչում մի ականջումդ, նրանք մի ուրիշ

բան են զրդացնում մեր ականջում: Մի կողմից՝ ժամ ու պատարագ, Աստուած ու Քրիստոս, պաս ու հաղորդ, դժոխք ու սատանայ. միւս կողմից՝ «փարմասոնութիւն», եկեղեցու կործանում, լոյս, հանրամարդկային գաղափարներ, ապահարզան, ազատ սէր, առաջադիմութիւն և ես ինչ գիտեմ՝ ուրիշ ինչ քար ու քացախ... Եւ եթէ այս բոլորի վրայ աւելացնենք քո վառ երևակայութիւնը, որ երբեմն էկզալտասիոնի է հասնում, այն ժամանակ...

Վահանը բերանից հանեց սիգարը և նայեց քրոջը:

—Ճշմարիտ, ես շատ եմ հետաքրքրւում և կուզէի իմանալ, թէ ինչ է քո դերը այդ երկու հակառակ բևեռների մէջ:

Մանէն չկարողացաւ դիմանալ եղբօր հետաքննին հայեացքին և ակամայ խոնարհեց աչքերը: Նա այժմ, չգիտէր ինչու, վախենում էր եղբօր հաստատութիւնից:

—Չգիտեմ,—արտասանեց նա կամաց:

Վահանն ուսերը թօթուեց և յօրանջեց:

—Չգիտեմութի՜ւն... Բաւական նախանձելի դրութիւն: Մեր ժամանակ փիլիսոփաներն են միայն, որ տալիս են այդ պատասխանը կեանքի և մահուան առեղծուածի առաջ կանգնած: «Չգիտեմ»: Ողորմելի՜ պատասխան, հաւասարակշռութիւնը չգտնող հոգիների պատասխան, ինչպէս ժամացոյցի յարատև տատանուող լեզուակի միակերպ

թիք-թաքը.—լսի՛ր (Վահանը մատով ցոյց տուեց ճաշասենեակի դուռը), կարծես թէ հարցնում է տարակուսանքով՝ ո՞ր կողմը, ա՞յս թէ այն, ա՞յս թէ այն, և ինքն էլ պատասխանում է իրեն բութ յուսահատութեամբ՝ չգի-տեմ, չգի-տեմ, չգի-տեմ...թի՛ք-թաք, թի՛ք-թաք, թի՛ք-թաք... Անիծածը խօսում է կարծես: Իսկ ես գիտեմ.—ոչ այս և ոչ այն կողմը, այլ ուղղակի մէջ տեղը, ուրեմն՝ ստո՛պ, կանգնիր:

—Բայց այն ժամանակ լեզուակն այլ ևս չի խօսիլ, և ժամացոյցը կըմեռնի...

Վահանը նայեց քրոջ խորհրդաւոր աչքերին, ըստ երևոյթին յանկարծակիի եկած նրա այդ անսպասելի պատասխանից, յետոյ յանկարծ ծիծաղեց:

—Մարդ լսի, կասի՝ քո՛յր ու եղբայր այս ինչ նրբաքննին խօսակցութեամբ են զբաղուած: Շատ մարդկանց ուղեղը զարգանում է երբեմն յիմարութիւններ դուրս տալու համար: Ով ճաշից յետոյ զուարճալի բաներով կըզբաղուի, որ կերածը լաւ մարսի, մենք... փիլիսոփայութիւններով ենք զբաղւում: Լեզուակն այլ ևս չի խօսիլ, ժամացոյցը կըմեռնի... Ռուսի չորտն է խաբար— ինչե՛ր ենք դուրս տալիս... լոբի ուտելուց յետոյ:

Եւ Վահանը սիգարը նորից բերանը դրեց, երեք բարձիկ իրար վրայ հաւաքած՝ քաշեց գլխի տակ ու երկարումէկ ձգուեց բազմոցի

վրայ երեսն ի վեր։ Նա աչքերը ձգեց առաստաղից կախուած ջահին, որի ապակեայ գնտերը տեղ-տեղ պլպլում էին շողակնի երանգներով, և նորից սկսեց ականջ դնել ժամացոյցի քնարեր թիք-թաքին։

—Զարմանում եմ, որ դաշնամուր չես պահում,—ասաց նա, աչքերը հեռացնելով ջահից և ման ածելով ընդաձրակ հիւրասենեակի մէջ։—Այս բոպէիս ամենայն հաճութեամբ կըլսէի որևէ պոպպուրի կամ վալս, չքնելու համար։ Բայց չէ, այնտեղ ննջում են երկու անտիք պառաւներ, նրանց քունը կըխանգարուի։ Իսկ ես... (Վահանը նորից յօրանջեց առաջուանից աւելի երկարատև) ես էլ կըքնեմ, ինչպէս երևում է նշաններից։ Իսկ դու... դու կըմնաս արթուն... ժամացոյցի լեզուակի պէս... Տես է, ինչ միւզիկ է սարքել մեր sic transit-ը... Աստուած սիրես, փակիր այն դուռը։

Մանէն վերկացաւ և կամաց փակեց ճաշասենեակի դուռը, որտեղից լսւում էր Զաքարի կերկերաձայն խռմփոցը երբեմն այնքան տարօրինակ ու ընդհատուող, որ թւում էր, թէ ծերունին խեղդւում է։

—Ապշում ես, թէ այս ինչ արարած է մարդ կոչուած անասունը,—ասաց Վահանը։—Մի հարցնող լինի այդ ծերունուն՝ էլ ի՞նչ ունիս, որ ապրում ես, ինչո՞ւ ես ապրում, ո՞ւմ համար ես ապրում, ի՞նչ ես սպասում աշխարհից... Եւ դեռ դատում է, վի-

ճում, բողոքում, զայրանում... Չես հասկանում, էլի, չես հասկանում... Բայց քո այդ պարոն Աշոտ Բաղամեանին ասա՝ ինչ ուզում ես—գրիր, ինչ ուզում ես—քարոզիր, միայն թէ քաղցած մի պահիր այդ ողորմելի ծերունուն, լաւ չէ... Հա՛, քեզ չե՞մ պատմել։ Սրանից վեց տարի առաջ, Մոնպելիէից որ վերադառնում էի հայրենիք, Պարիզում հանդիպեցինք իրար։ Հարիւր ֆրանկ փոխ ուզեց—տուի. բայց մինչև օրս էլ թէ պէտք է ստանամ։ Մինչև այժմ չեմ յիշեցրել, բայց այս անգամ որ տեսնեմ—կասեմ։ Էլ ձեր տուն չի՞ գալիս, առաջուայ պէս։

—Գալիս է։

—Կասեմ, անպատճառ կասեմ,—կրկնեց Վահանը։—Վեց տարին կարծեմ բաւական է։ Ազատամտութեամբ զբաղուելը լաւ բան է, բայց պարտքի վճարումն էլ խօ պախարակելի բա՞ն չէ։ Մեր գիւղում մի մանրունք ծախող ունինք. գաւառից ոտը դուրս չի դրել, բայց այնքա՛ն թունդ ազատամիտ է, որ քարի վրայ դնես, քարը կըճաքի։ Գլադստոնից ու Պառնէլից է խօսում, իսկ Բիսմարկին որ ճանկը գցեն, չի խնայիլ նրա քաչալ գլխի երեք հատիկ մազերից մէկն անգամ—այնքան թունդերիցն է։ Նրանից որևէ բան առնելիս, երբ կասկածում եմ ապրանքի որակութեան վրայ, մինչև որ Բաղամեանի արևով չեմ երդուեցնում, չեմ

հաւատում, թէև Բագամեանի երեսը չի էլ տեսել: Մի անգամ ասացի նրան, որ Բագամեանը հարիւր ֆրանկս ուտում է: Փոհ, պէտք է տեսնէիր ինչ օյիններ հանեց գլխիս: Ուժը պատէր, հում-հում կուլ կըտար: Ասենք, Նասիրեանն էլ պակաս հեղինակութիւն չի վայելում գաւառում: Նրա յօդուածները... Տէր իմ ամենակալ, այդ ինչ յօդուածներ են: Թանաքո՞վ է գրում, թէ արիւնով: Որքա՜ն կրակ ու եռանդ, որպիսի՜ շանթ ու կայծակ: Երբէք մաքիցս չի անցնիլ Պառնէլի մահուան առթիւ գրած նրա մի յօդուածը: Երեւակայիր, մարդն Իռլանդիայի «անթագ թագաւոր» էր կոչւում, և յանկարծ խաւարամիտ Ալբիոնը նրան այն դրութեան է հասցնում, որ խեղճը ստիպուած է լինում անձնասպանութիւն գործել: Պատճառը: Որովհետև սիրելիս է լինում Օ'Շի անունով ինչ-որ մի կապիտանի կնոջ—սարսափելի մի յանցանք, որ ո՛չ մի կերպ չի ուզում ներել նրան «չոպոր» անգլիացին, «բուրժուական մորալի այդ տիպար ներկայացուցիչը»... Օ՜, Բրիտանիա, Բրիտանիա, որ իմանաս ինչպիսի՜ քնձռոտ մկներ են կրծում քեզ... է՜...

Այդ «է»ն Վահանի բերանում փոխուեց երկարատև մի յօրանջի, իսկ այդ յօրանջի շարունակութիւնն եղաւ ժողովրդական երգի մի երկտողեանը՝

Էս ինչ խաբար դարու հասանք, հարալէ,
Էս ինչ խաբար դարու հասանք, հարալէ:

Երգը նորից փոխուեց յօրանջի, առաջուաններից աւելի երկարատև և նեարդային:

—Առ այս սիգարը, քունս արդէն տանում է,—ասաց Վահանը:

Մանէն եղբօր ձեռքից առաւ հանգած սիգարը, դրեց մոխրամանի մէջ և հարցրեց.

—Կուզե՞ս բան ծածկեմ:

—Որ տապակուե՞մ: Ոչինչ հարկաւոր չէ: Միայն շատ չթողնես, որ քնեմ. մի ժամից վեր կացրու:

Վահանը քնեց հէնց այնպէս, ինչպէս որ պառկած էր, երեսն ի վեր, և քնելուն պէս սկսեց խռմփացնել, սկզբում թեթև, յետոյ աւելի ու աւելի ուժգին: Առանց այն էլ նա կարծես թէ վիզ չունէր, իսկ այժմ, պառկած դրութեան մէջ, նրա վիզը բոլորովին կորել էր և վզի տեղ դուրս էին պրծել նրա չաղ մսերը կրծքի և ուսերի վրայ:

Մանէն նորից նստել էր լուսամուտի մօտ, նայում էր դիմացի տան պատուհանի վրայ վանդակի մէջ փակուած թռչնակին, ականջ էր դնում եղբօր խռմփոցին և այնպիսի սաստիկ ձանձրոյթ էր զգում, որ կարծում էր, թէ սրտի վրայ նստել է ամպի պէս մի բան ծանր ու ճնշող...

VI

Վահանը մէկ-մէկ դիպչում էր քրոջ տուն։ Թիֆլիսում նա բազմաթիւ ծանօթներ և շատ բարեկամներ ունէր, ամէն օր մէկի կամ միւսի տանն էր լինում հրաւիրուած և ամէն տեղ ցանկալի հիւր էր, ամէնքը խլում էին նրան իրար ձեռքից։ Զատիկի տօներին անգամ չկարողացաւ քրոջ տանը լինել և այդ բանի համար մեծ յանդիմանութիւն ստացաւ թէ Մանէից և թէ, մանաւանդ, նրա սկեսուրից։ Օսանն ընդմիշտ շատ նեղացած էր նրանից, որ նա իր հաղորդուելու օրն էլ չէր եկել ճաշին իրենց տուն։

Տօները Մանէի համար անցան վերին աստիճանի տխուր, մանաւանդ ամուսնու սիրոյ և կարօտի զգացումներով զեղուն շնորհաւորական հեռագիր ստանալուց յետոյ։ Այդ հեռագրի ազդեցութեան տակ, նա հիւանդ ձևացաւ և դուրս չեկաւ Աշոտ Բաղամեանի մօտ, որը Զատիկը շնորհաւորելու պատրուակով եկել էր նրան տեսնելու։

Բաղամեանը նստած էր հարևան սենեակում և խօսում էր Օսանի հետ։ Օսանը յանդիմանում էր նրան իր քարոզած գաղափարների համար, իսկ Բաղամեանը ծիծաղելով ասում էր, որ իր հօրեղբայրն այդ բոլորը հնարում է մասամբ իրենից, մասամբ իր հակառակորդների ասածները կրկնելով։ «Լաւ, ինչի՞ չես մին-մին մտիկ անում,

--ասաց Օսանը.—մեղք չի՞. հացափոր ընկած է սրա-նրա դուռը»։ Բաղամեանը զայրացաւ։ Նա ասաց, թէ ինքը միշտ առաջարկել է Զաքարին, որ իր տանն ապրի, այն պայմանով միայն, որ արաղից ձեռք վերցնի, շատ չխմի, մանաւանդ ման չգայ քէլխների (վերջինս Զաքարի համար պարզապէս մի հիւանդութիւն էր դարձել), բայց ծերունին չի կամեցել ընդունել այդ պայմանը և ինչպէս որ անկարգ ապրել է հարուստ ժամանակ, նոյն անկարգութեամբ էլ ուզում է վերջացնել իր աղքատ ծերութիւնը։ Սակայն, չնայելով դրան, Բաղամեանն այժմ էլ ամէն ամիս մի որոշ գումար ուղարկում է ծերունուն, որ նա հացափոր ման չգայ ուրիշի տները, բայց նա այնքան ապերախտ է, որ դեռ զրախօսում էլ է իր եղբօր որդու վրայ։

Մանէն Բաղամեանի խօսածը լսում էր կից սենեակից։ Նա ակամայ յիշեց եղբօր ասած հարիւր ֆրանկի պարտքը, որ Բաղամեանը դեռ չէր վճարել նրան։ Եւ Մանէին թւաց, որ Վահանը թերևս այնպէս հեգնօրէն չխօսէր Բաղամեանի մասին, եթէ այդ հարիւր ֆրանկի չհատուցուած պարտքը չլինէր մէջտեղ։ Բոյրը շատ լաւ ճանաչում էր եղբօր կծծի բնաւորութիւնը, և այդ բանն ամենևին դիւր չէր գալիս Մանէին։ Ամբողջ վեց տարի էր անցել այդ չնչին գումարը պարտք տալուց ի վեր, և Վահա-

նը դեռ չէր մոռացել, իսկ նա աղքատ չէր, հարուստ էր, մինչդեռ Բաղամեանը նրա համեմատութեամբ իսկապէս աղքատ էր, որովհետև գրական աշխատանքով էր միայն իր ապրուստը հայթայթում:

Զատկից յետոյ թատերասէրների մի խումբ ներկայացում պիտի տար հայ կանանց բարեգործական ընկերութեան օգտին: Հեղինէն այդ ընկերութեան ամենաեռանդուն անդամակիցներից մէկն էր, և Մանէն երկու տոմսակ էր ստացել նրանից—մէկն իր, միւսը եղբօր համար: (Սկեսուրը, իբրև հին կին, իր ամբողջ կեանքում թատրոն ասած բանը տեսած չէր և չէր ուզում տեսնել): Ներկայացման երեկոյին Վահանը կառքով եկաւ, որ քրոջը թատրոն տանի: Նա մի քիչ ուշացել էր, այնպէս որ Մանէն նրան էր սպասում՝ արդէն հագնուած-պատրաստ: Քրոջը տեսնելուն պէս Վահանը չկարողացաւ զսպել իր հիացմունքը:

—Ճի՛կ,—բացականչեց նա, աջ ձեռքի բութ մատը չրխկացնելով միջամատի վրայ:—Դու կատարեալ գեղեցկուհի ես եղել և մի քիչ էլ—խօսքը մեր մէջ մնայ—կոկետ... Ի՜նչ հասակ, ի՛նչ քնքշութիւն, ի՛նչ ճաշակ, ի՛նչ գրացիա... Լա՛ւ, նազ մի անիր:

Եւ սկսեց երգել.

Նազ մի անիր, նազ մի անիր, նազ աղջիկ,
Դէյրէդ քաշէ, թող մի անիր...

Ու յանկարծ լռեց:

—Յետո՞յ... չվերջացրիր,—բաւական սառն կերպով նկատեց քոյրը, որը հայելու առաջ կանգնած՝ ուղղում էր մազերը: Պարզապէս երևում էր, որ նա դեռ ևս նեղացած է եղբօրից:

—Ոչ, վերջը լաւ չէ,—ասաց Վահանը:—Առանց այն էլ ես արդէն մի յանցանք եմ գործել ծնողներիս յիշատակի դէմ. մտքումս կար, որ մեռելոց օրը հօրս ու մօրս գերեզմանն օրհնել տամ և... մոռացայ, այսինքն մոռացնել տուին անիծուածները: Ասկի թողնում ե՞ն, որ մարդ հանգիստ մնայ. մի օր մէկն է քարշ տալիս, միւս օրը մի ուրիշը: Հէնց հիմա էլ հազիւ կարողացայ մէկի ձեռքից եախէս թափել, թէ չէ էլ ո՞վ կըպրծնէր քեզնից: Երևակայիր, որ մինչև օրս դեռ գործերս էլ չեմ վերջացրել: Ջհաննամը, գոնէ մի բանի նման լինիմ...

Նա կանգնեց Մանէի ետևը և սկսեց քրոջ ուսի վրայից դիտել հայելու մէջ իր մազազուրկ դէմքը:

—Հոգուդ ստակեմ, քոյրիկ ջան, մի թամաշա արա ընխիս: Մոպսի շուն տեսել ես բերանի կողքերից կախ ընկած լաթիներով. ինքը մոպսի շուն: Փո՛ւ, խայտառակութի՛ւն... Եւ, չեմ հասկանում, ինչո՞ւ Աստուած զրկել է երեսս բուսականութիւնից:

Մանէն առաւ փեղոյրը, ծածկեց և սկսեց քորոցով ամրացնել մազերի վրայ: Նա պինդ

սեղմել էր շրթունքները. երևում էր, որ աշխատում էր զսպել ծիծաղի փռթկոցը:

—Դու գիտե՞ս, որ մենք ուշանում ենք,— ասաց նա:

—Վնաս չունի. մեծ մարդիկ միշտ ուշ են գնում թատրոն,—ասաց Վահանը, նայելով ծոցի արծաթեայ ջարդուած ժամացոյցին:— Տոմսակս տուր տեսնեմ:

Մանէն Հեղինէից ստացած երկու տոմսակներից մէկը տուեց Վահանին: Վահանը նայեց տոմսակին, անդրավարտիկի գրպանից հանեց պորտմոնէն, տոմսակը մէջը դրեց, յետոյ նոյն պորտմոնէից հանեց երկու հատ մի-մի րուբլանոց ինչ-որ կոպէկների հետ և դրեց քրոջ առաջ:

—Այս ի՞նչ է,—հարցրեց քոյրը զարմացած:

—Տոմսակիս արժէքը:

—Թէ ի՞նչ:

—Թէ ա՛յն, որ ձրի բան չեմ սիրում:

Քոյրը երկար ժամանակ շատ լրջօրէն նայում էր եղբօր ծիծաղկոտ աչքերին:

—Ուզում ես ինձ վիրաւորե՞լ, Վահան:

—Չէ, քոյրիկ ջան. ես ուզում եմ միայն հակառակ չգնալ նշանաբանիս:

—Կատակ չե՞ս անում:

—Փողի գործերում կատակ անելը հաւասար է յանցագործութեան:

—Շա՛տ լաւ,—ասաց Մանէն, ջղային արագ քայլերով հեռացաւ նրանից, պահա-

րանից հանեց վերարկուն, հագաւ և նոյն քայլերով դիմեց դէպի դուռը: Այստեղ յանկարծ կանգ առաւ և, դառնալով եղբօրը, հարցրեց.

— Իսկ կառքի փո՞ղը ով պիտի վճարի:

—Կէսը ես, կէսը դու,—ծիծաղեց Վահանը:

—Չէ, որովհետև ես քեզնից աւելի մեծ տեղ կբռնեմ,—աւելացրեց նա,—ուստի քեզնից աւելի կվճարեմ:

—Մեր տանը մի քանի անգամ հաց ես կերել, ուրեմն տուր կերածիդ փողը,—աղաղակեց Մանէն:

Վահանի ծիծաղը սաստկացաւ:

—Բա՛ւօ,—բացականչեց նա:—Կըսիրեմ այդպիսի ապտակները:

Մանէն զայրացած դարձաւ և դուրս գնաց:

—Եւ դո՛ւ ես ամուսնուս պեղանտ անուանողը,—ասաց նա կառքի մէջ:

Վահանը միայն շարունակում էր ծիծաղել, զուարճանալով քրոջ զայրոյթի վրայ: Այդ ծիծաղն աւելի ևս գրգռում էր Մանէին:

—Գնացել ես արտասահման,—շարունակեց Մանէն,—և հետդ, բացի գերմանական չոր հաշիւներից, ուրիշ ոչինչ չես բերել:

—Չո՞ր: Ինչո՞ւ չոր և ինչո՞ւ անպատճառ գերմանական, այլ ոչ իտալական կամ թէ ֆրանսական: Փողի հաշիւներից էլ փափուկ բա՞ն... Այդ մէկ: Երկրորդ՝ արտասահմանից ես ախր գիտութիւն էլ եմ բերել, քոյրիկ ջան, ինչո՞ւ ես մոռանում:

Մանէն բորբոքուեց:

—Գիտութի՜ւն... Ի՞նչ գիտութիւն: Ո՞րտեղ է քո գիտութիւնը: Ո՞վ տեսաւ: Ո՞ւմ օգուտ տուիր քո գիտութիւնով: Գնացել ես գիւղում նստել, այգիներ ես ձգում, գինեգործարան ես շինում և, բացի քո փորի համար հոգալուց, ուրիշ ոչ մի բանի մասին չես մտածում, թէկուզ ամբողջ աշխարհը քանդուի էլ: Եւ դեռ ծաղրում ես ուրիշներին... ծաղրում ես ձեր գիւղի մանրավաճառին, որ նա իր ազէտ տեղովը հետաքրքրւում է Գլադստոնով, Պառնէլով...

Վահանը թեքուել էր և գիշերային կիսախաւարի մէջ իր սովորական հեգնող ժպիտով, բայց փոքր ինչ զարմացած, անթարթ նայում էր քրոջ զայրացած աչքերին:

—Մանէ, այդ դու ես,—արտասանեց նա:

—Այո, ես եմ, չէիր սպասո՞ւմ:

—Բաս ասում էիր խաւարամիտ ես:

—Թող, ի սէր Աստուծոյ, այդ հեգնութիւններդ: Դու անօգուտ մարդ ես, քեզնից և քո գիտութիւնից ոչ մի շահ չունի հասարակութիւնը:

—«Եթէ ուսումէդ շահ չունի Հայաստան, թքել եմ քու ալ, ուսումիդ ալ վրան»,—վրայ բերեց Վահանը և բարձրաձայն ծիծաղեց:—Բայց մի բարկանալ, քոյրիկ ջան. մի բան եմ ուզում հարցնել: Այն քո առաջադիմականների հետ շուտ-շո՞ւտ ես տեսընւում:

Մանէն մեծ տհաճութեամբ դէմքը շրջեց նրանից և ոչինչ չպատասխանեց: Որովհետև մի անգամ արդէն նեղացած էր եղբօրից, այդ պատճառով Վահանի խօսակցութեան հեգնական տոնը այժմ հանում էր նրան իրենից, և նա մեծ ջանք էր գործ դնում, որ զսպի իրեն:

—Պէտք է ասած, որ դու բաւական առաջադիմականացել և ազատամտականացել ես,—շարունակեց Վահանը:—Եւ իզուր ես կարծում, թէ յետադէմ-խաւարամիտների բանակին ես պատկանում: Բայց մի բան, որ շատ հաւանեցի, այդ՝ զայրանալդ է: Զայրանում ես շատ սիրուն և շատ շնորհալիօրէն, որովհետև մեծ եռանդ կայ մէջդ և ինքդ էլ անկեղծ ես վերին աստիճանի:—Անկեղծ եմ ասում, քոյրիկ ջան, որ այս անգամ չեմ հեգնում:—Իսկ նրանք, քո այն առաջադիմական բարեկամներդ... Նրանց շատ էլ մի հաւատա: Նրանք արդէն ոտով-գլխով կեղծ են,—աւելի կեղծ, քան այժմեան Կախէթու գինիները,—և, հաւատացնում եմ քեզ, իրենց գիտութեամբ շատ քիչ են տարբերւում մեր գիւղի մանրավաճառից:

—Ես կարծում եմ, որ հասարակական գործիչներին քննադատելու իրաւունք ունենալու համար, անհրաժեշտ է, որ քննադատողն ինքը հասարակական գործիչ լինի,—նկատեց Մանէն հանգիստ խստութեամբ և իւրաքանչիւր բառը շեշտելով:

—Չնեղանաս, քոյրիկ ջան. սկզբունքի տեսակէտից ասածդ արդարացի է. մինիստրի գործերը քննադատելու համար հարկ չկայ անպատճառ մինիստր լինելու, այլապէս ի՞նչ պիտի ասէինք Բիսմարկի մազերը փետրահան անող մեր գիւղի մանրավաճառին: Բայց այս դէպքում քո նկատողութիւնը լիովին արդարացի է: Ես, ի հարկէ, զերօ եմ Բադամեանի կամ Նասիբեանի հետ համեմատած, այսինքն հասարակական գործիչ չեմ և, ի հարկէ, չեմ, քանի որ սիրային վէպեր ու բանաստեղծութիւններ չեմ թխում, կարմիր յօդուածներ չեմ գրում, փախչում եմ հոգաբարձական և երէցփոխական ընտրութիւններից, չեմ մասնակցում զանազան յայտնի և անյայտ ժողովների, այլ միայն սուս ու փուս զբաղուած եմ սեպհական որովայնս պարարտացնելով, հետևաբար իրաւունք չունիմ քննադատելու մեր այդ երևելի հասարակական գործիչներին: Թէև այս էլ պէտք է ասեմ, քոյրիկ ջան, որ դու ի զուր ես այդքան բարկանում ինձ վրայ. ես խօ չեմ քննադատում, ես միայն, այսպէս ասած՝ բարեկամական զրուցատրութեան մէջ, իմ անհատական կարծիքներն եմ յայտնում:

—Դու կարծիք յայտնել չգիտես, դու գիտես միայն հեգնել, ծաղրել և... բամբասել, պառաւների պէս:

—Հա՛, հա՛, հա՛,—պինդ ծիծաղեց Վահա-

նը:—Ի՞նչ գեղեցիկ կերպով ըմբռնել ես քարակտերիստիկս... Կեցցե՛ս, բրա՛ւօ:

—Իսկ երբ բռնում են քեզ և յանդիմանում,—շարունակեց Մանէն,—գիտես կատակով ու ծիծաղով նախէդ թափել:

Վահանի ծիծաղը սաստկացաւ:

—Բրա՛ւօ, բրա՛ւօ... Ասում եմ, է, հիանալի՜ կերպով ըմբռնել ես քարաքտերիստիկս կամ նկարագիրս, ինչպէս ասում են մեր հոհոսները: Բայց հիմի թող պակասն ես լրացնեմ,—աւելացրեց Վահանը, դադարելով ծիծաղելուց:—Ես ամենից առաջ, քոյրիկ ջան, կոռեկտ մարդ եմ: Այսինքն ես այն մարդկանցից եմ, որոնք երկու կռուողների միջամտած ժամանակ երկսի գլխին էլ փամփաչում են: Ուրիշ խօսքով՝ ես չէզոք մարդ եմ: Ջորին խօ գիտես ինչ է,—ոչ ձի է, ոչ էշ...

—Խօսք չկայ, լա՛ւ ածականներով ես կընքում ինքդ քեզ...

—Օ՜, ներողութիւն, անասուններին ես չափազանց սիրում եմ հէնց թէկուզ միայն նրա՛ համար, որ նրանք չեն կծում իրար «ազատամիտ» և «խաւարամիտ» բառերով: Ասելս այն է, որ ես ոչ ազատամիտ եմ, ոչ խաւարամիտ, ոչ առաջադիմական եմ, ոչ յետադիմական, ոչ արմատական եմ, ոչ պահպանողական—ի հարկէ այն իմաստով, ինչ իմաստով որ այդ բառերը գործ են ածում մեր մայրունների աշխարհում: Տեղը գայ՝

սրա գլխին կըփամփաշեմ, տեղը դայ—նրա գլխին, որովհետև երկուսն էլ ինձ համար միևնույն յիմարներն են։

—Եւ ամենից խելօքը դու ես...

—Անշուշտ։ Որովհետև արժէ՞ միթէ արիւն պղտորել մեր այս յիմարիտների աշխարհում։

—Ի հարկէ, չարժէ, որովհետև արեան պղտորումն առհասարակ խանգարում է մարդկանց... փորը հաստացնելու։

—Բռա՜ւօ, բռաւի՜սիմօ,—նորից բացականչեց Վահանը այնքան բարձրաձայն, որ կառապանը յետ նայեց զարմացած։ — Ինչ որ սուր է՝ սուր է։ Հաւանում եմ։ Կեցցե՜ս։

Ներկայացումը սկսուելու վրայ էր, որ քոյր ու եղբայր հասան թատրոն։ Օրկեստրը արդէն նուագում էր։ Ահագին ժողովուրդ էր խռնւում փօյէում և դահլիճում։ Ժխորը կատարեալ էր։ Օդը յագեցած էր օծանելիքների սուր հոտով։ Մանէն ու Վահանը հազիւ կարողացան գտնել իրենց տեղերը պարտերում։ Աթոռների նեղ միջանցքից անցնելը կատարեալ պատիժ էր Վահանի համար. քրտնքակոխ եղած՝ նա հազիւ էր կարողանում անցկացնել իր ահագին փորը, ջարդելով նստածների ծնկները կամ ստիպելով նրանց վեր կենալ։

Հասարակութիւնը համեմատաբար ընտիր էր, ինչպէս սովորաբար լինում է բարեգործական նպատակով տրուող հայերէն ներկայացումներին։ Սովորական ներկայացումներին հայոց թատրոնի ամենապատուաւոր տեղը՝ առաջին կարգերում բազմած են լինում Աստուած գիտէ ինչ միջոցով ներս խծկուած ամեն տեսակ երեխաներ. բայց այժմ այդ կարգերում աթոռակալել էին ֆինանսական աշխարհի հաստ ու բարակ տուզեր, մի գեներալ՝ կլպած գանգով, մի քանի ուրիշ էպոլետներ՝ աստղերով և առանց աստղերի և գրական ու լրագրական աշխարհի ներկայացուցիչներ՝ երկար ժամանակ չխուզած մազերով և օսլայած շապկի կեղտոտ օձիքներով։

—Պա՜հ, մի թամաշ արա, Աստուածդ սիրես,—բղաւեց Վահանը քրոջ ականջի մօտ, որպէսզի ասածը լսելի անէ օրկեստրի ձայների և ժողովրդի հանած ժխորի մէջ։—Համայն հայ աշխարհն այստեղ է. զինուորականներ, չինովնիկներ, վաճառականներ, մըտքի մշակներ—դիփ զորբա-զորբա մարդիկ։ Այնտեղ նայիր, այնտեղ. առաջադիմականը նստել է յետադիմականի կողքին և քիթը չի բռնել։ Տես այն քոսոտ բանաստեղծին, գեներալի աջ կողմը. կասես Ոլիմպոսի վրայ է բազմած։ Մազերն էլ չի սանրել անխիղճը։ Ասում են, որ սիրոյ մասին մի կոպէկանոց ոտանաւոր երկնելու վրայ տասը գիրք է կրծում, որ առնուազն հինգ կոպէկ արժէ։ Բայց էգուց չէ, էլօր բաղդ կունենանք կարդալու նրա ռեցենզիան։ Հրէն,

հրէն մեր հրապարակախօս-կրիտիկոսը, որի առաջին արհեստը պարտքեր անելն է չվերադարձնելու պայմանով, իսկ երկրորդ արհեստն իդէալից և յաւիտենական սուրբ ճըշմարտութիւններից բարբառելը։ Ինձ չափազանց դիւր է գալիս նրա դէմքը. կարծես ինքը Յիսուսն է կանգնած առաջդ։ Իսկ նրա կողքին տես ինչքան համեստ նստած է մեր լրագրական կծոտողը։ Ա՛յ ում համար կարելի է ասել՝ ինքը չկայ թիզուկէս, արարմունքն է գազուկէս։ Արժէ, ճշմարիտ, կըշռել իմանալու համար, թէ քանի պուդ դուրս կըգան նրա գործածած բառերը—«զզուելի», «նողկալի», «զարշելի», «հրէշային», «ճիւաղային», «դժոխային», մի խօսքով՝ բարձրացիր աստիճանաբար մինչև 40 ըստ եւրոպականի և մինչև 100 ըստ հայկականի։ Դու նկատե՞լ ես, որ ամեն մի յօդուածում այն աստիճան վառւում է ազնիւ բարկութիւնից, որ սպառնում է գրիչը կոտրել, իսկ սև թանաքն էլ միշտ կարմրում է, երբ որևէ ամօթալի արարք է նկարագրում։

—Վահան, բաւական է,—շշնջաց քոյրը, նրա թևը քաշելով։ Մանէն այդ միջոցին աչքը չէր հեռացնում իրենց առջև նստած մի տիկնոջից ու պարոնից, որոնք, պարզ երևում էր, ականջ էին դնում Վահանին և գաղտագողի ժպտում կամ ծիծաղում էին անձայն, իրար նայելով։

—Սպասիր, քեզ մի ուրիշ երևելի էկզեմ-

պլեար ցոյց տամ,—շարունակեց Վահանը։—Տես, այն էլ մաշադիների աշխարհի ռադիկալ-պուբլիցիստը, որ խմբագրատնից գողացել է խմբագրի եափնջին ու քօշերը և փախել է մեր կողմերը։

Առջևը նստած տիկինը փռտկացրեց և իսկոյն բերանը ծածկեց թաշկինակով, իսկ նրա կողքին նստած պարոնի ուսերն սկսեցին սաստիկ ցնցուել զսպուած ծիծաղից։

—Վահան, մի՞թէ չես զգում, որ համը տանում ես,—նկատեց քոյրը յանդիմանօրէն։

—Հաւատա, քոյրիկ ջան, ուղիղ եմ ասում. լրագրի մէջ եմ կարդացել եափնջու և քօշերի պատմութիւնը. գրողն էլ ինքը խմբագիրն էր, եափնջու և քօշերի տէրը։ Աստուած է վկայ։ Բայց սպասիր տեսնենք ուրիշ ով կայ։ Ը՛հ, այն էլ չոպոր-անգլիացիների բուրդը գզող Նասիբեանը։ Նրա դէմքը լաւ ես դիտե՞լ,—կարծես ճմշկած ճանճուռ լինի, բայց աչքերը,—տես, նայում է վերնայարկին,—փիալէք են վառւում... Օ՜, ո՜ւմ եմ տեսնում, քոյրիկ ջան, ո՜ւմ եմ տեսնում. իմ սիմպատիան—օրիորդ Սոլիկեանը։ Հրէն մօտեցաւ այն երիտասարդ զինուորականին։ Ի դէպ. երէկ իմացայ, որ նրա անունը «էժանագին օրիորդ» է եղել, որովհետև—վատ բան չկարծես—եռանդուն մասնակցութիւն ունի եղել էժանագին գրադարանի գործում... Պա՛հ, մեծ էշը նախրումն եմ թողել։ Այն Բագամեանը չէ՞։ Մազերից ճանաչեցի։ Գրո՞ղը

տանի, Ջևսն է նստած: Նայիր մազերին. տասը ցախաւել դուրս կըգայ…

Մանէն քիչ էր մնում վեր թռչի և դուրս գնայ, այնքան նրա համբերութիւնը հատու եղբօր հեգնական նկատողութիւններից, որոնք այս անգամ, զուարճացնելու փոխարէն, պարզապէս գրգռում էին նրա ջղայնոտութիւնը:

Բայց այդ միջոցին լսեց օրկեստրը, բեմի վրայ՝ վարագոյրի ետևից հնչեց զանգակը, և դեռ ևս ոտի վրայ մնացող հանդիսականներն իրար խառնուելով՝ շտապեցին բռնել իրենց տեղերը:

Վարագոյրը բարձրացաւ, և ներկայացումը սկսուեց:

Վահանը թեքուեց և շշնջաց քրոջ ականջին.

—Կըհաւատաս, որ չգիտեմ ինչ են խաղում և ովքեր են խաղացողները:

—Լռիր և կիմանաս: Պիէսը նոր է, ես էլ չգիտեմ. իսկ խաղացողները տեղիս յայտնի ընտանիքների պատկանող տիկիններ, օրիորդներ և պարոններ են:

—Հա-ա: Ուրեմն լռենք և լսենք:

Յիրաւի, առժամանակ Վահանը լուռ էր և ուշի-ուշով դիտում էր ներկայացումը: Բայց երկար դիմանալ չկարողացաւ. այս անգամ սկսեց ծաղրել դերակատարներին, չնայելով քրոջ պարզապէս արտայայտած դժգոհութեան նշաններին:

—Այս ինչ երևելի հայերէն են ջարդում ձեր յայտնի ընտանիքների պատկանող տիկինները, օրիորդները և պարոնները: Մի լաւ լսիր, թէ Աստուած կըսիրես. «Իես ձիեզ սիրիւմ իեմ»… «Բարիերով չիեմ կարող արտայայտիել»… «Աղաչիւմ իեմ»… «Ի՞նչպիէս կըռվիեմ», ուզում է ասել, երևի, ինչպէս կռուեմ…

—Սո՛ս,—լսուեց նրա ետևից:

Վահանը լռեց, ուզեց ետ նայել, բայց թէ տեղը նեղ էր, որ ետ դառնար, և թէ վիզ չունէր, որ գլուխը շրջէր:

Թատրոնի դահլիճում անտանելի շոգ էր, այնպէս որ խաղամիջոցին ամենքը դուրս թափուեցին պարտէզ: Այստեղ քոյր ու եղբայր նստեցին սպիտակ սփռոցով ծածկուած սեղաններից մէկի մօտ, ճեմելիքի կողքին:

—Սարսափելի ծարաւ եմ,—ասաց Վահանը.—մի շիշ գարեջուր որ բերել տամ, դու էլ կըխմես, չէ՞:

—Ես գարեջուր չեմ խմում:

—Լիմոնա՞դ:

Քոյրը նայեց եղբօր աչքերին. նրա սառն հայեացքի մէջ ինչ-որ անհաշտ բան կար:

—Յետոյ չե՞ս վախենալ, որ պարտաւորեցնես…

Վահանը ծիծաղեց և մօտիկ կանգնած սպասաւորին պատուիրեց, որ մի շիշ սառն լիմոնադ բերի:

—Դու ինձ յանդիմանում ես, քոյրիկ ջան,

—ասաց նա մի սիգար վառելով,—բայց որ լաւ մտածես, կըտեսնես, որ ես ընտրել եմ մարդկային կեանքի բոլոր նշանաբաններից ամենախելացին։ Դու քեզ համար, ես ինձ համար։ Սա օբսոլիւտիստների «ամենքը մէկի համար» անբարոյական վարդապետութիւնը չէ և ոչ էլ կոլլեկտիվիստների «մէկն ամենքի համար» ուանակային վարդապետութիւնը, որ միևնոյն մեդալի միւս երեսն է, այլ ինդիվիդուալիստների ամենաարդար սահմանորոշումը մարդկային կեանքի փոխադարձ յարաբերութիւնների համար։ Ես քեզնից ոչինչ չեմ պահանջիլ, դու էլ ինձնից ձեռք քաշիր։ Ուզում եմ ստանալ—կըտամ և կառնեմ, ուզում ես ստանալ—տուր և առ։ Ու վերջացաւ։ Դու քեզ համար, ես ինձ համար։ Կարծեմ շատ պարզ է, չէ՞։

—Այո, շատ պարզ է. որ դա կուշտ և ժըլատ մարդու վարդապետութիւն է,—նըկատեց Մանէն սառն հանգստութեամբ։

Վահանը բերանից բաց թողեց սիգարի ծուխը և նայեց քրոջը զարմացած։

—Կուշտ և ժլա՞տ։ Կուշտն էլի հասկանում եմ, բայց ժլատը որտեղից կպցրիր պոչից։

—Չլինի՞ թէ հիմա էլ ուզում ես ուրիշ սոփեստութիւններ անել, որ ժլատ չես։

Վահանը բոլորովին զարմացաւ։

--Ես ժլա՞տ։

—Այո, դո՛ւ,—շեշտեց քոյրը նոյն հանգըստութեամբ։—Ժլատութիւնդ երևում է մին-

չև անգամ հագուստիցդ։ Մի լաւ նայիր վըրադ։ Կարելի՞ է այդպիսի հագուստով այսպիսի տեղեր գալ։ Չէ՞իր կարող, ինչ է, շապիկդ փոխել և, եթէ չունիս, նորն առնել. իսկ սիւրտուկիդ ցերեկով նայե՞լ ես, թէ ինչպէս պլպլում է կեղտից։

—Ա՛, իմացայ. դու ամաչում ես ինձ հետ նստել։

—Է՛, թո՛ղ, ի սէր Աստուծոյ,—ջղայնօրէն արտասանեց Մանէն և դէմքը շըջեց եղբօրից։

—Սպասիր։ Ուրեմն դու մի քիչ կեղտոտ շապիկս և հնացած սիւրտուկս վերագրում ես այն բանին, որ ես ժլա՞տ եմ։

—Այո։ Չես ուզում մաքուր ու լաւ հագնուել, որ փող ծախսած չըլինիս։

—Անկե՞ղծ։

Մանէն չպատասխանեց. նա չէր նայում եղբօրը։

—Լաւ։ Ընդունենք, թէ ասածդ ճիշտ է,—որ ճիշտ չէ, ի հարկէ, որովհետև ի՞նչ կարիք ունիմ լաւ հագնուելու, քանի որ դեռ ես մտադիր չեմ նշանուելու։ Բայց ի՞նչ կապ ունի ժլատութիւնս նշանաբանիս հետ։

—Այն կապն ունի, որ «դու քեզ համար, ես ինձ համար» ասելով ուզում ես ապահովել քեզ, որ ոչոք աչք չտնկի գրպանիդ, իսկ գրպանը քեզ համար...

—Լաւ, մի շարունակիր,—ընդհատեց Վահանը, բաժակները լցնելով սպասաւորի բե-

բած լիմոնադից:—Դու վատ տրամադրան ես, քոյրիկ ջան: Մի նեղանար, խնդրեմ: Գըրպանիս որ այդքան նշանակութիւն տայի…

—Խոստովանուիր, որ դու գիւղում վաշխառութեամբ էլ ես պարապում,—յանկարծ դառնալով դէպի Վահանը, շպրտեց նրա երեսին Մանէն:

—Չէ, այդ էլ չեղաւ, քոյրիկ ջան,—նըկատեց Վահանը և դատարկեց իր բաժակը:—Դու ուզում ես,—խմիր, քանի սառն է,—դու ուզում ես ամուսնուդ ջիգրը հանել, որ այն օրը նրան վաշխառու անուանեցի: Բայց չէ՞ որ ես կատակ էի անում: Գրպանիս որ այդքան նշանակութիւն տայի… Տես ով է գալիս… (Վահանն աչքով արաւ դէպի պարտէզի մուտքը): Գրպանիս որ այդքան նըշանակութիւն տայի և վաշխառու լինէի, մինչև հիմա վաղուց բռնել էի քո այդ պարոն Զաքի եախից,—թէև մազերից բռնելն աւելի յարմար կըլինէր,—և պահանջել էի հարիւր ֆրանկս… տոկոսով հանդերձ, ի հարկ է:

Մանէն նայեց այն կողմը, որ կողմը որ աչքով արաւ Վահանը, և տեսաւ Բաղամեանին: Բաղամեանը մտաւ պարտէզ: Նրա հետ էին նեղ ու կարճ սիւրտուկների մէջ պինդ կոճկուած երկու երիտասարդ, որոնք, մէկը նրա աջ, միւսը ձախ կողմն անցած, սարկական-յարգական ակնածութեամբ լըսում էին նրա մի ինչ-որ պատմութիւնը:

—Տեսնո՞ւմ ես նրա հետ այն երիտասարդներին,—ասաց Վահանը քրոջը:—Դէմքերից, հագուստներից և շարժումներից տեսնում եմ, որ գաւառացիներ են—գաւառացի ազատամիտ կծողներից, որոնք, սակայն, կատու են դարձել այստեղ: Տես, ինչքան զգոյշ են քայլում, որ չդիպչեն Զաքի թևին: Դա, Տէրը մի արասցէ, սրբապղծութիւն կըլինի, որովհետև գիտե՞ս ով է Բաղամեանը… Դու գաւառում չես եղել, որ իմանաս, թէ… Բայց հարիւր ֆրանկս պահանջելու փոխարէն հրաւիրելու եմ, որ մի բաժակ լիմոնադ անուշ անի մեզ հետ:

Եւ, երբ Բաղամեանն իր ուղեկիցների հետ մօտեցաւ ու պիտի անցնէր Վահանի ու Մանէի առաջով առանց նրանց նկատելու, Վահանը կանչեց.

—Պարո՛ն Բաղամեան:

Բաղամեանը կանգ առաւ, նայեց նրա կողմը և, ըստ երևոյթին, իսկոյն չկարողացաւ ճանաչել, թէ ով էր կանչողը. բայց Մանէին որ տեսաւ նրա մօտ, շտապեց ներողութիւն խնդրել իր թիկնապահ երիտասարդներից, թողեց նրանց և մօտեցաւ քոյր ու եղբօրը:

—Այդ դո՞ւք էք,—բացականչեց նա, սեղմելով Վահանի ձեռքը:—Դուք այնքան ուշ-ուշ էք երևում մեր քաղաքում, որ, ներեցէք, իսկոյն չկարողացայ ճանաչել, մանաւանդ որ այդքան չաղացել էք: Բարև ձեզ,

տիկին։ Այդ ինչպէս է, որ ձեզ չեմ նկատել թատրոնում։

—Որովհետև մենք հասարակական գործիչներ չենք և ետևն ենք նստած,—թռուցիկ մի ակնարկ ձգելով քրոջ կողմը, ասաց Վահանը և կողքի աթոռը մօտ քաշեց։—Չէ՞ք բարեհաճիլ մեզ ընկերանալ։

Բագամեանը շնորհակալութիւն յայտնեց և նստեց։ Վահանը սպասաւորին պատուիրեց, որ մի բաժակ էլ բերի։

—Ուրի՞շ, ինչպէս էք,—դարձաւ Բագամեանը Վահանին։—Այս ո՞ր քամին է քշել ձեզ Թիֆլիս։

—Ցիկլոնն ասացէք, այլապէս ո՞ր քամին կարող է տեղից շարժել այս ահագին մասագունտը։ Եկել եմ բժիշկներից խորհուրդ հարցնելու, թէ ինչ անեմ, որ այսպէս չչաղանամ։ Երևակայեցէք. տանը յատկապէս մի կշեռք եմ պահում, ամեն օր կշռւում եմ և տեսնում, որ օր օրի վրայ ծանրութիւնս աւելանում է մինչև մի փունտ։ Դէ հաշուեցէք՝ տարին քանի պուդ դուրս կըգայ։ Անցեալ օր մի ծանօթ բժշկի մօտ էի. ասաց, որ այսպիսի ագրեսիւ չաղանալու դէմ չորս միջոց կայ, մէկը միւսից աւելի զօրաւոր. առաջին՝ ամեն օր ներկայ լինել մեր եկեղեցիներում մեծ պասի ժամերգութեանը սկզբից մինչև վերջը. երկրորդ՝ ներկայ լինել հայկական ժողովներին. երրորդ՝ յաճախել

հայոց թատրոն և չորրորդ՝ կարելոյն չափ շատ կարդալ հայ լրագիր։

—Այդ ինչ սրամիտ բժիշկ էք ունեցել,—բացականչեց Բագամեանը ծիծաղելով, շատ լաւ իմանալով, որ նա ոչ մի բժշկի հետ այդպիսի խօսակցութիւն չի ունեցել, այլ դա նրա հեգնութեան ձևերից մէկն է միայն։

—Հաւատացէք, ես կատակ չեմ անում,—նկատեց Վահանը լրջօրէն։—Բժիշկս ապացուցանում էր ինձ, թէ սրանք այնպիսի միջոցներ են, որ ընդունակ են ինձ պէս մի ճարպակոլոլ մարդու թոքախտ անգամ պատճառելու, ուր մնաց լղարացնելու։ Սկզբում ես էլ ձեզ պէս կարծում էի, թէ նա կատակ է անում, բայց առաջին իսկ պատահական փորձով տեսայ, որ մարդը շատ երևելի գիւտ է արել։ Ասեմ ինչպէս։ Նոյն օրը, որ բժիշկս տուաւ ինձ այդ խորհուրդը, ձեր լրագրի մէջ կարդացի պոլեմիքական մի յօդուած, որի մէջ գրուած էր, թէ թըքում էք ձեր հակառակորդի թերթի վրայ։ Հետևեալ օրը կարդացի ձեր հակառակորդի պատասխանը։ Նա գրում էր՝ «էն գլխից թքել ենք ձեզ վրայ էլ, ձեր թերթի վրայ էլ և այդ թուքն էլ ափսոսացել»։ Այդ որ կարդացի, իսկոյն վազեցի մէյդան, հինգ կոպէկ տուի, նստեցի կշեռքը և կշռել տուի ինձ։ Ի՞նչ էք կարծում. երկու փունտի չափ արդէն պակասել էր ծանրութիւնս, մի փուն-

տը ձեր լրագրի հաշուին երևի, միւսը՝ ձեր հակառակորդի:

—Չլինի՞ թէ այժմ էլ թատրոն էք եկել նոյն փորձը կատարելու համար,—հարցրեց Բաղամեանը շարունակելով ծիծաղել:

—Գտա՛ք: Սա երկրորդ փորձը կլինի, և ես համոզուած եմ, որ մի-երկու փունտ էլ էգուց առաւօտ կլինի պակասած ճարպից —այնպիսի աննման մի հայերէն եմ լսում այս գիշեր:

—Որ այդպէս է, եկող կիրակի էլ բարեգործական ընկերութեան ժողովն է լինելու, եկէք. թերևս մի-երկու փունտ էլ այնտեղ կորցնէք:

—Կըգամ, անպատճառ կըգամ,—ասաց Վահանը, շիշը դատարկեց Բաղամեանի բաժակի մէջ և սպասաւորին պատուիրեց, որ մի նոր շիշ բերի:

Վահանի հետ խօսելիս Բաղամեանն աշխատում էր յարմարուել նրա հեգնական տօնին ու վարմունքին: Վահանին նա դասում էր այն մարդկանց կարգը, որոնք միշտ ուրախ, միշտ անհոգ՝ անընդունակ են որևէ բան իրենց սրտին մօտ ընդունելու, խօսում են ամեն բանի մասին, բայց լուրջ կերպով չեն խօսում ոչ մի բանի մասին և սիրում են մի տեսակ ծաղրածուի դեր կատարել մասամբ իրենց չնչինութիւնը ծածկելու և մասամբ հասարակութեան մէջ սրամիտ ու սրախօս մարդու համբաւը վայելողի

անմեղ փառասիրութեանը գոհացում տալու համար:

Մանէն նստած էր ծառի վրայ կախուած լապտերի տակ, այնպէս որ նրա դէմքը կիսախաւարի մէջ էր: Նա ետ էր ընկել աթոռի մէջքին, ամենևին չէր մասնակցում խօսակցութեանը և, ըստ երևոյթին, չէր էլ լսում, թէ ինչ են խօսում եղբայրն ու Բաղամեանը: Նրա մտախոհ հայեացքը կենտրոնացած էր Բաղամեանի դէմքին, որը նըստած էր սեղանի միւս ծայրին, նրան դէմ առ դէմ, լապտերի պայծառ լոյսի տակ:

Բաղամեանը մօտ երեսուն տարեկան երիտասարդ էր, գեղեցիկ լիքը դէմքով, որը նրան հասուն տղամարդի տեսք էր տալիս: Նրա լայն ուսերին շատ սազով նստած էր մոխրագոյն բաճկոնը, որի տակից ամառուայ սպիտակ ժիլետը փայլում էր ձիւնի մաքրութեամբ: Ըստ երևոյթին, նա առանձին խնամք էր տանում իր փափուկ երկայն մազերի վրայ, որոնք սիրուն գանգուրներով մինչև ուսերն էին հասնում՝ ականջների մօտ ցրուած: Ամեն բանով—թէ հայեացքով, թէ շարժումներով և թէ խօսելիս—աշխատում էր ծանր պահել իրեն և եթէ շարունակ ժպտում էր Վահանի ասածների վրայ, իսկ երբեմն և ծիծաղում, այդ բանումն էլ աշխատում էր դուրս չգալ ծանրախոհ լրջութեան սահմանից:

—Դո՞ւք ինչպէս էք, տիկին, լա՞ւ էք,—

հարցրեց նա, սեղանի վրայից թեթև առաջ խոնարհուելով դէպի Մանէն և ինչ-որ խորհրդաւոր հայեացքով նայելով նրա աչքերին։

Մանէն կամաց ցնցուեց, հայեացքը թոցրեց նրա դէմքի վրայից և մեքենայաբար վերցրեց իր բաժակը, որին դեռ ձեռք չէր տուել։

—Շնորհակալ եմ,—պատասխանեց նա հանգիստ։

—Դուք գիտէ՞ք, պարոն Բաղամեան, որ ձեր գալուց առաջ ես ու քոյրս կռւում էինք իրար հետ։

Բաղամեանն արագ նայեց Վահանին։

—Համ... Ինչո՞ւ։

Վահանը նայեց քրոջը և կամաց ծիծաղեց։

—Ասենք, սա մասնաւոր բան է,—ասաց նա։—Դուք ինձ այս ասացէք, այն երկու երիտասարդը, որ ձեզ հետ էին, գաւառացիներ էին, չէ՞։

—Այո։

—Էնոնցից, չէ՞, ես ու դուք որ գիտենք...

—Այո,—ժպտաց Բաղամեանը։

—Ես դրանց հոգուն մեռնեմ. գիտէ՞ք թէ ինչ հրաշքներ են գործում գաւառում... Ճիշտ է, մինչև այժմ պրոպագանդը դուրս չի եկել քաղաքների մանրավաճառների խանութներից, բայց մի հինգ-տաս տարուց յետոյ վերջին խոզարածին էլ կըտեսնէք յեղափոխական կարմիր դրօշակի տակ կանգնած... Ինչ

վերաբերում է ընդհանուր լուսաւորութեան գործին, այստեղ երևոյթն աւելի ևս մխիթարական է։ Օրինակ, ուսուցիչները գորտեր ու կատուներ են կտրատում բնագիտութեան դասերին. հայ կինը վերցրել է քթկալը և այլ ևս չի լուանում ղոնաղի ոտները. գիւղացիները լոխ թղթակիցներ են դարձել։ Հրէն մեր գիւղում մի գիւղացի ունինք. ձեր թղթակիցն է. շաբաթ չի անցնի, որ նամակ չգրի։ Դուք էլ տպում էք, հա՛ տպում։

—Է՛հ, ո՞վ է մեղաւոր, որ ձեզ պէս ուսում-առածները յետ են քաշուել և ասպարէզը մնացել է գիւղացիներին։

—Յամենայն դէպս, ոչ ես։ Բանն այն է, որ ես փափագելով փափագում եմ թղթակցել ձեզ, բայց մի քանի շատ մօտիկ խաւարամիտ բարեկամներ ունիմ. հէնց որ իմանան, թէ գրում եմ ձեր թերթի մէջ—պրծա՛ւ, էլ բարև չեն տալ։

—Որ այդպէս է, գրեցէք նրանց թերթի մէջ։

—Այն ժամանակ, ինքներդ ասացէք, կարո՞ղ էի ձեզ հետ միևնոյն սեղանի մօտ նըստած այսպիսի բարեկամական խօսակցութիւն ունենալ։

—Դուք չէիք կարող, բայց ես կարող էի,—վրայ բերեց Բաղամեանը ծիծաղելով։

—Ցաւն հէնց այն է, պարոն Բաղամեան, որ եթէ ես համոզուած լինէի, թէ դուք այդ

կարող էիք, հէնց վաղնեւեթ կըգրէի խաւա-րամիտների օրգանում։

—Փորձեցէք և տեսէք։

—Ուզո՞ւմ էք, հէնց այս րոպէիս փորձեմ։

—Այդ աւելի լաւ, որովհետև ո՞վ գիտէ, թէ էլ երբ առիթ կունենանք այսպէս մի-նոյն սեղանի մօտ նստած լինելու։

—Ուրեմն աշխատեցէք պինդ նստել, որ չփախչէք։ Ես խօսելու եմ ձեր վերջին վէ-պի մասին և խօսածս կըլինի կմախքը մի կրիտիկայի, որ կըզետեղեմ խաւարամիտ-ների օրգանում։

Բաղամեանն արմունկներով յենուեց սե-ղանին և քունքերն առաւ ափերի մէջ։ Այդ դիրքով և դէմքին խաղացող հեգնական ժպիտով նա կարծես թէ ուզում էր ասել՝ «դուրս տուր, տեսնենք ինչ նոր խեղկա-տակութիւններ ես անում»։

—Ես լսում եմ,—ասաց նա։

—Ես էլ սկսում եմ,--ասաց Վահանը և սկսեց բաժակները լցնել սպասաւորի բե-րած նոր 22ից։

Այդ րոպէին նրանց առջևը բռնուեց Հե-ղինէն, ետևից—Նասիբեանը։ Ինչպէս երե-ւում էր, այդ տարօրինակ սիրուհին ու սի-րահարը դարձեալ մի սուր խօսակցութիւն էին ունեցել իրար հետ. այդ երևում էր նրանից, որ Հեղինէի աչքերի մէջ զայրած բարկութեան հետքեր էին երևում, և նրա-նից, որ Նասիբեանը ջղայնօրէն կրծում էր

ներքին շրթունքը և բեխի ծայրը ոլորում։

—Ա՜, իմ ամենախորին յարգանքներն օրի-որդին,—բացականչեց Վահանը և ոտի ելաւ Հեղինէին բարևելու համար։ —Բայց... դուք բարկացած էք երևում, օրիորդ։

-- Այո, բարկացած եմ և... շատ բարկա-ցած,—ասաց Հեղինէն, նստելով Մանէի կող-քին։

—Ո՞ւմ վրայ, համարձակւում եմ հարցնել։

—Ձեզ վրայ։ Դուք խաբեբայ և ստախօս մարդ էք։

—Վա՜հ... Այդ ի՞նչ ասացիք, օրիորդ։

—Ասացէք խնդրեմ, ինչո՞ւ այն օրն ինձ խաբեցիք, թէ ձեր քրոջ մօտից էք գալիս, մինչդեռ նրա երեսը դեռ չէիք էլ տեսած եղել։

—Սխալւում էք, օրիորդ. քրոջս երեսն ես տեսել եմ նրա հէնց ծնուելու օրից։

—Յետոյ, ինչպէս իմացայ, դուք օրինա-կելի եղբայր էք եղել։ Մանէն գանգատւում էր, որ տարին հազիւ մի երկու անգամ Թիֆ-լիս էք գալիս և եկած ժամանակն էլ ամե-նից վերջն էք յիշում իրեն։ Ճիշտն ասած, ես ամենևին չէի կամենալ ձեզ նման մի եղ-բայր ունենալ։

—Իսկ ես, երևակայեցէք, օրիորդ, փա-փագելով կըփափագէի ձեզ նման տասն քոյր ունենալ։

—Ինչո՞ւ։

—Որպէսզի որքան կարելի է հեռու փախչէի։

Հեղինէն տարակուսանքով նայեց Մանէին, Բաղամեանին, յետոյ Վահանին։

—Ի՞նչպէս ընդունեմ ձեր այդ խօսքերը—կատա՞կ, թէ վիրաւորանք։

—Ի հարկ է, կատակ։ Քոյրս ինձ յանդիմանում էր, որ ես գիտեմ միայն կատակ անել, հեգնել, ծաղրել և բամբասել. խաբելն ու սուտ խօսելն էլ խօ դուք ասացիք։ Այս րոպէիս էլ իմ այդ բոլոր ընդունակութիւններս ի մի հաւաքած՝ ուզում էի խօսել պարոն Բաղամեանի «Ապահարզանի» մասին։

—Ի հարկէ, դուք չէք հաւանիլ այդ վէպը,—նկատեց Նասիբեանը, հարևան սեղանի մօտից մի աթոռ քարշ տալով և նստելով Բաղամեանի կողքին։

—Ա՛հ, այդ դո՞ւք էք, պարոն Նասիբեան։ Բարև ձեզ։ Բայց նախ՝ ի՞նչպէս է ձեր թանկագին առողջութիւնը։

—Շնորհակալ եմ։

—Յետոյ՝ ինչո՞ւ չպէտք է... Ի՞նչ էք կամենում։ Լուցկի՞։ Համեցէք... Ինչո՞ւ չպէտք է հաւանէի պարոն Բաղամեանի վէպը, համարձակւում եմ իմանալ։

Նասիբեանը վառեց պապիրոսը և լուցկու տուփը դրեց Վահանի առաջ։

—Որովհետև խաւարամիտների բանակին էք պատկանում,—ասաց նա և ծխախոտի ծուխը կուլ տալուց սկսեց հազալ։

—Ո՛, այդ ինչ սոսկալի բառեր էք գործածում, պարոն Նասիբեան։ Խղճացէք ինձ

խնդրում եմ։ Ի՞նչպէս կարող էի չհաւանել պարոն Բաղամեանի ռոմանը, քանի որ Պառնէլի մասին ձեր գրած յօդուածը սարսափելի հաւանել եմ։ Իսկ պարոն Բաղամեանի ռոմանի բովանդակութիւնն ու Պառնէլի սիրահարութեան պատմութիւնն այնքան նըման են իրար, որ եթէ պարոն Բաղամեանն իր վէպն առաջ գրած չլինէր, կըկարծէի, թէ իսկ և իսկ Պառնէլի գլխին պատահած անցքն է իր ռոմանի նիւթ շինել։ Ձեր յօդուածն այնքան հաւանել իմ, որ նոյն իսկ կարել դրել եմ շրջանակի մէջ և պատից կախել, ինչպէս մի ժամանակ անում էին մեր բարեպաշտ աղաները կաթողիկոսական կոնդակները։ Բայց ի՞նչ եմ ասում. մենակ ե՞ս եմ հաւանել։ Մեր գիւղում մի դիւքանչի ունինք։ Լրագրի այն համարը, որի մէջ տպուած էր ձեր յօդուածը, վազացրեց ինձ մօտ. «Մին տես է, մին տես է,—ասաց.—ի՞նչ հիանալի պեան ա կրել Նեասիպեանը»։ Պէտք է աւելացնեմ, պարոն Նասիբեան, որ ձեր յօդուածներն առհասարակ ձեռքից ձեռք են խլում գաւառում։

—Չի՞ կարելի արդեօք, որ հեգնութիւնները թողնէք և խօսէք եթէ ոչ լըջօրէն, գէթ անկեղծօրէն,—նկատեց Նասիբեանը բերանից արձակած առատ ծխի միջից ծուռ ու սառն մի հայեացք ձգելով Վահանի վրայ։

—Այդ ի՞նչ էք ասում, պարոն Նասիբեան. դուք ինձ վիրաւորում էք։ Անկեղծ չեն խօ-

սում միայն կանանց հետ, իսկ դուք, փառք Աստուծոյ, միրուք էլ ունիք, բեխեր էլ։

—Դուք երեւելի ճշմարտութիւն ասացիք,—բացականչեց Հեղինէն։—Օ՜, դուք տղամարդի՛կդ... Ձեզ մէկ-մէկ պէտք է կախել։

—Ի՞նչ խորամանկն էք, օրիորդ,—ասաց Վահանը աչքով անելով Հեղինէին.—չէք ուզում բոլորիս միանգամից կախել, որպէսզի առանց պաշարի չմնաք։

Հեղինէն բարձրաձայն քրքջաց։

—Դուք բաւական ցինիկ էլ էք եղել,—ասաց նա։

—Ըհը՛, նոր էպիտետ։ Այդ էլ գրիր դաւթարումդ, քոյրիկ ջան,—դարձաւ Վահանը Մանէին։—Ցինիկների նախահայրը խօ գիտէք ով էր, օրիորդ։

—Ես գործ չունիմ ձեր նախահօր հետ, բայց տեսնում եմ. որ դուք ինքներդ կարող էք մի լաւ նախահայր լինել։

—Օ՜, որ գիտենաք, թէ որքան մեծ պատիւ էք անում ինձ, օրիորդ։ Գիտէ՞ք Մակեդոնացին ինչ ասաց, երբ այցելութիւն էր տուել իմ նախահօրը։ «Եթէ ես Ալէքսանդրը չլինէի,—ասաց,—կըկամենայի Դիոգինեսը լինել»։ Այս էլ ասեմ, օրիորդ, որ դուք ուզում էք մեզ՝ տղամարդկանցս կախել, բայց իմ նախահայրն արժանի չէր համարում իր տակառի մէջ տեղ տալու ձեզ, ուզում եմ ասել՝ կանանցդ։

—Իսկ դուք ե՞րբ էք տակառ մտնելու։

—Երբոր մի նոր Ալէքսանդր Մակեդոնացի երեւան կըգայ։ Իսկ մինչ այդ՝ տակառներս ես գործ եմ ածում գինիներիս համար։ Բայց թողնենք այս։ Պարոն Բագամեանին ես խոստացել եմ խօսել իր «Ապահարզանի» մասին։ Դուք, ի հարկէ, կարդացել էք այդ վէպը։ Հիանալի է, չէ՞։

—Դուք ծաղրում էք,—ասաց Հեղինէն լըրջօրէն,—բայց ես ձեզ կասեմ, որ «Ապահարզանը» ոչ թէ միայն հիանալի մի վէպ է իբրեւ գեղարուեստական գրուածք, այլ և, որքան ես գիտեմ, ամենաառաջին գրուածքն է ամբողջ հայ գրականութեան մէջ, որ պատռում է կեղծ ամուսնութիւնների դիմակը և ցոյց է տալիս, թէ որքան ստրկացած վիճակի մէջ է դեռ ևս հայ կինը տղամարդի և հասարակական նախապաշարումների բռնակալ լծի տակ։

—Օրիորդ, այդպէս չի կարելի։ Դուք մոռանում էք, որ հեղինակը ներկայ է այստեղ։ Խնայեցէք նրա համեստութիւնը։ Մի՞թէ չգիտէք, որ հեղինակն իր կրիտիկոսների առաջ մի դեր ունի միայն կատարելու—լռել։ Եւ տեսնում էք, որ պարոն Բագամեանը չի պաշտպանում իրեն ձեր խօսքերի դէմ։

—Ես նրան չպախարակեցի, որ նա ինքն իրեն պաշտպանելու պէտքը զգայ։

—Զարմանալի հասկացողութիւն ունիք ինքնապաշտպանութեան վրայ։ Մի՞թէ չգի-

տէք, որ լինում են գովասանքներ, որոնց դէմ նոյնպէս պէտք է պաշտպանուել։ Լինում են, չէ՞, պարոն Բադամեան։

—Ես կատարում եմ հեղինակի դերը և լռում,—ասաց Բադամեանը ժպտալով։

—Կեցցէք։ Ուրեմն ես կարող եմ աւելի ևս համարձակ խօսել։ Լսեցէք, պարոններ, սկսում եմ... Պարոն Նասիբեան, դէն ձգեցէք այդ պապիրոսը. տեսնում էք՝ հազում էք... Ինչո՞ւ դուք, վիպասաններդ, պարոն Բադամեան, ամուսնական խնդիրը շօշափելիս նախ անպատճառ կնոջ կողմն էք բռնում, յետոյ ամուսնուն դուրս էք բերում իբրև կատարելագոյն մի հրէշ, որի հետ ոչ թէ միայն ձեր նկարագրած կանայք, որոնք սովորաբար հրեշտակներ են լինում, այլ և քառասուն պոզ ու պոչ ունեցող սատանան էլ չի կարող ապրել։ Նախ՝ միշտ այդպէ՞ս է լինում արդեօք։ Յետոյ՝ դա ի՞նչ փտած ձև է, որ շուն ու կատու դառած ամուսինների մէջ անպատճառ ներս էք խոթում մի երրորդ անձնաւորութիւն, որին և յանձնում էք ծանրութեան կենտրոնը։ Այդ միջանկեալ անձնաւորութիւնն անպատճառ կնոջ սիրահարն է։ Առանց սիրահարի ամուսնական խնդիր չի լուծւում, մինչև անգամ իսկի խնդիր էլ չի լինում, ձեր կարծիքով։ Կինը հրեշտակ, մարդը հրէշ, սիրահարն իդէալիստ, անարդարութեան և հասարակաց կարծիքի դէմ բողոքողի կնիքը ճակատին։ Կինը մեռնում

է թոքախտից, ամուսնու ճիրանների մէջ, սիրահարը վազում խելագարւում է սիրած կնոջ գերեզմանի վրայ, իսկ հրէշ-ամուսինը, երկուսի գլուխն ուտելուց յետոյ էլ, շարունակում է իր ուրախ, անհոգ կեանքը։ Ահա, ձեր, գրողներիդ, շաբլոնը, որը պապիս պապի ժամանակից արդէն փտել է ժանգից։ Չի՞ կարելի արդեօք, որ մի անգամ էլ շուռ տաք այդ շաբլոնը և այսպէս չափէք. ամուսինն անլեզու մի անասուն, կինը մի պոռնիկ, սիրահարը մի լովելաս-շառլատան։ Այն ժամանակ կըտեսնէք, թէ ինչպէս ամեն բան պըտիտիւս կըլինի, ինչպէս ասում է ղարաբաղցին։ Բայց չէ, դուք խորամանկ մարդիկ էք, ուզում էք կանանց սիրտը շահել, —տեսա՞ք, օրիորդն ինչպէս փառաբանում էր ձեզ,—թէ չէ՝ անլեզու անասուններից ի՞նչ շահ։ Այնպիսի մի ռոման...

—Ներողութիւն, ես ուզում եմ ձեզ պատասխանել,—բացականչեց Հեղինէն, քթի վրայ ուղղելով պենս-նէն։

—Խնդրում եմ, մի քիչ համբերեցէք, օրիորդ, ես իսկոյն վերջացնում եմ։ Այնպիսի մի ռոման, որպիսին ձեր «Ապահարզանն» է, պարոն Բադամեան, ես էլ կըգրեմ, թէև գինեգործ եմ։ Հաւատացնում եմ ձեզ։ Որովհետև շաբլոնը պատրաստ է, մտքերը պատրաստ են, ամեն բան պատրաստ է. հարկաւոր է միայն պարապոյ ժամեր և համբերութիւն։ Ա՛յ, ձեզ ղոչաղ կասեմ, եթէ կա-

բողանաք ապահարգանի խնդիրը լուծել առանց սիրահարի։ Երբեք հերոսի տեղ երկուսը դուրս բերէք—մարդ և կին։ Բայց ոչ թէ մէկը հրեշ, միւսը հրեշտակ, կամ մէկն անասուն, միւսը պոռնիկ, այլ երկուսն էլ կատարելապէս օրինաւոր անձեր, սակայն այնպիսի անձեր, որոնք ինչ-ինչ պատճառներով,—բայց ոչ սիրահարի պատճառով, հա, լաւ իմացէք,—չեն կարող միասին ապրել, անհնարին բան է, որ միասին ապրեն։ Այդ պատճառները պէտք է լինեին հարկաւ զուտ բարոյական պատճառներ, ինչպէս, օրինակ, տարբեր գաղափարները, հակումները, հայեացքները և այլն։ Հը՞, ի՞նչ էք կարծում այս մասին, պարոն Բաղամեան։

—Ներողութիւն, նախ թոյլ տուէք իմ ասելիքս ասեմ,—նորից մէջ ընկաւ Հեղինէն։

—Հրամայեցէք խնդրեմ։

—Ամենից առաջ մի բան. դուք այսպէս էլ էք խօսում, այնպէս էլ, և ես չեմ հասկանում, թէ իսկապէս ի՞նչ էք դուք—յետադիմակա՞ն թէ առաջադիմական, խաւարամի՞տ թէ ազատամիտ։

—Զարմանալի օրիորդ էք. նոր չէ՞ր, որ պարոն Նասիբեանն ասաց, թէ ես խաւարամիտ եմ։

Նասիբեանը պապիրոսը ձգեց գետին և սկսեց ոտով տրորել։

—Դուք ոչ այս էք, ոչ այն. դուք կլօուն էք,—ասաց նա շատ հանգիստ կերպով։

Վահանը բարձրաձայն ծիծաղեց։

—Դէ ասում էք պարոն Նասիբեանը կծել չի իմանում...

—Շունը դո՛ւք էք,—յանկարծ պայթեց Նասիբեանը ձեռքն ամուր խփելով սեղանին և վեր թռաւ տեղից։ Մի ակնթարթում նրա ահագին աչքերը կրակ կտրեցին։

Մեքենայաբար վեր թռան տեղներից նաև Բաղամեանը, Հեղինէն և Մանէն, առաջինն ապշած, վերջինները սաստիկ վախեցած, մանաւանդ Մանէն, որը լաւ չհասկացաւ, թէ ինչ պատահեց այդպէս յանկարծ։

Վահանը մի րոպէ կորցրեց իր սառնասրտութիւնը. նա ոչ թէ միայն յանկարծ դադարեց ծիծաղելուց, այլ և, նրա ամբողջ կեանքում թերևս առաջին անգամ, չքացաւ նրա դէմքից մշտական հեգնական ժպիտը։ Նա ծանրօրէն վեր կացաւ և հուժկու ձեռքերը տարածեց դէպի Նասիբեանը, բայց քոյրը յանկարծ վրայ ընկաւ նրա թևին։

—Վահա՛ն... աղաչում եմ,—շշնջաց Մանէն։

Վահանը նայեց քրոջ աղերսական-սարսափահար աչքերին, յետոյ մի հայեացք ձգեց շուրջը, ուր բաւականաչափ կողմնակի հետաքրքիր հայեացքներ տեսաւ, և երկաթի կարծրութիւն ստացած ձեռքերը վայր թողեց։

—Ափսո՛ս,—արտասանեց նա և նոյն ծանրութեամբ նստեց։

—Ի՞նչ ափսոս,—աղաղակեց Նասիբեանը,

անվախ կանգնած նրա առաջ և փայլեցնելով նրա վրայ իր ահագին սև աչքերը։— Խելքներդ ո՞ւմ վրայ է գնում։ Չլինի՞ կարծում էք կըվախենամ ձեզնից։ Տասն այդչափ փող ունեցէք, բայց ես թոյլ չեմ տալ, որ ինձ հետ կատակ անէք։ Ո՞ւմ հետ էք խօսում այդպիսի հեգնութիւններով։ Գնացէք ձեր հաւերի հետ խօսեցէք։ Իսկ ես պահանջում եմ ձեզնից, որ մարդկանց հետ խօսէք մարդավարի։

—Դէ գնա, հա՛, քոսոտ,—արտասանեց Վահանը ծաղրական արհամարհանքով։

Նասիբեանին այդ էր պակաս. արիւնն աչքերն առած, ատամները սեղմած և ձեռքերը բռունցք կազմած՝ նա յարձակուեց Վահանի վրայ, բայց Վահանն իր ծանրաշարժ մարմնից անսպասելի մի ճարպիկութեամբ բարձրացրեց իր ահագին ոտը և նստած տեղից այնպիսի մի հարուած տուեց նրա նիհար փորին, որ նա ետ ու ետ գնաց և անպատճառ պիտի փռուէր մէջքի վրայ, եթէ նոյն րոպէին Բադամեանը չբռնէր նրան ետևից։

Սկանդալը կատարեալ էր։ Շուրջն ահագին բազմութիւն էր հաւաքուել։ Նասիբեանը ձկան պէս խլպլտում էր Բադամեանի ամուր ձեռքերի մէջ. բերնից սարսափելի հայհոյանքներ և փրփուր թափելով, ուզում էր դուրս պրծնել և նորից յարձակուել Վահանի վրայ։

—Թողէք, պարոն Բադամեան, թողէք,— ասում էր Վահանը հանգիստ նստած և ժպտում էր իր ֆիզիքական ոյժի վրայ վստահ մարդու արհամարհական ժպիտով։

Բադամեանին և ուրիշ մի երկու ծանօթի հազիւ աջողուեց հեռացնել կատաղած Նասիբեանին։ Սկանդալի սիրահար ամբոխն ևս ցրուեց գլխաւորապէս այն պատճառով, որ թատրոնի երրորդ զանգն էր արդէն հնչում։ Վահանը նոր տեսաւ, որ սեղանի մօտ չկան ոչ քոյրը, ոչ Հեղինէն։

Քրոջը նա գտաւ թատրոնում, իր տեղը նստած։ Երկրորդ գործողութիւնն արդէն սկսուած էր։

—Տեսա՞ր, ինչ օյին հանեց այդ մայմունը,—ասաց Վահանը քրոջ կողքին նստելով։—Խօ չվախեցա՞ր։

Քոյրը ոչինչ չպատասխանեց։

VIII

Երկրորդ խաղամիջոցին Վահանին շրջապատել էին մի՝ քանի ծանօթներ և հարցուփորձ էին անում նրան Նասիբեանի հետ ունեցած ընդհարման մասին։ Նասիբեանն երկրորդ գործողութեան ժամանակ չէր մտել թատրոն։ Նա նստած էր բուֆետի մօտ մի դերասանի հետ և զօռ էր տալիս գինուն այն մտադրութեամբ, որ այդ գիշեր մի նոր և հսկայական սկանդալ սարքի Վա-

հանի գլխին։ Հեղինէն գիտէր այդ բանը և յայտնեց Վահանին, բայց Վահանը միայն ժպտաց և շարունակեց խօսակցութիւնն իր ծանօթների հետ։ Մանէն մենակ էր մնացել։ Նա այնքան նեղացած էր եղբօրից և առհասարակ այնքան վատ տրամադրութեան մէջ էր զգում իրեն, որ այլ ևս սիրտ չունէր մնալու թատրոնում։ Եւ երբ Հեղինէն նրան ևս յայտնեց Նասիբեանի մտադրութիւնը, նա անմիջապէս գտաւ եղբօրը և խնդրեց, որ իսկոյն տուն դառնան։

—Ինչի՞ց ես վախենում,—ասաց Վահանը։—Բանս մէջ կըհաւաքեմ և ջերս կըկոխեմ։ Դու քեզ համար հանգիստ կաց։

Մանէն թողեց եղբօրը և հեռացաւ։ Յանկարծ այնպիսի սրտի եկաւ, որ ուզեց մենակ վերադառնալ տուն։ Բայց այդ միջոցին նրա դէմն ելաւ Բադամեանը։

—Ես ձեզ էի որոնում, և լաւ է, որ մենակ էք,—ասաց նա։

—Ի՞նչ էք կամենում,—հարցրեց Մանէն գրեթէ թշնամաբար։

—Մի-երկու խօսք ունիմ ասելու։ Խնդրում եմ, Մանէ... անցնենք այսպէս։

Բադամեանի հայեացքն այն աստիճան լի էր կարօտով, ձայնը հնչում էր այն աստիճան աղերսագին, որ Մանէն քաջութիւն չունեցաւ մերժելու նրա խնդիրքը։

Նրանք անցան ճեմելիքով և մտան պար-

տէզի խորքը։ Այստեղ մարդ չկար և կիսախաւար էր տիրում։

—Ձեր եղբայրը շատ անտակտ մարդ է,—ասաց Բադամեանը։—Պիտի իմանայ, թէ ում հետ է կատակ անում։ Ես ծանօթ եմ նրա բնաւորութեանը և չեմ նեղանում։ Բայց Նասիբեանը հիւանդ և տաքարիւն մարդ է։ Որ ասեմ, թէ Վահանն այդ չգիտէ, գիտէ. բայց կարծես թէ զօռով աշխատում է մարդկանց գրգռել իր դէմ։ Օրիորդին էլ խօ տեսաք ինչպէս վիրաւորեց, և ես զարմացայ, որ նա համբերեց, թէ չէ, խօ գիտէք, նա էլ, Նասիբեանից ոչ պակաս ընդունակ է սկանդալ սարքելու։ Ես հաւանում եմ ձեր եղբօր հումորը, բայց... համը տանում է։ Իսկ նրա կրիտիկան... Այդ բանն ինձ շատ հետաքրքրեց։ Այն ի՞նչ ակնարկներ էին, որ անում էր... Մի՞թէ նրան յայտնի է...

—Ի՞նչը,—յանկարծ կանգ առնելով հարցրեց Մանէն գրգռուած։

Բադամեանը նայեց կիսախաւարի մէջ նրա վառուող աչքերին և խորը հոգոց քաշեց։

—Այդպէս, միշտ այդպէս,—արտասանեց նա յուսահատօրէն։—Միշտ լարուած, միշտ գրգռուած, միշտ անհաշտ... Եւ դուք կարծում էք, չհասկացա՞յ, թէ ինչու Զատկին, որ այցելութեան էի եկել ձեր տուն, սուտ հիւանդ ձևացաք և դուրս չեկաք ինձ մօտ։

—Որ հասկացել էք, ուրեմն աւելորդ է

այդ մասին խօսելը,—նկատեց Մանէն խըստորէն։

Բաղամեանն աղերսալի անհամարձակութեամբ առաւ նրա ձեռքը։

—Ո՛չ, աւելորդ չէ, Մանէ, աւելորդ չէ,—շշնջաց նա յուսահատական սիրով։—Դուք ամէն կերպ աշխատում էք խուսափել ինձանից, բայց ես տեսնում եմ, թէ որքան թանկ է նստում այդ ձեզ։ Այնտեղ, լոյսի մէջ ես լաւ դիտեցի ձեր դէմքը, իսկ այժմ ահա շօշափում եմ ձեր ձեռքը։ Այս ի՞նչ է. դուք ոսկոր էք դարձել։ Եւ ինչո՞ւ, Մանէ, ինչո՞ւ...

Մանէն ձեռքը վճռաբար խլեց նրա ձեռքերի միջից։

—Բաղամեան, զգուշացէք։ Այս երեկոյ ես այնպէս գրգռուած եմ, որ չեմ խնայիլ ոչ ձեզ, ոչ ինձ. Աստուած է վկայ, չեմ խնայիլ, եթէ կըշարունակէք խօսել այդ մասին...

Բաղամեանը տեսաւ, որ Մանէն կատակ չի անում։ Կարճ ժամանակ նա նայում էր Մանէին խոր տանջանքով, յետոյ զսպած կերպով հառաչեց և ասաց հարկից ստիպուած մարդու հնազանդութեամբ.

—Որ այդպէս է, աւելի լաւ է կըհեռանամ, որովհետև...

Նա չվերջացրեց, թեթև գլուխ տուեց և կամաց դարձաւ ու հեռացաւ։

Մանէն նայեց նրա ետևից խիստ տա-

տանջման մէջ, և երբ Բաղամեանն արդէն բաւական հեռացել էր, կանչեց.

—Սպասեցէք։

Բաղամեանը կանգ առաւ։

Մանէն հանգիստ քայլերով մօտեցաւ նըրան և միասին առաջ անցան։

—Դո՛ւք չէք կարող ինձ բոլորովին մենակ թողնել այս հասարակութեան մէջ,—ասաց նա այս անգամ հանդարտ, բայց այնպիսի մի եղանակով, որից երևում էր, որ ուզում է շահած լինել Բաղամեանի կոտրած սիրտը։—Եղբայրս, տեսնում էք, ինձ մոռացել է։ Եւ իսկապէս նա է պատճառը, որ այս երեկոյ ես այսպէս ջղային եմ դարձել։

Բաղամեանը ոչինչ չասաց։ Գլուխը կըրծքին խոնարհած, նա քայլում էր. իրեն փոքր ինչ հեռու պահելով Մանէից և լսում էր դժգոհ մարդու մտախոհ հանգստութեամբ։

Երբ մօտեցան պարտէզի պայծառ լուսաւորուած հրապարակին, Մանէն դարձաւ։

—Յետ դառնանք,—ասաց։

Բաղամեանը նոյն լռութեամբ հնազանդուեց նրան։ Կարճ ժամանակ երկուսն էլ լուռ քայլում էին կիսախաւար ճեմելիքով։ Փարթամ ծառերի արանքից, հրապարակի կողմից, լոյսի երկայն շերտեր էին ընկնում ճեմելիքը. այդ լուսաւոր շերտերի մէջ, գետնի վրայ, հանդարտ նստած էին տերևների ստուերները՝ գեղանկար ցանցեր կազմած։ Հրապարակում, պաւիլիոնի մէջ, նուագում

էր գինուորական երաժշտախումբը. պղնձեայ լայնաբերան շեփորը մերթ գռում, մերթ մնչում էր՝ կարծես ինչ-որ ծանր բեռան տակ տանջուելով, թեթև սրինգը կլկլացնում էր ուրախ ու զուարթ, իսկ փոքրիկ թմբուկը թափում էր իր մանրիկ կարկուտը, կարծես հաւը կուտ էր ուտում:

—Ի զուր էք կարծում, թէ նա գիտէ,—ասաց Մանէն, և Բաղամեանը հասկացաւ, որ նա խօսում է եղբօր մասին:—Նա ոչինչ չգիտէ: Եթէ գիտենայ էլ... Մի՞թէ վախենում էք:

Բաղամեանը զարմացած նայեց նրան:

—Վախենո՞ւմ... Շատ տարօրինակ է, որ այդ հարցը դուք էք տալիս ինձ: Ձեռքերս կապել էք և հարցնում՝ վախենո՞ւմ եմ: Շատ էլ չեմ վախենում, բայց ի՞նչ օգուտ դրանից, քանի որ այնպիսի դրութեան մէջ էք դրել ինձ, որ ուզեմ-չուզեմ՝ պէտք է զգոյշ կենամ ամենից առաջ հէնց ձեզ համար: Վստահեցրէք ինձ, թէ վճռական րոպէին ինձ հետ կը լինիք և ոչ ինձ դէմ, այն ժամանակ կը տեսնէք վախենո՞ւմ եմ, թէ ոչ:

Մանէն ոչինչ չասաց: Բաղամեանի այդ պատճառաբանութիւնը նա միանգամայն արդարացի գտաւ, բայց իրեն էլ մեղաւոր չէր համարում: Նա ուզում էր արդարացնել իրեն, բայց, ինչպէս միշտ, երբ նրանց միջև խօսք էր բացւում իրենց յարաբերութիւնների մասին, չէր իմանում ինչպէս ար-

տայտէր այն. ինչ որ կատարւում էր իր հոգու խորքում, ինչ որ մտածում, զգում էր ինքը շարունակ:

—Եթէ մեր երկսից կայ մէկը, որ վախենում է, այդ անշուշտ դուք էք, և ոչ թէ ես,—աւելացրեց Բաղամեանը սառն յանդիմանութեամբ:

—Դուք ճիշտ էք ասում. ես վախենում եմ,—շշնջաց Մանէն:—Վախենում եմ... խըղճիցս: Օ՛, որ գիտենաք, թէ որքա՜ն զարգացած է խիղճ կոչուած զգացումն իմ մէջ... Դուք պահանջում էք, որ ես թողնեմ ամուսնուս և... փախչեմ ձեզ հետ,—աւելացրեց նա նորից յուզուելով և կանգ առաւ:—Փախչում են միայն նրանք, որոնք զգում են, որ յանցաւոր են: Իսկ ես չեմ ուզում զգալ, որ յանցաւոր եմ, հասկանո՞ւմ էք ինձ: Ես սոսկում եմ խղճիցս և հաւատում, որ Աստուծոյ արդար դատաստան կայ: Եթէ դուք կարող էք լռեցնել խղճիս ձայնը, լռեցրէք. եթէ կարող էք համոզել ինձ, որ Աստուած չի պատժում յանցաւորներին, համոզեցէք, և ես կըգամ ձեր ետևից: Բայց դուք այդ չէք կարող, որովհետև դրա համար հարկաւոր կըլինի, որ ճղէք կուրծքս, սիրտս հանէք և կրակը նետէք, որ անզգայ մոխիր դառնայ. հարկաւոր կըլինի, որ ջարդէք գանգս, ուղեղս հանէք և տրորէք ոտի տակ, որպէսզի չունենամ այն գիտակցութիւնը, թէ այն օրից, երբ ձգեմ իմ ամուսնուն, ան-

հուն տանջանքի դուռ չպիտի բանամ նրա և նրա հետ միասին ինձ համար: Դուք ինձ երջանկութիւն էք խոստանում, մինչդեռ ես համոզուած եմ, որ այն օրից, երբ հեռանամ իմ օջախից, ամենաթշուառը պիտի լինեմ աշխարհիս երեսին, և ոչ մի փրկութիւն այլ ես չպիտի լինի ինձ համար:

Բաղամեանը նայում և լսում էր Մանէին պարզապէս ապշած: Մանէն դեռ ես երբէք այդպէս կտրուկ ու կրքոտ չէր խօսել նրա հետ:

—Լաւ, որ այդպէս է,—ասաց նա,—էլ ինչու էք ձեզ այդքան տանջում: Ապրեցէք ձեզ համար հանգիստ ձեր տանը, ձեր ամուսնու հետ, եթէ համոզուած էք, որ ինձ հետևելով ամենաթշուառը պիտի լինիք, և ինձ էլ հրամայեցէք մի անգամ առ միշտ, որ այլ ես չհամարձակուեմ վրդովել ձեր հանգստութիւնը: Դրանով էլ կվերջանայ ամեն բան: Վայրենի խօ չե՞մ, աւազակ խօ չե՞մ, որ զօրով յափշտակեմ ձեզ: Ես էլ մարդ եմ, ես էլ ունեմ պատուասիրութիւն: Դուք կապրէք ձեր տանը, ձեր ամուսնու հետ խաղաղ ու երջանիկ, ես էլ կըգնամ իմ ճանապարհով: Պրծաւ գնաց: Թէ չէ, ի՞նչ է նշանակում անդադար յուզուել, զայրանալ, բացատրութիւններ տալ, արդարանալ... Ո՞ւմ առաջ էք արդարանում: Ձեր խղճի՞ առաջ: Բայց դուք դեռ ես չէք գործել այն, ինչ որ յանցանք էք համարում: Ի՞մ առաջ: Բայց ո՞վ եմ ես ձեզ համար.—պատահական մի մարդ, որի

վերաբերմամբ ոչ մի պարտաւորութիւն չունիք, որին երբ կամենաք՝ կարող էք հեռացնել ձեզնից:

Բաղամեանի շատ հանգիստ կերպով արտասանած այդ խօսքերն այնքան անակընկալ էին Մանէի համար, որ նա այս անգամ պարզապէս բան չգտաւ ասելու: Երկար ժամանակ նա լուռ տանջանքով նայում էր Բաղամեանի աչքերին, յետոյ յուսահատական մի հայեացք ձգեց իր շուրջը և կամաց նստեց մօտը գտնուած նստարանի վրայ:

Ծեմելիքի ծայրից լսուեցին բարձրաձայն ծիծաղի ձայներ: Բաղամեանը նայեց այն կողմը և տեսաւ ինչ-որ մութ ստուերներ, որոնք մօտենում էին արագօրէն: Նա նստեց նոյն նստարանի վրայ, Մանէից այնքան հեռու, որ նրանց մէջտեղ կարող էր ուրիշ մարդ տեղաւորուել: Ստուերները մօտեցան: Մանէի և Բաղամեանի առաջով գրեթէ վազելով անցան երկու աղջիկ թեւանցուկ և կրկչալով: Նրանց հետևում էին երեք գիմնազիստ, որոնցից մէկը—խիստ բարձրահասակ ու լղար մի տղայ—մի քիչ յետ էր մնացել ընկերներից և քայլում էր զինուորի լայն ու չափուած քայլերով: Աղջիկներն ու գիմնազիստները կորան պարտիզի խորքում, մթութեան մէջ:

Բաղամեանը, ըստ երևոյթին, գտած էր համարում այն միջոցը, որով, երկար մա-

քաշելուց յետոյ, յոյս ունէր այս անգամ ընկճելու իր սիրոյ մէջ յամառող այդ զարմանալի և տարօրինակ կնոջը, ուստի շարունակեց նոյն հանգիստ և սառն յանդիմանական եղանակով.

—Չեմ հասկանում, այդ ի՞նչ սէր է, որ անդադար դառնում է, անդադար երերում, անդադար դողում, անդադար ինչ-որ յանցանքներ ու տանջանքներ է երևակայում: Ես միշտ այն համոզումն եմ ունեցել, թէ բնութեան մէջ սէրն է ամենամեծ զօրութիւնը, որը ոչ մի խոչընդոտ չի ճանաչում և շեշտակի դիմում է ուղիղ իր նպատակին, հոգ չէ, թէ ճանապարհին նոյն իսկ ջարդուփշուր կըլինի: Բայց երբ նայում եմ ձեզ, երբ լսում եմ ձեզ...

Բաղամեանը թոթուեց ուսերը տարակուսանքով, լռեց ու նայում էր դէպի պարտիզի հրապարակը, որտեղից ծառերի արանքով լուսոյ շերտեր էին թափանցում ճեմելիքը: Լայնաբերան շեփորը տնքում էր դեռ և փոքրիկ թմբուկը դեռ շարունակում էր տեղալ իր մանրիկ կարկուտը: Ճեմելիքում զգալի կերպով տօթ էր կանգնած և խոնաւութեան հոտ էր փչում:

Բաղամեանը յանկարծ վեր կացաւ և կանգնեց Մանէի առաջ:

—Երկուից մէկը,—ասաց նա գրգռուած, այլ ևս անկարող լինելով զսպել իրեն.—դուք կամ չէք սիրում ինձ, կամ կարծում էք, թէ

սիրում էք և... պարզապէս խաղում էք ինձ հետ, երևի կարծելով, թէ ես այն յիմարներից եմ, որոնց քթից բռնած՝ կանայք կարող են անել ամեն բան, ինչ որ կամենան...

—Բաղամեան...—շշնջաց Մանէն:

—Ո՛չ, խնդրում եմ,—ընդհատեց նրան Բաղամեանը խստօրէն:—Ինձ խօսքեր հարկաւոր չեն այլ ևս. ձեր վարմունքն արդէն ամեն ինչ պարզում է ինձ համար: Այսքան ժամանակ չարչարել, տանջել, մերթ յոյս տալ, մերթ յուսահատեցնել և յետոյ վեր կենալ և խօսել խղճի մասին... Լսեցէք, Մանէ, ինչ եմ ասում: Ես չեմ կարող ստիպել ձեզ, որ սիրէք ինձ, բայց իրաւունք ունիմ պահանջելու, որ գէթ փոքր ինչ յարգէք ինձ և... չխաղաք ինձ հետ...

—Բաղամեան,—այս անգամ գրեթէ ճչաց Մանէն, վեր թռաւ, նորից նստեց, յետոյ շտապով հանեց թաշկինակը, սեղմեց աչքերին և խուլ կերպով հեկեկաց:

Այդ բանն այնքան անսպասելի էր Բաղամեանի համար, որ նա միանգամայն կարկամեց և չիմացաւ ինչ անի: Յետոյ արագօրէն վախկոտ մի հայեացք ձգեց ճեմելիքի այս ու այն կողմը, նստեց Մանէի կողքին և աշխատում էր ներողութիւն խնդրող անկապ խօսքերով հանգստացնել նրան: Բայց ի զուր. Մանէն հեծկլտում էր երեխայի պէս, թաշկինակն աչքերին պինդ սեղմած: Յետոյ

յանկարծ դադարեց հեծկլտալուց, վեր թռաւ և ասաց.

—Գտէք եղբօրս. ուզում եմ տուն գնալ։

Այդ նոր անակնկալը նորից ապշեցրեց Բաղամեանին։ Նա հէնց այնպէս էլ սառած մնաց նստած տեղը և կարողացաւ միայն շշնջալ.

—Մանէ...

Մանէն արագօրէն սրբեց աչքերը, թաշկինակը պահեց, մազերը շտկեց և, առանց որևէ խօսք արտասանելու, դիմեց դէպի պարտէզի հրապարակը վճռական քայլերով։

Բաղամեանը խելագարի պէս վեր թռաւ նստարանից և վազեց նրա ետևից։

—Մանէ... Ի սէր Աստուծոյ... Ի՞նչ էք ուզում անել։

—Ուզում եմ տուն գնալ։

—Ինչո՞ւ։

—Որովհետև չեմ ուզում, որ ինձ վիրաւորէք։

—Ե՞ս ձեզ վիրաւորե՞մ... Մանէ... սպասեցէք... Աղաչում եմ... Մանէ...

Եւ Բաղամեանը, բռնելով նրա ձեռքից, փորձեց պահել, բայց Մանէն ձեռքը վճռաբար խլեց նրա ձեռքերի միջից և արագաքայլ առաջ անցաւ։

IX

Պարտէզի հրապարակում Վահանը որոնում էր քրոջը, երբ Մանէն դուրս եկաւ մութ ճեմելիքից և մօտեցաւ նրան։ Վահանը կանգ առաւ ակամայ և զարմացած նայեց նրա յուզուած դէմքին։

—Եկ գնանք,—շշնջաց Մանէն գրեթէ շընչասպառ և, բռնելով եղբօր ձեռքից, կամեցաւ առաջ տանել նրան իր հետ։

—Ո՞ւր։

—Տուն։

—Դարձեա՞լ տուն։ Ներկայացումը վերջանայ, է։

—Չեմ ուզում։ Եկ գնանք։

Վահանը պահեց քրոջը և փորձող հայեացքով նայեց նրա տարօրինակօրէն փայլող աչքերին։

—Սպասիր։ Ի՞նչ է պատահել։

—Ոչինչ չի պատահել։ Ես ուզում եմ, որ այս րոպէիս ինձ տուն տանես։

—Չլինի՞ թէ նեղացել ես, որ քեզ մենակ թողեցի։

—Ա՜խ... Գնանք տուն ասում եմ,—ջղայնօրէն արտասանեց Մանէն և նորից փորձեց եղբօրը շարժել տեղից։

—Աստուածդ սիրես, Մանէ, սպասիր տեսնենք ինչ է պատահել։ Դու այնքան յուզուած ես, որ... Կարծես լաց էլ ես եղել... Չլինի՞ թէ Նասիբեանը...

—Ո՛չ, ո՛չ... Արի գնանք։

—Մանէ, աղաչում եմ սաս ճշմարիտը։ Եթէ նա քեզ որեւէ անախորժ բան է ասել իմ ջիգրը հանելու համար, այս րոպէիս կը փշրեմ նրա ոսկորները։

—Ա՜խ, ի՜նչ անտանելի մարդ ես... Ես Նասիբեանին չեմ էլ տեսել։

—Բա ո՞վ է նեղացրել քեզ։ Ո՞ւմ հետ էիր։

—Բաղամեանի հետ,—ասաց Մանէն արդէն ճարահատեալ։

—Ա՜...

Մանէն սկզբում վախեցաւ, յետոյ յանկարծ զսպեց իրեն և սուր-սուր նայեց եղբօր աչքերին։

—Ի՞նչ է նշանակում այդ «ա»-ն,—հարցրեց նա խուլ ձայնով։

—Ոչինչ... Այ, Բաղամեանը գալիս է։

—Ես գնում եմ տուն,—գրեթէ աղաղակեց Մանէն և շտապով դիմեց դէպի պարտիզի մուտքը։

Բաղամեանը, հէնց որ հեռուից տեսաւ Մանէին ու Վահանին իրար հետ, ետ դարձաւ և կորաւ ճեմուղիքի մթութեան մէջ։

Վահանն իր ծանր ու լայն քայլերով հետևեց քրոջը։

Մի հինգ րոպէ յետոյ քոյր ու եղբայր, կառք նստած, տուն էին դառնում։ Մանէն կուչ էր եկել կառքի անկիւնը և լեզուն փորն էր գցել։ Իսկ Վահանը, բաւական զարմացած քրոջ տարօրինակ դրութեան վրայ,

վախենում էր բան հարցնել։ Սակայն նա երկար չկարողացաւ դիմանալ և հարցրեց.

—Նա քեզ վիրաւորե՞ց...

Քոյրը ոչինչ չպատասխանեց։

Վահանը խոստովանութեան նշան համարեց նրա լռութիւնը և ասաց այս անգամ կէս-խրատական, կէս-անտարբեր, բայց լուրջ եղանակով.

—Ես գիտեմ, որ նա մաքուր մարդ չէ... և, առհասարակ, լաւ կըլինի, որ զգոյշ կենաս նրանից։

Մանէն յանկարծ մի խիստ շարժում գործեց, ուզեց խօսել, բայց էլի բան չասաց և էլի կուչ եկաւ կառքի անկիւնը։

Տուն որ հասան, Վահանը չիջաւ կառքից։

—Ինչո՞ւ չես իջնում,—հարցրեց քոյրը։

—Ես պէտք է վերադառնամ թատրոն։ Բարի գիշեր։

Մանէն վախեցած վրայ ընկաւ նրա ձեռքին։

—Վահա՛ն, ի՞նչ ես ուզում անել։

Վահանը սկզբում զարմացաւ քրոջ այդ բացականչութեան վրայ, յետոյ, երբ կառքի լապտերի լոյսի տակ տեսաւ քրոջ վախեցած դէմքը, ծիծաղեց։

—Մի վախենար, քոյրիկ ջան, ես նրան ոչինչ չեմ անիլ։ Ուզում եմ վերադառնալ թատրոն միայն նրա համար, որ... չեմ ուզում տուած փողս կորչի։

—Ա՛խ, դարձեա՛լ փողը...

Վահանը նորից ծիծաղեց։

—Լսիր, Վահան։ Իջիր։ Աղաչում եմ իջիր։ Բան ունիմ ասելու։

—Դէ ասա, էլի։

—Չէ, ներս արի։

Վահանն իջաւ, կառքը ճանապարհ դրեց և քրոջ հետեւից ներս մտաւ տուն։

--Կապրիզներ եմ անում, է՞, —ասաց նա սանդուխքով բարձրանալիս, որի ժամանակ աստիճանները ճռճռում էին նրա ահագին ծանրութեան տակ։

Մի քանի րոպէ յետոյ քոյր ու եղբայր նըստած էին հիւրասենեակում իրար դէմ։

Վահանը ճրագի լոյսի տակ լաւ նայեց քրոջ դէմքին։

— Երեսիդ գոյն չկայ,—նկատեց նա։—Սկեսուրդ որ տեսնի, սիրտը խօ կըճաքի։

—Սկեսուրս այժմ քնած է։ Նա միշտ վաղ է քնում,—մեքենայաբար արտասանեց Մանէն։

Կարճ ժամանակ լռութիւն տիրեց։ Վահանը հետաքրքրութեամբ դիտում էր քրոջը և, արմունկով ծնկանը յենուած, ծխում էր հանգիստ։

—Դէ ասա տեսնենք ինչ ես ասում,—ասաց նա։

Մանէն կամ չէր վստահանում, կամ չէր իմանում ինչպէս սկսէր։ Այժմ խիստ տարօրինակ անհանգստութիւն էր տիրել նրան. Նա չէր նայում եղբօրը, նրա տենդային հայեացքը թափառում էր մի առարկայից

միւսը. Նա զգում էր, որ դէմքը մերթ այրւում է սաստիկ, կարծես բոցերի ալիք է դիպչում յանկարծ, մերթ սառում և ճակատին սառն քրտնքի կաթիլներ են դուրս ցայտում։

—Դու Բաղամեանի մասին ես ուզում խօսել, չէ՞,—հարցրեց Վահանը, երկար սպասելուց յետոյ։

--Այո,—շշնջաց Մանէն, աշխատելով այնպիսի դիրք տալ իրեն, որ Վահանը չտեսնի իր դէմքը։ Յետոյ յանկարծ վեր կացաւ, մօտեցաւ լուսամուտներից մէկին և բաց արեց, կարծես նեղուելով օդի պակասութիւնից։

Վահանը, առանց դիրքը փոխելու, ծուռ հայեացքով հետեւեց նրան, յետոյ նայեց սիգարի ծայրին և, տեսնելով որ մոխիրը վայր ընկնելու վրայ է, սիգարը զգուշօրէն մօտեցրեց մոխրամանին, ճկոյթով խփեց, և մոխիրը վայր ընկաւ մոխրամանի մէջ։

—Սիրոյ խոստովանութի՞ւն, —հարցրեց նա։

Նրա ականջին դիպաւ մի խուլ «այո»։

Զնայելով որ Վահանը հէնց սկզբից այդ պատասխանին էր սպասում, բայց և այնպէս կարծես թէ ապշեց, որ այդ պատասխանը լսեց և ոչ թէ ուրիշ պատասխան։ Բայց այդ ապշութիւնը շատ շուտով անցաւ։ Նա սիգարը դրեց բերանը, վերկացաւ, ձեռ-

քերով շօշափեց իր հաստ փորը և ժիլետի տակից վեր քաշեց անդրավարտիքը։

—Թէ որ այդ էր ասելիքդ, ի զուր ինձ ներս կանչեցիր,—ասաց նա առաջուայ անտարբեր ձայնով և աչքերը ման ածեց չորս կողմը։—Ո՞րտեղ դրի գլխարկս։

Մանէն արագօրէն յետ քաշուեց լուսամուտից և նայեց եղբօրը միաժամանակ թէ վախեցած, թէ զարմացած։

Վահանը գտաւ գլխարկը և ծածկեց։

—Բարի գիշեր։

Մանէն առաջ վազեց և յուսահատական անզօրութեամբ կախ ընկաւ նրա ուսերից։

—Վահա՛ն... դու գնո՞ւմ ես։

—Բաս ի՞նչ անեմ։

—Եւ այդ եղբա՞յրս է ասում։

—Եղբայրդ ի՞նչ գործ ունի այստեղ։ Այդ դու, այն էլ Բաղամեանը։

—Վահա՛ն... Վահա՛ն ջան... սպասիր... Մի՞թէ չես ուզում ինձ այստեղևեթ սպանել...

—Որպէսզի յետոյ աքսո՞ր գնամ։ Շատ շնորհակալ եմ։

Մանէն այս անգամ չոքեց եղբօր առաջ և պինդ գրկեց նրա ոտները։

—Վահա՛ն, Վահա՛ն,—աղաղակեց նա յուսահատական աղերսանքով,— ես մենակ եմ, ես անդունդն եմ գլորւում, ազատի՛ր ինձ... Մի՞թէ եղբայրս չես, մի՞թէ չես սիրում ինձ։ Մի՞թէ կուզես, որ քոյրդ արատաւորի իր ընտանիքը, թշուառացնի իր ամուսնուն, ա-

նառակ կնոջ անուն հանի։ Մի՞թէ առաջինը դու չպիտի լինիս ինձ յանդիմանողը, ինձ անարգողը, երեսիս թքողը։ Մի՞թէ իմ պատիւը քո պատիւը չէ, իմ անունը՝ քո անունը։ Տեսնում ես, ես չոքած եմ քո առաջ, ես աղերսում եմ, պաղատում եմ քեզ իբրև իմ միակ ազատչին. ազատի՛ր ինձ, ազատի՛ր այս անտանելի տանջանքներից։ Մինչև այժմ ես կարէվեր ոյժ եմ գործ դրել մաքառելու և մաքառել եմ, որքան կարողացել եմ. բայց այժմ արդէն զգում եմ, որ ոյժերս թուլանում են, և անդունդը, սոսկալի անդունդը պատրաստ է ինձ կլանելու... Վահա՛ն, լըսո՞ւմ ես, ես կործանուելու վրայ եմ... և կըկործանուեմ, անպատճառ կըկործանուեմ, եթէ չփրկես ինձ... Ես ոչինչ չեմ ուզում քեզնից. միայն խորհուրդ տուր՝ ի՞նչ անեմ, ի՞նչպէս դուրս գամ այս անտանելի դրութիւնից...

—Նախ վեր կաց. դա բանի նման չէ,— ասաց Վահանը։—Ոտներս այնպէս հուպ ես տալիս, որ քիչ է մնում վայր գցես և արաքոցս վեր հանես։ Եւ այդ ի՞նչ անբնական լեզուով ես խօսում. բեմի վրա՞յ ես, ինչ է։ Իսկ խորհուրդս—ահաւասիկ. դիմիր ամուսնուդ. եթէ թոյլ կըտայ, որ սիրես Բաղամեանին—սիրիր, իսկ եթէ ոչ, հանգիստ նստիր քեզ համար տանը և... «Դոն Կարլոսը» կարդա... չէ, աւելի լաւ է այդպիսի գրքեր ամենևին չկարդաս։ Վեր կաց։

Մանէի գլխին կարծես սառն ջուր մաղեցին։ Նա կամաց թողեց եղբօր ոտները, որոնց մի րոպէ առաջ սեղմում էր ձեռքերի մէջ խեղդուողի պէս, վերին աստիճանի կորուած, ամօթահար հայեացքով նայեց ներքևից վերև՝ եղբօր միշտ հեգնող, սակայն այս անգամ տարօրինակ սառն ու լուրջ աչքերին և վերկացաւ։ Նրա դէմքն այժմ այնպէս սառած, այնպէս գունատ էր, որ կարծես մահամերձ հիւանդ լինէր։ Նա այլևս ոչ մի խօսք չարտասանեց, երեսը դարձրեց եղբօրից և հեռացաւ այնպիսի բութ զգացման տակ, որ կարծես թէ յանկարծ դագանակի ծանր մի հարուած էին իջեցրել գլխին և շշմեցրել։

Վահանը նայեց ժամացոյցին։

—Բարի գիշեր. ես վերադառնում եմ թատրոն,—ասաց նա և դուրս գնաց։

Մանէն նստեց։ Այնպիսի մի թմրութիւն էր զգում ամբողջ մարմնի մէջ, որ կարծես թէ երկարատև ճանապարհորդութիւն էր կատարել սայլով, որից նոր իջել էր և այժմ չունէր ոտի վրայ կանգնելու։ Նա խոնարհուեց ծնկների վրայ և երեսն առաւ ձեռքերի մէջ։ Ամօթի նման ծանր ու սպանիչ մի զգացում վայրկեան առ վայրկեան արիւնը նետում էր նրա գլուխը, շամփրում ուղեղը և բոցի պէս այրում այտերը։ Յանկարծ նա ցնցուեց, շտկուեց և նայեց դռանը։

Վահանը նորից ներս մտաւ սիգարը բե-

րանին, գլխարկը դրեց աթոռի վրայ և նըստեց իր առաջուայ տեղը։

Մանէն նայեց նրան այնպիսի զարմացական-հարցական հայեացքով, որ կարծես թէ մի նոր մարդ է տեսնում իր առաջ, բոլորովին նոր ու անծանօթ մի մարդ, որ անըսպասելի կերպով ներս մտաւ և նստեց իր առաջ։

—Դու ախր ինձ իսկապէս ոչինչ չասացիր,—ասաց Վահանը այնպիսի մի եղանակով, որից պարզ երևում էր, որ ուզում է մեղմել իր վարմունքի թողած ծանր տպաւորութիւնը։—Թէպէտ սիրոյ պատմութիւնը մէկ է, բայց և այնպէս հետաքրքրական է իմանալ, թէ ինչպէս է եղել այդ, ի՞նչ են ձեր յարաբերութիւնները և այլն։ Պատմիր տեսնենք։

—Ինչո՞ւ համար,—հարցրեց Մանէն։

—Որպէսզի իմանամ, թէ ինչ խորհուրդ կարելի է տալ։

—Խորհուրդ տուիր վերջացաւ, էլ ի՞նչ նոր խորհուրդ։

—Այն կատակ էր, իսկ այժմ ուզում եմ լուրջ խօսել։

—Իսկ ես այլևս չեմ ուզում խօսել և շատ զղջում եմ, որ սիրտս բաց արի քո առաջ։

—Ճի՞շտ։

—Այո։

—Ուրեմն գնա՞մ։

— Ես քեզ չխնդրեցի, որ ետ դառնաս։

Վահանը զարմացած նայեց քրոջը, յետոյ ծիծաղեց։

— Բաւական խռովկան ես եղել, այ։ Լաւ, ի՞նչ ասացի, որ այդպէս նեղացել ես։

— Ոչինչ, միայն խնդրում եմ ազատիր ինձ քո խորհուրդներից։

— Բաս մի քիչ առաջ ինքդ էիր խնդրում, որ խորհուրդ տամ։

Մանէն վեր կացաւ տեղից։

— Ի սէր Աստուծոյ, վերադարձիր թատրոն,— ասաց նա, զգալով, որ ջղայնոտութիւնը նորից բռնում է իրեն։

— Վահանը նորից ծիծաղեց և վեր կացաւ։

— Այսինքն ուզում ես ասել՝ կորիր գլխիցս։ Շատ բարի։ Բայց ուրիշ անգամ որ գամ, էլ խօ... թատրոն չե՞ս ղրկիլ։

Մանէն երեսը դարձրեց և ոչինչ չպատասխանեց։ Զգում էր, որ զզուելու չափ ատում է եղբօր չաղութիւնը, ձայնը, ծիծաղը, մանաւանդ սիգարը, որ հոտում էր անտանելի կերպով։ Վահանի հեռանալուց յետոյ, նա քաշուեց իր ննջարանը, նստեց անկողնակալի վրայ և զգաց, որ ինչ-որ ծանր, անտանելի ծանր մի բան ճնշում է կուրծքը և հետզհետէ բարձրանում է դէպի կոկորդը։ Նա երեսը թաղեց բարձի մէջ և այլևս չկարողացաւ զսպել յուսախաբութեան, դառնութեան, վիրաւորանքի և ինքնանուաստացման հեկեկանքը։ Ինքնանուաստացման զգացումը

մանաւանդ տանջում էր նրան խենթացնելու չափ, և նա ջղաձգական գալարումների մէջ կծոտում էր իր ձեռքերը այդ անտանելի տանջանքը մոռանալու համար։

X

«Երէկ գիշերուայ դէպքից յետոյ ես աւելի, քան երբէք, տեսայ, որ մեր դրութիւնն անտանելի լինելու չափ անորոշ է և այսպէս շարունակել այլևս անկարելի է։ Պէտք է մի անգամ առ միշտ վերջ դնել այս դըժոխքին։ Ուստի յատկապէս խնդրում եմ յայտնէք ինձ, թէ ո՛ր օրը, ո՛ր ժամին և ո՛րտեղ կարող եմ տեսնել ձեզ։ Աղաչում եմ մի մերժէք. այդ տեսակցութիւնը թերևս վերջինը լինի, որի ժամանակ վերջնականապէս և անպատճառ կորոշուի թէ իմ և թէ ձեր վիճակը, մանաւանդ իմը...»։

Այս նամակը գրելով Մանէին, Բաղամեանն այն զգուշութիւնն էր բանեցրել, որ ոչ գրել էր, թէ ում է ուղղում նամակը և ոչ էլ իր ստորագրութիւնն էր դրել. ծառային էլ պատուիրել էր, որ նամակը անձամբ յանձնի Մանէի ձեռքը և սպասի պատասխանին։

Մանէն կարդաց, մի քիչ մտածեց և հետևեալ պատասխանը գրեց նամակի միւս երեսին.

«Վաղը չէ, միւս օրը, ժամը մէկին, մեր

տանը։ Սկեսուրս մեռելի վրայ կըլլինի։ Ես էլ կըգնամ, բայց այդ ժամին կըվերադառնամ և կըսպասեմ»։

Նշանակուած օրը և նշանակուած ժամին Բաղամեանն եկաւ։ Դուռը բաց արեց ինքը Մանէն։ Նա չպատասխանեց Բաղամեանի բարևին և լուռ յետ քաշուեց, որ մտնի։ Այնուհետև դուռը փակեց և նոյն լռութեամբ առաջնորդեց նրան ընդունարան։

Բաղամեանը նստեց և նայում էր Մանէին ապշած։ Վերին աստիճանի տարօրինակ էր թւում նրան Մանէի սառնութեան չափ հանգիստ ընդունելութիւնը և մանաւանդ խորհըրդաւոր լռութիւնը։ Մանէն վարւում էր այնպէս, որ կարծես թէ Բաղամեանը չէր, որ խնդրել էր այդ տեսակցութիւնն իր որոշումը յայտնելու նրան, այլ Մանէն էր պահանջել նրանից, որ գայ լսելու այն, ինչ որ ինքը կասի նրան։ Այդ պատճառով Բաղամեանը նստած էր լուռ և սպասում էր, թէ ինչ էր ասելու նա։

Մանէն նստեց Բաղամեանի դիմաց և առաջին անգամ իր հանգիստ հայեացքով նայեց նրան։ Նա սև էր հագած, և այդ սև հագուստի մէջ խիստ որոշակի աչքի էին ընկնում նրա սպիտակ ձեռքերն իրենց երկայն մատներով ու վարդագոյն եղունգներով և աւելի ևս սպիտակ ու լղար վիզը, որի վրայ ակօսում էին կապոյտ երակները։

— Ես ձեր նամակին չէի պատասխանիլ,— խօսեց նա վերջապէս,— եթէ ստորագծուած բառերը չլինէին և եթէ նամակն ինքն այնքան վճռական տոն չունենար։ Բացի դրանից, ես ինքս ուզում էի մի անգամ առմիշտ վերջ տալ այս դրութեանը։ Իսկապէս որ անկարելի է այլևս շարունակել այսպէս։ Ես այս բանը միշտ ասել եմ ձեզ և այժմ ուրախ եմ, որ դուք ևս նոյն համոզմանն էք եկել վերջապէս։ Պէտք է վերջ տալ այս դըրութեանը, պէտք է անպատճառ։ Մենք մենակ ենք. ոչոք չի խանգարիլ մեզ։ Յոյս ունիմ, առաջուայ պէս չենք գրգռուիլ, չենք կռուիլ, չենք վիրաւորիլ իրար. կըխօսենք հանգիստ և կըխորհրդակցենք միասին, թէ որն է ամենալաւ միջոցը, որով կարող կըլինինք ճնշել այս յանցաւոր կիրքը՝ և վերըստանալ մեր նախկին անդորրութիւնը։ Չէ՞ որ մենք մարդ ենք, խոհական արարած, և միայն բնազդը չէ, որ ղեկավարում է մեր զգացմունքները։ Մենք ամեն բան կարող ենք անել, եթէ միայն կամենանք և հաստատ վճռենք։ Այս բանն ասում եմ ոչ այնքան իմ, որքան ձեզ համար։ Ես պարզօրէն պիտի խոստովանուեմ ձեզ. ձեր նամակի տոնը վախեցրեց ինձ, որովհետև ես ձեզ... սիրում եմ և ցանկանում, որ ապրէք և երջանիկ լինիք։

Բաղամեանը, որ մինչև այժմ լսում էր Մանէին պարզապէս ապշած, նրա վերջին

խօսքերի վրայ չկարողացաւ զսպել իր դառն ժպիտը:

—Աղքատը ձեռքը դէմ է անում հարուստին. «Աղա, ողորմութիւն արա»: Հարուստը պատասխանում է. «Ես կարեկցում եմ քո վիճակին և ցանկանում, որ փորդ կուշտ լինի»: Ու փոխանակ հաց տալու, որ քաղցից չմեռնի, խրատ է տալիս, թէ՝ եթէ կամենայ և հաստատ վճռի, կարող է առանց հաց ուտելու էլ ապրել:

—Ի՞նչ էք ուզում դրանով ասել,—հարցրեց Մանէն:

—Այն եմ ուզում ասել, որ դուք շարունակում էք ինձ կերակրել բառերով: Ինչի՞ս է պէտք, որ ասում էք, թէ սիրում էք ինձ: Ինչի՞ս է պէտք առուակի կարկաչը, երբ ես շղթայուած եմ այդ առուակի ափին և չեմ կարող ծարաւս յագեցնել: Աւելի լաւ չէ՞, որ խլանամ և չլսեմ այդ ձայնը, այդ դատարկ ձայնը, որ ընդունակ է միայն աւելի ևս գրգռելու ծարաւս, աւելի ևս սաստկացնելու տանջանքս:

—Ա՜խ, ինչո՞ւ դուք ինձ չէք հասկանում, Բաղամեան,—ասաց Մանէն մեղմ յանդիմանութեամբ:

Բաղամեանն այլ ևս չկարողացաւ զսպել իրեն և վեր թռաւ տեղից:

—Որովհետև ձեզ անկարելի է հասկանալ,—բացականչեց նա յուզուած:—Ես ձեզ ոչ թէ միայն չեմ հասկանում, այլ և... խընդ-

րում եմ չնեղանաք երէկուայ պէս... այլ և չեմ հաւատում ձեր անկեղծութեանը, ինչպէս որ չէր կարող հաւատալ իմ ասած աղքատն իրեն կարեկցութիւն յայտնող հարուստի անկեղծութեանը: Դուք ինձ համար երջանկութիւն էք ցանկանում և շատ լաւ էլ գիտէք, որ իմ երջանկութիւնը կախուած է միմիայն ձեզնից, մինչդեռ,—այդ էլ տեսնում էք ձեր աչքերով,—բացի տանջանքից ուրիշ բան չէք տալիս ինձ:

Մանէն նայեց նրան առաջուայ հանգիստ, բայց այս անգամ խիստ տխրալի հայեացքով:

—Ես ձեզ չեմ կարող ստիպել, որ հաւատաք իմ անկեղծութեանը, Բաղամեան, բայց որ չէք հասկանում ինձ, այդ մի փոքր զարմացնում է ինձ, որովհետև նոր չէ, որ ճանաչում էք ինձ, և նոր չէ, որ խօսում ենք այս մասին: Այո, ես տեսնում եմ, շատ լաւ եմ տեսնում, որ դուք տանջւում էք. բայց մի՞թէ չգիտէք, որ կան տանջանքներ, որոնք աւելի բարձր են, աւելի ազնիւ ու քաղցր, քան այն, ինչ որ դուք երջանկութիւն էք անուանում:

—Ո՛չ, այդպիսի բան ես չգիտեմ և չեմ էլ ուզում իմանալ,—նկատեց Բաղամեանը ջղայնոտութեամբ:—Տանջանքը տանջանք է, ուրիշ անուն չունի: Եւ ես միստիք չեմ, որ տանջանքի մէջ քաղցրութիւն զգամ, այլապէս կըգնայի և ճգնաւոր կըդառնայի: Ես

մարդ եմ, արիւնս գորտի արիւն չէ։ Ես դրական երջանկութիւն եմ պահանջում։ Ձեր ուզում տալ, այդպէս էլ ասացէք ուղղակի և պարզ։ Այլապէս, կրկնում եմ, ես ձեզ չեմ հասկանում և երբէք էլ չեմ կարող հասկանալ։ Բը-նութիւնը գարշելի է ամեն բանում, բայց որ մարդ բռնութիւն գործի ինքն իր վրայ. իր սեպհական զգացումների վրայ,—այդ, ներեցէք, եթէ խելագարութիւն չէ, ապա այնպիսի մի բան է, որի անունը ես չգիտեմ։ Հա՛, ի հարկէ, մարդ, եթէ կամենայ և վճռի, կարող է ամեն բան անել, նոյն իսկ թռչել երկինք և խլել հրեշտակների առաքինութիւնը։ Դուք այդ արել էք և սպասում էք, որ ես էլ նոյնն անեմ։ Ո՛չ, ես չեմ կարող անել այդպիսի բան, որովհետև անկարելի է անել այն, ինչ որ անկարելի է։ Փախչել այն բանից, որը քո մէջն է, որը շրջում է բոլոր երակներիդ մէջ արեանդ իւրաքանչիւր բջիջի հետ,—այդ բանը կարելի է միայն նրանով, որ վերցնես և գանգդ ջարդես պատի վրայ կամ ածելիով կտրես կոկորդդ։ Ահա՛ այն միակ միջոցը, որը գտանելու համար ուզում էք ինձ հետ խորհըրդակցել։ Խորհրդակցե՜լ... Միամտութի՜ւն է այդ, թէ ծաղր։ Եթէ միամտութիւն է, դուք միամիտ չէք. եթէ ծաղր, դուք կին էք և չէք կարող այդքան անխիղճ լինել։ Սէրը հրդեհ է դառել, լափում է ամբողջ էութիւնս, և ես քիչ է մնում, որ գժուեմ յու-

սահատութիւնից, իսկ դուք ինձ առաջարկում էք, որ նստեմ և հանգիստ խորհրդակցեմ ձեզ հետ, թէ ինչպէս անենք, որ... Օ՜հ, ո՛չ, ո՛չ, բաւակա՛ն է։ Ես իսկապէս որ կըգժուեմ, կըգժուե՜մ, կըգժուե՜մ...

Բաղամեանը, չափազանց յուզուած, նորից նստեց և գլուխն առաւ ձեռքերի մէջ։ Ճակատն այրւում էր, և ձեռքերի ափերի վրայ զգում էր քունքերի երակների ուժգին զարկը։

Մանէն նստած էր արտաքուստ բոլորովին հանգիստ և, ձեռքերը կրծքին ծալած, վշտահար կարեկցութեամբ նայում էր նրա երկայն գանգուր մազերին։

—Բաղամեան, մի՛ դատապարտէք ինձ,— շշնջաց նա կամաց, հանգստացնող ձայնով։ —Ինձնից մի՛ պահանջէք այն, ինչ որ չեմ կարող անել, ինչ որ չպէտք է անեմ։ Մի բոպէ մոռացէք այդ կիրքը, մտէք իմ դրութիւնը...

—Ո՛չ, ես ո՛չ մի դրութիւն չեմ ուզում ճանաչել,—բացականչեց Բաղամեանը նոր յուզումով և նորից վեր թռաւ տեղից։—Բաւական է, որքան տանջուեցի, այլ ես ոյժ չկայ դիմանալու։ Այս տրագի-կոմեդիան պէտք է վերջացնենք։

Նա հաստատուն քայլերով մօտեցաւ Մանէին, կանգ առաւ նրա առաջ և նայեց նրա աչքերին վերին աստիճանի վճռական հայեացքով։

—Լսեցէք, Մանէ։ Հարցն ես տալիս եմ կտրուկ կերպով և խնդրում եմ, որ պատասխանն էլ կտրական լինի։ Թողնո՞ւմ էք ձեր ամուսնուն և գալի՞ս էք ինձ հետ, թէ ոչ։

Մանէն նախ ծանր-ծանր շարժեց գլուխը բացասաբար, յետոյ ուժեղ շեշտով պատասխանեց.

—Ո՛չ։

—Ո՞չ ասում էք։

—Ո՛չ,

Բաղամեանը կարճ ժամանակ լռեց, շարունակելով անթարթ նայել Մանէի աչքերին։ Երևում էր, որ նա ահագին ջանք է գործ դնում հանգիստ մնալու։

—Լաւ մտածեցէք, Մանէ, Երրորդ անգամն եմ հարցնում։ Ո՞չ։

Մանէն յանկարծ վեր կացաւ տեղից։

—Դա ի՞նչ ինկուիզիցիա է, չեմ հասկանում,—արտասանեց նա, չկարողանալով զսպել իր զայրոյթը։—Ես, կարծեմ, երեխայ չեմ և հասկանում եմ, թէ ինչ եմ պատասխանում։

Բաղամեանը գունատուեց և, կարծես մի անգամից, զրկուեց խօսելու ընդունակութիւնից։ Նրանք կանգնած էին իրար դէմ առ դէմ և նայում էին իրար աչքերի, Մանէն՝ անսասան հաստատակամութեամբ և վիրաւորուած, Բաղամեանը՝ զարմացած, շփոթուած և վախեցած։ Այնուհետև Բաղամեանը կամաց դարձաւ, անհաստատ քայլերով հեռա-

ցաւ, որ գլխարկն առնի և գնայ, բայց զգաց, որ այդքան քաջութիւն չունի։ Ծնկները ծալւում էին, մի բան խեղդում էր նրա բուկը, և նա անդիմադրելի մի ցանկութիւն էր զգում վայր ընկնելու ուղղակի յատակի վրայ և լաց լինելու երեխայի պէս։ Նա նստեց, գլուխը նորից առաւ ձեռքերի մէջ և զգաց, որ ճակատն այս անգամ սառն է սառցի պէս և քունքերի վրայ երակներն այլ ևս չեն զարկում, կարծես։ «Այս ի՞նչ է, մեռնո՞ւմ եմ» մտածեց նա, ձիգ տալով մազերը, և զարմացաւ, որ ցաւ չզգաց։ Նա ինքն իրեն ցնցեց, նստեց ուղիղ, և նրա հայեացքն ընկաւ Մանէի վրայ։

Մանէն կանգնած էր բաց լուսամուտի առաջ, բարձր ու բարեկազմ, և նայում էր դէպի դուրս։ Դրսից ներս թափանցող արևի շողերի տակ փայլում և կարծես մանրիկ կայծեր էր ցայտեցնում նրա սև ատլասի հագուստն ուսերի վրայ; իսկ ականջի օղի մէջ վառւում, հուրհրատում էր խոշոր ադամանդը ծիածանի բոլոր երանգներով։

«Տէ՛ր Աստուած, որքա՜ն գեղեցիկ է, որքա՜ն սիրում եմ» մտածեց Բաղամեանը, աչքը չկարողանալով հեռացնել նրանից։ Նրան թւում էր, թէ Մանէն առաջ երբէք այդքան գեղեցիկ չի եղել, և ինքն երբէք այդպէս կաթոգին չի սիրել այդ կնոջը։ Իր վերջնական հարցի վճռական պատասխանը ստանալուց յետոյ այնպիսի մի վհատութիւն էր

տիրել նրան, որ կարծես յանկարծ կորցրել էր թանկագին, չափազանց թանկագին մի բան, որի անգին արժէքը նոր էր հասկանում, և կորուստն անդառնալի էր։ Մանէի մօտ գալիս նա կշռադատել էր իր անելիքն ու ասելիքը, կանխատեսել էր Մանէից ստանալիք պատասխանը, հէնց այն պատասխանը, ինչ որ լսեց. բայց ամենևին չէր կարծել, թէ ինքն այդ աստիճան թուլամորթ կարող է լինել։ Նա նստած էր անզօր և յուսահատ, շփում էր ճակատը և, տանջուելով, աշխատում էր յիշել մի բան, որ Մանէի մօտ գալիս վճռել էր գործադրել իբրև վերջին միջոց այդ զարմանալի, այդ անհասկանալի կնոջ յամառութիւնը կոտրելու համար։ Յանկարծ յիշեց, ձեռքն արագօրէն տարաւ ծոցի գրպանը, շօշափեց այնտեղ ինչ-որ մի թուղթ և վեր թռաւ տեղից։

—Իսկ եթէ ես ասեմ, որ նա արժանի չէ՞ ձեր զոհաբերութեանը,—բացականչեց նա։

—Մանէն կամաց դարձաւ և նայեց նրան զարմացած։

—Ո՞վ նա։

—Ձեր ամուսինը։

Մանէն մէջքով յենուեց պատին, աչքերը փակեց և պատասխանեց շատ հանգիստ ձայնով.

—Ես ոչ մի զոհաբերութիւն չեմ անում։ Ես միայն իմ պարտքս եմ կատարում։

—Մանէ, աղաչում եմ, մի՛ խօսէք այդպէս…

ես զզւում եմ… Ի՞նչ պարտք, ո՞վ է պարտաւորեցրել ձեզ։ Եկեղեցի՞ն, քահանա՞ն, խաչը, աւետարա՞նը…

—Ոչ, ոչ։ Իմ խիղճը։

Բաղամեանը դարձեալ պապանձուեց։ Ատամները պինդ սեղմած իրար, նայում էր Մանէի փակ աչքերին և զգում էր, որ հոգու խորքում կատաղի ատելութեան պէս մի բան է զարթնում դէպի նա։ Նրան ծայրայեղօրէն գրգռում էր Մանէի բռնած արձանային դիրքը պատի մօտ իր հրաշալի իրանով, սպիտակ երկայն վզով, խաղաղ, կարծես մարմարից կերտած դէմքով և փակ աչքերով։ Եւ նրան թւում էր, որ եթէ անձնատուր լինի այդ զգացմանը, անկարող կըլինի այլևս զսպել իրեն, առաջ կըվազի դէպի Մանէն և մի վատ, շատ վատ բան կանի, և ապա ինքն իրեն կընետի լուսամուտից և գլուխը կը ջախջախի փողոցի սայլատակի վրայ։

—Դուք ճանաչո՞ւմ էք ձեր ամուսնուն,—յանկարծ հարցրեց նա։

Մանէն բաց արեց աչքերը և նայեց նրան զարմացած։

—Դա ի՞նչ խօսք է։

—Իսկ ես ձեզ կասեմ, որ չէք ճանաչում… այո, չէք ճանաչում… և, եթէ ճանաչէիք, ինքներդ կըփախչէիք նրանից, իբրև անբարոյական և հրէշ մի մարդուց…

Մանէն անգիտակցաբար առաջ նետուեց և յանկարծ կանգ առաւ։

—Բաղամեան, ես համոզուած էի, որ դուք օրինաւոր մարդ էք, —շշնջաց նա դունատուելով։

— Եւ դարձեալ համոզուած եղէք, որ ես օրինաւոր մարդ եմ եղել, որովհետև մինչև այժմ չեմ յայտնել ձեզ այն, ինչ որ վաղուց գիտէի ձեր ամուսնու մասին։ Չեմ յայտնել, որովհետև չեմ կամեցել ձեզ վրայ ազդել ոչ մի որևէ կողմնակի միջոցով, որովհետև համոզուած եմ եղել, թէ սէրն ինքն արդէն բաւարար հիմունք և դրդիչ պատճառ պիտի լինի ձեզ համար ձեր անելիքը որոշելու։ Բայց այժմ դուք ինքներդ էք ստիպում ինձ դիմելու ծայրայեղութեան։ Եւ ես ասում եմ ձեզ, որ ձեր ամուսինն անբարոյական և հրէշ մարդ է... ասում եմ ոչ թէ նրա համար, որ դրանով ստիպեմ ձեզ թողնելու նրան և գալու ինձ հետ, —ոչ, ես արդէն յոյս կտրել եմ ձեզնից, —և ոչ թէ փոքրոգի վրէժխնդրութիւնից, —ես չափազանց հպարտ եմ այդ աստիճան ստորանալու համար, — այլ ասում եմ նրա համար, որ բաց անեմ ձեր աչքերը, ցոյց տամ ձեզ, թէ ում համար էք կատարում ձեր ամուսնական պարտքը ձեր խղճի առաջ և որքան խաբուած էք եղել դուք...

Մանէն լսում էր Բաղամեանի խօսքերի տարափն աւելի ու աւելի ապշելով։ Մինչև

այժմ Բաղամեանի բերանից ոչ մի վատ խօսք չէր լսել իր ամուսնու մասին, և Բաղամեանը միշտ խուսափել էր վերջինիս մասին խօսելուց, իսկ այժմ...

—Բաղամեան, — ասաց նա հանգիստ և խիստ լրջօրէն, —դուք ինձ շատ ծանր դրութեան մէջ էք դնում։ Միթէ չգիտէք, որ ձեր այդ խօսքերից յետոյ ես ապացոյց կարող եմ պահանջել ձեզնից։

—Եւ ես կըտամ ձեզ այդ ապացոյցը։

Մանէն ցնցուեց և մի վայրկեան մնաց կարկամած։ Յետոյ յանկարծ շտկուեց և խըստօրէն մեկնեց ձեռքը։

—Տուէք, —հրամայեց նա։

Բաղամեանն իսկոյն ծոցից հանեց մի նամակ, բաց արեց և տուեց նրան։

—Կարդացէք այստեղից։

Մանէն սկսեց կարդալ.

«...Սրանից մի քանի տարի առաջ մեր գիւղացիները զաեաւկա էին տուել գիւղիս հողերի սահմաններում գտնուած երկաթի հանքերի համար։ Երկար չարչարուելուց և ահագին փողեր ծախսելուց յետոյ մէկէլ տեսան, որ իրենց գտած հանքերին տէր է կանգնել ինժեներ ոմն Գ. Ս. (խմբագրութեան համար -- Գրիգոր Սանթրոսեան)։ Թէ որտեղից, ինչպէս և ինչ իրաւունքով էր այդ հարուստ ինժեները տէր դառել գիւղական մի հասարակութեան պատկանող բնական հարստութեանը, —այդ բանը յայտնի է միայն

իր համալսարանական խղճին և մէկ էլ իր տռզած գրպանին... Էլ խնդրագրեր, էլ բողոքագրեր, էլ դատարան, էլ նոր ծախսեր— ոչինչ չօգնեց, և խղճուկ գիւղացիները վերջիվերջոյ ստիպուած էին իրենց եփած փլաւի համը չառած՝ յետ նստել և, ինչպէս ասում են, բերներից ծլուլը թափելով դիտել, թէ ինչպէս ուրիշն անուշ է անում այդ համեղ փլաւը: Ի՞նչ անուն կտաք դիպլոմաւոր մեր պարոնի այս վարմունքին...

«Բայց այլ առակ լուարուք: Այս բանից արդէն փլաւի հոտ չի փչում, այլ շատ գարշելի մի հոտ:

«Մեր ասած ինժեների մօտ ազախնի պաշտօն էր կատարում այրի մի կին իր 13 տարեկան աղջկայ հետ: Այս օրերս այդ աղջըկան գտան հանքերից երեք վերստ հեռաւորութեան վրայ մի ձորակի մէջ խեղդամահ: Բժշկական քննութիւնը բացայայտեց, որ խեղճ աղջիկը, չարաչար մահից առաջ, բըռնաբարուած է եղել... Թէև դժուար չէր լինիլ իմանալ (թերևս և իմացան), թէ ով է եղել այս քստմնելի ոճրագործութեան հեղինակը, բայց ամենակարող մամոնան այս գործում ևս տեսաւ իր բանը, և գործը քընեց...»:

Մանէն կարդում էր, ըստ երևոյթին, բոլորովին հանգիստ. Նրա ձայնը հնչում էր հարթ ու հաւասար, դէմքի ոչ մի մկանուն-

քը չէր շարժւում. Նամակի թուղթը միայն դողում էր նրա ձեռքում:

Բաղամեանը նայում էր նրա ահագին թերթերունքներին, մերթ գունատ շրթունքներին, լսում էր, և նամակի խօսքերը, չընայելով որ անգիր գիտէր, Մանէի բերանից հնչում էին նրա ականջին այնքան անհաւատալի, այնքան ահելի կերպով, որ սկըբում զարմացաւ, թէ ինչպէս իրեն թոյլ տուեց այդպիսի մի նամակ յանձնելու նըրան, յետոյ այնքան սարսափեց, որ քիչ մնաց նամակը խլէր նրա ձեռքից, պատառպատառ անէր և ասէր ուղղակի, որ ինքն ևս չի հաւատում այդ բանին, որ դա սուտ է, անխիղճ զրպարտութիւն և յերիւրուած է անպատճառ անձնական թշնամութիւնից: Բայց նա կանգնած էր անշարժ և սարսափահար, իբրև մի մարդ, որ ծայրայեղ կատաղութեան րոպէին անգիտակցաբար հարուած է իջեցնում հակառակորդի գլխին և, յանկարծ ուշքի գալով, կաշկանդւում, կարկամում է, երբ տեսնում է, որ հարուածը մահացու է եղել:

Բաղամեանը կանգնած էր այդ դրութեան մէջ, կաշկանդուած և կարկամած, երբ Մանէն վերջացրեց ընթերցումը, նամակը վերադարձրեց, առանց նրան նայելու, և լուռ հեռացաւ: Մի վսեմ հանգստութիւն էր նըկատւում նրա բոլոր շարժումների մէջ, և այդ րոպէին չափազանց գեղեցիկ էր նա իր

բարեկամի հառաչով, իր գունատ դէմքով, իր խոշոր աչքերի վերին աստիճանի լուրջ ու կենտրոնացած հայեացքով։ Բաղամեանը դիտում էր նրան գաղտնի երկիւղով. նրան թւում էր, թէ ահա, որտեղ որ է, ինչ-որ արտաքոյ կարգի մի բան պիտի պայթի իր գլխին, սարսափելի մի բան, որից նրա ճակատը մերթ սառում, մերթ տաքանում էր առաջուց։

—Ո՞վ է տուել ձեզ այդ նամակը,—հարցրեց Մանէն տարօրինակ սառած ձայնով, որի մէջ, սակայն, ինչ-որ սպառնալից մի շեշտ կար։

—Այս նամակն ուղարկուած է, ինչպէս ինքներդ տեսաք, մեր խմբագրութեանը լրագրի մէջ տպելու համար։

—Յետո՞յ։ Տպեցի՞ք։

—Ոչ։

—Ինչո՞ւ։

—Կարծեմ, ինքներդ հասկանալիս պիտի լինիք, թէ ինչու։

—Ոչ, ես չեմ հասկանում։ Այդպիսի հրէշաւոր մի բան հրապարակ չհանել, համայնական մի սեպհականութիւն յափշտակողի մատաղ մի աղջկայ լլկողի և ապա գաղտնաբար սպանողի՝ հասարակաց դատաստանին չյանձնել—այդ ես չեմ կարող հասկանալ, որովհետև մամուլի մասին ես միշտ լաւ գաղափար եմ ունեցել և մամուլն եմ

համարել միակ պաշտպանը ճշմարտութեան և հալածուածների։

—Մամուլը մեզ չունի այստեղ։ Եթէ այս բանում մէկը կայ մեղաւոր, այդ ես եմ, որովհետև ես խնդրեցի, որ նամակը չտպուի։

—Դո՞ւք… Ինչո՞ւ։

—Մանէ, ինչո՞ւ դուք տալիս էք ինձ այդ հարցը,—նկատեց Բաղամեանը մեղմ կշտամբանքով։

—Ոչ, խնդրում եմ բացատրեցէք. ինչո՞ւ դուք խնդրել էք, որ այդ նամակը չտպուի։

—Տէր իմ Աստուած, մի՞թէ այդ բանը բացատրելու կարիք կայ։

—Երևի կայ, որ պահանջում եմ,—վրայ բերեց Մանէն անողոք խստութեամբ։

Բաղամեանն աղերսալի հայեացքով մօտեցաւ նրան և ուզում էր առնել նրա ձեռքերը, բայց Մանէն խստօրէն ետ ու ետ քաշուեց։

—Մանէ, նամակը թոյլ չտուի տպել ձեր պատուի և ձեր հանգստութեան համար,—ասաց նա գրեթէ լացագին։

—Մի՞թէ,—բացականչեց Մանէն, և ինչ-որ խիստ կծու մի ժպիտ ծամածռեց նրա գեղեցիկ դէմքը։

—Երդւում եմ արևովս, Մանէ, միմիայն ձեր պատուի և հանգստութեան համար, որովհետև չէ՞ որ դուք նրա կինն էք, և ձեր անունն այսպէս թէ այնպէս կապուած է նրա անուան հետ։ Մի ուրիշ պատճառ էլ

կար. ես նրան իմ ախոյեանն էի նկատում և չէի կամենում նրա արարքների մերկացումը տեսնել այն լրագրի մէջ, որի ղեկավարներից մէկն էլ ես եմ: Դա շատ ազնիւ վարմունք կլինէր իմ կողմից:

—Օ՜, անշուշտ,—բացականչեց Մանէն, և յանկարծ ծիծաղի նման մի բան դուրս թռաւ նրա բերանից:— Դա այնքան ազնիւ վարմունք կլինէր ձեր կողմից, որ մինչև անգամ կարելի էր կարծել, թէ նամակը... դուք էք յօրինել:

Բագամեանը մէկ առաջ ընկաւ և յանկարծ կանգ առաւ ապշած:

—Ինչ ասացի՞ք,—հարցրեց նա:

—Ասացի այն, ինչ որ լսեցիք,—ասաց Մանէն սպանիչ հանգստութեամբ:

—Ուրեմն...

—Ուրեմն ինչ: Շատ պարզ է. այդ նամակը մի ֆանտազիա է, որի հեղինակը դուք էք:

—Մանէ,—գրեթէ ճչաց Բագամեանը կարծես ֆիզիքական մի սուր ցաւից և այլ ես ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել: Մանէի մեղադրանքը շշմեցրեց նրան կայծակի հարուածի պէս, որովհետև ամեն բան կանխատեսել էր, բայց այդպիսի մի մեղադրանք —ամենևին: Նա չէր իմանում ինչ է պատահում իրեն, միայն պարզորոշ զգում էր, որ ինչ-որ մի բան, բոլորի զգացմունքի պէս զօրեղ մի բան, արագարար բարձրանում, ուռչում է իր կրծքի մէջ և ուզում է

պայթեցնել իր ամբողջ էութիւնը հրաբխի լաւայի պէս: Եւ նախ քան նա ուշքի կըգար ազատութիւն տալու համար իր բողոքի բղգացմանը, ուրիշ, տանջանքից աւելի անակնկալ ու սոսկալի մի հարուած կարկամեցրեց նրան միանգամայն:

—Բաւական է: Հեռացէք: Ես ձեզ խըղճում եմ...

Բագամեանն այլևս ոչինչ չլսեց. միայն, կարծես երազի մէջ, տեսաւ Մանէի յուզումնալից աչքերը, ցնցուող շրթունքները, յետոյ նրա ոտները, որ արագօրէն չքացան դռների մէջ...

XI

Բագամեանը նոր էր հեռացել, որ Վահանը մտաւ քրոջ մօտ սիգարը բերանին:

Խիստ յուզուած, Մանէն անցուդարձ էր անում սենեակում արագ քայլերով, և մի ջիղ նրա վզի վրայ, մերթ ընդ մերթ ցընցուելով, ներքև էր քաշում նրա ծնօտը:

Վահանը կարճ ժամանակ նայեց նրան զարմացած, յետոյ անփոյթ ու ծանրօրէն նստեց աթոռի վրայ:

—Այս բոպէիս տեսայ բարեկամիդ,—ասաց նա:—Հեռուից որ տեսաւ ինձ, ճանապարհը ծռեց, կարծես պիտի բռնէի ետևից և հարցնէի՝ ո՞րտեղից ես գալիս:

Նա բերնից բաց թողեց ծուխն ուսի վրայ և ծուռ նայեց քրոջը։

—Էլի վիրաւորե՞ցի,—հարցրեց կամաց։

Մանէն յանկարծ դադարեց քայլելուց և արագօրէն դարձաւ եղբօր կողմը։ Նրա աչքերը կարծես կայծեր էին ցայտեցնում։

—Ինչո՞ւ ես եկել,—հարցրեց նա այնքան խստօրէն, որ այդ խօսքերը կարծես դուրս խլեց սրտի խորքից։

Վահանը ետ ընկաւ աթոռի մէջքին, ծունկը ծնկան վրայ դրեց և ժպտաց։

—Որովհետև անցած գիշեր պատուիրեցիր, որ այլևս չգամ։

Մանէի ծնօտի տակ ջիղն սկսեց ցնցուել աւելի ուժգին։ Նա նայում էր եղբօր ժպտուն ճարպալի աչքերին, և երկար ժամանակ հոգեկան խորին վրդովմունքը թոյլ չէր տալիս նրան խօսելու։

—Վահա՜ն,—վերջապէս արտասանեց նա հազիւ հազ,—որ իմանաս որքա՜ն տանում եմ քեզ այս րոպէիս...

—Վնաս չունի, քոյրիկ ջան, յետոյ էլի կըսփրես,—նկատեց Վահանը ծիծաղելով։—Հիմա տանում ես, որովհետև անցած գիշեր անզգուշութիւն ունեցայ մի քիչ վատ խօսելու բարեկամիդ մասին։ Նա որ լաւ մարդ լինէր, հարիւր ֆրանկս չէր մոռանալ։

Մանէն զզուանքով դարձրեց երեսը և աւելի լաւ համարեց դուրս գնալ, քան մնալ եղբօր մօտ, որի հանդգնութիւնը, ձայնը,

ժպիտը, հեգնութիւնները տակն ու վրայ էին անում նրա ամբողջ ներքինը։

—Ի՞նչ խօսեմ քեզ հետ, քանի որ քեզ համար հարիւր ֆրանկն աւելի մեծ արժէք ունի, քան թէ...—ասաց նա տարօրինակ հանգիստ ձայնով և, խօսքը չվերջացրած, գնաց դէպի դուռը։

—Քան թէ... քրոջս պատի՜ւը,—կանչեց նրա ետևից Վահանը։

Արիւնը խփեց Մանէի գլխին. կարծես աներեւոյթ ձեռքեր յանկարծ բռնեցին նրա ուսերից և ուժգին թափով դարձրին նրան դէպի Վահանը։

—Լսի՛ր, օ՛ձ,—աղաղակեց նա անզուսպ կատաղութեամբ։—Դու իրաւունք չունիս խօսելու իմ պատուի մասին։ Անցած օր ոտներդ էի ընկել, որ ինձ մի ճանապարհ ցոյց տաս այս դժոխային դրութիւնից դուրս գալու համար. ես աղաչում, պաղատում էի, որ մինչև անգամ սպանես ինձ։ Բայց դու ինչ արիր։ Այդ ատելի սիգարը բերանիդ, զզուելի ստորութեանդ համաձայն, միայն ծաղրեցիր, հեգնեցիր և խոյս տուիր անտարբերութեամբ։ Դու այդպէս ես եղել միշտ և այդպէս ես նոյն իսկ այս կրիտիքական վայրկեանին, երբ ես պատրաստ եմ պարզապէս անձնասպանութիւն գործելու։ Եւ դու համարձակւում ես խօսել իմ պատուի մասին։ Աշխարհիս երեսին բացի քեզնից ուրիշ ոչ մի սրտակից չունէի, որի առաջ

կարողանայի բանալ սիրտս, որի հետ կարողանայի խօսել մտերմօրէն, որի ցաւակցութեան, հոգացողութեան վրայ կարողանայի վստահանալ: Եւ երբ իմացայ, որ դու եկել ես և եկար ինձ մօտ, կարծեցի թէ փրկիչս է եկել: Բայց դու ի՞նչ արիր, ի՞նչ: Դու այն արիր, որ ես այժմ այնքան զզւում և ատում եմ քեզ, որ չեմ ուզում տեսնել երեսդ, չեմ ուզում, չեմ ուզում: Հեռացի՛ր, գնա, հանգիստ թող ինձ...

Եւ Մանէն հեծկլտալով դուրս գնաց ու դուռը պինդ շրխկացրեց իր ետևից:

Վահանն ականջ դրեց և լսեց, որ մի ուրիշ դուռ էլ նոյնպիսի սաստկութեամբ շրըխկաց այնտեղ: Նա վերկացաւ, սիգարը դրեց մոխրամանի մէջ, երկու ձեռքով վեր քաշեց անդրավարտիկը փորի վրայ և դուրս գնաց քրոջ ետևից: Երկրորդ դռան շրխկոցից իմացաւ, որ Մանէն մտել էր ննջարանը: Նա բռնեց ննջարանի դռան փականքը, առաջ հրեց, բայց դուռը չբացուեց: Ներսից փակուած էր:

—Մանէ, բաց արա:

—Հեռացի՛ր,—լսուեց ներսից Մանէի ջղային կատաղի աղաղակը:

—Խելագարուե՞լ ես, ի՞նչ է:

—Այո, խելագարուել եմ, հեռացի՛ր:

—Բաց արա, ասում եմ:

—Չեմ բանալ, հեռացի՛ր:

—Բան եմ ուզում ասել:

—Չեմ ուզում, հեռացի՛ր:

—Դէ, յիմարութիւն մի անիր, բաց արա:

—Ա՜խ, չեմ ուզում քեզ տեսնել, լսո՞ւմ ես, չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում...

—Խօ չե՞ս ուզում դուռը կոտրեմ:

—Ես կըսպանեմ ինձ, եթէ մտնես:

Վահանն իր ուժեղ ձեռքով բռնեց դռան փականքը, ահագին ոտը բարձրացրեց, որ հարուած տայ դռանը, բայց այդ բանն արեց կարծես ձևի համար և ոտը նորից իջեցրեց:

—Դու յիմարացել ես և ստիպում ես, որ ես էլ յիմարանամ,—ասաց նա շրթունքները մօտեցրած դռան փեղկերի միացման արանքին:—Մանէ, բաց արա խնդրում եմ:

Ներսից այլևս ոչ մի ձայն չլսուեց:

—Մանէ, լսո՞ւմ ես: Դու պժուել ես և տես, որ չզղջաս: Մանէ՞:

Դարձեալ ոչ մի ձայն:

—Լսիր,—կանչեց Վահանը, մի քիչ սպասելուց յետոյ:

Էլի լռութիւն:

—Չես լսո՞ւմ:

Ներսն այնպէս խաղաղ էր, որ կարծես մարդ չկար այնտեղ:

—Մանէ, քեզ հետ եմ:

—Ա՜խ, Տէր իմ Աստուած, սա ինչ պատիժ է,—վերջապէս լսուեց Մանէի յուսահատական հառաչանքը:

—Այս երեկոյ գնում եմ գիւղը: Միթէ չես ուզում հրաժեշտ տալ:

—Աստուած բարի ճանապարհ տայ, գնա:

Վահանը մի րոպէ կանգնած մնաց դրան առաջ մտախոհ դրութեան մէջ, յետոյ շըրթունքները նորից մօտեցրեց երկու փեղկի արանքին և, որպէսզի ասածը պարզ լսուի ներսը, հատ-հատ արտասանեց.

—Ուրեմն մնաս բարեաւ: Մի մոռանար, որ եղբօրդ դուրս ես անում, և այս բանից յետոյ ինձ մնում է միայն, որ այլևս երբէք ոտք չկոխեմ այս տունը: Քո ցանկութեամբ մենք այսուհետև մեռած ենք իրար համար: Բայց վկայ է Աստուած,—լսում ես, Մանէ, ես լուրջ եմ ասում,—վկայ է Աստուած, երդւում եմ մեր ծնողների գերեզմանով, որ եղբայրդ, ինչ էլ որ կարծես նրա մասին, միշտ սիրել է քեզ և միշտ էլ քո բարին ցանկացել: Այժմ էլ ի սրտէ ցանկանում եմ քեզ ամեն բարիք և... Մնաս բարեաւ:

Վահանը հեռացաւ դրան մօտից և դուրս գնալու վրայ էր, երբ յանկարծ բանալին շրխկաց ննջարանի դրան կողպէքի մէջ, դուռն ուժգնօրէն բացուեց և այնտեղից դուրս վազեց Մանէն:

—Կա՛ց,—աղաղակեց նա ծայրայեղ յուսահատութեամբ և, ըստ երևոյթին, ուզեց խօսել, բայց այլևս ոչինչ չկարողացաւ արտասանել: Նա ընկաւ հէնց այնտեղ՝ դրան մօտ դրուած աթոռի վրայ, երեսը ծածկեց ձեռքերով և հեկեկաց դառնագին:

Քրոջ այդ նոր տարօրինակ վարմունքն

եղբայրն ընդունեց բաւական սառնասրտօրէն: Առանց տեղից շարժուելու, Վահանը դիտում էր լուռ, թէ ինչպէս ցնցւում են Մանէի նիհար ուսերն ուժգին հեկեկանքից, և սպասում էր, թէ ինչով է վերջանալու այդ նոր տեսարանը:

—Լսիր... Բոգդանովն այստեղ էր, այո,—վերջապէս արտասանեց Մանէն հեկեկանքի միջից,—բայց ես... դուրս արի նրան, որովհետև...

Մանէն յանկարծ դադարեց հեկեկալուց, վեր թռաւ և սաստիկ արագախօսութեամբ, շնչասպառ լինելով, շարունակեց.

—Նա ինձ ցոյց տուեց մի նամակ, որի մէջ գրում են, որ ամուսինս մի գազան, մի հրէշ, մի, մի... չգիտեմ ինչ է: Գրում են, որ հանքերը նրանը չեն, գիւղացիներինն են, և նա, չգիտեմ ինչ միջոցով, զաւթել է այդ հանքերը: Բայց այդ չէ սարսափելին: Սարսափելին այն է, որ նա բռնաբարել է մի խեղճ, մի այրի կնոջ տասներեք տարեկան աղջիկը և, բռնաբարելուց յետոյ, սպանել ու դիակը ձգել մի ձորակ, իր յանցանքի հետքերը ծածկելու համար երևի... Ես ասացի նրան, որ նամակն ինքն է յօրինել և... վռնդեցի նրան: Այո՛, միթէ ճիշտ չեմ արել. միթէ ամուսինս ընդունակ է այդպիսի բաներ անելու... ամուսինս չէ, այլ թէկուզ ամենագազան մի մարդ: Այո՛, եթէ ընդունակ է, ես հէնց այս րոպէիս կըհեռա-

նում այս տնից և կըգամ քեզ հետ գիւղը, որպէսզի այլևս երբէք չտեսնեմ նրա երեսը, երբէ՛ք, երբէ՛ք...

Նա լռեց, որովհետև բուռն յուզմունքից այլևս բան չկարողացաւ արտասանել: Շընչում էր ծանր, խիստ ծանր և նայում էր եղբօրն այնպիսի սպառնական-աղերսական հայեացքով, որ կարծես նրա պատասխանից էր կախուած իր փրկութիւնը:

Վահանը մինչև անգամ արհեստական անտարբերութեամբ մի սիգար հանեց, դրեց բերանը, ծանր ու բարակ վառեց, լուցկին հանգցրեց, դուրս շպրտեց լուսամուտից և ապա թէ խօսեց հանգիստ ու լուրջ.

—Ես այդ պարոն փիլիսոփան երևի կարծել է, թէ վէպ է գրում: Չէ՞ որ վէպերի մէջ միայն կարելի է ամեն բան հնարել անպատիժ կերպով: Խելքին փչեց, թէ արի այսպիսի մի բան գրեմ, ու կըգրի, էլի. ո՞վ է ձեռքը բռնողը: Կեանքի մէջ էլ, ինչպէս երևում է, ուզում է վարուել իր հնարած վերջին ռոմանի շաբլոնով. սիրուհին դու ես, սիրահարն ինքն է. մընում է ամուսինը, որին, ի հարկէ, պէտք է գաղանի կերպարանք տալ կոնտրաստը շեշտելու համար: Տարբերութիւնն այն է միայն, որ ինքն, իբրև սիրահար, այնքան հեռու է իր վէպի խղճալուկ հերոսից, որքան նրան առած իմ հարիւր փրանկն իմ գրպանից:

—Վահա՛ն, Վահա՛ն... գոնէ այժմ կատակ

մի անիր,— աղերսեց Մանէն յուսահատութեան արցունքն աչքերին:— Մի՞թէ չես տեսնում ինչ դրութեան մէջ եմ ես:

—Ի՞նչպէս չեմ տեսնում: Տեսնում եմ, որ յուսահատութեան մէջ ես և... զղջում ես, թէ ինչու ես նրան վիրաւորել ու վանդել: Իսկ ես կարծում էի, թէ իմ վերջին խօսքերն էին քեզ ազդողը, որ, վերջապէս, դուրս եկար քո անառիկ բերդից և սկսեցիր լալ: Դու զըղջում ես, թէ ինչու ես նրան միստիֆիկատոր անուանել, որովհետև կասկածում ես, թէ մի գուցէ ճիշտ է այն նամակը, և, ինչպէս տեսնում եմ, սրտիդ խորքում ցանկանում էլ ես, որ ճիշտ լինի, որպէսզի...

—Օ՛հ, քեզ հետ երբէք չի կարելի խօսել,— բացականչեց Մանէն ծայրայեղ յուսահատութեամբ:

—Սպասիր, մի տաքանար: Օրինակ առ ինձնից և լսիր ինչ եմ ասում: Եթէ չես կասկածում, եթէ համոզուած ես,—և, ի հարկէ, համոզուած ես,—որ այն նամակը նա է յօրինել, էլ ինչու ես ինձ հարցնում, թէ մի՞թէ ճիշտ չես ասել, մի՞թէ ամուսինդ ընդունակ է այդպիսի բաներ անելու և ոչ թէ միայն ամուսինդ,— աւելացնում ես դու,— այլ թէկուզ հէնց ամենագաղան մարդը: Եւ եթէ ասեմ, թէ՝ այո, ընդունակ է, այն ժամանակ դու պատրաստ ես հէնց այս րոպէիս հեռանալու, քո ասելով՝ ինձ մօտ գիւղը, բայց իմ հասկանալով՝ Բաղամեանի մօտ: Ահա՛ քո

դրութիւնը կամ, աւելի ճիշտը, քո դրութեան հոգեբանութիւնը։

Մանէն ձեռքերը ջարդեց։

—Օ՛հ, ինչու՞ դուրս եկայ, ինչու՞ խօսեցի քեզ հետ,—հառաչեց նա։

—Եթէ ճիշտ չեմ ասում, էլի դուրս արա։

Բայց Մանէն այլեւս ոչ սիրտ, ոչ ոյժ ունէր խօսելու։ Խիստ յոգնած մարդու նման, նա կամաց նստեց եւ, թուլացած ձեռքերը ծնկներին դրած, գլուխը կախեց կրծքին։

—Ինչ վերաբերում է ամուսնուդ,—շարունակեց Վահանը նոյն հանգստութեամբ,—ես թէպէտ լաւ չեմ ճանաչում նրան եւ նոյն իսկ պատրաստ եմ ընդունելու, որ նա բարոյական մի հրէշ է, բայց եւ այնպէս, իմ կարծիքով, նա աւելի լաւ մարդ է, քան թէ քո այդ վիպասանը։ Թէ ինչու—չեմ կարող ասել։

—Որովհետեւ մոռացել է հարիւր ֆրանկդ, ահա թէ ինչու,—նկատեց Մանէն կծու հանգստութեամբ։

—Շատ կարելի է, այդ էլ է պատճառը, որովհետեւ մարդ մարդու դատում է շատ անգամ մանր հաշիւներից դրդուած։ Չեմ վիճում։ Բայց այս դէպքում չեմ կարծում, թէ պատճառը միայն այդ լինի։ Իսկ թէ ուրիշ ինչ պատճառներ կան, որ ես Բագամեանի մասին լաւ կարծիք չունիմ, չեմ կարող ասել, որովհետեւ չգիտեմ։ Գուցէ նրա քիթը դիւր չի գալիս ինձ կամ գուցէ նրա մազերը որ

տեսնում եմ, սիրտս ասում է՝ մկրատն առնեմ եւ տակից կտրեմ,—ո՞վ գիտէ։ Բայց, կրկնում եմ, ամուսինդ ինչ էլ որ լինի, չի կարող նրանից վատ լինել։ Այս բանն ասում եմ նրա համար, որ իմ կարծիքը հարցրիր, թէ չէ՝ ոչ մի խօսք էլ չէի ասիլ այս մասին, որովհետեւ իմ ինչ գործն է դատաւոր լինելու, թէ ով է լաւ, ով է վատ։ Այդ դու ինձնից աւելի լաւ պիտի իմանաս։ Ես միայն ցաւում եմ, որ դու այդքան տանուլ ես տուել քեզ, եւ... զարմանում եմ։ Որովհետեւ ո՞վ է մեր ժամանակում այդպէս գլուխը կորցնում սիրուց։ Ես մինչեւ անգամ կասկածում եմ, թէ այն, ինչ որ քեզ այդքան գերել է, սէր լինի։ Դա մի պարզ հիւանդութիւն է անշուշտ, որ առաջացել է այն բանից, որ մենակ ես, մարդ չկայ մօտդ, ձանձրանում ես, զբաղմունք չունիս, զաւակ էլ չունիս։ Բայց այս ամառ որ գաս գիւղը տանեմ քեզ, այնպէս ձեռաց կըբժշկուես, որ—էլ ինչ ասեմ։ Կըգա՞ս։

—Ոչ։

—Դու գիտես։ Իսկ ես այս երեկոյ, ինչպէս ասացի, գնում եմ։ Ուրեմն...

Վահանը մօտեցաւ քրոջը։

—Լսիր, Մանէ,—ասաց նա լրջօրէն։—Հաւատա ես վատ եղբայր չեմ եւ, որ ուզենաս, կարող եմ շատ պիտանի լինել քեզ։ Արի գնանք գիւղը։

Մանէն վեր թռաւ տեղից։

— Ո՛չ, ո՛չ,— կրկնեց նա։

— Լաւ, էլ ի՞նչ ես փախչում. զոռով խօ չեմ տանելու։ Ես քեզ համար եմ ասում, թէ չէ… քո կամքն է։ Դէհ, մնաս բարեաւ։ Ձեռք էլ չես տա՞լ։

Մանէն ձեռքն ակամայ պարզեց եղբօրը դէմքի այնպիսի արտայայտութեամբ, որ կարծես գորտ պիտի դնէին ձեռքի մէջ։

— Սկեսուրդ ո՞ւր է, տանը չէ՞։

— Չէ։

— Ուրեմն այլևս չեմ տեսնիլ նրան։ Բարև կը յիշես։ Դէհ, դարձեալ մնաս բարեաւ։

Մանէն մինչև անգամ չնայեց եղբօրը և, երբ Վահանը դուրս գնաց, կամաց նստեց և ատամներով կծեց ներքին շրթունքը հեկեկանքը զսպելու համար։ Երբէք նա այնպէս մենակ, այնպէս անօգնական ու որբացած չէր զգացել իրեն, ինչպէս այժմ։

XII

Երեկոյեան գնացքի մեկնումից մի կէս ժամ առաջ Վահանը կառքով գնում էր երկաթուղու կայարան, իր ջարդուած ճամպրուկը ոտների առջևը դրած։ Գնում էր և ինչ-որ ծանր մտածմունքի մէջ էր։ Երբ կառքը կանգ առաւ կայարանի առաջ, նա չիջաւ, այլ, մի րոպէ խիստ տատանուելուց յետոյ, կառապանին պատուիրեց, որ ետ դառնայ, և կառքն ուղղակի քշել տուեց դէպի այն փողոցը, որտեղ գտնւում էր Բազմեանի բնակարանը։

Ծառայից իմանալով, որ Բազմեանը տանն է, նա կառապանին պատուիրեց որ սպասի և, ճամպրուկը թողնելով կառքի մէջ, ներս մտաւ։

Այդ անժամանակ այցն այն աստիճան անակնկալ էր Բազմեանի համար, որ նա մինչև անգամ չպատասխանեց Վահանի բարևին։ Նա կամաց վեր կացաւ գրասեղանի մօտից, որի մօտ պարապում էր, և նայեց հիւրին յայտնի չէ՝ զարմացած թէ վախեցած։

— Այս գիշեր գնում էի գիւղը, բայց երկաթուղու կայարանից ետ դարձայ և ուղղակի եկայ ձեզ մօտ,— ասաց Վահանը։— Յոյս ունիմ, գուշակում էք, թէ ինչի համար եմ եկել։

Բազմեանը գունատուեց։ Իսկոյն յիշեց, որ այդօր, երբ ինքը դուրս եկաւ Մանէի մօտից, փողոցում տեսաւ Վահանին քրոջ տուն գնալիս։

— Ես պատրաստ եմ ձեզ գոհացում տալու,— ասաց նա առաջին ջանք գործ դնելով, որ իր հակառակորդի պէս հանգիստ մնայ և հանգիստ խօսի։

— Գոհացո՞ւմ,— զարմացաւ Վահանը։— Ի՞նչ բանի համար։

— Այն նամակի համար…

—Ո՞ր նամակի... Ա՛խ, հա, քրոջս ցոյց տուած նամակի համար էք ասում,—բացականչեց Վահանը բարձրաձայն ծիծաղելով, բայց յանկարծ զսպեց ծիծաղը և շարունակեց իր սովորական հեգնական ժպիտով.—Մի վախենաք, պարոն Բագամեան. այդ նամակը մտքովս անգամ չի անցել, և ես չեմ եկել ձեզ մենամարտի հրաւիրելու: Բարեբաղդաբար թէ դժբաղդաբար, շատ բան կեանքի մէջ կատարւում է ոչ այնպէս, ինչպէս գրում են ռոմանների մէջ: Կեանքը, մանաւանդ մեր կեանքը, շատ աւելի պարզ է և կոպիտ: Մենք մենամարտել կարող ենք միայն հայավարի, այսինքն հայհոյանքներով և, ծայրը որ հասնի, իրար թակելով: Ուշունց կըտանք իրար, կըջարդենք իրար քիթ ու մռութ և բանը դրանով էլ կըվերջանայ: Յիշո՞ւմ էք իմ ու Նասիբեանի միջև տեղի ունեցած ընդհարումը: Բայց ես եկել եմ ձեզ մօտ ոչ իրար հայհոյելու և ոչ էլ նրա համար, որ տուրուդմփոց սարքենք: Դա բանի նման չի լինիլ և բաւական էլ տգեղ կըլինի, կարծեմ. մանաւանդ որ մենք երկուս էլ թէև ասիական բիրտ ազգի զաւակներ, բայց և այնպէս քիչ ու միչ քաղաքակրթութեան հոտ առած մարդիկ ենք: Իմ գալու նպատակը միանգամայն խաղաղասիրական է. ես եկել եմ խորհուրդ տալու ձեզ, որ ձեռք վերցնէք իմ քրոջից:

—Իսկ եթէ ես ձեր խորհուրդը մերժե՞մ,—

ասաց Բագամեանը, զգալով որ տարօրինակ մի դող ընկնում է իր մարմինը:

Ժպիտը չքացաւ Վահանի դէմքից:

—Դա պարզ յամառութիւն կըլինի,—նըկատեց նա, ձեռքերը կոխելով անդրավարտիկի գրպանները և նայելով Բագամեանի ոտներին:

—Եւ դուք չէ՞ք հասկանում, թէ ինչի համար կըլինի այդ յամառութիւնը:

—Ոչ: Դժուարանում եմ հասկանալ:

Բագամեանի աչքերը վառուեցին:

—Նրա համար կըլինի, պարո՛ն,—ասաց նա զսպած զայրոյթի շեշտերով,—որ դուք խառնւում էք ձեզ չվերաբերող գործի:

Վահանը յանկարծ նայեց նրա աչքերին:

—Պոհօ՜, մի՞թէ,—ասաց նա, ձեռքերը դանդաղօրէն հանելով գրպաններից և դառնալով ետևը:—Իսկ ես կարծում էի, թէ դուք գիտէք, որ ես իմ քրոջ եղբայրն եմ:

—Այդ ինձ համար ո՛չ մի նշանակութիւն չունի: Ձեր նրա եղբայր լինելն իրաւունք չի տալիս ձեզ նրա հետ միասին նաև իմ դատաւորը լինելու:

—Բա՛ւօ, լաւ ասացիք. կըսիրեմ այդպիսի ազատասիրութիւնը: Բայց, պարոն Բագամեան, ես խօ չեմ եկել իբրև դատաւոր. Ես եկել եմ միայն իբրև բարի խորհրդատու:

—Այդպիսի դէպքում ես պիտի խնդրած լինէի, որ գաք ինձ մօտ, կամ ինքս պիտի գայի ձեզ մօտ: Իսկ ես ամենևին կարիք

չեմ զգում ձեր խորհրդին դիմելու,—ասաց Բազամեանը և հեռացաւ Վահանից։

—Դարձեալ բրա՛ւօ. այդ ինքնավստահութիւնն էլ կը սիրեմ։ Բայց ինձ բոլոր իրաւունքներից զրկելուց յետոյ խօ չէ՞ք կարող զրկել այն իրաւունքից էլ, որ կարծեմ ունիմ ես իմ քրոջ պատիւը պաշտպանելու համար։

Բազամեանն արագօրէն դարձաւ դէպի Վահանը։

—Ի՞նչ... ինչ ասացի՞ք... պատի՞ւը,—արտասանեց նա բուռն յուզումից ձայնը հետզհետէ բարձրացնելով։—Պարո՛ն, ես կը խնդրէի, որ դուք մի քիչ զսպէիք ձեր լեզուն։ Ինչի տե՞ղ էք դնում ինձ, որ կարծում էք, թէ պէտք է պաշտպանէք ինձ դէմ ձեր քրոջ պատիւը։ Ես պատուի գո՞ղ եմ, ինչ է։ Հասկանո՞ւմ էք ինչ էք ասում...

—Հասկանում եմ, պարոն Բազամեան, ապահով եղէք և այդպէս մի բղաւէք ի զուր. բնակարանը ձերն է, ճիշտ է, բայց հարևան կունենաք, կըվախենայ։ Աշխատենք կարելոյն չափ հանգիստ կերպով հասկացնել իրար մեր միտքը։ Առհասարակ ընդունուած է, որ երբ մէկն աչք է տնկում ուրիշի կնոջ կամ քրոջ վրայ, նա պատուի,—ներեցէք, ձեր խօսքն եմ կրկնում,—նա պատուի գող է հանդիսանում։

—Լսեցէ՛ք ձեզ ասում եմ,—աղաղակեց Բազամեանը կատաղութեան յանկարծական բը-

ռընկումով։ Ես ձեզ թոյլ չեմ տալ ինձ վիրաւորելու։ Երևի դուք չգիտէք, որ շատ անգամ նա, ում պատուի գող են անուանում, կարող է իր բարոյական յատկութիւններով աւելի բարձր, աւելի մաքուր ու առաքինի լինել, քան թէ նա, ով յաւակնութիւն ունի իր կնոջ կամ քրոջ պատուի պաշտպանի անկոչ դերը ստանձնելու։ Դո՛ւք այս լա՛ւ հասկացէք, պարոն։

—Այդ ես լաւ եմ հասկանում, պարոն Բազամեան,—նկատեց Վահանն առաջուայ պէս հանգիստ։—Եւ իզուր էք կարծում, որ եթէ այդպէս չբղաւէք, լաւ չեմ հասկանալ։ Ես ոչ թէ միայն լաւ եմ հասկանում, այլ և լիովին ընդունում եմ ձեր ասածը։ Օրինակ՝ դուք կարող էք ձեր բարոյական յատկութիւններով շատ աւելի բարձր, շատ աւելի մաքուր ու առաքինի լինել, քան թէ ես, որ քրոջս եղբայրն եմ, կամ թէ Սանթրոսեանը, որ քրոջս ամուսինն է և որը, ի դէպ ասած, այստեղ չէ և այս բանից ամենևին տեղեկութիւն չունի։ Բայց խնդիրն այդ չէ, իմ կարծիքով, այլ այն, որ ինչպէս դուք ունիք ձեր հայեցակէտը, այնպէս և եղբայրներն ու ամուսինները, որոնք, երևի, անկոչ չեն համարում իրենց դերը, որ հարկ են տեսնում հանդէս գալ իրենց քրոջ կամ կնոջ պատիւը պաշտպանելու բարոյական շատ բարձր յատկութիւններով օժտուած մարդկանց դէմ։ Եւ ինչո՞վ կարող էք ապացուցել,

թէ ուղիղը ձեր հայեցակէտն է և ոչ նրանցը։

— Նրանով, որ դուք այնքան անկիրթ էք ու անքարեխիղճ, որ կարծում էք, թէ իրաւունք ունիք ուրիշի բարոյականութեան մասին դատաւոր կանգնելու, և այնքան բռնակալ, այնպիսի վայրենի գաղափարների ու զգացմունքների տէր, որ կարծում էք, թէ եղբայր կամ ամուսին լինելով իրաւունք ունիք ճնշում գործ դնելու ձեր քրոջ կամ կնոջ խղճի վրայ և թոյլ չտալու, որ նա անի այն, ինչ որ իր սիրտը, ինչ որ բնական-անխարդախ զգացմունքն է նրան թելադրում։

— Շատ սիրուն։ Հաւանում եմ։ Բայց չէ՞ որ նոյնը կարելի է ասել և ձեզ համար։ Ես ճանաչում եմ իմ քրոջը. նա աւանդապահ, Աստուծոյ և իր խղճից վախեցող կին է — մի կին, որ հայ կնոջ լաւագոյն տիպարն է, իմ կարծիքով։ Հանգամանքների, ինձ անծանօթ և ինձ համար անհասկանալի հանգամանքների բերումով նա սիրում է ձեզ, սիրում է, բայց տառապում է այդ սիրուց, որովհետև մեղք է համարում այդ, որովհետև ամուսնացած է, ուրիշի կինն է։ Բայց դուք, որ բոլորովին ուրիշ աշխարհայեցողութեան տէր մարդ էք, — աւանդապահ չէք, ազատամիտ էք, — ինչպէս նկատում եմ, ամէն ճիգ գործ էք դնում փոխելու նրա աշխարհայեացքը, խախտելու նրա հաւատն ու հաւատարմութիւնը իր ամուսնու վերաբերմամբ։ Եւ սա, ձեր կարծիքով, անկրթութիւն, ան-

բարեխղճութեան և բռնակալութեան նշան չէ՞։ Ձեր ասած բնական-անխարդախ զգացումը թելադրում է նրան յանցանք չգործել իր խղճի դէմ, հաւատարիմ մնալ իր ամուսնուն, թէ ինչպիսի ամուսնու, — այդ ձեր գործը չէ, այդ ուրիշի գործը չէ, այդ իր գործն է միայն։ Նա այդպէս է կամենում, և ինչու դուք, որ այդքան պայքարում էք ուրիշի խիղճը բռնացողների դէմ, ինքներդ բռնանում էք, որ այդպէս չկամենայ։

— Ոչ թէ ինքն է այդպէս կամենում, այլ դո՛ւք էք կամենում, որ այդպէս կամենայ, — նորից աղաղակեց Բաղամեանը, գրգռուած ոչ այնքան Վահանի խօսքերից, որքան նրա հանգիստ-անձնավստահ տոնից։ — Եւ դուք այս գործի վերաբերմամբ կարող էք խօսել ամէն բանի մասին, բայց ո՛չ երբէք բնական-անխարդախ զգացման մասին, որովհետև հէնց այդ զգացումն է, որ խարդախուած է նրա մէջ և այդ զգացման հետ միասին խարդախուած է նրա ամբողջ աշխարհայեացքը։ Օ՜, ես շատ լաւ ուսումնասիրել և տեսել եմ, թէ ինչ էք արել դուք։ Դուք կաշկանդել էք նրա միտքը հազար ու մի սրտատական նախապաշարմունքների մէջ. ձեր աւանդական-շաբլոնական դաստիարակութեամբ դուք այլանդակել էք նրա հոգեկան աշխարհը, ճզմել հանել էք նրա միջից այն ամէնը, ինչ որ հարազատ-բնական է, ինչ որ ազատ-մարդկային է, և ստրուկ էք դարձրել նրան ինչ-որ ընտանեկան-պայմանական ս-

ղորմելի առաքինութեան, ինչ-որ բուրժուա-կան տափակ բարոյականութեան, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կեղծիք և կեղծիքներից ամե-նաանխիղճն ու ոճրալին, որովհետև նա տանջ-ւում է չարաչար և վերջիվերջոյ պիտի զոհուի այդ կեղծիքին: Ասում էք սարսափում է: Ինչո՞ւ պիտի սարսափի իր սրտի բնական ազատ ձգտումից, եթէ այդ սարսափը չէք ներշըն-չել նրան մօր կաթի հետ և այնուհետև ամրա-պնդել դպրոցում և հասարակութեան մէջ: Ին-չո՞ւ թռչունը պիտի սարսափի ազատօրէն թռչելուց, եթէ նրա թևը չէք կտրել: Ձեր աւանդական դաստիարակութեամբ դուք ներ-շնչել էք նրան այնպիսի անխիղճ պարտա-ւորութիւններ, որոնք պարզապէս բարբարո-սութիւններ են, քաղցրելի բարբարոսութիւն-ներ: Դուք հանել էք նրա կրծքից իր սեպհական սիրտը և տեղը ձեր սեպհա-կանն էք դրել. դուք հանել էք նրա գըլ-խից իր սեպհական ուղեղը և տեղը ձեր սեպ-հականն էք դրել. դուք հիմն ի վեր այլան-դակել և խարդախել էք նրա հոգեկան ու մտաւոր աշխարհը. ոչ մի բան, ոչ մի բան չէք թողել նրա մէջ, որ իրենը լինի, իր սեպհականը, իր ինքնուրոյնը, իր անկապ-տելին: Դուք նրան դարձրել էք մի մեքե-նայ, որ իւրովին գործել անկարող է և պի-տի գործի անպատճառ ձեր կամքով. նա պար-տաւոր է մտածել այնպէս, ինչպէս դուք էք մտածում, զգալ այնպէս, ինչպէս դուք էք

զգում, անել այն, ինչ որ դուք էք թելա-դրում, համակրել ձեր համակրածը, հակա-կրել ձեր հակակրածը: Եւ դուք դեռ համար-ձակւում էք պնդել, թէ նրա խիղճն ազատ է, թէ նրա զգացումները խարդախուած չեն: Դուք ամենամեծ ոճրագործներն էք. դուք մեռցրել էք ինքնուրոյն մարդը, դուք սպա-նել էք անհատի բարոյական ազատութիւնը, որից աւելի բարձր ու նուիրական ազատու-թիւն չկայ աշխարհիս երեսին...

Վահանը հաստ փորը դուրս ցցած՝ լսում էր Բաղամեանին իր սովորական բարեխրա-հեգնական ժպիտով և հանդիստ դիտում նրա աչքերը, որոնք այդ միջոցին վառւում էին անկեղծ բարկութեան կրակով: «Պէտք է խոս-տովանուած, աչքերը վատ չեն,—մտածում էր նա.—ինքն էլ տգեղ չէ առհասարակ... Չէ, լաւ է, լաւ է... Սրա վրայ անպատճառ կարելի է սիրահարուել... Եւ լաւ էլ ոգևոր-ւում է... Յիմար էլ չէ»: Նա մի սիգար հա-նեց, լուցկին հանգցրեց և տարաւ շպրտեց լուսամուտից դուրս:

Բաղամեանը լռեց, հինգ մատը կոխեց եր-կայն մազերի մէջ և, վերին աստիճանի յու-զուած, սկսեց անցուդարձ անել սենեակում ջղային արագ քայլուածքով:

—Վերջացրի՞ք,—հարցրեց Վահանը:—Այժմ հաճեցէք խնդրեմ մի վայրկեան ուշադրու-թիւն շնորհել ինձ: Ես կըկամենայի ամենից առաջ ասել ձեզ, որ այն բոլորը, ինչ որ

այս բոլորը ասացիք, միանգամայն հիա-նալի էր և արժէր ուղղակի գրի առնել և դնել ռեզոնեօրի բերանը մի զօրեղ դրա-մայի մէջ: Բայց ներեցէք խնդրում եմ. մի բան ես լաւ չհասկացայ և կըկամենայի, որ, եթէ կարելի է, բարեհաճէիք բացատրել: Ձը-հասկացածս այն է, որ ձեր Ֆիլիպպիկներն արտասանելիս դուք բառը շատ գործածե-ցիք. արդ չգիտեմ և համարձակւում եմ հարցնել՝ այդ դուքը յատկապէս իմ անձին էր ուղղուած, թէ այդ յոգնակի դերանուան տակ պիտի հասկանայի հաւաքական մի մարմին, որի անունն է խաւարամիտների բանակ: Ձեր բացատրութիւնն ինձ համար կարևոր է, որովհետև կըկամենայի իմ հա-մեստ կարծիքը յայտնել ձեր Ֆիլիպպիկների դէմ, եթէ միայն, ի հարկէ, կըբարեհաճէիք թոյլ տալ, որ ես էլ ունենամ իմ կարծիքը:

Բադամեանը քայլելիս յանկարծ շեղեց ճա-նապարհը, ուղղակի մօտեցաւ Վահանին և կանգ առաւ նրա առաջ:

—Լսեցէ՛ք, պարոն,—ասաց նա կատաղու-թիւնից հազիւ զսպած ձայնով.—եթէ դուք կըշարունակէք դարձեալ այդ տոնով խօսել ինձ հետ, ես... ապտակ կըտամ ձեզ:

Վահանն ամենայն հանգստութեամբ սի-գարը հանեց բերանից և, երեսը դէմ անե-լով, ասաց.

—Խնդրեմ:

Բադամեանի ատամները պինդ սեղմուե-

ցին իրար և ձեռքը կամաց ու ցնցողաբար սկսեց բարձրանալ երկաթի ծանրութեամբ:

Վահանն աւելի մօտեցրեց իր չաղ թուշը:

Բայց Բադամեանի ձեռքը միայն բռունցք սեղմուեց և նոյն ծանրութեամբ իջաւ:

Վահանը նայեց նրան և ծիծաղեց:

—Բրա՛ւօ,—բացականչեց նա:—Եթէ դուք այսպիսի կրիտիքական մի վայրկեանին կա-րողացաք զսպել ձեզ, ապա ուրեմն դուք տղա-մարդ էք: Կեցցէ՛ք: Դա աւելի մեծ քաջու-թիւն է, քան թէ այն, եթէ իրագործէիք ձեր սպառնալիքը: Դա միևնոյն ժամանակ խո-հեմութիւն էր ձեր կողմից, որովհետև լի-նում են հարուածներ, որոնք երբեմն աւելի զօրեղ հակահարուածներ են առաջացնում, մանաւանդ որ ես վատ քրիստոնեայ եմ և բոլորովին հակառակ դաւանանքն ունիմ ապ-տակին վերաբերեալ աւետարանական պա-տուիրանին:

Բադամեանը խեղդւում էր զսպած կատա-ղութիւնից: Նա մօտեցաւ լուսամուտին, յու-սալով, թէ երեսին թարմ ու զովացուցիչ հով կըդիպչի, բայց օդն այնքան ծանր էր ու տաք, որ ոչ մի թեթևութիւն չզգաց: Նա զղջում էր, որ վճռական րոպէն բաց թողեց, չապտակեց այդ «կլօունին», և այժմ խիստ նուաստա-ցած էր զգում իրեն իր աչքում:

—Եւ այսպէս, պարոն Բադամեան,—ա-սաց Վահանը,—չէի՞ք բարեհաճիլ արդեօք բացատրել, թէ ում էին վերաբերում ձեր

գրքերը, յատկապէս իմ անձիս, թէ՛ ամե-
նամեծ ոճրագործներին—անհատի բարոյա-
կան ազատութիւնը սպանող խաւարամիտ-
ներին ընդհանրապէս: Կրկնում եմ, ձեր բա-
ցատրութիւնն ինձ համար կարեւոր է, որով-
հետեւ եթէ ձեր գրքերն ինձ են վերաբե-
րում, ապա ես կըկամենայի ջրել ձեր սխալ
կարծիքը:

Եւ նա, սիգարի ծուխը բերնից բաց թող-
նելով ու աջ աչքը կիսախուփ, սպասեց Բա-
զամեանի պատասխանին:

Բայց Բազամեանը լուռ էր և ջղային ան-
հանգստութեամբ սեղմում էր մատներով
լուսամուտի տախտակը:

—Դուք լայեղ չէք անում պատասխանել,—
ասաց Վահանը:—Այնուամենայնիւ ես կա-
սեմ իմ ասելիքը: Իսկ ասելիքս այն թէ
ինչ է, պարոն Բազամեան: Ձեր մեղադրա-
կան ճառից ես այն տպաւորութիւնը ստա-
ցայ, որ դուք ձեր փիլիպիկները պէտք է
որ ուղղած լինէիք խաւարամիտների դէմ
ընդհանրապէս, դրանց թւում, հարկաւ, հաշ-
ւելով նաև նուաստիս: Ազատամիտներդ
զարմանալի յատկութիւն ունիք դիմելու
ամենքին և ոչոքի: Ձեր գիրքը վերացական
մի մարմին է, ձեր սեպհական ազատ երե-
ւակայութեան արտադրած եօթնգլխեան մի
դեւ, որ իրականութեան մէջ գոյութիւն չու-
նի, ի հարկ է, բայց որի դէմ կռւում էք
զուտ պրոմէթէսեան կրակով: Դուք տե-

սե՛լ էք ինչպէս են վարժւում զինուորները
թշնամուն սուինահարելու. չուլուփալասով
լցրած մի տոպրակ են կախում և հրացանի
սուինով ծակում հա՛ ծակում.—այն ձեր
գիրքը, ձեր թշնամին, ձեր եօթնգլխեան
դեւը: Չեմ յիշում Դոն-Կիշոտի հողմաղաց-
ները, որպէսզի չվիրաւորուէք, թէև Դոն-
Կիշոտը վերին աստիճանի անկեղծ և ան-
պայման լաւագոյն ձգտումներով խելագար-
ւած ազնիւ մի ասպետ էր: Ես ձեզ ասում
եմ, որ քոյրս թէև, ճիշտ է, սիրում է ձեզ,
բայց սարսափում է այդ սիրուց, որովհետեւ
նրա կեանքը կապուած է մի ուրիշ անձի
հետ, որին թշուառացնելն իր խղճի դէմ է
համարում: Իսկ դուք ինձ պատասխանում
էք, թէ մենք բռնակալներ ենք, բարբա-
րոսներ ենք, ոճրագործներ ենք, թէ մենք
ճնշել մեռցրել ենք նրա անհատական ազա-
տութիւնը, նախապաշարել ենք նրա միտքը,
հանել ենք նրա ուղեղն ու սիրտը և տեղը
մերը դրել և այլն: Ձեր այդ մեղադրանք-
ները ցոյց են տալիս, որ դուք չէք հաս-
կացել և չէք կարողանում հասկանալ նրան,
որին սիրում էք: Խնդրում եմ իմ այս նկատո-
ղութեանը լուրջ ուշադրութիւն դարձրէք,
պարոն Բազամեան, որովհետեւ այստեղից է,
որ ծագում են ձեր բոլոր թիւրիմացութիւն-
ները: Կարող եմ ձեզ հաւատացնել, որ հա-
յերիս մէջ շատ չէք գտնիլ այնպիսի աղջիկ-
ներ, որոնք մեծացած լինին այնքան ազատ,

որքան քոյրս։ Ես տասնհինգ, քոյրս չորս թէ հինգ տարեկան էր, որ զրկուեցինք ծնողներից. քոյրս մեծացաւ մօրաքրոջ ձեռքի տակ, որին դուք էլ ճանաչում էիք. նա լուրջ կին էր, բաւական կրթուած և թէև մի քիչ խըստաբարոյ, բայց վերին աստիճանի անկեղծ, արդար և արդարադատ։ Գիտէք, որ նա անզաւակ էր և քրոջս սիրում էր հարազատ մօր պէս։ Իսկ որտեղ սէր կայ, այնտեղ չի կարող ճնշում լինել։ Անշուշտ այն էլ գիտէք, որ քոյրս ամուսնացաւ իր ազատ կամքով, առանց որևէ կողմնակի ազդեցութեան. գոնէ նրանից ես ոչ մի գանգատ չեմ լսել այդ մասին։ Իսկ նրա ամուսնուն դուք, ի հարկէ, աւելի լաւ էք ճանաչում, քան թէ ես, որովհետև նրան ազգական էք՝. որքան իմացել եմ։ Սանթրոսեանին ես տեսել եմ մի քանի անգամ միայն, և նա ինձ վրայ վատ տպաւորութիւն չի թողել, թէև լուրջ մարդկանց ես առհասարակ չեմ սիրում։ Սիրում է նա իր կնոջը, թէ չէ—այդ ես չգիտեմ, բայց որ անպայման ազատութիւն է տուել նրան —դրա ապացոյցը կարող է լինել այն, որ նա տարուայ մեծ մասը գրեթէ դուրսն է անցկացնում և ոչ մի խնամակալ չի կարգել կնոջ վրայ, բացի իր պառաւ մօրից, որն իր բարութեամբ ու միամտութեամբ կարող է մրցել նոյն իսկ հրեշտակների հետ։ Եթէ դուք, այս բոլորից յետոյ, քրոջս մեղադրելու լինէք այն բանում, թէ նա, այնուամե-

նայնիւ, դաստիարակուել է միակողմանի ուղղութեամբ, այդ էլ սխալ կլինի, որովհետև նա սովորել է միևնոյն դպրոցում, ինչ որ ձեր ազատամիտ օրիորդ Հեղինէ Սոլիկեանը, և նրանք մինչև օրս էլ, կարծեմ, շատ մտերիմ ընկերուհիներ են։ Ինչ վերաբերում է մեր հասարակութեանը, որին դուք նոյնպէս մեղադրեցիք, ինչ բան է մեր հասարակութիւնը։ Մեր հասարակութիւնը—այդ ես եմ, այդ դուք էք, այդ Նասիբեանն է, այդ օրիորդ Սոլիկեանն է, իսկ մենք ամենքս, կարծեմ, ինչ ուզում էք՝ ենք, նոյնիսկ նիհիլիստ և անարխիստ, բայց ոչ երբէք աւանդապահ, այնպէս որ մեզ նմաններից կազմուած մի հասարակութիւն եթէ որևէ ազդեցութիւն ունենար քրոջս վրայ, այդ ազդեցութիւնը պէտք է որ ձեր ցանկացած ուղղութեամբը լինէր, բայց ոչ երբէք հակառակը։ Ուրեմն, ինչպէս տեսնում էք, պարոն Բաղամեան, այստեղ ղուքեր չեն եղել և չկան, ինչպէս երևակայում էք դուք։ Եթէ մի ղուք եղել է, այն էլ ազդեցութիւն ունենալու ամենազօրեղ մի գրաւականով, այդ դուք էք եղել միայն, բայց դուք էլ ոչինչ չէք կարողացել անել։ Ի՞նչու։ Որովհետև, կրկնում եմ, դուք չէք կարողացել ճանաչել նրան, որին սիրում էք, ուստի և կամ չէք նկատել, կամ ուշադրութեան չէք առել այն ահագին տարբերութիւնը, որ կայ ձեր և քրոջս միջև։ Քոյրս իր բնաւորութեամբ և աշխարհայ-

եայքով քրիստոնեայ է, դուք հեթանոս։ Նրա կուռ՛քը հոգին է, ձերը նիւթը։ Նա պատրաստ է զոհելու իր անձը մերձաւորի համար, դուք մերձաւորից զոհ էք պահանջում ձեր անձի համար։ Եւ ահա այս երկու ծայրերի բաղխումից է առաջացել այն տրագեդիան, որի պատճառները դուք ուզում էք որոնել ղուբերի մէջ։ Գալով մասնաւորապէս ինձ, կարող եմ հաւատացնել ձեզ, որ ես ոչ մի ազդեցութիւն չեմ ունեցել և չունիմ քրոջս վրայ. որովհետև տարիներ են անցել, որ նրա երեսը չեմ տեսել, նոյն իսկ, խոստովանում եմ յանցանքս, շատ անգամ ամենեւին չեմ հետաքրքրուել նրանով, այլ կեանքիս մեծ մասն անց եմ կացրել ծննդավայրիցս հեռու, մենակ, անկախ, ուսման ետեւից ընկած, նախ մեր երկրում, յետոյ Եւրոպայում, ուր, ի դէպ, յիշո՞ւմ էք, եկել էիք դուք և հարիւր ֆրանկ փոխ առաք ինձնից։

Բաղամեանը ձեռքը խփեց ճակատին՝ յանկարծ անախորժ մի բան յիշողի նման և արագօրէն դարձաւ դէպի Վահանը։

—Մի՞թէ դեռ ես չեմ վճարել իմ պարտքը,—հարցրեց նա։

—Հարկ չկայ շտապելու. դեռ ես մէկ տարի է միայն անցել։

Բաղամեանը շտապով մօտեցաւ գրասեղանին, բաց արեց արկղիկներից մէկը, միջից հանեց մի կոյտ թղթադրամներ և դողացող ձեռքերով սկսեց համարել։

—Ինչո՞ւ հէնց սկզբից չէիք ասում, թէ եկել էք ձեր հարիւր ֆրանկը պահանջելու և ոչ թէ... Ահա, շնորհակալ եմ, վերցրէք և հեռացէք։

Նա սեղանի ծայրին դրեց երեսունուհինգ ռուբլի, մնացած փողը շպրտեց իր տեղը, արկղիկն ուժգնօրէն փակեց և լի արժանապատուութեամբ հեռացաւ նորից դէպի լուսամուտը։ Այժմ, կարծես, միանգամից թեթևացած զգաց իրեն այն անզօր կատաղութիւնից, որ մինչև այժմ խեղդում էր նրան։

Վահանը կծու-հեգնական ժպիտով երկար նայեց նրա ետևից, յետոյ անվրդով մօտեցաւ գրասեղանին, սիգարը դրեց բերանը, թղթադրամները վերցրեց և սկսեց համարել։ Համարելուց յետոյ նայեց Բաղամեանին և հարցրեց.

—Դուք այս կուրսո՞վ հաշուեցիք, թէ հէնց այնպէս։ Այսօրուայ կուրսով... (Նա վերցրեց գրասեղանի վրայ դրուած այդ օրուայ մի լրագիր, նայեց բորսային, յետոյ առաւ մատիտը և սկսեց հաշուել նոյն լրագրի լուսանցքի վրայ)։ Այսօրուայ կուրսով հարիւր ֆրանկն անում է ճիշտ երեսունուհինգ ռուբլի քառասունուհինգ կոպէկ։ Ջէ՞ք բարեհաճիլ արդեօք պակասը լրացնել։

Բաղամեանը երեք մատը մեքենայաբար կոխեց ժիլետի գրպանը, հանեց մէջն եղած բոլոր փողերը—մի քանի հատ սպիտակ ու սև դրամներ—և շպրտեց Վահանի կողմը։

Դրամներն ընկան և գլորւելով ցրւեցին յատակի վրայ։

Այս բանը կատարւեց այնքան արագ ու անակնկալ, որ Վահանն սկզբում չհասկացաւ, թէ ինչ պատահեց. յետոյ զգաց, որ բոլոր սառնասրտութիւնը կորցնում է և ձեռքերի մկանունքները լարւում են սարսափելի ուժգնութեամբ։ Նա վայր դրեց թղթադրամները, սիգարը զգուշօրէն դրեց գրասեղանի ծայրին և դիմեց դէպի Բաղամեանն այնպիսի ծանր ու հաստատուն քայլերով, որ կարծես բրոնզից ձուլուած արձան էր քայլում։ Նոյն վայրկեանին բնազդական վախով շուռ եկաւ դէպի նա Բաղամեանը և ակամայ պաշտպանողական դիրք բռնեց, պինդ կպչելով լուսամուտի տախտակին։

Բայց Վահանը յանկարծ կանգ առաւ, նայեց նրա սարսափահար աչքերին և ժպտաց։

—Խօսք չկայ, գեղարուեստական շատ սիրուն ձևերով էք արտայայտում ձեր արհամարհանքը,—ասաց նա։—Դրամները չյանձնել ուղղակի պարտատիրոջ ձեռքը, այլ... Ես ձեզ բարեկամաբար խորհուրդ եմ տալիս, որ այդպիսի ձևեր երբէք չգործադրէք ձեր վէպերի մէջ, որովհետև դրանք նոյնքան հակագեղարուեստական կըլինին գեղեցիկ գրականութեան մէջ, որքան վտանգաւոր են կեանքի մէջ։ Հաւատացած եմ, որ այս րոպէին դուք լիովին զգում էք այդ՝

ուստի վերջացնենք այս տխուր միջադէպն այսպէս...

Նա մօտեցաւ նախասենեակի դռանը, բաց արեց և սկսեց կանչել.

—Կիրա՛կոս, Մարտի՛րոս, Սերո՛բ, Ֆերո՛բ։

Ն՚րս վազեց ծառան ինչ որ ծամելով և մտնելիս կուլ տուեց շտապով։

—Անունդ ի՞նչ է,—հարցրեց Վահանը։

—Խաչի։

—Խաչի, այս րոպէիս ջեբիցս մանր փող թափուեց. էգուց տունը որ սրբելու լինիս, հաւաքիր քեզ լինի։

—Հըմի կըհըւաքեմ,—ասաց ծառան, աչքն ուրախութեամբ ման ածելով յատակի վրայ։

—Չէ, էգուց, հիմա գնա։

Ծառան կամաց դուրս գնաց, աչքը չհեռացնելով յատակից։

Վահանը մօտեցաւ գրասեղանին, ծոցից հանեց իր ահագին թղթապանակը, երեսունհինգ ռուբլին մէջը դրեց, թղթապանակը նորից ծոցը խոթեց և վ՚րցրեց սիգարը։

—Ես ձեզ չեմ մեղադրում,—ասաց նա։—Պարտքի, մանաւանդ հնացած պարտքի հատուցումը միշտ անախորժ է լինում։ Բայց կարող էիք և չվճարել. ես ձեզ չստիպեցի։ Դուք կամեցաք ինձ վիրաւորել և քիչ մընաց, որ հասնէիք ձեր նպատակին, թէև այդ բանը երեսունուհինգ ռուբլուց շատ աւելի թանկ կընստէր ձեզ... Բայց ես աւելի լաւ եմ համարում վիրաւորուելու տեղ շնորհակալ

լինել ձեզնից, որ, վերջապես, վճարեցիք ինձ հասանելի գումարը, որից վաղուց արդէն ձեռք էի վերցրել: Այս էլ պէտք է խոստովանուեմ, որ, չնայելով քիչ մնաց ինքս ինձ կորցնէի, դուք ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն թողիք. դուք լիովին ապացուցեցիք, թէև մի քիչ ոչ-սիրուն ձևով, որ պատուաւէր մարդ էք, իսկ պատուաւէր մարդկանց չի կարելի չյարգել: Ես ձեզ յարգում եմ:

Բաղամեանը լսում էր նրան կատարելապէս ապշած և չէր հասկանում, թէ ինչ է ասում նա այդքան երկար և այդքան հանգիստ ու անվրդով ձայնով: Նա միայն տեսնում էր իր առջև սարի պէս կանգնած մի հսկայական մարմին, մի ժպտուն չաղ դէմք և հաստ մատների մէջ մի հաստ սիգար, որի ծուխը կամաց վերև էր բարձրանում և սենեակի օդն ապականում անտանելի ծանր հոտով: Նրան թուաց, թէ այդ անտանելի հոտն է պատճառը, որ ինքն այնպէս խեղդւում է:

—Պարոն, մի՞թէ դուք մտադիր չէք այս գիշեր ինձ հանգիստ թողնելու,—հարցրեց նա զարմացած:

—Շատ ցաւում եմ, պարոն Բաղամեան, որ իմ հեռանալուց յետոյ էլ չպիտի կարողանաք հանգստանալ: Դուք հէնց սկզբից սխալ ոտն բռնեցիք. սկսեցիք բարձր նոտերից և հէնց սկզբում էլ ձեր ձայնը խեղդ-

ւեց. իսկ այժմ, երբ դուէտը դեռ չենք վերջացրել, դուք արդէն յոգնել էք: Նշանակում է՝ ծանօթ չէք վիճաբանութեան ձայնագրութեանը:

Բաղամեանն այլևս ոչ մի խօսք չարտասանեց և վճռական քայլերով դիմեց դէպի հարևան սենեակի դուռը:

—Ո՞ւր էք գնում,—հարցրեց Վահանը և իր հսկայական մարմնով փակեց նրա ճանապարհը:

Բաղամեանը կանգ առաւ և նայեց նրա փոքրին այնպիսի ատելութեամբ, որ եթէ ձեռքին դաշոյն ունենար, կըտար փորոտիքը կըթափէր:

—Մի՞թէ ես ազատ չեմ իմ տանը,—հարցրեց նա, զգալով որ ջղային դողը նորից բռնում է իր մարմինը:

—Դա ի՞նչ խօսք է, պարոն Բաղամեան. ձեր տան մէջ դուք ինքնակալ թագաւոր էք: Բայց այս բանը պէտք է վերջացնե՞նք թէ ոչ:

--Մենք արդէն վերջացրինք:

--Փողի հաշի՞ւը: Այո, վերջացրինք: Բայց ա՞յն, որի համար եկել եմ:

—Ես ձեզ ասացի, որ ձեր միջամտութիւնը չեմ ընդունում: Լսո՞ւմ էք, չեմ ընդունում: Իսկ եթէ ուզում էք ֆիզիքական ոյժ գործ դնել ինձ վրայ այստեղ, իմ տան մէջ, կարող էք. ես ձեզ արգելք չեմ լինիլ:

– Է՜, պարոն Բաղամեան, այդ չեղաւ. այդ բանը չպէտք է ասէիք ինձ: Թո՞ւրք եմ, ինչ

է, որ եկել եմ բռնելու ձեր կոկորդից, թէ ուզէք-չուզէք՝ պէտք է երկրպագութիւն տաք Մահմէդին։ Ֆիզիքական ոյժս որ ուզենայի գործ դնել, գործ կըդնէի այն ժամանակ, երբ դուք կատարելապէս իրաւունք տուիք ինձ այդ բանի համար՝ զրահներն օդային ճանապարհով ուղղելով դէպի ինձ։ Բայց տեսաք, որ ես զսպեցի ինձ, ուրեմն էլ ինչի՞ց էք վախենում։

—Շատ սխալւում էք, որ կարծում էք, թէ վախենում եմ։ Ես միայն ուզում եմ հասկացնել ձեզ, որ դուք իրաւունք չունիք խառնուելու այս գործին։

—Պարոն Բաղամեան, մի՛ յամառէք, թէ չէ բանը որ յամառութեանը գայ, ես ձեզ յաւիտեան հանգիստ չեմ թողնիլ։ Բայց ես չեմ ուզում ձեզ պէս յամառել և, իբրև բարեկամ, ասում եմ ձեզ, որ եթէ քրոջիցս ձեռք չվերցնէք, մեծ աղէտ կըբերէք... ձեր գլխին։

—Այդ իմ գիտնալու բանն է։

—Հա, իհարկէ։ Բայց եթէ այդ աղէտը բերէք և նրա՛ գլխին։

—Այդ էլ թող ծանրանայ իմ խղճի վրայ։

—Բայց այդ շատ քիչ չի՞ լինիլ...

—Այդ այնքան շատ կըլինի, որ դուք հասկանալ անգամ չէք կարող...

—Դուք կարծո՞ւմ էք։ Շատ բարի։ Թող ձեր ասածը լինի։ Այժմ ես հանգիստ կըթողնեմ ձեզ։ Բարի գիշեր։ Ես կատարեցի իմ պարտքը։

Եւ Վահանը լայն ու հաստատուն քայլերով դուրս գնաց։ Մի-երկու րոպէից յետոյ Բաղամեանը լսեց նրա ձայնը ներքևից, փողոցից.

—Խաչի՛, փողերը հաւաքես, հա՛, մոռանաս ոչ։

—Էսա հըւաքելու եմ, աղա,—լսուեց ծառայի ձայնը։

Կառքը շարժուեց և անիւներն ահագին դղրդիւն բարձրացրին քարած փողոցում գիշերային անդորրութեան մէջ։

Ծառան ներս պրծաւ, բայց նոյն րոպէին էլ քարացաւ, դէմ առ դէմ հանդիպելով տիրոջ վառուած աչքերին։

—Դո՛ւրս կորի՛ր,—հրամայեց Բաղամեանը։

Ծառան տեղից անգամ չշարժուեց. ապուշ էր կտրել։

Բաղամեանը բռնեց նրա ուսերից, շուռ տուեց և ձեռքերի ամբողջ թափով դուրս շպրտեց նրան նախասենեակ։

—Եթէ դու կըհամարձակուես այս փողերից մի կոպէկ անգամ վերցնել, գլուխդ կըջախջախեմ,—ասաց նա։—Էգուց հաւաքիր և տար իրեն տուր. տեղը կասեմ։ Ես քեզ ուրիշ փող կըբաշխեմ,—աւելացրեց նա աւելի հանգիստ ձայնով և դուռը փակեց։

XIII

Նա մօտեցաւ լուսամուտին և նայեց վերև։ Երկինքը մութն էր. ոչ մի աստղ չէր երևում։ Օդն առաջուայ պէս ծանր էր ու հեղձուցիչ։ Փողոցը լուռ էր։ Հեռուից բաւական որոշակի լսուեցին քաղաքային տան ժամացոյցի հատու զարկերը։ Բաղամեանը սկսեց համարել մեքենայաբար։ Ժամը տասնմէկն էր։

Մի թեթև շրշիւն գրաւեց նրա ուշադրութիւնը, և նա շուռ եկաւ ակամայ։ Հարևան սենեակի դուռը բացուեց, և ներս մտաւ մի կին ասուեգործ մի սև շալ գլխին, որի մէջ երևում էին աչքերն ու քիթը միայն։ Կինը մտաւ կամաց և շալը վերցրեց գլխից։ Բաղամեանը յանկարծ ետ ընկաւ և ձեռքերով ամուր բռնեց լուսամուտի տախտակը։ Նրա առջև կանգնած էր Մանէն բարձրահասակ ու նիհար։

Մանէն նախ նայեց շուրջը, յետոյ նրան և հարցրեց.

—Գնա՞ց։

—Գնաց, — արձագանքեց Բաղամեանը և մտածեց. «Ի հարկէ, սա երազ է...»։

Մանէն երկու ձեռքով ուղղեց մազերը, նստեց և նորից նայեց Բաղամեանին։ Նրա բոլոր շարժումների և հայեացքի մէջ տարօրինակ հանգստութիւն էր նկատւում։

—Այսօր ես նրան ասացի նոյնը, ինչ որ

այժմ դուք ասացիք,—խօսեց նա վերին աստիճանի խաղաղ ձայնով։—Ես նրան ասացի, որ նրա համար հարիւր ֆրանկն աւելի մեծ արժէք ունի, քան թէ... Նա անտանելի մարդ է, անտանելի մանաւանդ այն ժամանակ, երբ ինքդ կատաղում ես, իսկ նա հանգիստ ժպտում է, ծխում իր զզուելի սիգարը և ոչ մի խօսքով չի ընդհատում քեզ. իսկ երբոր վերջացնում ես, այնպիսի բան է ասում, որ կարծում ես, թէ օձ խայթեց։ Երբ նա պաշտպանում էր ինձ ձեր առաջ, քիչ էր մնում դուրս գայի և ասէի, որ ես ես չեմ ընդունում իր միջամտութիւնը։

«Սա երազ է... անպատճառ երազ է,—մտքումը կրկնում էր Բաղամեանը, կարծես լուսամուտի տախտակից գամուած։—Այսօրուայ դէպքից յետոյ սա ինձ մօտ... Անկարելի բան է...»։

—Կառքը որ տեսայ, մտայ բակի դռնից,—շարունակեց Մանէն։—Ծառան ասաց, որ մարդ կայ ձեզ մօտ և բերեց ինձ այն սենեակը։ Ձայնից իմացայ, որ նա է։ Ուզում էի հեռանալ, բայց... ջգրու մնացի և, եթէ մի քիչ էլ շարունակէր, դուրս կըգայի անպատճառ։

«Անկարելի բան է, անկարելի բան է...», մեքենայաբար կրկնում էր Բաղամեանը մտքի մէջ, աչքը չկարողանալով հեռացնել նրա անվրդով դէմքից։

—Ինչո՞ւ էք ինձ այդպէս նայում,—հարցրեց Մանէն կամաց։

—Որովհետև... չեմ հաւատում, թէ այդ դուք էք։

Մանէն աչքերը վայր թողեց և նկատելի կերպով կարմրեց։

—Իրաւունք ունիք։ Ես էլ չեմ հաւատում, թէ այս ես եմ,—ասաց նա աւելի ևս կամաց և, կարճ լռութիւնից յետոյ, աւելացրեց.—Այսօր ես վիրաւորեցի ձեզ... Եկել եմ ներողութիւն խնդրելու։

Բաղամեանը յանկարծ պոկ եկաւ լուսամուտի տախտակից, կարծես մի բան ուժեղ թափով առաջ նետեց նրան, բայց նա առաջ գնալու տեղ դարձաւ և լուսամուտից նայեց վերև, մութ երկնքին։

—Ես հասկանում եմ ձեզ,—ասաց նա։—Ուզում էք հասկացնել, որ ես ներողութիւն խնդրեմ ձեզնից։

Մանէն նայեց նրան զարմացած։

—Ի՞նչ բանի համար։

—Այն նամակի...

—Բայց չէ՞ որ դուք չէք այն նամակի յօրինողը։

Բաղամեանը դարձաւ դէպի Մանէն և նայեց նրան մռայլ հայեացքով։

—Մի՞թէ դեռ ևս կարծում էք, թէ ես եմ,—հարցրեց նա խուլ ձայնով։

Մանէն վեր թռաւ տեղից. շալն ընկաւ նրա ոտների տակ։

—Ո՛չ, Աստուած է վկայ, ո՛չ, Բաղամեան,—կանչեց նա եռանդով։—Ճիշտ է, այսօր ես ձեզ ասացի այդ բանը, բայց այն բոպէին հաշիւ չէի տալիս ինձ, թէ ինչ եմ ասում, թէ որքան խոր վիրաւորանք եմ հասցնում ձեզ այդպիսի մի մեղադրանքով։ Ես չափազանց զգայուն եմ, շատ շուտ եմ բորբոքւում, երբ տեսնում եմ, որ շօշափել են զգացումներս, թէև շուտով էլ զգաստանում եմ, երբ տեսնում եմ, որ ես էլ չափն անցել եմ։ Այն բոպէին, երբ վիրաւորեցի ձեզ, գրեթէ նոյն բոպէին էլ զգացի, որ անարդար կերպով եմ վարուել ձեզ հետ։ Եւ իմ ասած խօսքերի բոլոր ծանրութիւնն աւելի ու աւելի զգացի այն ժամանակ, երբ դուք արդէն գնացել էիք։ Չէք կարող երևակայել, թէ ամբողջ օրն ինչպէս տանջուել եմ այդ գիտակցութիւնից։ Վերջն այլ ևս չկարողացայ դիմանալ և... ինչպէս տեսնում էք, եկել եմ ներողութիւն խնդրելու։

—Այդ մի՛ ասէք, Մանէ, մի՛ ասէք այդ,—բացականչեց Բաղամեանը։—Ես էլ Աստուած միայն գիտէ, թէ ինչպէս եմ անցկացրել ամբողջ օրը, բայց մի բոպէ անգամ չեմ կասկածել, թէ ես արժանի չեմ եղել ձեր խստութեանը, իսկ այժմ առաւել ևս զգում եմ, որ յանցաւոր եմ ձեր առաջ։ Նամակը գրուած է այն ձևով, որ խամ մարդը դժուար թէ չհաւատայ։ Բայց բանն այն է, որ ես ճանաչում եմ ձեր ամուսնուն և գիտեմ,

որ նա այդպիսի բանէր անող չէ և չի կարող անել։ Այդ բանին ես հաստատ համոզւած էի և այն էլ գիտէի փորձով, որ խըմբագրութեանն ուղղուած նամակները մեծ մասամբ գրուած են լինում անձնական հաշիւներից, հետևաբար սուտ ու շինծու են լինում։ Բայց և այնպէս, այդ բոլորը գիտենալով հանդերձ, ես թոյլ տուի ինձ ձեր ամուսնուն ձեր առաջ անուանելու անբարոյական և հրէշ և իբրև ապացոյց ցոյց տուի ձեզ մի նամակ, որի ստութեանն առաջուց համոզուած էի, կընշանակի՝ ես ուզում էի ձեզ խաբել։ Սա այնպիսի մի գարշելի վարմունք էր իմ կողմից, որ եթէ դուք ներէք, ես ինքս ներել չեմ կարող երբէք։

Բաղամեանն ինքն իր դէմ զգացած զայրագին նողկանքով դէմքը շրջեց Մանէից, կարծես ամօթահար, և աւելացրեց.

—Ես վա՜տ, անազնի՜ւ, ցա՜ծ մարդ եմ...

Մանէն արագօրէն մօտեցաւ նրան։

—Ի՞զուր էք ձեզ այդքան նուաստացնում, —շշնջաց նա զգացուած։—Դուք վատ չէք, ո՛չ, չէք։ Եթէ լինէիք, ես այդ վաղուց կըզգայի։ Լսու՞մ էք... լսու՞մ ես, Աշոտ, կըզգայի, որովհետև անկարելի է, որ վատութիւնը չզգամ։

—Ինչպէս զգացիք այսօր...

—Այսօր ուրիշ բան էր։ Այսօր ես չափազանց վրդովուած էի, որովհետև նամակն այնքա՛ն անխիղճ զրպարտութիւն էր բովանդակում, որ անկարող էի չվրդովուել։ Դո

կարծեցեալ վատութիւնը չէ պատճառը, որ ցոյց տուիր ինձ այն նամակը, այլ ես եմ, ես, որ այսքան սիրում և միևնոյն ժամանակ այսքան տանջում եմ քեզ իմ դժբաղդ բնաւորութեան պատճառով։ Դո վարմունքն ես համարում եմ խելացնոր մի քայլ, որ դու արիր անշուշտ յուսահատութիւնից։ Այսօր ես շատ եմ մտածել և այն եզրակացութեանն եկայ, որ դու այն նամակը դարձեալ ցոյց չէիր տալ ինձ, եթէ պատասխանս այնքան վճռական չլինէր։ Այդպէ՞ս է, թէ ոչ։ Ասա։ Նայիր ինձ։

Բաղամեանը նայեց նրա աչքերին—թախծալի աչքերին, որոնք, սակայն, այդ րոպէին շոյում, փայփայում էին նրան այնպիսի մի քնքշանքով, որպիսին Բաղամեանն առաջին անգամն էր տեսնում Մանէի աչքերի մէջ։ Նա ակամայ ծունկ խոնարհեց այնքա՜ն տարօրինակ և այնքա՜ն սիրելի այդ կնոջ առաջ, առաւ նրա ձեռքը և շրթունքները հպեց այդ նիհար, քնքոյշ ձեռքի վրայ անհուն երանութեամբ, սրբազան երկիւղածութեամբ, այնպէս՝ ինչպէս հաւատացեալ մարդը համբուրում է հրաշագործ մի սուրբ պատկեր։

Մանէն նստեց, թեթևակի խոնարհուեց նրա գլխի վրայ և ազատ ձեռքով, կարծես ինքնամոռացութեան մէջ, սկսեց շօշափել ու շոյել նրա փափուկ, երկայն մազերը։

Այդ լուռ տեսարանը տևեց մի երկու րոպէ։

Վերջապէս Բաղամեանը բարձրացրեց գլուխը և նայեց վերևից իրեն նայող նոյն քնքշանքով լի թախծալի աչքերին։

—Մինչև այժմ ես քեզ չէի ճանաչում,— ասաց նա աղօթողի պէս շշնջալով, — իսկ այժմ ինձ թւում է, թէ ճանաչեցի միանգամից։ Եղբայրդ ասում էր, թէ դու քրիստոնեայ ես։ Ո՛չ, դու աւելի ես, քան քրիստոնեայ. դու սուրբ ես, դու հրաշափառ ես, դու իմ կուռքն ես։ Ես անհաւատ մարդ եմ, բայց ոչ մի հաւատացեալ մարդ չի կարող զգալ այն, ինչ որ ես եմ զգում այս րոպէին, այսպէս, առաջդ չոքած, աչքերիդ նայելիս, այս խորհրդաւոր ժամին, այստեղ, մենակ, իմ տան մէջ, այսօրուայ խօսակցութիւնից յետոյ... Ես ոչ թէ սիրում, այլ պաշտում եմ քեզ... պաշտո՜ւմ... պաշտո՜ւմ... Տուր ինձ, տուր ինձ ուրիշ աւելի զօրեղ մի բառ, որի մէջ դնեմ հոգիս և վերջին շնչիս հետ փչեմ ոտներիդ առաջ...

Բաղամեանը գրկեց Մանէի ոտները և սկսեց համբուրել նրա ծնկները ջերմօրէն և կրքոտութեամբ...

Մանէն յանկարծ նայեց լուսամուտին և փորձեց հեռացնել նրա ձեռքերը։

--Բաւական է... վեր կաց,—շշնջաց նա։

Բաղամեանն աւելի պինդ կպաւ նրա ծնկներին։

—Ոչ, թող մնամ այսպէս... Թող պաշտեմ

քեզ... Ես ուզում եմ մեռնել ոտներիդ առաջ... այսպէ՜ս... այսպէ՜ս...

— Աղաչում եմ վեր կաց։ Լուսամուտը բաց է, մեզ նայող կարող է լինել...

—Թէկուզ ամբողջ աշխարհը նայի։ Դու իմն ես, իմն ես, իմն ես... Ես կըճղեմ կուրծքս կընստեցնեմ քեզ հոգուս մէջ և հոգուս հետ էլ կարձակեմ...

Մանէին թւաց, թէ երկու օձ երկաթի օղակներով փաթաթւում են իր կոնքերի տակ և սարսափելի ուժով ներքև են քաշում իրեն։ Միևնոյն ժամանակ իր առաջ տեսաւ տարօրինակօրէն փայլող երկու աչքեր և դէմքի վրայ զգաց մի տաք շնչառութիւն ծանր ու հատու։ Այդ բոլորը համ անհունօրէն քաղցր, համ սարսափելի էր նրա համար...

Յանկարծ նա բռնեց Բաղամեանի ցնցողաբար սեղմող ձեռքերից, տարօրինակ բուռն ուժով դէն հրեց նրան, վեր թռաւ տեղից և արագօրէն դիմեց դէպի այն դուռը, որտեղից մտաւ։

Բաղամեանը մի ոստիւնով ցատկեց չոքած տեղից և վազեց դէպի նա։

—Մա՛նէ...

—Չհամարձակուէք մօտենալ ինձ,—հրամայեց Մանէն, արագօրէն դառնալով։

Բաղամեանը կանգ առաւ և կատարեալ յուսահատութեամբ նայեց նրա հրացայտ աչքերին։

—Մանէ... ի սէր Աստուծոյ... Խնդրում

եմ, աղաչում եմ, մի գնա։ Ես կըզսպեմ ինձ, ես կըքաշուեմ ահա այն անկիւնը, կուչ կըգամ ծեծուած շան պէս և ամենևին չեմ մօտենալ քեզ, միայն մի՛ գնա, կա՛ց...

Պաղատագին հայեացքով նա փորձեց առնել Մանէի ձեռքը, բայց Մանէն թոյլ չտուեց, շալը թռցրեց յատակից, ծածկեց գլխին և նորից դիմեց դէպի դուռը։

Բաղամեանին թուաց, թէ խելքը կորցնում է։ Ինքն էլ չհասկացաւ թէ ինչպէս՝ կտրեց Մանէի առջևը և ամբողջ մարմնով կպեց դուռը։

Մանէն նայեց նրա խելակորոյս աչքերին և ակամայ ետ ընկաւ սարսափահար։

—Ի՞նչ էք ուզում ինձնից,—շշնջաց նա։

—Ուզում եմ, որ մնաս,—ասաց Բաղամեանը ծանր շնչելով և մէջքի բոլոր ուժով սեղմուեց դռանը։

—Զօռո՞վ էք ուզում պահել։

—Այո՛,—շեշտեց Բաղամեանը, պղտորուած աչքերը փայլեցնելով նրա վրայ և շրթունքները կծոտելով։

Մանէն նայում էր նրան համ սարսափած, համ ապշած։ Նրան թւում էր, թէ իր ճանաչած այնքան սիրելի, այնքան խոնարհ, այնքան քաղաքավար Բաղամեանի տեղ իր առջև տեսնում է այժմ բոլորովին անծանօթ, կատաղեալ վայրենի մի մարդ, որի լոկ տեսքը զարհուրանք էր ազդում նրան։

—Բաղամեան, հասկանո՞ւմ էք ինչ էք անում,—նորից շշնջաց նա։

—Լիովի՛ն։ Ես ուզում եմ, որ դու մնաս։ Եւ պէտք է մնաս...

—Բռնութի՞ւն էք ուզում գործ դնել։

—Գործ կըդնեմ, եթէ չմնաս... անպատճառ գործ կըդնեմ, եթէ չմնաս քո կամքով... Եւ մեղաւորը ես չեմ լինիլ, դու կըլինիս, որովհետև... Ինչո՞ւ ես եկել ինձ մօտ... Ներողութիւն խնդրելու համար ուրիշ ճանապարհ կար. կարող էիր նամակ գրել, եթէ ինձ հասցրած վիրաւորանքի համար յանցաւոր էիր զգում քեզ... Բայց չպէտք է գայիր ինձ մօտ... Եկել ես, պէտք է մնաս...

—Բաղամեան, ուշքի եկէք,—այս անգամ գրեթէ ճչաց Մանէն։

—Անհոգ կաց, ուշքս դեռևս գլխիս է, բայց շուտով կըկորցնեմ, եթէ չմնաս քո կամքով... Կարծում ես, ես չե՞մ հասկանում ինչ եմ անում։ Շատ լաւ հասկանում եմ, բայց ուրիշ հնար չունիմ, որովհետև... Կըրկնում եմ, ինչո՞ւ ես եկել ինձ մօտ... այն էլ այս ժամին... Ի՞նչ գործ ունիս դու այստեղ... իմ տանը... մենակ... գիշերով... այս ելեքտրականացած օդի մէջ, որից, ահա, շնչասպառ եմ լինում ես... Ինչո՞ւ թոյլ տըւիր, որ գրկեմ քեզ, համբուրեմ ծնկներդ... Առաջ երբէք թոյլ չես տուել... Այս առաջին անգամն էր... Իսկ ես ամբողջ երեք տարի է, որ ցանկանում եմ քեզ, միմիայն քեզ,

աշխարհիս բոլոր կանանց մեջ քեզ միայն… Ես մարդ եմ, քար չեմ… Դու բորբոքեցիր ինձ, վառեցիր իմ ամբողջ արիւնը և փախչում ես… Չեմ թողնիլ… Տեսնում ես, գերբնական ոյժ եմ գործ դնում, որ զսպեմ ինձ, չգազանանամ, որովհետև դու այստեղ ես և անմատչելի… Ես սիրում եմ քեզ, բայց ատում եմ քո առաքինութիւնը, որ ինձ այսքան չարչարելուց յետոյ, այժմ իսկ, այս վճռական ժամին ուզում է արգելք լինել իմ երջանկութեանը… Ես կըխլեմ քեզնից այդ առաքինութիւնը, կըթաւալեմ ցեխի մէջ, եթէ կամովին չհրաժարուես նրանից… Ես կանեմ ամեն բան, կանգ չեմ առնիլ ոչ մի բանի առաջ, նոյն իսկ սոսկալի մի ոճրագործ կըդառնամ, եթէ չմնաս… Այժմ կամ այլևս երբէք… Լսում ես, այժմ կամ այլևս երբէք… Դու իմը պիտի լինիս, իմը այժմ իսկ, այս րոպէին, իմը անպատճառ և ինչ գնով ուզում է լինի, նոյն իսկ իմ մահու գնով, նոյն իսկ քո մահու գնով… Իմացիր, որ եթէ նոյն իսկ մեռնես իմ ձեռքերի մէջ, ես կը տիրապետեմ քո դիակին…

Մանէն, սարսափից իրեն կորցրած, նայեց շուրջը։ Նրա աչքովն ընկաւ նախասենեակի դուռը, և նա վազեց այդ կողմը։ Բայց Բադամեանն այստեղ էլ փակեց նրա ճանապարհը։ Նա կատարելապէս նման էր խելագարի. աչքերը լցուել էին արիւնով և նայում անախորժ պղտոր փայլով. երկայն մա-

զերը թափուել էին ճակատի և ականջների վրայ ցան ու ցիր. դէմքը կարմրել և ծամծկուել էր ճարպոտ քրտինքով։ Նա գրեթէ շնչասպառ էր լինում ծանր շնչելուց և դուռն ի վեր ցից կանգնած՝ ամբողջ մարմնով դողում էր ուժգին տենդով բռնուած մարդու պէս։

— Չեմ թողնիլ, որ գնաս, — ասում էր հեւալով։ — Քեզ էլ, ինձ էլ կըմորթեմ, և չեմ թողնիլ, որ գնաս… Վճռուած բան է. ես պիտի կործանեմ քեզ քո առաքինութեան համար և քեզ հետ միասին պիտի կործանեմ ինձ…

Մանէն երկու ձեռքի ափերը սեղմեց քունքերին, դէմքն առաջ տարաւ դէպի Բադամեանը և, չռած աչքերով նայելով նրան, շըշնջաց այս անգամ ոչ այնքան սարսափած, որքան ծայրայեղօրէն ապշած.

— Բադամեան, մի՞թէ այդ դուք էք… դո՞ւք…

Բադամեանը ցնցուեց և ապա անշարժացաւ։ Երկար ժամանակ նա անմիտ հայեացքով նայում էր Մանէի չռած աչքերին ծանր մղձաւանջից արթնացողի պէս, յետոյ դանդաղօրէն նա քաշեց երեսին ցրուած մազերը, և երկարատև ծանր մի հառաչանք նկատելի կերպով բարձրացրեց ու ցածրացրեց նրա կուրծքը։ Նրա վերին աստիճանի լարուած ջղերն արագօրէն թուլացան և գլուխը կախ ընկաւ կրծքին։ Առժամանակ նա կարծես ոյժ չունէր այլևս ոչ խօսելու և ոչ տեղից շարժուելու. յետոյ կամաց ետ քաշուեց, բաց արեց դուռը և, առանց գլուխը բարձրաց-

նելու, շշնջաց ընկճուած, ուժասպառ ձայնով.

——Գնացէք...

Մանէն բնազդաբար առաջ ընկաւ և դուրս վազեց նախասենեակ: Սանդուխքից իջնելիս քիչ մնաց գլորուէր ներքև: Փողոցում տան բակից դուրս թռաւ մի փոքրիկ շուն անախորժ ծկլթոցով և բռնեց նրա փեշից: Բայց Մանէն գրեթէ չզգաց այդ բանը և շանը երկար տեղ քարշ էր տալիս իր ետևից: Շունը նրա փեշը բաց թողեց այն ժամանակ, երբ Մանէն մեքենայաբար կանգ առաւ, բռնեց փեշից և ձիգ տուեց. շունը գլորուեց և ետ փախաւ աւելի անախորժ ծկլթոցներով: Իսկ Մանէն շարունակեց վազել:

Գիշերը սաստիկ մութն էր, փողոցներն ամայի: Երկինքը ծածկուած էր սև ամպերով և մերթ ընդ մերթ փայլատակում էր: Ծանր, տաք, անշարժ օդը յագեցած էր ելեկտրականութեամբ: Հեռուից ամպերի խուլ գոռոց էր լսւում:

Մանէն վազում էր առանց ետ նայելու: Նրան թւում էր մերթ, թէ փողոցները սաստիկ երկար են, թէ տունը շատ հեռու է, թէ ահա որտեղ որ է՝ պիտի ընկնի ճանապարհին վախից և յոգնութիւնից անշնչացած, և մերթ՝ թէ երազումն է կատարում գիշերային այդ ճանապարհորդութիւնը լապտերներով հազիւ լուսաւորուած ամայի փողոցներով, երկնքի վայրկենական փայլատակումների և սև ամպերի զարհուրելի որոտի տակ:

Յանկարծ նրան թուաց, թէ մէկը վազում է ետևից և կանչում է՝

—Մանէ, Մանէ...

Նա սոսկումով կանգ առաւ և ետ նայեց:

Արագ քայլերով հասաւ նրան Բագամեանը:

—Մի վախենաք, ես եմ,—ասաց նա սաստիկ հևալով:

Մանէն ձայն անգամ չհանեց և նոյն արագ քայլերով առաջ անցաւ:

Բագամեանը հետևեց նրան: Նա լարել էր ոտների բոլոր ոյժը, որ ետ չմնայ Մանէից, բայց և այնպէս Մանէն մի քանի քայլ միշտ առաջ էր վազում նրանից:

—Ինչո՞ւ էք վազում,—ասաց Բագամեանը:—Եթէ այնտեղ ոչինչ չարեցի, կընշանակի այլևս ոչինչ չեմ անիլ: Ես ուզում եմ միայն անվտանգ տուն հասցնել ձեզ:

Մանէն դանդաղեցրեց քայլերը: Բագամեանը հաւասարուեց նրան, և այժմ նրանք առաջ անցան կողք-կողքի: Երկար տեղ նրանք քայլում էին լուռ: Բագամեանը վերցրել էր գլխարկը և թաշկինակով սրբում էր քրտնած ճակատն ու վիզը:

Երկինքը փայլատակում էր աւելի ու աւելի յաճախ և այն աստիճան խիստ, որ փողոցի սալայատակն ու տների մութ զանգուածները լուսաւորւում էին ցերեկի պէս: Որոտն ևս մօտենում և սաստկանում էր հետզհետէ. կարծես հսկայական մի գունդ յանկարծ պայթում և խոշոր ու մանր բե-

կորների վերածուած՝ գոգռալով գլորւում էր թիթեղեայ մի մեծ տանիքի վրայ:

—Երբոր ձեռքս բարձրացրի և ուզում էի ապտակ տալ ձեր եղբօրը, բայց չտուի,— խօսեց Բաղամեանը շունչը ետ բերելուց յետոյ,— նա ասաց «բամբօ» և աւելացրեց, որ եթէ ես այդպիսի մի վայրկեանին կարողացայ զսպել ինձ, կընշանակի, որ ես տղամարդ եմ: Տղամարդ բառը շեշտեց, որովհետև ուզում էր հասկացնել, որ ես վախկոտ եմ: Իրաւունք ունէր, որովհետև ես իսկապէս վախկոտ եմ: Վախկոտ եմ վճռական վայրկեաններին: Մարդ նախ չպիտի դիմէ վատ բանի, բայց որ դիմեց, պէտք է մինչև վերջը գնայ: Թող անկումը կատարեալ լինի, այդ աւելի լաւ կըլինի: Այլապէս կիսաճանապարհին կանգ առնելով՝ բանը չի դըրւում. վատութիւնը կըմնայ վատութիւն, և այլևս ոչ մի բանով, ոչ մի զղջումով չես կարող վերականգնել քո նախկին բարի անունը: Ամանը վայր ընկաւ կոտրուեց, և հազար կոծկիր, այլևս չես կարող ամբողջացնել... Ես դեռ լաւ չեմ ուշքի եկել. մտքերս ու զգացումներս խառնւում են իրար. չեմ իմանում ինչ եմ մտածում, ինչ եմ զգում: Բայց մի բան այնպէս պարզ է ինձ համար, ինչպէս երբէք. ես հրէշ եմ, սարսափելի մի հրէշ, որի մէջ ամենամաքուր, ամենաքնքոյշ, ամենանուիրական զգացումը լծորդւում է ամենակեղտոտ, ամենաբիրտ, ամենազզուե-

լի բնազդի հետ... Սոխակը վարդի մէջ աղբ է որոնում,— սրանից էլ աւելի անօրմալ բա՞ն... Ես հիւանդ եմ, բարոյական հիւանդ, խիստ վտանգաւոր հիւանդ... Այս ես չգիտէի, այս գիծն ես նոր գտայ իմ մէջ... Եւ այս բանը առաջին անգամ զգացի այնտեղ... դռան մօտ... Նոյն այն վայրկեանին, երբ հարցրիք ապշած՝ «Մի՞թէ այդ դուք էք...»: Դժբաղդաբար, այդ ես էի... Նոր հասկացայ, որ ես էի... և այս րոպէին ինչ չէի տալ, միայն թէ այդ ես չլինէի...

Բաղամեանը լռեց և, խիստ յուզմունքի մէջ, ձեռքի ափով ամուր շփեց տաքացած ճակատը:

Մանէն քայլում էր նրա հետ կողք-կողքի, բայց նրանից մի քիչ հեռու պահելով իրեն: Նա վայրկեան առ վայրկեան փակում էր աչքերը փայլատակումների ժամանակ և ուշիուշով ականջ էր դնում Բաղամեանի խօսքերին, որոնցից շատերը, սակայն, խլանում էին որոտի ձայների մէջ:

—Ա՜խ, այսօրուայ օրը, այս չարաբաստիկ օրը,—հառաչեց Բաղամեանը հոգեկան ծանր տանջանքով:—Եթէ կարողանայի մոռանալ և մոռացնել տալ... Որ մտածում եմ, թէ ինչքա՞ն բան և ինչ կորցրի այս մի օրում նախ առաւօտեան՝ ձեր տանը, յետոյ այժմ՝ իմ տանը... Այս ինչ չար ոգի էր, որ եկաւ փորձեց ինձ այսօր և խլելով ինձնից այն բոլորը, ինչ որ լաւ էր և մաքուր, թա-

ղեց իմ մէջ միայն տիղմ և տագնապանութիւն... Ես ատում եմ ձեր եղբօրը, բայց... չեմ կարող չյարգել նրան: Նա խելօք մարդ է. այնպէս թափանցում է մարդու ներքինը... և շիտակ է, ամեն բան ասում է մարդու ճակատին: Նա շատ բան ասաց ինձ, բայց և շատ բան չասաց անշուշտ... Երևի, խնայում էր: Ես այժմ կըհամբուրէի նրա ձեռքն ու շրթունքները, եթէ այս րոպէին մօտս լինէր, պինդ ապտակէր ինձ, այնպէս պինդ, որ աչքերիցս կայծեր ցայտէին, և ասէր, որ ես...պիղծ մարդ եմ, շո՛ւն եմ... որ ես սրբութեանը մօտեցել եմ անմաքուր ձեռքերով, պժգալի զգացումներով, գարշելի ցանկութիւններով... Մինչդեռ ես ա՛յդ չէի ուզում, երկինքը վկայ, Մանէ, ա՛յդ չէի ուզում: Ես ուզում էի ձեզ դարձնել իմ Լաուրան, իմ Բէաթրիչէն, իմ Մադոննան... Օ՜ թող կայծակ ընկնի գլխիս, եթէ այսուհետև...

Նա յանկարծ լռեց զարհուրանքով, կանգ առաւ և աչքերը փակեց ակամայ: Տեղնուտեղը քարացաւ նաև Մանէն, բայց նա չիմացաւ՝ աչքերը փակե՞ց, թէ չեց. միայն տեսաւ, որ շրջակայքը յանկարծ լուսաւորւեց արտասովոր կուրացուցիչ լոյսով և այդ լոյսն իսկոյն էլ հանգաւ, որից յետոյ փողոցն այնպէս մթնեց, որ Մանէին թուացթէ ինքը յանկարծ կուրացաւ: Անշարժ օդի մէջ տիրեց սպասողական զարհուրելի ան-

դորրութիւն: Մի քանի վայրկեան՝ յետոյ երկինքը յանկարծ այնպէս ճայթեց, որ կարծես փուլ եկաւ, և ամբողջ քաղաքը ղրնգղրնգաց ահագնադղորդ ձայներով: Ըստ երևոյթին, մօտիկ, շատ մօտիկ կայծակ ընկաւ: Մանէն մեքենայաբար նայեց Բաղամեանին, կարծես ստուգելու համար, թէ կայծակն արդեօք նրա գլխին չընկա՞ւ: Բաղամեանը կանգնած էր գլուխը բաց, մազերը ցիր ու ցան և նայում էր երկնքին, զարհուրանքից կաշկանդուած: Ելեքտրականութեամբ յագեցած անշարժ տաք օդի մէջ մի զով հով անցաւ: Անձրևի մի խոշոր կաթիլ, սառն ու պինդ, դիպաւ Մանէի ձեռքին, որով կզակի մօտ բռնած էր գլխին գցած շալի ծայրերը: Նա ցնցուեց և յանկարծ առաջ նետուեց:

Բաղամեանն ուշքի եկաւ այն ժամանակ, երբ Մանէն արդէն փախչում էր, նրանից բաւական հեռացած: Նա վազեց Մանէի ետևից: Այժմ նա ոչինչ չէր մտածում և ոչինչ չէր ցանկանում. մտածում և ցանկանում էր միայն, որ որքան կարելի է՝ շուտ տուն հասցնի Մանէին, քանի հեղեղը չէր սկսուել: Շուտով տուն հասնելու վրայ էր մտածում նաև Մանէն, որ շնչասպառ վազում էր նրա առջևը: Տանից նա դուրս էր եկել այն ժամանակ, երբ սկեսուրն ու ծառաները քնած էին արդէն. դուրս էր եկել ծածուկ, դուռը փակել էր բանալիով և այդ բանալին այժմ շուա-

ջուռ շօշափում էր շրջազգեստի գրպանի մէջ, ստուգելու համար, թէ խօ չի՞ կորցրել։

Կարծես հսկայական մի ձեռք ուժգին թափով կտրատուած գծեր էր քաշում սև ամպերի մէջ րոպէ առ րոպէ, և փողոցները, տները, ամեն բան՝ ինչ որ երևում էր աչքին, լուսաւորւում էին վայրկենական կուրացուցիչ լոյսով։ Երկիրը դողում և ահարկու արձագանք էր տալիս երկնքի սպառնագին որոտումներին։ Անձրևի խոշոր կաթիլները յաճախացան և լսելի կտկտոցով զարկւում էին գետնին կէնտ ու կունտ։ Հեռուից լսւում էր ինչ-որ խուլ շրշիւն,—երևի հեղեղն էր, որ մօտենում էր։ Գետնից սկսեց բարձրանալ արևից այրուած փոշու ծանր հոտ, որից օդն աւելի ևս ծանրացաւ։

Բաղամեանը նորից հաւասարուեց Մանէին և աչքերը ման էր ածում չորս կողմը, որ մի կառք գտնի, բայց ամայի փողոցներում շուն էլ չէր հաչում։ Տների լուսամուտները փակուած էին պինդ և շատ պատուհաններում ճրագ չէր երևում։ Փողոցային լապտերներն էին միայն, որ ցից-ցից կանգնած էին աջ ու ձախ մեկուսի և որբացած։ Փողոցի անկեան մանրավաճառը շտապով փակում էր խանութը։ Հարևան փողոցից գրգռալով դուրս եկաւ գլուխը ծածկած մի կառք և մտաւ միւս փողոցը։ Բաղամեանը կանչեց, բայց կառապանը կամ չլսեց, կամ չլսելու տուեց, կամ թէ ուրիշ մարդ էր տանում։ Նրանց

կողքով արագաքայլ անցաւ մի մարդ անձրևակալի տակ պատսպարուած։ Մի ուրիշ մարդ կանգնած էր տներից մէկի բակի դրան առաջ և ուժգին զարկում էր երկաթի մուրճը. մուրճի հարուածները զօրեղ արձագանք էին տալիս ներսը՝ բակում և դուրսը՝ փողոցում։

Իրենց փողոցի անկեանը Մանէն կանգ առաւ։

—Շնորհակալ եմ, ետ դարձէք, այժմ ես մենակ կըգնամ,—ասաց նա արագ, շնչասպառ և ուզում էր հեռանալ, բայց Բաղամեանը բռնեց նրա ձեռքից և պահեց։

—Սպասեցէք։ Մի խօսք… թերևս վերջինը,—կանչեց նա յուսահատական աղերսանքով։ —Եթէ մեռելները զգալիս լինէին այն միջոցին, երբ նրանց գերեզման են դնում, ինձ թւում է, թէ նրանք պիտի զգան ճիշտ նոյնը, ինչ որ ես եմ զգում այս րոպէին, երբ դուք հեռանում էք։ Եւ ես մեռելի պէս անտրտունջ հնազանդւում եմ վիճակիս։ Բայց ինչ էլ որ մտածելու լինիք իմ մասին, Մանէ, աղաչում եմ ջնջեցէք այս մի օրը, այս մի հատիկ օրը ձեր յիշողութիւնից, և ես…

Մի նոր ահագնագոռ որոտ խլացրեց Բաղամեանի վերջին խօսքերը։ Մանէն ձեռքը խլեց նրա ձեռքի միջից և շարունակեց վազել իրենց տան փողոցն ի վեր։

Բաղամեանը տեղնուտեղն արձանացաւ և դիտում էր նրա ետևից։ Գիշերային խաւա-

րի մէջ Մանէի մութ ստուերը տեսաւ միայն մի-երկու անգամ երկնքի վայրկենական փայլատակումների ժամանակ։ Այնուհետև այդ ստուերը հալուեց ձուլուեց խոլ խաւարի հետ։ Այլևս ոչինչ չէր երևում։ Երեւում էր միայն փողոցի ծայրում վառուած լապտերի պղտոր, թախծալի լոյսը, որի մէջ կատաղի անձրևը միալար թեք գծեր էր թափում ներքև շեշտակի։

XIV

Մի բան, որ սաստիկ դող գցեց Մանէի մարմինը, այդ այն էր, որ իրենց տան դիմացը գտնուող տան պատի և փողոցով անցնող հեռախօսի լարերի վրայ լոյսի մի շերտ նկատեց։ Այդ լոյսն ընկնում էր իրենց տան հիւրասենեակի պատուհանից։ Մի րոպէ կանգ առաւ ակամայ և զգաց, որ ծնկները ծալւում են։ Գողե՞ր են մտել արդեօք... ամուսի՞նն է վերադարձել անակնկալ... Թէ՞ պատահաբար իմացել են իր բացակայութիւնը և ոտի են կանգնել...

Մանէն մայթից անցաւ փողոցի մէջ տեղը և սաստիկ թուլացած ոտներով սկսեց առաջ գնալ խորթուբորթ սալայատակով, որի երեսն արդէն ծածկուել էր անձրևի ջրերով։ Երկիւղով չռած աչքերը մի վայրկեան անգամ չէր հեռացնում լուսաւորուած պատու-

հանից, կարծես ուզում էր ստուգել, թէ իր ենթադրութիւններից որն էր ճիշտ։

Մի տաս-քսան քայլ էր մնում, որ հասնէր իրենց տան դռանը, երբ լուսաւորուած պատուհանի առաջ, որի փեղկերը բոլորովին բաց էին, մարդկային մի ուրուագիծ տեսաւ։ Ուրուագիծը կանգնած էր անշարժ և լոյսի ֆոնի մէջ դրսից նմանում էր չինական ստուերի։ Նա նայում էր դէպի դուրս։ Կարմրաւուն անփայլ մի կրակ վառւում և հանգչում էր նրա բերանին. ըստ երևոյթին, ծխախոտ էր ծխում։ Մի քանի քայլ էլ առաջ գնալով, նա յանկարծ ճանաչեց պատուհանի մօտ կանգնած ուրուագիծը։ Սկզբում շունչ առաւ սաստիկ թեթևացած, յետոյ կատաղի մի զայրոյթ լարեց նրա թուլացած մկանունքները։ Նորից արագացրեց քայլերը և այն վայրկեանին, երբ դռան առաջ սալայատակից մայթն էր բարձրանում, պատուհանի առաջ կանգնած ստուերը, ըստ երևոյթին, տեսաւ նրան և իր ամբողջ իրանով ներքև, դէպի փողոց խոնարհուեց։

—Մանէ՞... այդ դու ե՞ս,—շշունջով կանչեց Վահանը երկրորդ յարկի բարձրութիւնից։

Մանէն չպատասխանեց, ջղային արագութեամբ գրպանից հանեց բանալին, դուռը բաց արեց, մտաւ և բարձրացաւ վերև միջանցքի իրեն ծանօթ մութ սանդուղքով։

Հիւրասենեակի դուռը նրա առաջ բաց արեց Վահանը՝ սիգարը բերանին։

Մանէն մտաւ և գլխից թափեց անձրևից թրջուած շալը։

Վահանը, շատ հանգիստ, դուռը փակեց և լաւ նայեց քրոջը։ Քրտինքը խոշոր կաթիլներով գլորւում էր Մանէի կարմրատակած այտերի վրայով. մազերը խճճուել և կպել էին քրտնած ճակատին. նա հազիւ էր շունչ քաշում։ Բաց պատուհանից սկսել էր սառը քամի փչել։ Վահանը մօտեցաւ և ծածկեց փեղկերը։ Նրա բոլոր շարժումների մէջ նկատւում էր մի առանձին հանգարտ զգուշութիւն։

—Զգուշացիր, չմրսես,—ասաց նա։—Գնա շորերդ փոխիր։

Մանէն անհամբերութեամբ լի աչքերը փայլեցրեց նրա վրայ, ուզում էր հեռանալ դէպի իր սենեակը, բայց յանկարծ կանգ առաւ և նայեց եղբօրը։

—Թէ՞ այս գիշեր գնում էիր գիւղը,—ասաց նա։

—Գնում էի, բայց էլ չգնացի։ Կայարանից ետ դարձայ։

—Ինչո՞ւ։

—Բաղամեանի հետ խօսելու։

Վահանը նստեց և, գլուխը բարձրացնելով, ծուխը բաց թողեց բերնից դէպի առաստաղը։

Մանէն նայում էր նրա անվրդով դէմքին և զգում էր, որ ձեռքերն ու շրթունքները նո-

րից սկսում են դողալ անզօր զայրոյթից։

—Յետո՞յ,—հարցրեց նա։

—Յետոյ... գնացի և խօսեցի։ Խօսելուց յետոյ գնացի հիւրանոց, ճամպրուկս թողի և եկայ քեզ մօտ, որովհետև առաւօտեան գնացքով անպատճառ պիտի գնամ, այնպէս որ այլևս ժամանակ չէի ունենալ քեզ տեսնելու, իսկ քեզ տեսնել անպատճառ ուզում էի։ Զանգակը մի-երկու անգամ քաշեցի, դուռը բաց չարին։ Տեսայ, որ ոչ մի տեղ ճրագ չկայ և մտածեցի, որ ամենքդ քնած էք արդէն։ Մտայ բակի դռնից, ծառային զարթեցրի, և նա ներս բերեց ինձ։ Մտայ ննջարանդ, որ զարթեցնեմ քեզ, չկայիր։ Գրեթէ երկու ժամ է, որ սպասում եմ քեզ։ Այսպիսի պատիժ կեանքումս չեմ կրել։ Քունըս շան պէս տանում էր, բայց զսպում էի ինձ։ Տէրը բարի տայ Եղիա մարգարէին. լուսամուտի առաջ կանգնած՝ ականջ էի դընում նրա կառքի գռգռոցին և մտածում՝ «բաղդաւո՛ր մարդ. դու այդտեղ վերևը ըղբօսնում և ձիերիդ պայտերի տակից հուր ու կայծակ ես թափում, բայց իսկի մըտածո՞ւմ ես, թէ այստեղ՝ այս մժղուկների աշխարհում ինչ ահաւոր դրամաներ են կատարւում...»։ Մի քիչ էլ որ ուշանայիր, պիտի գայի քո ետևից։

—Ո՞ւր,—հարցրեց Մանէն զարմանքով։

—Բաղամեանի տուն։

Մանէն ցնցուեց։

—Դու ի՞նչ գիտէիր, թէ ես նրա մօտ էի:

Վահանը ուսերը թօթուեց:

—Ուրիշ որտեղ կարող էիր լինել: Երբ որ տեսայ տանը չես, իսկոյն յիշեցի այսօրուայ մեր խօսակցութիւնը: Դու նրան վիրաւորել էիր, այդ պատճառով չէիր կարող չգնալ ներողութիւն խնդրելու:

Մանէն ետուետ մնաց պաշարուած մի տեսակ սնահաւատ երկիւղով այն սրատեսութեան վերաբերմամբ, որ ցոյց էր տալիս Վահանը: Կարճ ժամանակ նա նայում էր եղբօրը վերին աստիճանի ապշած, յետոյ յանկարծ առաջ նետուեց և շշնջաց զայրոյթից դողացող ձայնով.

—Լսիր... Ուրեմն դու լրտեսո՞ւմ էիր... Ուրեմն դեռ չէ՞իր գնացել... Թագնուե՞լ էիր այնտեղ... լսո՞ւմ էիր մեր խօսակցութիւնը...

Վահանն ուզեց ծիծաղել, բայց, տեսնելով քրոջ զսպած զայրոյթից փայլող աչքերը, զսպեց իրեն և ասաց տարակուսանքով.

—Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում: Ես ի՞նչ գիտէի, թէ դու այնտեղ ես, որ թագնուէի և լրտեսէի:

—Հապա որտեղի՞ց գիտես, թէ ես գնացել էի ներողութիւն խնդրելու: Այս րոպէիս դու կրկնեցիր ճիշտ նոյն բառերը, ինչ որ ես ասացի Բաղամեանին: Ո՞րտեղից, ինչի՞ց գիտէիր այդ:

—Ասացի, որ մեր այսօրուայ խօսակցութիւնից,—այս անգամ արդէն ծիծաղեց Վա-

հանը:—Եւ այդ բանը պէտք է վերագրես իմ հոգեբանական հոտառութեանը, և ոչ թէ լրտեսական ընդունակութեան, որ ես չունիմ: Եւ ի՞նչ կարիք կայ լրտեսելու, քանի որ ինքդ ոչինչ չես ծածկում և ամեն բան խոստովանում ես ինձ, չնայելով որ... խիստ չարացած ես ինձ վրայ: Ասենք՝ ծածկելու ընդունակ էլ չես, որովհետև չափազանց անկեղծ ես: Բնաւորութիւնդ այն մարդկանց բնաւորութիւնից է, որոնք մարդ սպանելուց յետոյ, փոխանակ փախչելու, գնում են ոստիկանատուն և ասում ուղղակի՝ «Ես մարդ սպանեցի, բռնեցէք ինձ»: Այս գիշեր իմ այստեղ գալը և քո այնտեղ գնալը պատահական մի զուգադիպութիւն է, և ոչ թէ ես առաջուց գիտէի, թէ դու այնտեղ պիտի լինիս, և երկաթուղու կայարանից ետ դարձայ յատկապէս քեզ լրտեսելու համար, ինչպէս, երևի, կարծում ես դու: Լրտեսել... Ո՞րտեղից հնարեցիր, չեմ հասկանում: Փառք Աստծու, դու տեսար և նոյն իսկ յանդիմանում էիր ինձ, որ ես անտարբեր եմ և հէնց սկզբից չէի ուզում խառնուել այս գործին: Եւ այդպէս էլ պիտի հեռանայի և հեռանում էի, բայց կայարան գնալիս մտածեցի, որ այդքան անտարբերութիւնն արդէն դատապարտելի է, մանաւանդ այն բանից յետոյ, որ անցեալ օր ինքդ էիր խնդրում ինձ, որ ազատեմ քեզ այդ անդունդից: Մասամբ խիղճս հանգստացնելու և մասամբ եղբայ-

լական պարտքս կատարելու համար ետ դարձայ և ուղղակի գնացի Բաղամեանի մօտ։ Առաջարկեցի, որ ձեռք վերցնի քեզնից։ Ուրիշ ի՞նչ կարող էի անել։ Նա վիրաւորուեց և վիրաւորեց ինձ։ Ասաց, որ ես իրաւունք չունիմ խառնուելու այս գործին։ Շատ ճիշտ նկատողութիւն։ Ես լինէի նրա տեղը, նոյնը կըպատասխանէի։ Այնպէս, թէ այնպէս, կեանքիս մէջ առաջին անգամ ուզեցի դեկավարուել զգացմանս թելադրանքով և... քիթս ջարդեցի։ Բայց մի անգամ որ խրուել եմ այս ցեխի մէջ, ուզում եմ մինչև վերջը խրուել և այնպէս հեռանալ։ Լսիր ինչ եմ ասում։

Վահանը վերկացաւ և մօտեցաւ քրոջը։

—Ինչքան էլ որ դու բնաւորութեանդ համաձայն հետևողաբար ես վարուել,—ասաց նա լրջօրէն,—նախ չհաւատալով այն նամակին, յետոյ վանդելով նրան, յետոյ զղջալով, որ այդպէս խիստ ես վարուել, այնուամենայնիւ չէի կարծում, և չէի կարող կարծել, թէ այդպէս շուտ և առանց դրութիւնդ կշռադատելու, առանց հետևանքների մասին մտածելու, առանց նոյն իսկ կասկածներդ ստուգելու, վեր կըկենաս և կըգնաս նրա մօտ, այն էլ... գիշերով։ Եթէ այդ բանը վճռել ես անել և արդէն արել ես, կընշանակէ՝ այլևս այն Մանէն չես, որ անցեալ օր առաջս չոքած աղերսում էր, որ փրկեմ իր պատիւը... Այդպէ՞ս է, թէ ոչ։

Մանէն սաստիկ գունատուեց և զգաց, որ լեզուն ցամաքում է բերանում։

—Ի՞նչ ես ուզում դրանով ասել,—շշընջաց նա։

—Հասկացիր, էլի՛, ինչ որ ուզում եմ ասել...

Մանէն եղունգները ցցեց ձեռքերի ափերի մէջ, ուսերը սաստիկ վեր քաշեց, ներքին շրթունքը ձախ կողմից առաւ ատամների մէջ, ընկաւ բազկաթոռի վրայ և սկսեց հեծկլտալ ջղային ուժգին ցնցումներով։

—Անխի՛ղճ... անաստուած... մի՞թէ կարելի է այդպէս վիրաւորել,—արտասանեց նա հեծկլտանքների միջից։

Վահանը կարճ ժամանակ նայում էր նրան լուռ, յետոյ հանդիստ տարակուսանքով թոթուեց ուսերը, սիգարը բերանը դրեց, ձեռքերը կոխեց գրպանները և հեռացաւ դէպի լուսամուտը։

—Ես մեղաւոր չեմ,—ասաց նա ապակու միջից նայելով դէպի դուրս։—Ինքդ ես առիթ տալիս այդպիսի կասկածների։ Կէս գիշերին և ծածուկ գնալ...

—Լսի՛ր,—աղաղակեց Մանէն, վեր թռչելով տեղից։—Ինչպէ՞ս դու համարձակւում ես... ինչպէս ես համարձակւո՞ւմ... Եղբայրս ես, այո՛, դժբաղդաբար. բայց մի որոշ սահման կայ, որից դէնն անցնելու իրաւունք չունիս... չեմ թոյլ տալ, թէկուզ եղբայրս չէ, Աստուածս էլ լինիս... Լսո՞ւմ ես...

Վահանը վախեցած նայեց դռներին, ոտ-
ների ծայրերի վրայ արագօրէն մօտեցաւ
քրոջը և շշնջաց.

—Անմիտ, ի՞նչ ես բղաւում։ Ուզում ես ամբողջ տունը ոտի՞ կանգնեցնել։ Փառք Աստըծու, այնպէս գնացել և եկել ես, որ ոչոք չի իմացել. հիմա...

—Ես ոչոքից չեմ վախենում... հասկանո՞ւմ ես, ոչոքից,—շարունակեց աղաղակել Մանէն կատաղած։—Եթէ մի բան կայ, որից ես վախենում եմ, այդ իմ խիղճն է միայն. իսկ խիղճս այս րոպէին այնպէս հանգիստ է, ինչպէս, Աստուած տայ, քոնը հանգիստ լինի...

—Մանէ, ի սէր Աստծու...

—Լռի՛ր, լռի՛ր... Ես իրաւունք չեմ տալիս քեզ խօսելու... Աւելի լաւ է, ինքս իմ բերանով կըյայտնեմ ամենքին, ամբողջ աշխարհին, թէ ո՛րտեղ էի, քան թէ թոյլ կըտամ քեզ, որ ա՛յդ եղանակով խօսես ինձ հետ... Ես ոչոքից չեմ վախենում... լսո՞ւմ ես, չե՛մ վախենում, չե՛մ վախենում...

Տեսնելով որ իր յորդորներն աւելի են գրգռում քրոջը, Վահանը խոհեմութիւն համարեց լռել, հեռացաւ նորից դէպի պատուհանը և բաց արաւ մի փեղկը։ Դրսից ներս թափանցեց հեղեղի շրփշրփոցը և քամու ուժգին մի հոսանք անձրևի խոշոր կաթիլներ շպրտեց նրա երեսին ցնցուղի պէս։ Նա

շտապեց փակել փեղկը, և շրփշրփոցը խլացաւ։

—Ի՞նչ ես ուզում ինձնից։ Ինչո՞ւ ինձ այսպէս տանջում, չարչարում ես,—շարունակեց Մանէն։—Մի ամիս չկայ, որ այստեղ ես, և բոլոր արիւնս տակնուվրայ ես անում գրեթէ ամեն օր։ Ես կարօտ մնացի մի լուրջ, մի ջերմ, մի սրտացաւ խօսքի։ Շարունակ ծաղր ու հեգնանք, երբ ես լուրջ խորհրդի էի կարօտ, շարունակ անտարբերութիւն ու չէզոքութիւն, երբ ես կարօտ էի եղբայրական ջերմ սիրոյ և հոգացողութեան. իսկ այժմ անտեղի ու անտանելի միջամտութիւն, երբ ես ատում եմ քեզ և... զզւում քեզնից։ Այո՛, ատում և զզւում, որովհետև ապացուցեցիր, որ ուրիշ բանի արժանի չես։ Պարզ մարդ ես, ինչո՞ւ պարզը չես ասում. կայարանից վերադարձել ես ո՛չ թէ նրա համար, որ եղբայրական պարտքդ կատարես և խիղճդ հանգստացնես, այլ նրա՛ համար, որ հարիւր, մի ողորմելի՛ հարիւր ֆրանկիդ պարտքը սաղացնես...

—Այդ խօ նա ասաց,—նկատեց Վահանը, դիտելով, թէ ինչպէս անձրևի կաթիլները ջրային ցանցեր են կազմում պատուհանի ապակիների վրայ և արագօրէն թորում ներքև։

—Այդ ես էլ եմ ասում, որովհետև տեսայ, թէ ինչ մարդ ես դու։ Մինչև անգամ քիչ մնաց, որ նա... թքէր քո երեսին, և դու...

ոչինչ... որովհետև հարիւր ֆրանկդ նաղդացրիր: Ամօթ քեզ:

Վահանը հանգիստ դարձաւ և ժպտալով նայեց քրոջ յուզմունքից վառուող աչքերին:

—Իսկ խուրդա-փարաների օդային ճանապարհորդութի՞ւնը,—հարցրեց նա:—Իսկ ապտա՞կը: Չէ՞ որ նա ինձ ապտակ էլ տուեց, իսկական ապտակ: Կամ, գուցէ, մոռացե՞լ է քեզ իր այդ քաջութիւնն էլ յայտնել:

Մանէն զզուանքով ու ատելութեամբ նայեց եղբօր ծիծաղից դողդողացող կախ ընկած կզակին և, առանց այլևս մի խօսք անգամ արտասանելու, դիմեց դէպի իր սենեակը, բայց կիսաճանապարհին կանգ առաւ յանկարծ և դարձաւ դէպի Վահանը.

—Նպատակդ ի՞նչ է, որ այս կէս-գիշերին եկել ես ինձ մօտ,—հարցրեց նա այս անգամ հանգիստ խստութեամբ:

—Նպատա՞կս...

Վահանը նայեց սիգարի ծայրին, և նրա դէմքը լուրջ արտայայտութիւն ստացաւ:

—Ահա թէ ինչ էր նպատակս: Կարող ես ինձ ատել, զզուել ինձնից, բայց, խնդրում եմ, լսիր ինձ հանգիստ, որովհետև այս րոպէին ամենևին տրամադիր չեմ կատակ անելու: Կայարան գնալիս ես լուրջ կերպով կշռադատեցի դրութիւնդ և տեսայ, որ, յիրաւի, շատ վտանգաւոր ճանապարհի վրայ ես: Եթէ քո այդ տրագիքական սիրոյ մէջ կայ մէկը, որ չարաչար պիտի տուժի,—

մտածում էի ես և այս րոպէին էլ նոյնն եմ մտածում,—այդ ոչ ամուսինդ կըլինի և ոչ Բաղամեանը, այլ դու և միմիայն դու: Եւ ինչո՞ւ չի պատժիլ քեզ այնպէս խիստ, ինչպէս դու ինքդ քեզ, որովհետև, ինչպէս առաջ էլ ասացի, դու այն բնաւորութիւններիցն ես, որոնց դատաւորն ամենից առաջ իրենք են լինում և ամենախիստ, ամենաանողոք դատաւորը: Բաղամեանին չսիրել չես կարող, քանի որ միանգամ արդէն սիրել ես,—այդպէս է երևում,—իսկ ամուսնուդ դաւաճանել առաւել ևս չես կարող, քանի որ այդպէս է քո տարօրինակ խառնուրդը: Եւ ահա պատրաստ է այն տրագեդիան, որի ցաւալի վախճանը պարզ է: Մի կողմից սէր, միւս կողմից պարտքի ստոիկեան գիտակցութիւն: Պայքարը հեշտ չէ: Եւ յաղթանակը ո՛ր կողմն էլ լինի, մէջ տեղ ճխլուողը դու պիտի լինիս: Փրկութիւն չկայ քեզ համար ո՛չ մի դէպքում: Այս խորհրդածութիւններն էին անցնում գլխովս, երբ գնում էի կայարան: Եւ երբ պարզորէն պատկերացրի քեզ սպասող վախճանը, զգացի, որ իմ քոյրն ես, իմ հարազատը և ահագին մեղք պիտի լինիմ բարձած խղճիս վրայ, եթէ քեզ թողնեմ մենակ և գործ չդնեմ ինձնից կախուած ամեն միջոց այդ վախճանը քեզնից հեռացնելու համար: Այդ պատճառով ես դարձայ և հարկ համարեցի նախ գնալ Բաղամեանի մօտ: Դժբաղդաբար, մենք չկարողացանք հասկաց-

նել իրար: Իմ միջամտութիւնը նա ընդու-նեց իբրև անձնական վիրաւորանք: Նրա մէջ խօսեց աւելի վիպասանը և հրապարակա-խօսը, քան թէ կեանքի մարդը: Նա յամա-ռեց: Իսկ ես թէև բնաւորութեամբ ամենև-ւին յամառ չեմ, բայց երբ յամառի եմ հան-դիպում, նրանից աւելի յամառ եմ դառնում: Ազնիւ խօսք եմ տալիս քեզ. այդ միջոցին հարիւր ֆրանկի մասին այնքան էի մտա-ծում, որքան այս րոպէին դու մտածում ես, թէ պապուասների մէջ կա՞յ արդեօք դրամի գաղափարը: Հարիւր ֆրանկի պատմութիւնը մէջ ընկաւ բոլորովին պատահական կերպով: Նա պինդ բռնեց այդ միջադէպից և իսկոյն վճարեց իր պարտքը հոգեբանական այն պարզ հասկանալի պատճառով, որ կարողանայ ան-կախ և ազատ ախոյեան հանդիսանալ ինձ դէմ և մասամբ էլ նուաստացրած լինի ինձ իր առաջ: Այդպէս է մարդկային բնաւորու-թիւնը. պարտքը վճարելիս մարդ միշտ կար-ծում է, թէ ինքն աւելի մեծահոգի և ազնիւ է, քան թէ նա, ումից որ պարտք է վերց-րել: Ես ինձ նուաստացած չզգացի, ի հար-կէ: Իսկ երբ մանր դրամները շպրտեց, քիչ մնաց, որ ինքս ինձ կորցնէի, և լաւ է, որ չկորցրի, որովհետև այս րոպէին նա հիւան-դանոցումը կլինէր, իսկ ես ոստիկանա-տանը: Ինչ վերաբերում է այն բանին, որ ուզում էր անկախ և ազատ ախոյեան հան-դիսանալ, այդ էլ միտք չունէր. որովհետև

Այլևս ոչ մի կասկած, ոչ մի տարակուսանք, հետևաբար և ոչ մի յոյս: Վարագոյրն այժմ բաց էր, և այն, ինչ որ նա մինչև այժմ տեսնում էր այդ վարագոյրի ետևը միայն անորոշ գծերով, այժմ մի անգամից ներկա-յացաւ նրան իր ամբողջ պարզութեամբ:

Հեղինէն յուզուած անցուդարձ էր անում սենեակում փոքրիկ արագ քայլերով և բեր-նից դուրս թռցրած կցկտուր բառերով կըրկ-նում էր, թէ բժիշկները ոչինչ չհասկացան, թէ բոլորի քունն էլ տանում էր, թէ ամենքն էլ շտապում էին, որ շուտով գնան քնեն:

Մանէն քարացած խոշոր աչքերով նայում էր ընկերուհուն, մտածում էր, թէ ինչպէս է, որ այնքան ծանր պենս-նէն չի ընկնում նրա փոքրիկ քթից և, նրան լսելու տեղ, ականջ էր դնում հիւանդի սենեակից լսուող հոր հազի ձայներին, որոնք խուլ արձագանք էին տալիս մէջ-գիշերային անդորրութեան մէջ: Այժմ աւելի պարզ ու որոշակի, քան այնտեղ՝ հիւանդի սենեակում, նրա առջև պատկերանում էին Բաղամեանի փակ աչ-քերը, որոնք կիսախաւարի մէջ թւում էին թէ փակ չեն, այլ բաց ու դատարկ՝ ան-դունդի նման մութ ու խոր խոռոչներով, որոնց միջից այժմ նայում էր ինքը մահը:

Օդը ծանր էր և խաղաղ: Ժամանակն անց-նում էր Մանէի համար ինչ-որ սարսափելի սպասողութեան մէջ, բայց նա հանգիստ էր և ոչ մի բանից չէր վախենում: Նրան նորից

տիրել էր միտքն ու զգացումները թմրեցնող այն անդորրութիւնը, որի մէջ մարդ ապրում է մի տեսակ վերասլաց կեանքով, առանց զգալու իր ֆիզիքական գոյութեան ծանրութիւնը:

Մի կառք, դղրդացնելով խաղաղ փողոցը, մօտեցաւ և կանգ առաւ պատուհանի տակ: Հեղինէն մօտեցաւ պատուհանին և նայեց ներքև: Մանէն անտարբեր հետաքրքրութեամբ նայեց նրա հաստ մէջքին:

—Կարծեմ եղբայրդ է, Մանէ,—խիստ անհանգստացած շշնջաց Հեղինէն, շտապով հեռանալով պատուհանից:

Մանէն նստած էր արձանի պէս: Նրա դէմքի վրայ ոչ մի գիծ չշարժուեց:

Վահանը մտաւ իր լայն և հուժկու քայլերով: Սանդուխքներից արագ բարձրանալուց քրտնել և հեւհեւում էր սաստիկ: Քրոջը տեսնելուն պէս կանգ առաւ ակամայ: Պարզ երեւում էր, որ եկել էր քրոջ ետեւից, բայց Մանէի դէմքը լաւ դիտելուց յետոյ ոչ մի խօսք չասաց այդ մասին և դարձաւ Հեղինէին.

—Անցնում էի այստեղ. ասացի մէկ մըտնեմ տեսնեմ ինչպէս է Բագամեանը,—ասաց նա, ինքն էլ զգալով, որ շատ անշնորհք պատրուակ է առաջ բերում իր անժամանակ այցելութեան իսկական նպատակը քրոջից ծածկելու համար:—Կարօտ եմ տեսնել նրան:

Հեղինէն իսկոյն հասկացաւ նրա մանեօվ-

րը և նրան ներս տարաւ հիւանդի սենեակը:

—Դուք Մանէի համար էք եկել, չէ՞,—հարցրեց նա:

—Այո:

—Գիտէի՞ք, որ այստեղ է:

—Համոզուած էի, որ այստեղ կըլինի:

—Իսկ Սանթրոսեանը:

—Ես քնած էի, որ նա եկաւ ինձ մօտ հիւրանոց. զարթեցրեց և ասաց, որ Մանէն տանը չէ և չի յայտնել, թէ ուր է գնացել: Կարծում էր, թէ ինձ մօտ կըլինի: Չծածկեցի. ասացի, որ այստեղ կըլինի:

—Ի՞նչ էք ասում,—շշնջաց Հեղինէն սարսափած:

—Վնաս չունի: Խաբելն աւելի վատ կըլինէր: Բագամեանը նրա ազգականն է և մի տեսակ տանու մարդ էր, այնպէս որ Սանթրոսեանը ուրիշ բան կասկածել չի կարող: Ես տեսայ, որ չկասկածեց և նոյն իսկ չզարմացաւ, որ ասացի, թէ Մանէն այստեղ կարող է լինել: Ուզում էր մինչև անգամ ինձ հետ գալ ի դէպ հիւանդին էլ տեսնելու, բայց չթողեցի: Որ նա երբէք էլ ոչինչ չի կասկածիլ—դրան ես համոզուած եմ: Ցաւն այս է, որ Մանէն ինքը չմատնի իրեն: Այս րոպէին որ նայեցի նրա աչքերին, վախեցայ: Նա ընդունակ է ամեն բան անելու:

—Ես էլ այդ սարսափի մէջ եմ և մինչև այժմ չկարողացայ համոզել, որ գնայ: Գի-

տե՞ք ինչ ասաց ինձ. ասաց, որ ամեն բան ինքը կըյայտնի ամուսնուն։

—Ես հաւատում եմ, որ այդպէս էլ կանի։

—Բայց դա սարսափելի բան կըլինի։ Ի սէր Աստուծոյ, այնպէս արէք, որ այդ յիմարութիւնը չանի, և տարէք, տարէք նըրան շուտով։ Մի քիչ առաջ չորս բժիշկ կար այստեղ։ Կոնսիլիում ունէին։ Միաձայն վըճռեցին, որ ոչ մի յոյս չկայ։

—Մեզ չե՞ք լսում արդեօք,—կամաց հարցրեց Վահանը, ակնարկելով հիւանդի կողմը։

—Ա՜... Սրա բանն արդէն վերջացած է։ Բժիշկներն ասացին, որ այս գիշեր հազիւ թէ լուսացնի։ Եւ Մանէն այդ շատ լաւ գիտէ, թէև ես աշխատեցի ծածկել նրանից բժիշկների ասածը։

Վահանը ոտների ծայրերի վրայ մօտեցաւ հոգեվարքի մահճակալին, կարճ ժամանակ դիտեց Բագամեանի արդէն մահուան դեղնութեամբ պատած դէմքը և, ճնշուած մօտալուտ մահուան պատճառած ծանր զգացման տակ, կամաց դուրս գնաց քրոջ մօտ։

Հեղինէն հետևեց նրան։

Մանէն նստած էր նոյն դրութեան մէջ, ինչպէս որ թողել էին նրան Վահանն ու Հեղինէն հիւանդի սենեակը մտնելիս։

—Մանէ, ես գնում եմ,—ասաց Վահանը։

—Կըգա՞ս տանեմ քեզ ձեր տուն։

Մանէն նայեց եղբօրն այնպիսի հայեացքով, որից երևում էր, որ չհասկացաւ, թէ

ինչ ասաց Վահանը։ Ըստ երևոյթին, նա տարուած էր մի չափազանց խոր մտքով, որը դեռ ևս զբաղեցնում էր նրան։

—Վեր կաց, սիրելիս, վեր կաց գնա,—ասաց Հեղինէն այնպէս, ինչպէս խօսում են երեխայի հետ։—Վաղն առաւօտեան ես քեզ տեղեկութիւն կըտամ։ Այս գիշեր կրիզիս է, և ես հաստատ համոզուած եմ, որ վաղը լաւ կըլինի։ Վեր կաց, արդէն շատ ուշ է։

Մանէն վեր կացաւ և, առանց մի խօսք անգամ արտասանելու, լուսնոտի պէս հետևեց եղբօրը։ Նրա հայեացքը շարունակ յառած էր իր առաջ մի անորոշ կէտի, ուր կարծես հոգի ու մարմին էր առել նրան զբաղեցնող միտքը և հիպնոսացրած՝ գերեվարում էր նրան դէպի մի խորհրդաւոր աշխարհ, որը, սակայն, իր խորհրդաւորութեամբ ամենևին չէր վախեցնում, այլ նոյն իսկ գրաւում էր նրան...

Սանթրոսեանը, ըստ երևոյթին հանգիստ, պարապում էր իր առանձնասենեակում, երբ կինն ու նրա եղբայրը ներս մտան։ Ամուսինը գլուխը բարձրացրեց գրասեղանի վրայից, նայեց կնոջը և իսկոյն վեր կացաւ վախեցած։

Մանէն կանգնած էր նրա առաջ չափազանց գունատ և աչքերը վայր թողած։ Գրասեղանի վրայ դրուած լամպի կապոյտ լու-

սամփոփը մեռելային փայլ էր տալիս նրա դէմքին։

—Ի՞նչ է պատահել քեզ. հիւա՞նդ ես,—հարցրեց ամուսինը։

—Բան չկայ,—մէջ ընկաւ Վահանը։—Բացամեանի դրութիւնը մի քիչ ազդել է, կանցնի։ Գնա, սիրելիս, գնա հանգստացիր,—ասաց նա քրոջը։

Մանէն կամաց հեռացրեց եղբօր ձեռքը և տեղից չշարժուեց։

—Մանէ, դու ինձ վախեցնում ես,—բացականչեց Սանթրոսեանը։

—Լսիր,—ասաց Մանէն կարծես գերեզմանի միջից։—Նա մեռնում է... թերևս արդէն մեռած է... Իսկ ես... սիրում եմ նրան... սիրում էի նրան...

XX

Գիշերուայ ժամը երեքին մօտ էր։

Սանթրոսեանը դեռևս նստած էր մենակ իր առանձնասենեակում և ի զուր աշխատում էր խելքը գլուխը ժողովել։ Նա լաւ չէր յիշում, թէ ինչ պատահեց կնոջ խօստովանութիւնից յետոյ. կարծես յանկարծ շշմեցրել էին նրան գլխին իջեցրած դադանակի այնպիսի մի զօրեղ հարուածով, որից մինչև այժմ էլ չէր կարողանում ուշքի գալ։ Մութ կերպով միայն յիշում էր, որ Վահանը քրոջը ներս տարաւ ննջարան, որը

տանում էր հէնց առանձնասենեակին կից. յետոյ դուրս եկաւ այնտեղից և ինչ-որ բաներ էր ասում, իսկ ինքը կանգնած էր ապուշի պէս և ոչինչ չէր հասկանում նրա ասածներից։ Յետոյ մտաւ մայրը գիշերուայ զգեստով և քնաթաթախ և նոյնպէս ինչ-որ բաներ ասաց, որից նոյնպէս ոչինչ չհասկացաւ։ Վերջը տեսաւ, որ մենակ է և շուրջն այնպիսի անդորրութիւն է տիրում, որ կարծես աշխարհը քարացել էր։ Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսւում նոյն իսկ դրսից։ Լըսւում էր միայն ծղրիդի մի խիստ յամառ ճռինչ, որի մէջ գիշերուայ անդորրութիւնն աւելի ևս քարացած էր թւում։

Սանթրոսեանին թւում էր, թէ յանկարծ, մոգական մի գաւազանի զօրութեամբ, ինքն ենթարկուել է հոգեփոխութեան, որ ինքն այլևս առաջուայ մարդը չէ, այլ մի բոլորովին այլ արարած, որի մէջ ամեն ինչ օտար է, անծանօթ, զարմանալի և սարսափելի։ Նոյն օտարը, նոյն անծանօթը, նոյն զարմանալին ու սարսափելին նա տեսաւ և զգաց Մանէի մէջ, որի չափազանց լուրջ, գունատ դէմքն իր վայր թողած աչքերով երևաց նրա առաջ և չքացաւ ննջարանի դըռան ետևը գերեզմանից ելած ուրուականի պէս...

Սանթրոսեանը նստած էր արմունկները յենած ծնկներին և գլուխն առած ձեռքերի մէջ։ Կնոջ ուրուականը չէր հեռանում նրա

աչքի առջևից, և նա չէր իմանում ինչ է մտածում, ինչ է զգում. մտքերն ու զգացմունքը մի սարսափելի քաոս էին կազմում նրա մէջ։ Նա նեղւում էր ծանր, տաք օդից, գիշերուայ անդորրութիւնից ու մենակութիւնից և զգում էր, որ եթէ պատուհանից մի քիչ հով փչէր, եթէ ցերեկ լինէր, ինքն այդպէս չէր նեղուիլ։ Ծղրիդի ճռինչը մանաւանդ ֆիզիքական ցաւ զգացնելու չափ գրգռում էր նրա ջղերը, և նա չէր իմանում ուր փախչի, որ ազատուի այդ անտանելի յամառ ճռինչը լսելուց։

Նա վեր կացաւ, որ դուրս գնայ պատշգամբ։ Մութ հիւրասենեակով անցնելիս հարևան ճաշասենեակից խռպոտ հազի ձայներ լսուեցին։ Նա ցնցուեց, կանգ առաւ և ականջ դրեց։ Վահանն էր հազողը։ «Մի՞թէ այստեղ է մնացել»—մտածեց Սաթրոսեանը և դուրս գնաց պատշգամբ։

Գիշերը զարմանալի խաղաղ էր։ Բաց երկնքի տակ օդի մէջ թէև փոքր ինչ զով թարմութիւն էր զգացւում, բայց և այնպէս Սանթրոսեանը դարձեալ նեղւում էր, և այստեղ էլ լսում էր ծղրիդի ճռինչը՝ քաղցած մանկան լացի պէս յամառ և լսողի ջղերը քայքայող։ Որքան նա աշխատում էր չլսելու տալ, այնքան այդ ճռինչը հրամայաբար տիրում էր նրա ուշադրութեանը։ Վերջը տեսաւ, որ այլևս ոչ մի բանի մասին չի մտածում. մտածում է միայն այն մասին,

թէ որտեղից է գալիս այդ ճռինչը— աջի՞ց թէ ձախից, վերևի՞ց թէ ներքևից, դրսի՞ց թէ ներսից, ինչպէս չի յոգնում և ի՞նչ է ուզում ասել այդ փոքրիկ, աներևոյթ միջատը գիշերուայ անդորրութիւնն այդքան աղմըկելով։

Բայց ահա կնոջ ուրուականը նորից եկաւ կանգնեց նրա առաջ իր մեռելատիպ դէմքով։ Այդ ուրուականը ինչ-որ բան ասաց,— շատ խորհրդաւոր և շատ զարմանալի մի բան,—և անցաւ չքացաւ ննջարանի դռան ետևը...

Պատշգամբի կողքին երկրորդ թէ երրորդ բաց պատուհանից նորից լսուեց Վահանի հազի ձայնը։ «Մի՞թէ այստեղ է մնացել», նորից մտածեց Սանթրոսեանը և ականջը լարեց դէպի այդ պատուհանը։ Հազի ձայնը կրկնուեց։ Սանթրոսեանը կամաց ներս գնաց, մթութեան մէջ խարխափելով անցաւ հիւրասենեակով, շօշափելով գտաւ ճաշասենեակի դուռը, զգուշօրէն բաց արեց և կանգ առաւ շեմքում։ Ճաշասենեակում էլ ճրագ չկար վառուած։

Նոյն րոպէին ինչ-որ ճռճռաց և լսուեց բոպիկ ոտների մի դըմփոց յատակի վրայ։

—Ո՞վ է,—կանչեց Վահանը իր բամբ ձայնով։

—Դուք քնած չէ՞ք,—կամաց հարցրեց Սանթրոսեանը։

—Փեսա՞յ։

—Ես եմ։

—Ոչ, քնած չեմ։

—Կարող եմ ձեզ մի փոքր անհանգստացնել։

—Կարո՞ղ էք։

Սանթրոսեանը ներս մտաւ և նոյն զգուշութեամբ դուռը փակեց իր ետեից։

Սենեակում այնքան մութն էր, որ կատարելապէս ոչինչ չէր երևում. երևում էր միայն պատուհաններից մէկը, որի փեղկերը բաց էին, և այդ պատուհանից դուրս— դիմացի տան պատը, որ լուսաւորուած էր փողոցի լապտերի աղօտ լոյսով։ Նա կամաց առաջ անցաւ՝ ձեռքերը տարածած իր առջև, որ մթութեան մէջ մի աթոռ գտնի, և յանկարծ դիպաւ ճաշասեղանին։

—Սպասեցէ՛ք, ճրագ վառեմ,- ասաց Վահանը։

—Ոչ, ոչ,—արագ վրայ բերեց Սանթրոսեանը շշունջով։—Ես աթոռ եմ որոնում... Ահա, գտայ... Ճրագ հարկաւոր չէ, չվառէ՛ք։

Աթոռը տարաւ դրեց բաց պատուհանի առաջ և նստեց։

—Կարծում էի, թէ գնացել էք,—ասաց Նա։

—Ուզում էի գնալ, բայց մայրիկը չթողեց։

Տիրեց երկարատև լռութիւն։

—Դուք դեռ չէ՞ք պառկել,—հարցրեց Վահանը։

—Պառկեցի, բայց քնել չկարողացայ,—շատ հանգիստ կերպով պատասխանեց Սանթրոսեանը։—Ամբողջ կեանքիս մէջ այս առ-

աջին անգամն է, որ այսքան անհանգիստ գիշեր եմ անցկացնում,—աւելացրեց նա կարճ լռութիւնից յետոյ։—Չգիտեմ, ինչպէ՞ս տոթ է, թէ ես եմ, որ շնչելու օդ չեմ գտնում։ Իսկ այն ծղրիդն էլ... լսո՞ւմ էք։

—Ի՞նչ ծղրիդ։

—Չէ՞ք լսում։

—Հա։ Ի՞նչ է որ։

—Եթէ չեմ սխալւում, ծղրիդներն երևում են օգոստոսին, իսկ այժմ մենք դեռևս յունիս ամսումն ենք։ Այնքան վատ է ազդում ինձ այդ ձայնը, որ կարծես քերթում են ջղերս բութ դանակով։

Սանթրոսեանը նորից լռեց մի կարճ ժամանակ և ապա սենեակի մթութեան մէջ նորից լսուեց նրա հանգիստ ձայնը.

—Հարաւային Ռուսաստանում եղած ժամանակս մի անգամ մի շատ սուր ընդհարում ունեցայ պաշտօնակիցներիցս մէկի հետ։ Խնդիրը վերաբերում էր անձնական պատուի, և ինձ հասցրած վիրաւորանքը պիտի սրբուէր արիւնով միայն. հետևեալ օրը կամ ես պիտի սպանէի ինձ վիրաւորողին, կամ նա ինձ։ Եւ այնուամենայնիւ այդ օրուայ նախընթաց գիշերն անգամ ես այսքան անհանգիստ չէի... Ի՞նչ է պատահում ինձ այս գիշեր—չեմ հասկանում։ Խոհականութիւնս չեմ կորցրել, սառնասրտութիւնս—նոյնպէս, բայց և այնպէս... ինձ

թւում է, թէ... ամեն բան կորցրել եմ... ամե՛ն բան, ամե՛ն բան...

Նրա ձայնը նկատելի կերպով դողաց, և նա իսկոյն լռեց։

Վահանը, անկողնակալի վրայ նստած, տեսնում էր Սանթրոսեանի մութ ուրուագիծը պատուհանի քառանկիւնի ֆոնի վրայ և ուշի-ուշով ականջ էր դնում նրան։

—Իսկ Մանէն... քնա՞ծ է,—հարցրեց նա։

—Երևի... Չգիտեմ... Ես նրա մօտ չեմ մտել։

—Ի՞նչպէս թէ...

—Մի՞թէ ես այլ ևս իրաւունք ունիմ նրա մօտ մտնելու...

Վահանը պարզ որոշել չկարողացաւ, թէ Սանթրոսեանն այդ խօսքերն արտասանեց մինչև հոգու խորքը վիրաւորուած մարդու հեգնութեա՞մբ արդեօք, թէ ներքին խիստ զսպած կատաղութեամբ։

—Մեր միջև յանկարծ այնպիսի՛ մի վիհ է բացուել, որ...,—աւելացրեց Սանթրոսեանը և դարձեալ լռեց։

Վահանի շատախօս լեզուն կարծես փորն էր ընկել։ Նա չէր իմանում ինչ ասի, ինչպէս հանգստացնի իր քրոջ մարդուն։ Սանթրոսեանի երերուն ձայնից, արտասանած կցկտուր խօսքերից նա հասկանում էր, թէ որքան տանջւում էր հոգեպէս այդ մարդը, և նրան թւում էր, թէ ինքն էլ մասնակից է իր քրոջ յանցանքին այդ դժբաղդ մար-

դու առաջ, որ այդպէս չարաչար տանջւում էր բոլորովին անարդար կերպով։

—Վիհ, ահաւո՛ր մի վիհ,—կրկնեց Սանթրոսեանը, կարծես ինքն իրեն։—Մինչդեռ երէկ էր, այսօր էր, սրանից մի-երկու ժամ առաջ էր, որ ես ոչինչ չգիտէի, ոչինչ չէի կասկածում, ոչի՛նչ... Եւ հոգիս այնքա՛ն խաղաղ էր.. Իսկ այժմ... իսկ այժմ... Ինձ թըւում է, թէ երազումս եմ, մի սարսափելի երազի մէջ, որից ուզում եմ դուրս գալ--չեմ կարողանում... Մանէն և... Եթէ ինձ ասէին, թէ գառը յանկարծ գայլ է դարձել, աղաւնին՝ օձ, հրեշտակը՝ սատանայ. եթէ ինձ ասէին, թէ երկինքը պիտի փուլ գայ, աշխարհս պիտի կործանուի այս րոպէին,—կը հաւատայի։ Բայց այս բանին... բայց այն բանին, ինչ որ նա ասաց... այդ բանին չեմ ուզում հաւատալ,—չե՛մ ուզում, որովհետև հաւատալու բան չէ և չի՛ կարող լինել... Մանէն և... Երկուսից մէկը. կամ ես մինչև այս հասակս միամիտ եմ եղել երեխայի պէս և կամ թէ մեր ժամանակումն իսկ կարող են այսպիսի հրաշքներ կատարուել։ Մի՞թէ դուք ևս հրաշք չէք համարում այս բանը, հրաշք, ամենազարմանալի հրաշքն աշխարհիս երեսին։ Ահա մի ժամ է, երկու ժամ է, չգիտեմ որքան ժամանակ, կարծես թէ աշխարհ գալուցս օրից ի վեր, մտածում եմ, մտածում եմ... ինչ եմ մտածում—չգիտեմ։ Ինձ թւում է, թէ ուղեղս ցնդում է... զգում եմ, թէ

մեջս հետզհետէ զարթնում է մի բան, սոսկալի մի բան, որ կարծես թե բռնում է ինձ պինդ, երկաթի ճանկերով և ստիպում է անել մի բան, զարհուրելի, աներևակայելի մի բան, որի մասին մտածելիս քարանում է ուղեղս, արյունս սառում է երակներիս մեջ... Եւ ինձ թւում է երբեմն, թե արդեն կատարել եմ այդ բանը, և քիչ է մնում ճչամ խելագար զարհուրանքով... Ես հասկանում եմ, թե ինչ է այս, և զսպում եմ ինձ, կարէվեր ջանք եմ գործ դնում զսպելու ինձ. ես ուզում եմ փախչել ինքս ինձնից, իմ մտածմունքներից, որոնք մրջյունների պես դժվըժում են ուղեղիս մեջ, բայց... այս գիշերը, այս մութ գիշերը, այն ծղրիդը... Օ՜հ, երբ պիտի լուսանայ վերջապէս...

Սանթրոսեանին ուշքի բերեց մի ճրթոց և փոսֆորային մի լոյս, որ վառուեց և հանգաւ Վահանի անկողնակալի վրայ:

—Ի՞նչ էք անում,—հարցրեց նա:

—Ուզում եմ ծխել:

Մի ուրիշ լուցկի ճռթաց և վառուեց:

Լուցկու կարճատև լոյսի տակ Սանթրոսեանը տեսաւ Վահանին ներքնաշորով անկողնակալի վրայ նստած, մերկ ոտները կախ արած և հաստ սիգարն ատամների մեջ բռնած:

Լուցկին հանգաւ, և այժմ սենեակի մըթութեան մեջ լուսատտիկի պէս առկայծում էր սիգարի կարմրաւուն կրակը, վայրկենաբար լուսաւորելով Վահանի մազազուրկ դէմքը: Սանթրոսեանի քթին դիպաւ իրեն անսովոր և անախորժ ծխախոտի ծանր հոտը: Հեռու-մօտիկ հարևանի բակից լսուեց աքաղաղի քնաթաթախ մի կանչ, որն այնուհետև մօտ հինգ րոպէ կրկնւում էր ընդմիջումներով, սկզբում խռպոտ, յետոյ հետզհետէ զլուելով:

—Կըկանչի, կըկանչի և նորից կըքնի հանգիստ,—ասաց Սանթրոսեանը:—Իսկ ես...

Նա լռեց և խոնարհուեց ծնկների վրայ:

Պատի ժամացոյցի լեզուակը, յարատև շարժուն, հնչեցնում էր մութ սենեակի լռութեան մեջ իր չափաբերական զարկերը խորհրդաւոր անտարբերութեամբ:

—Զարմանալի բան,—խօսեց Սանթրոսեանը երկար լռութիւնից յետոյ.—մարդ սկսում է խորը մտածել և խորը զգալ այն ժամանակ միայն, երբ յանկարծ դժբաղդութեան մեջ է ընկնում: Ասում են, թե ուսումը, կըրթութիւնը մարդուն կամքի ույժ և իրաւունքի գիտակցութիւն են ներշնչում. բայց այս գիշերուայ դէպքն ինձ բոլորովին հակառակն է համոզում: Ես տգէտ մարդ չեմ, նոյն իսկ մի ժամանակ պատրաստւում էի գիտական ասպարէզի համար, բայց և այնպէս հազիւ թե որևէ մարդ այնպէս թոյլ և իրաւազուրկ զգայ իրեն, որքան ես եմ զգում ինձ այժմ: Ժողովրդի հասարակ մարդը, մի գռեհիկ գիւղացի, մի տգէտ արհեստաւոր,

մի բիրտ բանուոր, եթէ իմ տեղս լինէր այս րոպէին, կըգիտենար թէ ինչ պիտի անի, և կանէր առանց տատանուելու, առանց երկմըտելու, կանէր իսկոյն, անձնատուր իր ամբողջ էութիւնը լափող անմիջական զգացմանը. իսկ ես... Ահաւասիկ ես նստած եմ ձեր առաջ թոյլ, կամազուրկ, տատանուող, անվճռական, նոյն իսկ վախկոտ, ինչպէս մի Համլէտ, որ ընդունակ է միայն մտածելու, մտածելու և սարսափելու իր մտածմունքներից։ Ինչքան էլ որ խնդիրը շուռ եմ տալիս դէս ու դէն, ինչ տեսակէտից էլ որ մօտենում եմ նրան--իրաւական թէ բարոյական, փիլիսոփայական թէ առօրեայ կենցաղավարական,—այնուամենայնիւ վերջ ի վերջոյ գալիս կանգ եմ առնում դարձեալ այն անողոք, անջնջելի կէտի վրայ, որ կընըս, այսպէս թէ այնպէս, իմս չէ այլևս, որովհետև սիրտն իմս չէ։ Սա այնքան պարզ է, այնքան տրամաբանական, որ աւելորդ է անգամ այս մասին խօսել։ Եւ այստեղ է, ահա, որ կորւում են թևերս, և ես այնքան թոյլ եմ զգում ինձ, այնքան իրաւազուրկ, որքան նորածին մի մանուկ։ Ի՞նչ կարող եմ անել։ Իրաւո՞ւնք ունիմ որևէ բան ասելու, նոյն իսկ յանդիմանական մի թեթև խօսք ասելու։ Իբրև մարդ, նա ազատ է, նա անձեռնմխելի է։ Նա իրաւունք ունի, իսկ ես չունիմ։ Այդպէս է պահանջում լոգիկան։ Եւ երբ մի քիչ էլ առաջ եմ անց-

նում, տեսնում եմ, որ նոյն իսկ ներելու իրաւունք չունիմ, այո, նոյն իսկ ներելու իրաւունք, որովհետև ներելու իրաւունք ունի միայն նա, ով ամենից առաջ պատժելու իրաւունք ունի, իսկ ես հէնց պատժելու իրաւունքից է որ զրկուած եմ համարում ինձ։ Ահա թէ մինչև ուր կարող է տանել այս անողոք, այս պողպատեայ լոգիկան։ Շատ-շատ, ես իրաւունք ունիմ միայն ասելու «Մնաս բարեաւ» և գնալու իմ ճանանապարհով, բայց... յետո՞յ... Ահա թէ որտեղ է թաղնուած Համլէտը... Ապշելու բան է, թէ ինչպէս ձեռաց կարելի է փշրել մարդու ապագան, նրա ամբողջ կեանքը, այն բոլորը, ինչի համար նա երկար տարիներ տքնել, չարչարուել, տանջուել է... Ա՜խ, Մանէ, Մանէ, այս ինչ արիր դու, այս ինչ արիր...

Նրա հանգիստ ձայնը նորից դողաց, և նա աւելի կախեց գլուխը ծնկների վրայ։

Աքաղաղը լռել էր, և մութ գիշերն առաջուայ պէս ննջում էր անդորր։ Վահանի սիգարը մերթ վառւում էր, մերթ հանգչում, նրա անմաղ դէմքը լուսաւորելով իր վայրկենական անփայլ կրակով։

Յանկարծ ինչ-որ տարօրինակ խուլ ձայներ, քթի փափսոցի նման, դիպան Վահանի ականջին։ «Լա՞ց է լինում» — մտածեց նա, նայելով Սանթրոսեանի կողմը։ Սակայն այդ ձայներն իսկոյն լռեցին։

—Ես նրան սիրում էի, չափազանց սիրում,—շարունակեց Սանթրոսեանը երերուն ձայնով, որից սակայն երևում էր, որ նա աշխատում է սրտապնդել իրեն։— Սիրում էի այն աստիճան, որ ամեն անգամ, երբ, երկարատև բացակայութիւններից յետոյ, գալիս էի տուն, նայում էի նրա աչքերին, գրկում էի նրան, ինձ թւում էր, թէ պիտի մեռնեմ երջանկութիւնից... Եւ այս բոլորն այլևս չկայ, չքացաւ յանկարծ, մի անգամից, միրաժի պէս, անդարձ... Ի՞նչը ստիպեց նրան իր խոստովանութիւնն անելու ինձ և այդ էլ այն ժամանակ, երբ ինքն իր աչքով տեսել և համոզուել էր, որ նա, ում որ սիրում է, մեռնում է։ Չէ՞ որ ես երբէք, երբէք չեմ կասկածել, չէի կասկածում և մինչև մահս էլ չէի կասկածիլ նրա հաւատարմութեան և առաքինութեան մասին։ Ուրեմն ինչո՞ւ արաւ այդ բանը, ինչո՞ւ։ Մի՞թէ ինձ պատժելու համար... մի՞թէ նրա համար, որ սրտիս մէջ գցէր այս թունաւոր կասկածը, մի կասկած, որ վերաբերում է ոչ այնքան իրեն և նրան, ում որ սիրում է եղել, որքան ինձ, այո, ինձ, որովհետև ես այժմ մտածում եմ,—և այս մտածմունքն ուղղակի մահ է ինձ համար, — թէ այն ժամանակ, երբ ես գրկում էի նրան և իմ ամուսնական իրաւունքները բանեցնում, դրանով թերևս վայրենի մի բռնութիւն էի գործ դնում նրա զգացմունքների վրայ, և նա

չէր բողոքում այդ բանի դէմ կամ փախենալով ինձնից, կամ խղճահարուելով ինձ վրայ... Եւ ես այժմ չգիտեմ, թէ որն աւելի անտանելի, աւելի յուսահատական է ինձ համար—ա՞յն գիտակցութիւնն արդեօք, որ նա այլևս իմս չէ, թէ՞ այն կասկածը, որ նա իմս չէ եղել երբէք, հէնց սկզբից... Բայց մի ուրիշ բան կայ, որ միանգամայն զինաթափ է անում ինձ։ Այդ այն է, որ մտածում եմ, թէ մի գուցէ ես եմ պատճառը։ Ապահով իմ ընտանեկան երջանկութեան վրայ, վերջին աստիճանի եսասէր և անհեռատես, կնոջս վրայ նայելով իբրև մի առարկայի վրայ, որով մարդիկ զուարճանում են յոգնատանջ աշխատանքից յետոյ, ես ընկել եմ ժամանակի ետևից, ամբողջ ամիսներ բացակայել եմ տնից, և մէկ տարի չէ, երկու տարի չէ... իսկ նա—դեռատի կին տաք արիւնով, եռուն զգացմունքներով, զգուանքների կարօտ... մենակ... մոռացուած կամ գրեթէ մոռացուած... Յետոյ, իմ այս հասակը... Չէ՞ որ ես մեծ եմ նրանից, կրկնակի մեծ... իսկ նա... այն պարոնը...

Սանթրոսեանը յանկարծ ոտի կանգնեց, և Վահանը տեսաւ նրա մութ ուրուագիծը պատուհանի կիսախաւար ֆոնի վրայ ձեռքերը տարօրինակօրէն շարժելիս։

—Ո՛չ, ո՛չ, զզուելի, քստմնելի, զարհուրելի միտք է այս,—շշնջաց Սանթրոսեանն ատամները պինդ սեղմած իրար։— Այս ես չեմ

մտածում այսպէս. սա նախանձի գին է, որ մտել է գանգս և շամփրում է ուղեղս... Չեմ հաւատում, չեմ ուզում հաւատալ, չպէտք է հաւատամ գեթ ներշնչումներին, այլապէս իմ ֆլեգմատիկ բնաւորութիւնն անգամ ընդունակ է կրակ դառնալու և լափելու մէկին էլ, միւսին էլ և ինձ էլ նրանց հետ միասին...

Նա մի րոպէ լռեց, ինչ-որ տարօրինակ հեւցներ արձակելով, կարծես խեղդուելով օդի պակասութիւնից, յետոյ արագօրէն առաջացաւ դէպի այն կողմը, որտեղ երևում էր սիգարի կրակը, և կանգ առաւ կիսաճանապարհին:

—Խօսեցէք, խօսեցէք, ի սէր Աստուծոյ,—գրեթէ ճչաց նա, բայց յանկարծ, կարծես ինքն իր ձայնից վախենալով, ձայնը խեղդեց կոկորդի մէջ:—Խօսեցէք, մի բան ասացէք, հանգստացրէք ինձ: Մի՛ լռէք, մի՛ խղճաք ինձ: Ասացէք ամեն բան, ինչոր ճշմարիտ է: Փարատեցէք կասկածներս, միմիայն կասկածներս, և երդւում եմ, որ ես ձեր քրոջ մի մազին անգամ չեմ դիպչիլ...

Վահանը ձեռքով շօշափեց, գտաւ կողքին աթոռի վրայ դրած հագուստը, ձեռաց հագնուեց, վառեց ճաշասեղանի վրայ, առաստաղից կախուած լամպը, սիգարը պատուհանից շպրտեց փողոց և գնաց կանգնեց ուղղակի Սանթրոսեանի առաջ:

Սանթրոսեանը կանգնած էր սաստիկ գու-

նատ, հոգեկան սուր տանջանքից ծամածըռուած դէմքով:

—Լսեցէք, փեսայ,—ասաց Վահանը շատ լրջօրէն:—Եթէ դուք կարծում էք, թէ ես լռում եմ նրա համար, որ ոչինչ չունիմ ասելու կամ, այլ խօսքերով, յանցաւոր եմ համարում քրոջս և չեմ ուզում ճշմարտութիւնն ասել ձեզ, որպէսզի դուք ձեռք չբարձրացնէք քրոջս վրայ,—շատ սխալւում էք: Ես լռում եմ նրա համար միայն, որ միջամտութիւնովս ցաւին դարման չեմ անիլ: Եւ, վերջապէս, չէ՞ որ դուք ինքներդ ասացիք, թէ մի անգամ որ նրա սիրտը ձերը չէ, ուրեմն աւելորդ է այս մասին խօսել: Այստեղ էլ պէտք է վերջակէտ դնէիք և մտածէիք միայն այն մասին, թէ այսուհետև ինչ պիտի անէք: Բայց դուք դեռ ևս ուզում էք իմանալ ինչ-որ ճշմարտութիւն: Ես հասկանում եմ ձեր հոգեբանութիւնը: Որքան էլ դուք սառն դատողութեամբ խնդիրը պարզ և վերջացած էք համարում հէնց միայն այն իրողութեամբ, որ ձեր կնոջ սիրտը, ուրեմն և ինքը ձեզ չի պատկանում, այլ պատկանում է նրան, որին սիրում է, այնուամենայնիւ ձեր մէջ նստած կենդանաբանական արուն իր բողոքի ձայնն է բարձրացնում ձեր սառն դատողութեան դէմ և իր հրամայական պահանջներն է դնում ձեր առաջ ձեր էգի վերաբերմամբ, որին տիրելու բոլոր իրաւունքները միմիայն ձեզ են տուել

պետական և եկեղեցական օրէնքները, աւանդական սովորութիւնները ու հասարակաց կարծիքը: Այդպէ՞ս է թէ ոչ:

—Այդպէ՞ս է արդեօք,—շշնջաց Սանթրոսեանը տարակուսանքով:

—Այդպէս է, այդպէս: Երբոր փոքր ինչ հանգստանաք և լաւ մտածէք, կըտեսնէք որ ես ճշմարիտ եմ ասում: Այլապէս ինչն է դրդում ձեզ այդպէս յուզուելու: Ինչո՞ւ ես, որ Նրա եղբայրն եմ միայն, ձեր չափ չեմ յուզւում, կամ մի օտար մարդ, որի համար ողջ մէկ կըլինի՝ ձեր կինը ձե՞զ է սիրում, թէ մի ուրիշի: Ինչ վերաբերում է ձեր ցանկացած ճշմարտութեանը, ես կարող եմ հաւատացնել ձեզ, որ քոյրս հաւատարիմ է մնացել իր ամուսնական ուխտին և չարաչար կռիւ է մղել ինքն իր դէմ և Նրա դէմ, որ մեռնում է այնտեղ, եթէ արդէն չի մեռել... Հաւատո՞ւմ էք:

—Ուզում եմ հաւատալ... Ա՜խ, որ իմանաք ինչպէ՜ս ուզում եմ հաւատալ,—հառաչեց Սանթրոսեանը:—Կեանքիս կէսը կըտայի, եթէ այդ ճիշտ լինէր...

—Ես գիտէի, տէր, որ չէք հաւատալ, դրա համար չէի ուզում խօսել,—նկատեց Վահանը սառնութեամբ և ուզում էր հեռանալ, բայց Սանթրոսեանը յանկարծ բռնեց Նրա ձեռքից:

—Սպասեցէք: Մի նեղանաք: Խնդրում եմ, պարոն Վահան, մի նեղանաք, եթէ ես դժուարանում եմ ձեզ հաւատալ, որովհետև չէ՞ որ

դուք Նրա եղբայրն էք... չէ՞ որ այսպիսի բաներում առհասարակ ճշմարտութիւնը չեն ասում... և, վերջապէս, չէ՞ որ դուք ինքներդ կարող էք ոչինչ չիմանալ...

—Դէ որ այդպէս է, էլ ի՞նչ ճշմարտութիւն էք ուզում ինձնից: Այդպիսի դէպքում աւելի լաւ չէ՞, ինձ դիմելու փոխարէն, դիմէք ուղղակի Մանէին և փարատէք ձեր կասկածները: Եթէ նա այնքան ազնիւ գըտնուեց, որ չծածկեց ձեզնից ճշմարտութեան մի մասը, ես կարծում եմ՝ չի ծածկիլ և միւս մասը, որ ձեզ այդքան մըտատանջում է: Ուզում էք, հէնց այս րոպէին գնացէք Նրա մօտ:

—Նրա մօտ... այս րոպէի՞ն... Ի՜նչ էք ասում,—շշնջաց Սանթրոսեանը և մեքենայաբար ետուետ գնաց:

—Ի՞նչ կայ որ,—զարմացաւ Վահանը:—Աւելի լաւ չէ՞ ամեն բան վերջացնէք իսկոյն:

—Յետո՞յ:

—Յետոյ ի՞նչ. դուք էլ, Նա էլ միանգամից կըհանգստանաք: Եթէ չհանգստանաք էլ, գոնէ կիմանաք ձեր անելիքը: Թէ չէ, ինչի՞ նման է, որ դուք այս կէս-գիշերին, քունը կորած, թափառում էք սենեակներում, տանջում էք ձեզ կասկածներով և չէք իմանում, թէ ինչ կըբերի ձեզ վաղուան օրը: Երբոր փտած ատամը ցաւում է, պէտք է հանել դէն շպրտել իսկոյն, թէ չէ՝ պահել և այսօր-վաղը գցել—կընշանակի աւելորդ տեղը

տանջուել։ Գնացէք, գնացէք խօսեցէք խա-կոյն, ես ձեզ խորհուրդ եմ տալիս։

— Ոչ, ոչ... Ես, ճիշտ է, անհանգիստ եմ, քնել չկարողացայ... և ձեզ էլ անհանգըս-տացրի, որի համար ներողութիւն եմ խընդ-րում, բայց... ի՞նչ հարկ կայ շտապելու... գիշերը խօ յաւիտեան չի տևելու... կըլու-սանայ, չէ՞...

Վահանը կանգնած էր Սանթրոսեանի ա-ռաջ; նայում էր նրա շփոթուած աչքերին և մնացել էր զարմացած, թէ մի՞թէ դա այն մարդն էր, որ մի րոպէ առաջ սպառնում էր կրակ տալ և լափել իր դժբաղդու-թեան պատճառ եղողներին և իրեն էլ նրանց հետ միասին։

— Դուք խօսում էք այնպէս, որ կարծես թէ... վախենում էք։ Հա՛, վախենո՞ւմ էք,— հարցրեց նա։

Սանթրոսեանն իր հերթին նայեց նրան զարմացած։

— Վախենո՞ւմ։ Ինչի՞ց։ Ի՞նչ բանի համար։

— Հապա ինչո՞վ բացատրեմ ձեր այդ վա-րանումը։

— Ի՞նչպէս ասեմ, որ ինձ հասկանաք,— ասաց Սանթրոսեանն արագօրէն տիրապե-տելով իրեն։— Ձեզ ասացի, թէ ինչ հայեաց-քով եմ նայում այս խնդրի վրայ։ Ես չեմ կարող և բարոյական ոչ մի իրաւունք չու-նիմ դատաւորի դեր ստանձնելու, հարցու-փորձ անելու, տանջելու, սպառնալու։ Դա

դէմ է իմ խղճին, իմ համոզմունքին, իմ հասկացողութեանը։ Հէնց միայն այն գի-տակցութիւնը, որ տեսակցութիւնն ինձ հետ վերին աստիճանի ծանր պէտք է լինի նրա համար, այս գիտակցութիւնն արդէն բաւա-կան է, որ ես միանգամայն խուսափեմ նրա հետ երես առ երես հանդիպելուց։ Ես չեմ կարող տեսնել, թէ ինչպէս նա ճնշւում է իմ ներկայութիւնից, տանջւում է, չի ու-զում պատասխանել և, այնուամենայնիւ, ստիպուած է պատասխանել։

— Բայց չէ՞ որ դուք կոպիտ միջոցների չէք դիմելու։ Ձէք դիմելու, չէ՞։

— Այդ աւելի վատ։

— Ուրեմն ի՞նչ պիտի անէք, ձեր կարծի-քով։ Հիմա չէք ուզում նրա հետ երես առ երես հանդիպել, որպէսզի ձեր ներկայու-թեամբ ճնշում չպատճառէք նրան, վաղն էլ, երևի, չէք ուզիլ, միւս օրն էլ, երևի... բայց մինչև ե՞րբ։ Ձէ՞ որ մի օր, ուզէք-չուզէք, պէտք է վերջ տաք այդ անորոշ դրութեանը։ Եւ, վերջապէս, ես չեմ հասկանում, թէ ի՞նչ-պէս պիտի անէք, որ, մարդ ու կին, երես առ երես չհանդիպէք իրար երբէք։ Հնարա-ւոր բա՞ն է այդ։

— Դուք ճշմարիտ էք ասում,— ասաց Սան-թրոսեանը Վահանի խելացի նկատողութիւն-ներից ընկճուած։— Ի հարկէ, այս բանը, այսպէս թէ այնպէս, պէտք է վերջացնել

մի օր, բայց… Դուք ասացէք, ինչ անեմ և ինչպէս անեմ, քանի որ…

Նա չվերջացրեց և, նորից շփոթուած հայեացքը, լի հոգեկան տանջանքի արտայայտութեամբ, ման ածելով չորս կողմը, ձեռքերի մատները շփեց իրար այնքան ամուր, որ լսուեց խաղերի ճրթճրթոցը։

—Եկէք այսպէս անենք,—ասաց Վահանը։

—Գնանք նրա մօտ միասին։ Ես կարծում եմ, որ թէ դուք և թէ նա այնքան չէք ճընշուիլ իրարից մի երրորդ անձի ներկայութեամբ, որքան՝ եթէ մեն-մենակ հանդիպէք իրար։ Համաձա՞յն էք։

Այս բանը, ըստ երևոյթին, նստեց Սանթրոսեանի խելքում։ Կարճ ժամանակ նա լայն բացած մտատու աչքերով նայում էր Վահանի աչքերին, յետոյ նրա դէմքը փոքր ինչ պայծառացաւ, և նա շշնջաց գրեթէ ուրախացած.

—Այդ լաւ ասացիք… Այո, այո, շատ լաւ ասացիք։ Այդպէս անենք, այդպէս աւելի լաւ կըլինի։ Ոչ ես կըճնշուեմ, ոչ նա։ Ես այդ եմ ուզում միայն, ուրիշ ոչինչ։ Հիանալի միտք է, հիանալի։

—Դէ որ այդպէս է, եկէք։

Վահանն առաջ ընկաւ, Սանթրոսեանը հետևեց նրան։ Նրանք անցան մութ հիւրասենեակով, որտեղ լուսոյ մի շերտ էր ընկնում առանձնասենեակի կիսաբաց դռնից։ Առանձնասենեակից լսւում էր ծղրիդի ճռինչը, որը,

սակայն, իսկոյն լռեց, երբ նրանք ներս մտան այնտեղ։

Առանձնասենեակում Սանթրոսեանը կանգ առաւ։

—Ես կըմնամ այստեղ. երբ կանչէք, կըգամ,—շշնջաց նա, զգալով որ վարանումը նորից բռնում է իրեն աւելի ուժգին, քան մինչև այժմ։

—Շատ բարի,—ասաց Վահանը։—Ես դուռը բաց կըթողնեմ։

Սանթրոսեանը նստեց աթոռի վրայ և թաշկինակը մեքենայաբար տարաւ դէպի ճակատը, որի վրայ յանկարծ ինչ-որ սառն թացութիւն զգաց. իսկ Վահանը մօտեցաւ ննջարանի դռանը։

Մտնելուց առաջ նա կամաց ծեծեց դուռը մատով և ականջ դրեց։ Ներսից ոչ մի ձայն չլսուեց։ Յետոյ նա զգուշօրէն բաց արաւ դուռը և ներս մտաւ։

Ննջարանը լուսաւորուած էր արդուզարդի սեղանի վրայ վառուող երկու մոմով, որոնց լոյսերն անդրադառնում էին հայելու մէջ։ Այդ լոյսերը մերթ դողդողում, երկարում էին, կարծես տքնում էին բարձրանալ աւելի ու աւելի վեր, մերթ իջնում էին և անշարժանում։ Մոմերը պարզ լուսաւորում էին միայն իրենց շուրջը, իսկ սենեակի պատերի մօտ և անկիւններում, ուր նրանց լոյսն

անկարող էր փարատել կիսախավարը, կարծես թէ ծուխ էր կանգնած։

Մանէն պառկած էր իր մահճակալի վրայ շորերը հագին։ Պառկած էր երեսն ի վեր, պառկած էր տարօրինակ կերպով. գլուխը բարձերի վրայ չէր, այլ ընկած էր ներքև սաստիկ երկարացած վզով,—կարծես պառկած տեղից ինչ-որ բան էր դիտում ներքև. մի ոտը ծալուած՝ գտնւում էր մահճի վրայ և խճճուել էր շրջազգեստի փեշերի մէջ, միւսը ձգուած էր յատակի վրայ, երևան հանելով նրա սև փայլուն կիսակօշիկը բարձր կրունկով և երկայն սև գուլպան մինչև սրունքը։ Մոմերը լուսաւորում էին նրան ոտների կողմից, և նրա դէմքը գտնւում էր կրծքից թռած ստուերի մէջ։

Վահանը կամաց խոնարհուեց նրա դէմքի վրայ, յետոյ յանկարծ աւելի կռացաւ և ըսկըսեց լաւ դիտել այդ դէմքը։ Մանէի մի աչքը կիսաբաց էր, միւսը՝ խուփ. ծնօտը ծըռուած էր, բերանը բացուած էր լայն և նրա մէջ երևում էին փղոսկրի պէս սպիտակ երկշար ատամները և ինչ-որ ուրիշ սպիտակ մի բան, փրփուրի նման... Այդ բոլորն այնպիսի արտայայտութիւն էին տուել նրա դէմքին, որ Վահանին սկզբում թուաց, թէ նա լուռ ծիծաղում է։ Մի ձեռքը կախ էր ընկած մահճակալից, միւսով բաց էր արել կրծքի կոճակները և պոկել էր շապկի նուրբ անկուածից մի կտոր. այդ կտորը տեղ-

ես նրա մօտ գնացել էի ամենաբարի մտադրութիւններով և ոչ մի առիթ չտուի, որ հակառակը կարծէր։ Ինչևիցէ։ Նրա մօտ գնալս ապարդիւն անցաւ։ Մնում էր մի ուրիշ ելք։

—Դու չափազանց երկար ես խօսում և կրկնում ես միևնոյնը,—ընդհատեց նրան Մանէն սառնօրէն։—Կարճ կտրիր՝ ի՞նչ ես ուզում։

--Այ, ասում եմ։ Մնում էր մի ուրիշ ելք—այն, որ գայի քեզ մօտ, պարզէի քեզ քո դրութիւնը և նորից խնդրէի, որ գայիր այս ամառ գիւղը տանէի քեզ, որովհետև, ինչպէս այսօր էլ ասացի, քո այդ սէրը ժամանակաւոր մի հիւանդութիւն է, որ առաջացել է, անշուշտ, մենակութիւնից, պարապութիւնից, ձանձրոյթից, և այդ հիւանդութիւնից բժշկուելու ամենալաւ դարմանն այն կըլինի, որ առժամանակ հեռու լինիս Բաղամեանից, նոր անձեր, նոր բաներ տեսնես, նոր տպաւորութիւններ ստանաս։ Մինչև անգամ ես կարող էի տանել քեզ արտասահման, եթէ... Բայց,—խօսքն վրայ բերեց Վահանը, տեսնելով, որ Մանէն անհամբեր դժկամակութեան նշաններ է ցոյց տալիս,—այդպիսի բան այլևս չեմ առաջարկում քեզ, որովհետև այն րոպէից, որ եկայ տեսայ տանը չես, այդ րոպէից թողեցի մըտադրութիւնս, որովհետև զգացի, իսկ այժմ համոզւում եմ, որ արդէն ուշ է...

—Դարձեա՜լ... դարձեա՜լ ուզում ես ինձ վիրաւորել, — բացականչեց Մանէն նորից յուզուելով:

—Ներողութիւն, ների՛ր խնդրում եմ,— շտապով վրայ բերեց Վահանը:—Ես այն չէի ուզում ասել, ինչ որ դու ես կարծում: Ես լիովին հաւատում եմ, որ դու մաքուր ես մնացել...

—Լռի՛ր, լռի՛ր, անխիղճ մարդ,—աղաղակեց Մանէն ձեռքերի մատները հիւսելով իրար մէջ, և նրա աչքերի մէջ ցոլացին յուսահատ անզօրութեան արցունքի կաթիլներ:—Ո՞վ է քեզ իրաւունք տուել, որ խօսում ես իմ մաքրութեան մասին... Ուզում ես, որ ես հանգիստ լսեմ քեզ, մինչդեռ ամեն րոպէ, ամեն վայրկեան զրգռում ես ինձ, կոպիտ կերպով շօշափում ես ամենանուիրական զգացումներս, խօսում ես այնպիսի բաների մասին, որոնց վերաբերմամբ չէի կամենալ հաշիւ տալ ոչոքի... Մի անգամ գլուխս քարովը տուի և խնդրեցի, որ օգնես ինձ: Այժմ չեմ ուզում... Լսում ես, չեմ ուզում: Ազատի՛ր ինձ քո հոգացողութիւնից... խնդրում եմ ազատի՛ր, աղաչում եմ ազատիր և, եթէ կարելի է, մոռացի՛ր իմ գոյութիւնն, անգամ...

—Զարմանք, զարմանք, — արտասանեց Վահանը ուսերը թօթուելով: Նա մօտեցաւ սեղանին, հանգած սիգարը ձգեց մոխրամանի մէջ, նայեց ժամացոյցին և առաւ գլխարկը:—Ազատում եմ քեզ իմ հոգացողու-

թիւնից և գնում եմ: Ինձ մնում է այժմ ասել այն, ինչ որ ասացի Բաղամեանին. ես կատարեցի իմ պարտքը: Բարի գիշեր:

Նախասենեակում վերարկուն հագնելիս հարցրեց.

—Դուռը կողպէքով չէ՞ք կողպում գիշերները:

Մանէն դուրս գնաց նախասենեակ և լուռ սպասում էր, մինչև որ Վահանը անքըն-քալով հագաւ իր նեղ վերարկուն և ետևից ձիք տուեց ներքև, որ մէջքի վրայ գոյացած ծալքերը նստեն: Յետոյ եզրօր ետևից իջաւ մինչև փողոցի դուռը: Վահանը բաց արեց դուռը և կանգ առաւ ակամայ:

Փողոցի մէջ անդով, փշշալով ու վշշալով, մի ամբողջ գետ էր վազում հեղեղի ջրերից գոյացած: Երկինքը սկսել էր պարզուել արևմուտքում, որտեղ արդէն երևում էին աստղերը մաքուր ու չողշողուն: Քամին գորշագոյն ամպերը քշում էր դէպի արևելք, ուտեղ երկինքը փայլատակում էր դեռ, սակայն որոտի ձայն այլ ևս չէր լսւում: Անձրևն այժմ մաղում էր միայն և, ըստ երևույթին, կտրուելու վրայ էր: Մաքրուած օդի մէջ զգացւում էր մի հաճելի ցուրտ թարմութիւն:

—Այս ջրերից անցնելը խաթա է. կօշիկներս թուլուխ պիտի դառնան,—ասաց Վահանը, կռացաւ, անքանքալով ետ ծալեց անդրավարտիկի ոտները, վերարկուի օձիքը վեր քաշեց և ապա ցած թռաց ծղոտէ

գլխարկի շրջապատը հովանոցի ձևով:— Դէհ, մնաս բարեաւ. առաւօտուայ գնացքով գը-նում եմ անպատճառ:

—Գնաս բարեաւ,— արտասանեց Մանէն և ակամայ առաւ եղբօր պարզած ձեռքը:

Վահանը նայեց նրա սառն դէմքին և ժըպ-տաց դառնօրէն:

—Շատ յիմար կերպով ենք բաժանւում, չէ՞,— ասաց նա:

Քոյրը ոչ մի խօսք չարտասանեց:

—Ափսո՜ս,— ակամայ դուրս թռաւ Վահա-նի բերանից:— Ի՛նչպէս ընդունեցիր և ինչ-պէս ես ճանապարհ գնում... Ա՛յ թէ որտեղ է ասուած՝ «Շատ մի սիրիր, ատել կայ»: Բայց մի մոռանար միւս դարձուածքը՝ «շատ մի ատիր, սիրել կայ»... Ինչևիցէ: Աստուած վերջը բարի անի... Այս անձրևը լաւ է: Ես վախենում էի, թէ կարկուտ կըգայ: Անցած տարի խաղողի կէսը փչացրեց անտէրը: Դէհ, մնաս բարեաւ: Շուտ փակիր դուռը. օդը վատ է. քրտնած էիր, կըմրսես:

Եւ Վահանը դուրս գնաց:

Մանէն դուռը փակեց:

XV

Գիշերուայ մի ժամին Բաղամեանը զարթ-նեց անկողնում և զգաց, որ մրսում է: Ամ-բողջ մարմնի մէջ ինչ-որ անհանգստացնող թմբիր էր զգում. բոլոր ոսկորները, մանա-ւանդ սրունքների մէջ, մղմղում էին և կոտ-

րատւում: Յիշեց, որ այդ գիշեր Մանէին ճա-նապարհ դնելուց յետոյ տուն դառնալիս այն աստիճան թրջուել էր անձրևից և քրտնել, որ հազիւ էր կարողացել շորերը հանել ան-կողին մտնելու համար. յետոյ վեր էր կա-ցել և բաց արել լուսամուտը, որովհետև ննջարանում սաստիկ տօթ էր կանգնած: Լուսամուտն այդպէս էլ բաց էր մնացել, և նրան թւում էր, թէ այժմ այդտեղից ցուրտ քամի է փչում, բայց նա սաստիկ ալարում էր վերկենալ և լուսամուտը փակել: Նա կո-լոլուեց վերմակի մէջ, ծնկները պինդ ծա-լեց սրունքների մէջ զգացած մղմիղը հան-գըստացնելու համար և նորից քնեց:

Բայց այս անգամ շատ անհանգիստ էր նրա քունը: Նրան թւում էր, թէ քնած չէ, վեր է կացել, ուզում է փակել լուսամուտը, բայց չի կարողանում, փեղկերը կպել են պատին, իսկ դրսից ցուրտ քամի է փչում, այն աստիճան ցուրտ, որ նրա ատամները զարկւում են իրար: Նա դառնում է, որ գնայ նորից պառկի, բայց յանկարծ կանգ է առ-նում. նրա առաջ կանգնած է Վահանն իր հսկայական մարմնով և ասում է՝ «Ո՞ւր էք գնում»: Արիւնը խփում է նրա գլխին, և նրան թւում է, թէ յանկարծ կրակի բոցեր են պա-տում իր մարմինը: Ցնցողաբար բարձրաց-նում է ձեռքը, որ ապտակ տայ նրա չաղ թշին, բայց մէկ էլ տեսնում է, որ իր առաջ կանգնած է ոչ թէ Վահանը, այլ Մանէն ձեռ-

քերի ափերը քունքերին դրած և շշնջում է սաստիկ չռած աչքերով՝ «Բաղամեան, մի՞թէ այդ դուք էք... դո՞ւք...»։ Բաղամեանը հա ու հա է գնում, զարկւում է լուսամուտի տախտակին, և ցուրտը սառոյց է կտրում նրա մէջքը...

Բաղամեանը շուռ եկաւ միւս կողքի վրայ և անքաց ողնաշարի մէջ զգացած ցաւից։ Նա բաց արեց աչքերը և տեսաւ, որ արդէն լուսացել է։

Գիշերուայ հեղեղից յետոյ առաւօտը հիանալի էր։ Ննջարանը ողողուած էր արևի ջերմ ճառագայթներով։ Բաց լուսամուտից երևում էր մաքուր երկինքը փիրուզի պէս բաց-կապոյտ ու անփայլ։ Սեղանի վրայ ճըկճըկում էր ծոցի ժամացոյցը։ Դուրսը, լուսամուտի տակ, մածուն ծախող վրացի գիւղացին բղաւում էր՝ «Մածո՜նի, մածո՜նի...»։

Բաղամեանը վերկացաւ անկողնից շատ վատ տրամադրութեան մէջ։ Պարզապէս ըզգում էր, որ հիւանդ է։ Մարմինը սարսըռում էր. ծնկները ծալւում էին. գլուխը կապարի ծանրութիւն էր ստացել. աչքերի կապիճների և քունքերի մէջ երբեմնակի սուր ցաւ էր զգում, գիշերը կիսաքուն անցկացրած արբած մարդու նման. թւում էր, թէ ողնաշարը կորացել ու փետացել է և չի կարողանում շտկել. երբեմն - երբեմն շունչը կտրւում էր թիկունքի մէջ զգացած ծակոցներից։

Բայց և այնպէս սովորական ժամին գնաց խմբագրատուն։ Ամեն անգամ, որ խոնարհւում էր այս կամ այն յօդուածի կամ թըղթակցութեան մէջ որևէ բառ կամ նախադասութիւն ջնջելու կամ փոփոխելու համար, նրան թւում էր, թէ գանգի մէջ ուղեղի տեղ ընկած է արճճի մի զանգուած, որ ծանրօրէն դիպչում է ճակատին և գլուխը քարշում է ներքև։

Մի կերպ վերջացնելով աշխատանքը, տուն դարձաւ։ Ախորժակն այնպէս կապուել էր, որ հացի մի պատառ անգամ չառաւ բերանը։ Նրա ամբողջ մարմինը ձգտում էր դէպի անկողին, բայց նա կարէվեր ջանք էր գործ դնում չպառկելու, որովհետև կանխազգում էր, որ եթէ պառկի, այլևս չպիտի կարողանայ վեր կենալ։

Մինչդեռ նա ուզում էր գնալ Մանէի մօտ, ուզում էր ասել նրան, որ գիշերուայ իր վարմունքի գիտակցութիւնը սպանում է իրեն, որ այդ գիտակցութեան պատճառած անտանելի տանջանքից իրեն ազատել կարող է միայն նրա ներումն ու մոռացումը։ Ներել և մոռանալ — այդ է փափագում միայն, փափագում է իր ամբողջ էութեամբ, իր հոգու ամբողջ զօրութեամբ։

Այդ տրամադրութեամբ երեկոյեան դէմ դուրս եկաւ տնից։ Քաղաքի փողոցները կամաց-կամաց լցւում էին ամառուայ երեկոներին յատուկ ժխորով։ Ամեն մի սուր ձայն, կառ-

քի ամեն մի դղրդոց անտանելի ցաւ էր պատճառում նրա հիւանդ ջղերին։ Նա կանգ առաւ տրամվայի կայարանում, սպասելով վագոնին, երբ յանկարծ առաջովը սլացող կառքերից մէկը գրաւեց նրա ուշադրութիւնը։ Այդ կառքի մէջ նստած էր Մանէի ամուսինը—Սանթրոսեանը--ժոկէի գլխարկով և երկարաճիտ կօշիկներով։ Բաղամեանը ձեռքը մեքենայաբար տարաւ դէպի գլխարկը, բայց Սանթրոսեանն, ըստ երևոյթին, չտեսաւ նրան, և կառքը սլացաւ անցաւ։

Երկար ժամանակ Բաղամեանը նայում էր կառքի ետևից տեղնուտեղը քարացած, մինչև որ կառքը չքացաւ նրա աչքից. յետոյ մեքենայաբար նստեց հէնց այնտեղ դրուած երկայն նստարանի վրայ, մի հաստ կնոջ կողքին, և չտեսաւ տրամվայի վագոնը, որ եկաւ մի-երկու րոպէ կանգնեց կայարանում և, հաստ կնոջն ու մի քանի ուրիշ նստողներ ընդունելուց յետոյ, շարունակեց ճանապարհը զանգակը զրնգրնգացնելով։

Սանթրոսեանի հանդիպումն այն աստիճան անակնկալ էր նրա համար, որ նա հարցրեց իրեն, թէ դա մի պատրանք չէ՞ր արդեօք, կառքի մէջ նստած մարդն արդեօք Սանթրոսեանն էր, թէ նրան նման օտար մի մարդ։ Երբ անակնկալի առաջին զօրեղ տպաւորութիւնն անցաւ, նա տեսաւ, որ այդտեղ զարմանալու ոչինչ չկար. մարդը կորած չէր, երկարատև բացակայութիւնից

յետոյ՝ այսօր-վաղը գալու էր, և ահա եկել է... Բայց ե՞րբ է եկել. երէկ գիշե՞ր, թէ՞ այս առաւօտ... թէ՞ հէնց նոր է գալիս։ Բաղամեանը շտապով հանեց ժամացոյցը և նայեց. ժամը վեցին մօտ էր։ Երկար ժամանակ նա աշխատում էր յիշել, թէ այդ ժամին երկաթուղու որևէ գնացք արդեօք ժամանո՞ւմ է Թիֆլիս. յետոյ վեր կացաւ և դիմեց մօտիկ կանգնած մի ոստիկանի։ Ոստիկանը չգիտէր։ Վերջը մի կառապանից իմացաւ, որ այդ ժամին ոչ մի գնացք չի ժամանում։ Ուրեմն Սանթրոսեանն եկել է կամ երէկ գիշեր կամ այս առաւօտ (այդ ժամերին արդէն,—Բաղամեանն այդ լաւ գիտէր, —գնացքներ ժամանում էին Թիֆլիս)։

Նորից նստեց նստարանի վրայ և, բոլորովին ուշադրութիւն չդարձնելով, թէ ինչ է կատարւում շուրջը, անձնատուր եղաւ մի ծանր մտատանջութեան։ Արդեօք ե՞րբ է եկել Սանթրոսեանը—գիշե՞րը, թէ՞ այս առաւօտ։ Արդեօք ի՞նչ կլինի պատահած, եթէ եկած լինի գիշերը, այսինքն այն ժամանակ, երբ Մանէն իր մօտ էր։ Արդեօք ի՞նչով կլինի բացատրած կնոջ տարաժամ բացակայութիւնը տնից և վերադարձը կէս-գիշերին։ Ի հարկէ, հարցրած կլինի, թէ որտեղ էր, և արդեօք ի՞նչ կլինի պատասխանած Մանէն... Այս և այսպիսի բազմաթիւ հարցեր մէկը միւսի ետևից փոթորկի պէս անցնում էին նրա գլխով, և նա չէր կարո-

գանում կանգ առնել որևէ մէկի վրայ, սառնօրէն մտածել, գտնել և հաւանական պատասխանը գտնել։ Բայց միևնոյն էր. ամէն մի պատասխան դարձեալ կասկածելի պիտի լինէր նրա համար և չպիտի կարողանար հանգստացնել նրան, մինչև որ չիմանար թէ երբ էր եկել Սանթրոսեանը—գիշե՞րը թէ այս առաւօտ։ Այս էր գլխաւոր հարցը, որ սաստիկ մտատանջում էր Բադամեանին, և այն միտքը, թէ Սանթրոսեանը կարող է եկած լինել գիշերը և իմացած լինել ամէն բան, սառն քրտինք էր դուրս կորզում նրա ճակատից։ Իր համար չէր, որ վախենում էր նա, այլ Մանէի համար, որովհետև գիտէր, թէ ո՛ր աստիճան անկեղծ էր իր պաշտած այդ կինը և ո՛րքան անընդունակ սուտ խօսելու, իր ուր եղածը ծածկելու, իսկ ամուսնու նախանձն ինչե՞ր ասես չի կարող անել…

Յանկարծ մի անմիտ բուռն ցանկութիւն տիրեց Բադամեանին.—գնալ ուղղակի Սանթրոսեանի մօտ, խոստովանուել նրան ամէն բան, ասել, որ Մանէն անմեղ է, առաքինի, հաւատարիմ, մաքուր. ինչ որ պահանջելու է նրանից, թող պահանջի իրենից, ինչ որ անելու է նրան, թող անի իրեն. ինքն ամէն, ամէն բանի պատրաստ է, նոյն իսկ իր կեանքն իր ձեռքով զոհաբերելու, միայն թէ չվշտացնի նրան, չվիրաւորի նրան, ձեռք չտայ նրան… Իսկ եթէ, այնուամենայնիւ, ձեռք կտայ, կըհամարձակուի ձեռք տալ,—

ճ, այն ժամանակ… Բադամեանի ջղերը սաստիկ լարուեցին, և նա վեր կացաւ ակամայ։ «Կըսպանեմ… Աստուած է վկայ, կըսպանեմ» մտածեց նա և այդ րոպէին լիովին զգում էր, որ ուրիշ կերպ վարուել չէր կարող այն մարդու հետ, որը պատահական տէրն էր իր պաշտած կնոջ,—այն կնոջ, որի մի կաթիլ արցունքը չէր փոխիլ ամբողջ աշխարհի հետ…

Բայց ամենից առաջ պէտք էր իմանալ, թէ երբ էր եկել Սանթրոսեանը։ Ի՞նչպէս իմանար, ումի՞ց իմանար։ Նրա միտն ընկաւ Հեղինէն, որը թերևս այդ օր տեսած լինէր ընկերուհուն, հետևաբար կիմանար, թէ երբ է եկել նրա ամուսինը։ Բադամեանն էլ երկար չմտածեց այդ մասին և անմիջապէս գնաց դէպի Հեղինէի տուն։

XVI

Հեղինէն տանը չէր։ Ծառան Բադամեանին հրաւիրեց սեղանատուն։ Այստեղ Բադամեանը, բացի Հեղինէի խուլուհամր քըրոջից՝ Սալոմէից, տեսաւ և Նասիբեանին։ Սալոմէն նստած էր հեշտաթեռի առաջ և գուլպա էր գործում մատների զարմանալի արագ շարժումներով։ Մայր մտնող արևի կարմրուն ճաճանչները բոցավառում էին բաց լուսամուտի ապակիների մէջ և այդտեղից անդրադառնում ոսկու պէս պլպլացող փոքրիկ մաքուր հեշտաթեռի ուռուցիկ փորի մէջ։

Սեղանի հակառակ ծայրին դրուած էին մի հոգու ճաշի դեռևս ձեռք չտուած պարագաները։ Նասիբեանն արագ քայլերով անցուդարձ էր անում սենեակի երկարութեամբ, անդադար կրծելով փոքրիկ բեխը շրթունքի մերթ ձախ, մերթ աջ կողմը։ Զայրած յուզումից նրա խորշոմած պստիկ դէմքի վրայ մկանունքները ցնցւում էին ջղաձգաբար և խոշոր աչքերը փայլում ինչ-որ չարագուշակ կրակով։ Ամէն բանից երևում էր, որ անհամբեր-սպասողական դրութեան մէջ էր։ Սալոմէն շուտ-շուտ վախեցած հայեացքներ էր ձգում նրա վրայ և սաստիկ անհանգիստ էր երևում։ Բաղամեանի գալուստը խիստ ուրախացրեց նրան։ Նա վեր թռաւ տեղից և Բաղամեանին տարաւ նստեցրեց իր մօտ։

—Օրիորդը ո՞րտեղ է, շո՞ւտ կըգայ,—հարցրեց Բաղամեանը բարձրաձայն, մոռանալով, որ ինչքան էլ բարձր խօսի—միևնոյն է, Սալոմէն չի լսիլ։

Սալոմէն նրա առաջը քաշեց մի կտոր թուղթ ու մատիտ, որ մշտապատրաստ պահում էր իր մօտ։

Բաղամեանը գրեց իր հարցմունքը։

Սալոմէն կարդաց, թուղթը շուռ տուեց և մատով ցոյց տուեց իր պատասխանը, որ գրել էր արդէն Նասիբեանի գրած նոյն հարցմունքի տակ. «Չգիտեմ։ Այսօր շատ ուշացաւ»։

Երբ Բաղամեանը կարդաց այդ պատասխանը, Սալոմէն մտահոգ հայեացքով ծա-

ծուկ նրա ուշադրութիւնը հրաւիրեց Նասիբեանի վրայ և գրեց հետևեալը. «Լաւ է, որ եկաք։ Ես սաստիկ վախենում եմ այդ պարոնից։ Մէկ հարցրէք՝ ինչ է ուզում, ինչո՞ւ հանգիստ չի տալիս քրոջս»։ Երբ Բաղամեանն այդ էլ կարդաց, Սալոմէն վերցրեց թուղթը, ճմռեց և գրպանը կոխեց, երևի վախենալով, թէ մի գուցէ Նասիբեանը կարդայ։

Բաղամեանը նայեց Նասիբեանին։ Նասիբեանը շարունակում էր ջղային արագ քայլերով անցուդարձ անել սենեակում, և ամէն մի անցուդարձի ժամանակ վայրկենաբար հանգչում և նորից վառւում էին հեշտասերի փորի մէջ լուսամուտի ապակիներից անդրադարձող արևի ճաճանչները։

—Նասիբեան, ինչ է պատահել,—հարցրեց Բաղամեանը զարմացած, նոր նկատելով, որ նա չափազանց յուզուած է։

—Ինչ որ պատահել է, կըտեսնես,—արտասանեց Նասիբեանն ատամների միջից, քայլելիս մի պապիրոս հանեց, վառեց և լուցկին շպրտեց բաց լուսամուտից դուրս։

«Էլի հին պատմութիւնը» մտածեց Բաղամեանը, որին շատ լաւ յայտնի էին Նասիբեանի և Հեղինէի տարօրինակ յարաբերութիւնները։ Նա այլևս չփորձեց որևէ բան իմանալու Նասիբեանից։ Այդ միջոցին նրան ոչինչ չէր հետաքրքրում. նրան զբաղեցնում էր միայն այն տաժանելի միտքը, թէ երբ

էր եկել Սանթրոսեանը և Հեղինէն կըգիտենար արդեօք այդ:

Վերջապէս եկաւ Հեղինէն: Նա մտաւ իրեն յատուկ աղմկալի քայլերով, մանկաբարձական գործիքների անբաժան պայուսակը ձեռքին, շոգից և շատ քայլելուց կարմրատակած ու քրտնած:

Նրան տեսնելուն պէս Նասիբեանը կանգ առաւ և դադարեց բեխը կրծելուց:

Հեղինէն ամենևին ուշադրութիւն չդարձրեց նրան կամ ցոյց տուեց, թէ ուշադրութիւն չի դարձնում, անցաւ ուղղակի նրա քթի տակով, մի բարև շպրտեց Բաղամեանին, պայուսակն ու փեղոյրը դրեց լուսամուտի տախտակի վրայ և գնաց նստեց սեղանի մօտ:

—Օ՛հ, մեռայ,—ասաց նա, յոգնած ետ ընկաւ աթոռի մէջքին, պենսնէն վերցրեց քթից և սկսեց թաշկինակով հով անել երեսին: Յետոյ, յանկարծ տեսնելով ճաշի պարագաները, դարձաւ քրոջը.—Այս ի՞նչ է: Ես ճաշել եմ: Հաւաքել տուր այս բաները:

Սալոմէն հասկացաւ նրան: Երկու քոյրերն առհասարակ այնքան վարժուել էին, որ հասկանում և հասկացնում էին իրար ամեն բան առանց որևէ դժուարութեան. իսկ դժուար դէպքերում, երբ գրելը սրտամաշ մի բան էր, մանաւանդ Հեղինէի համար, հասկացնում էին իրար մատներով, որոնց ամեն մի շարժումն առանձին տառի նշանակու-

թիւն ունէր նրանց համար, իսկ այդ պայմանական տառերից նրանք ամբողջ բառեր և նախադասութիւններ էին կազմում: Բայց Սալոմէն Հեղինէի ասածը հասկանում էր մեծ մասամբ նրա շրթունքների շարժումներից, այնպէս որ Հեղինէն շատ անգամ իր ասելիքն ասում էր առանց որևէ ձայն հանելու, այլ միայն շարժում էր շրթունքները որոշակի: Առհասարակ կանանց և երեխաների ասածը Սալոմէն աւելի լաւ էր հասկանում, քան տղամարդկանց ասածը, որոնց բեխերը խանգարում էին նրան նրանց շըրթունքների շարժումը որոշակի նկատելու:

Սալոմէն վերկացաւ, գուլպան դրեց աթոռի վրայ և սկսեց իր ձեռքով հաւաքել ճաշի պարագաները:

—Անտանելի պաշտօն է մեր այս պաշտօնը,—ասաց Հեղինէն, դառնալով Բաղամեանին:—Մի րոպէ հանգստութիւն չունինք: Մի տնից քարշ ենք տալիս միւսը: Էլի վնաս չունի, եթէ ցերեկն է պատահում այդ. բայց որ կէս գիշերին են գալիս, երբ անկողնումդ քաղցր քնած ես լինում, դէ կարող էք, էլի, երևակայել... Արի տես, որ մեր այս օրհնուած կանայք էլ մեծ մասամբ գիշերներն են ցաւում: Առհասարակ ես նըկատել եմ, որ մարդկային արարածները աշխարհ են գալիս և աշխարհից հեռանում մեծ մասամբ գիշերները... Բայց ի՞նչ է պատահել ձեզ. հիւա՞նդ էք,—հարցրեց նա

պենս-նէն դնելով և դիտելով Բաղամեանի գունատ դիմքը:

—Հա, մի քիչ մրսել եմ:

—Եւ ի՞նչ. եկել էք, որ բժշկէ՞մ,—հարցրեց Հեղինէն ծիծաղելով և յանկարծ վրայ բերեց.—Հա՛, կարող եմ շնորհաւորել ձեզ. Սանթրոսեանն եկել է:

—Դուք ո՞րտեղից գիտէք այդ,—հարցրեց Բաղամեանն ուրախացած, որ Հեղինէն ինքն սկսեց խօսել իրեն այնքան մտատանջող հարցի մասին:

—Այս առաւօտ տեսայ նրան, այն ժամանակ, երբ կառքով տուն էր գնում կայարանից: Վահանն էլ հետն էր:

Բաղամեանը սաստիկ թեթևացած շունչ քաշեց: Հարցը լուծուած էր. Սանթրոսեանն եկել էր առաւօտեան: Ուրեմն Մանէն... «Ա՛խ, որքա՜ն սիրում եմ, որքա՜ն սիրում...» մտածեց Բաղամեանը տանջող անձկութեամբ:

Հեղինէն նայեց նրան խորամանկ ժպիտով:

—Եկէք մի բան ասեմ, Բաղամեան, չնեղանաք:

—Ի՞նչ:

—Դուք վախենում էք:

—Ումի՞ց:

—Ես ի՞նչ գիտեմ,—բացականչեց Հեղինէն և այս անգամ ծիծաղեց նոյն իսկ վիրաւորական կերպով:

Չնայելով իր ինքնազգացումին, Բաղա-

մեանն այնուամենայնիւ շփոթուեց և ակամայ հարց տուեց ինքն իրեն՝ յիրաւի արդեօք Մանէի համա՞ր էր իր մտահոգութիւնը, թէ՞ իր անձի համար ևս...

—Ես դեռ չտեսայ մի մարդ,—շարունակեց Հեղինէն,—որ սիրելիս լինի ուրիշի կնոջը և սարսափելիս չլինի նրա ամուսնուց... Խնդրեմ, խնդրեմ, մի փորձէք հակաճառել. ես գիտեմ, ինչ որ ասում եմ... Բայց զարմանալի երևոյթ. այդպիսի բան կանանց մէջ չի նկատւում. կինն ամուսնացած տղամարդուն սիրած ժամանակ իսկի բանի տեղ չի դնում նրա կնոջը: Ինչո՞վ կբացատրէք այս:

—Որովհետև այդպիսի կանայք սովորաբար պոռնկական բնաւորութիւն են ունենում,—լսուեց նրա ետևից:

Հեղինէն, որ կարծես բոլորովին մոռացել էր Նասիբեանի ներկայութիւնը, ուսի վրայից նայեց նրան և ոչինչ չասաց:

Ճաշի պարագաները հաւաքելուց յետոյ, Սալոմէն նստեց իր առաջուայ տեղը, հեշտաեռի մօտ: Նա դարձաւ քրոջը և ինչ-որ անախորժ ձայներ արձակեց:

Հեղինէն հասկացաւ նրան և պատասխանեց վանկ-վանկ, աշխատելով որոշ արտայայտութիւն տալ շրթունքների շարժմանը.

—Ու-շա-ցայ, ո-րով-հե-տև ճա-նա-պար-հին բը-նե-ցին տա-րան ու-րիշ ծը-նընդ-կա-նի մօտ:

— Սուտ ես ասում,— յանկարծ աղաղակեց Նասիբեանը և կանգ առաւ դողալով:

Հեղինէն աթոռի վրայ դարձաւ դէպի նա:

— Պարոն, ես քեզ խորհուրդ եմ տալիս խելօք կալ,— ասաց նա սպառնալից հանդարտութեամբ:— Այսքան ժամանակ համբերեցի, բայց էլ մտադիր չեմ համբերելու. մէկ էլ տեսար ծառային կանչեցի և վզակոթից տալով փողոց շպրտել տուի:

Նասիբեանը փրփրաց:

— Ի՞նչ... ի՞նչ... դեռ խօսում է՞լ ես... դեռ սպառնում է՞լ ես,— ֆշշացրեց նա ատամները սեղմած, ձեռքերը բռունցք կազմած և հետզհետէ մօտենալով Հեղինէին սպառնագին:

Հեղինէն վեր թռաւ տեղից և վերցրեց թէյի դատարկ բաժակներից մէկը:

— Չմօտենաս, թէ չէ՝ տեսնո՞ւմ ես այս բաժակը... ճակատիդ վրայ կըփշրեմ:

Բաղամեանին այստեղ էլ վիճակուած էր նոյն դերը կատարել, ինչ որ Թաւրոնի պարտէզում Վահանի և Նասիբեանի միջև պատահած ընդհարման ժամանակ: Նա վեր կացաւ, գրկեց Նասիբեանի պստիկ մարմինը և հեռացրեց:

Բայց Նասիբեանն այդ բանից աւելի փըրփրաց:

— Թո՛ղ, մի՛ բռնիր,— աղաղակեց նա, անզուսպ կատաղութեամբ խփելով Բաղամեանի կրծքին:

Բաղամեանը թողեց նրան, բայց ձեռքերով կալեց նրա ճանապարհը:

Այն ժամանակ Բաղամեանի ուսի վրայից դառնալով դէպի Հեղինէն, Նասիբեանը շարունակեց աղաղակել.

— Դու սուտ ես ասում, քեզ ոչ մի նոր ծննդկանի մօտ չեն տարել, այլ դու եղել ես այն պարոնի մօտ և նրա մօտ էլ ճաշել... Կարծում ես, ես այդ չգիտե՞մ... Ես ամեն բան գիտեմ, և ինձ չես կարող խաբել... Լսո՞ւմ ես, չես կարող...

— Խե՜ղճ իմ գլուխ: Հապա ի՞նչ անեմ, որ չխաբեմ, ոտներս դողում են քեզնից,— ասաց Հեղինէն ծիծաղելով:

— Ծաղրում էլ ես, հա՞... Ծիծաղում էլ ես, հա՞... Ես քեզ... կըմորթեմ,— ճչաց Նասիբեանը:

— Թէ Աստուծդ կըսիրես,— ասաց Հեղինէն աւելի բարձրաձայն ծիծաղելով:— Ա՛յ քոսոտ, հաւ որ մորթես, այն էլ մեծ քաջութիւն կըլինի քո կողմից... Բաղամեան, ի՞նչ էք բռնել: Թողէք, ի սէր Աստուծոյ. կըկարծի թէ իսկապէս մի բան է, որ ձեռները բռնում են:

Բաղամեանն ազատ թողեց Նասիբեանին: «Փու, ի՞նչ զզուելի է...» մտածեց նա:

Նասիբեանը կատուի պէս հաւաքեց իրեն, ըստ երևոյթին պատրաստուելով յանկարծ ոստնել դէպի Հեղինէն:

Հեղինէն նորից վերցրեց թէյի դատարկ բաժակը։

— Համարձակուիր մօտենալ, համարձակուիր,— սպառնաց նա հաստատուն ձայնով։

Խուլ ու համր Սալոմէն, որ մինչև այժմ սարսափահար նայում էր մերթ Նասիբեանին, մերթ քրոջը, առաջ նետուեց Նասիբեանի ճանապարհը փակելու համար, բայց քոյրն իսկոյն բռնեց նրա թևից, նստեցրեց և, նորից դառնալով Նասիբեանին, կանչեց նոյն հաստատուն ձայնով.

—Արի… քաջ ես, մօտեցիր։

Հեղինէի մարտակոչն այն աստիճան ազդու էր, որ Նասիբեանը տեղից շարժուել չկարողացաւ։ Նա ուզում էր խօսել, աղաղակել առաջուայ պէս, նոյն իսկ ջարդել, փշրել, բայց այն գիտակցութիւնը, որ ինքը ոչինչ չի կարող անել, կապում էր նրա ձեռքն ու ոտքը և խեղդում նրան։ Կարճ ժամանակ երկու ախոյեան կանգնած էին իրար դէմ առ դէմ, երկուսն էլ լուռ, բայց մէկն անզօր կատաղութիւնից ինքն իրեն ուտելով, միւսը հանգիստ և անսասան, բայց խիստ վճռական-սպառնական դիրք բռնած։

—Ես հիմա ոչինչ չեմ անիլ… ոչինչ չեմ կարող անել, դժբաղդաբար,—ասաց, վերջապէս, Նասիբեանը ծանր շնչելով։

—Թէ Աստուածդ կըսիրես,—ծաղրեց Հեղինէն։

—Բայց ուրիշ անգամ… կըտեսնես…

—Եթէ դու կըհամարձակուես դարձեալ ոտ դնել այստեղ, ոտդ կըփշրեմ։

—Շատ բարի, շատ բարի, շատ բարի,— արտասանեց Նասիբեանն ատամների միջից, գլխարկը թռցրեց աթոռի վրայից և արագ քայլերով դիմեց դէպի դուռը։ Այստեղ յանկարծ կանգ առաւ և շուռ եկաւ դէպի Հեղինէն։— Բայց այժմ գիտե՞ս ինչ կասեմ քեզ։ Ես կասեմ, որ դու… ծախու արարած ես։

Եւ նախ, քան նա դուրս կըգնար, ինչ-որ մի բան ուժգնօրէն տրաքեց նրա ականջի մօտ և ինչ-որ սուր-սուր բաներ մանրիկ սառոյցների պէս դիպան նրա երեսին։ Դա թէյի բաժակն էր, որ Հեղինէն ձեռքի կատաղի թափով շպրտեց նրա ետևից։ Բաժակը թռաւ սեղանի մօտ նստած Բաղամեանի գլխով, շեշտակի անցաւ Նասիբեանի ականջի մօտով և, դիպչելով դռանը, տրաքեց ու փշուր-փշուր ցանուցիր եղաւ յատակի վրայ։

Նասիբեանը չքացաւ սենեակից։

Տեսարանն այնքան ազդեղ էր, որ Բաղամեանն ակամայ դարձրեց երեսը, որպէսզի չնայի Հեղինէին։ Նա իր մէջ վիրաւորուած էր տեսնում այն նուրբ զգացումը, որ տածում էր առհասարակ դէպի կին-արարածը, իսկ այդ րոպէին իր առաջ տեսնում էր ոչ թէ մի կին, մի քնքոյշ արարած, որի բոլոր գրաւչութիւնն իր քնքշութեան մէջն է, այլ մի կոպիտ տղամարդ, որը հարկաւոր դէպքում պատրաստ է դիմելու բռունցքի։

Իսկ խեղճ Սալոմէն, մեռելի պէս գունատուած, նայում էր քրոջ դէմքին սարսափահար և, առանց այն էլ լեզու չունենալով, բոլորովին զրկուել էր ձայն հանելու ընդունակութիւնից:

Հեղինէն կանգնած էր սեղանի մօտ և, գունատ, ամբողջ մարմնով դողում էր կատաղութիւնից: Բաժակը շպրտելիս պենսնէն ընկել էր նրա քթից և գայթանի վրայ կախ ընկել նրա կրծքին:

— Ա՛խ, թէ մի կըդիպչէր... ախ, թէ մի կըդիպչէր, — ասում էր նա գոհացում չստացած վրիժառութեան անզօրութեամբ: — Գըժւում եմ, գժւում, որ մտածում եմ, թէ ինչպէս նա համարձակւում է այդպիսի իրաւունքներ բանեցնել ինձ վրայ, գոռալ, յոխորտալ, այդպիսի անամօթ խօսքեր ասել երեսիս... Ինչպէ՜ս է համարձակւում... Այսպիսի բան տեսնուած կա՞յ աշխարհիս երեսին... Երէկուայ քնձռոտ, քոսոտ շունը, որի առաջ խղճահարութիւնից մի քիչ հացի փշրանք եմ նետել, այսօր տէր ու տիրական է դառել գլխիս, հաշիւներ է պահանջում ինձնից, վիրաւորում է ինձ ամենալիրբ կերպով... Եւ այս բանն ես ստիպուած եմ տանել ամէ՛ն օր, շարունակ... Սա ի՛նչ դրութիւն է, սա ի՛նչ դրութիւն է...

Հեղինէն ոտով դէն հրեց աթոռը, պենսնէն քթին դրեց և, խիստ յուզուած, սկսեց անցուդարձ անել սենեակում:

— Ո՛չ, բաւական է, — աղաղակեց նա. — այլ ես չեմ կարող դիմանալ: Մինչև այժմ ես միայն սպառնում էի, բայց չէի կատարում սպառնալիքս, իսկ այժմ... Ես կըգնամ ոստիկանատուն և ապահովութիւն կըպահանջեմ... Այսպէս չի կարելի... Մարդ հանգստութիւն չունենայ մինչև անգամ իր սեպհական տանը... Սա ի՛նչ դրութիւն է... Գոնէ մի խօսքով, մի ամենահասարակ խօսքով կապուած լինեմ նրա հետ, էլի կասեմ՝ քարն իմ գլուխը, իրաւունք ունի. բայց, ախր, ես ո՞վ, նա ո՞վ, ի՛նչ կապ կայ մեր մէջ... Մի խան, մի փաշա, մի սուլթան այն իրաւունքները չի բանեցնիլ իր հարճի վրայ, ինչ իրաւունքներ որ նա է բանեցնում ինձ վրայ... Սա գժուելու բան չէ՞...

Յատակի վրայ ցրիւ եկած բաժակի փըշուրները ընկնում էին նրա ոտների տակ և ճրխկալով աւելի ես փշրւում. այդպիսի դէպքերում նա կանգ էր առնում, ոտով շպրտում էր փշուրները պատի կողմը և նորից շարունակում իր ջղային քայլուածքը:

Յանկարծ նա կանգ առաւ Բաղամեանի առաջ, որը, բոլորովին անտարբեր ու անզգայ, նայում էր լուսամուտի ապակիներին, որոնց մէջ հետզհետէ հանգչում էին արևի ճաճանչները:

— Վիպասան մարդ էք. ահա՛ ձեզ մի տիպ, Անաչառ հայոց ազգի պատմական մի տիպ: Ինչո՞ւ չէք եղէք, դուրս բերէք այդ տիպը:

դուրս բերում։ Երևի կասէք, որ դա տիպ չէ, որ դա պարոդիա է։ Բայց ո՞ր ազատամիտը մեզնում պարոդիա չէ, ասացէք խընդրեմ, ո՞ր ազատամիտը…

Բաղամեանն արմունկները դրեց սեղանի վրայ, աչքերը փակեց և ճակատն ու քունքերը սեղմեց մատների մէջ։ Նա սիրտ չունէր խօսելու. հազիւ թէ լսում էլ էր Հեղինէի ասածները. զգում էր միայն, որ նրա ծկլթոցները սաստիկ գրգռում են իր ջղերը։ Այժմ նա բոլորովին հիւանդ էր զգում իրեն. գլուխը սաստիկ ցաւում էր. ճակատը մերթ սառում էր, մերթ վառւում. բերանի մէջ անհամութիւն էր զգում, կարծես դառն բան լինէր կերած. մէջքը և սրունքները կոտրատւում էին առաւօտուանից աւելի սաստիկ. անհուն փափագ էր զգում պառկելու և պինդ, սաստիկ պինդ ծալելու ծնկները։

—Դուք լսում էք, հա՞,—շարունակեց Հեղինէն։—Լսում էք, որովհետև հաշիւներիդ չի գալիս, որ խօսէք, չէ՞։ Դուք սովորած էք չըտեսնելուն տալ այս զզըալի տիպը, որովհետև ձեր կուսակցութեանն է պատկանում, չէ՞… Բայց իմացէք. այսուհետև ես թքել եմ ձեր բոլոր կուսակցութիւնների վրայ, որովհետև ձեր այդ կուսակցութիւնների անունը կայ միայն, իսկ ամանումը… ցեխ կայ միայն։ Ես այժմ հասկանում եմ Վահանին. նա բոլորովին իրաւունք ունէր արհամարհելու և ծաղրելու ձեզ բոլորիդ էլ, որովհետև ի՞նչ

էք դուք.—Ֆրազեօրներ և կապիկներ։ Ձեզ որ փետրահան անենք, տակներիցդ մի-մի մզզսի դուրս կըգայ։ Բայց ափսոս չէ՞ մըղդըլին. Նա գոնէ համբերատար է. իսկ ձեր հոգու խորքում մի-մի սուլթան կայ նստած։ Դուք ազատամիտ, մինչև անգամ չափազանց ազատամիտ էք, երբ գործը չի վերաբերում ձեր անձնականին. բայց հէնց որ բանը գալիս է ձեր կաշուն, դուք ամենաթունդ խաւարամտից էլ խաւարամիտ և, որ ամենագարշելին է, պարզապէս բռնակալ էք դառնում։ Ձեր այս անտանելի օդում խեղդուել կարելի է…

Բաղամեանը վեր կացաւ։

—Ներեցէք, ես գնում եմ։

Հեղինէն յանկարծ լռեց և զարմացած նայեց նրան։

—Գնո՞ւմ էք։

—Այո։ Վատ եմ զգում ինձ։

—Թէ՞ նեղացաք իմ խօսքերից։

—Ոչ։ Ձեր խօսքերը, յամենայն դէպս, աւելորդ էին, և դուք էլ իզուր էք այդքան տաքանում. մի՞թէ չէք տեսնում, որ նա շատ էլ նորմալ վիճակի մէջ չէ…

—Որ այդպէս է, թող գնայ գժատուն, ինչո՞ւ է ինձ մօտ գալիս։

—Վերջիվերջոյ կըգնայ, ապահով եղէք։

XVII

Տուն հասնելուն պէս Բաղամեանը պառկեց։ Մարմնի մէջ սաստիկ ցուրտ էր զգում. այնուհետև ջերմեց։ Թիկունքի մէջ ծակոցները սաստկացել էին։ Գիշերն անցկացրեց խիստ անհանգիստ։ Սաստիկ տաքութեան մէջ նրան թւում էր, թէ պտտւում է վէգի պէս և այդպէս պտտւելով գլխիվայր սլանում է չեչտակի մի մութ անդունդ լի ինչ-որ աղօտ-փայլուն բծերով՝ նման մանրիկ աստղերի։

Առաւօտեան ծառային ուղարկեց ծանօթ բժշկի ետևից։ Բժիշկը հանգստացրեց նրան, ասելով, որ ոչինչ չկայ, հարկաւոր է միայն տաք մնալ և քրտնել. և դեղ գրեց։ Սակայն օրուայ ընթացքում Բաղամեանը նորից դողացրեց և ջերմեց։ Երրորդ օրը նկատեց, որ չոր կերպով հազում է։ Այդ բանը վախեցրեց նրան։ Բժիշկը նորից եկաւ. այս անգամ ուշի-ուշով քննեց հիւանդի թոքերը և ասաց, որ հարկաւոր է շատ զգոյշ կենալ, և նոր դեղ գրեց։

Սակայն այլևս ոչ մի զգուշութիւն և ոչ մի դեղ չօգնեց։ Թոքերի բորբոքումը գնալով սաստկանում էր. օր օրի վրայ բարձրանում էր տաքութեան աստիճանը. հիւանդը չէր կարողանում ամոքել ծարաւը կաթի և սելթերեան ջրի խառնուրդով, որ բժիշկը պատուիրել էր խմել ջրի տեղ։ Իսկ

հազը հետզհետէ չորանում էր և ուժեղանում։ Հինգերորդ օրուանից գիշերները, երբ տաքութեան աստիճանը խիստ բարձրանում էր, նա կորցնում էր ուշքը և զառանցում։ Սակայն առաւօտները համեմատաբար լաւ էր լինում և կարողանում էր մտածել իր դրութեան մասին։ Իսկ այդ դրութիւնը նրան հանաք բան չէր երևում։ Նրան վախեցնում էր մանաւանդ այդ չոր հազը, որ ուժգնութեան րոպէներին կարծես ուզում էր պոկել նրա թոքերը և դուրս շպրտել բերանից։

Ուշքը գլխին եղած ժամանակ նրա միտքը շարունակ պտտւում էր Մանէի շուրջը, և մի տարօրինակ եսական - վրէժխնդրական զգացում թելադրում էր նրան մեռնել։ Նրա ջերմոտ-երևակայութիւնը ստեղծում էր զանազան սանտիմենտալ տեսարաններ, և նա առանձին հաճութեամբ կանգ էր առնում այն տեսարանի վրայ, թէ ինչպէս ինքը պառկած է դագաղի մէջ, ձեռքերը կրծքին ծալած, գլուխն ուսին ծռած, վարդերի և ծաղիկների մէջ թաղուած, և թէ ինչպէս Մանէն չոքած է դագաղի առաջ սև հագուստով և, դէմքը ձեռքերով ծածկած, հեկեկում է անմխիթար արցունքներով։ Իսկ Սանթրոսեանը... Սակայն Սանթրոսեանի մասին Բաղամեանի երևակայութիւնը ոչինչ չէր կարողանում ստեղծել. տեսնում էր միայն նրա ժակէտի գլխարկը և երկարաճիտ կօշիկները։

Ութերորդ օրը հիւանդի վիճակը բոլորո-

բոլին վատացաւ։ Այդ օրը, երեկոյեան դէմ, նրան առաջին անգամ այցելեց Հեղինէն։

—Բաղամեան, ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նա խոնարհուելով հիւանդի բոլորո-վին փոխուած դէմքի վրայ։

Բաղամեանը, սաստիկ տաքութեան մէջ, շաղուած աչքերով նայեց նրան, ինչ-որ շը-շընջաց և ողխտալած, կարծես կաթնոտ լե-զուով սկսեց լպստել չորացած և տեղ-տեղ ճաքած շրթունքները։

Հեղինէն ձեռքի ափը դրեց նրա ճակատի վրայ. ճակատը չոր էր մագաղաթի պէս և այրւում էր վառարանի նման։

—Այս ե՞րբ էք այսպէս մրսել։ Անցած շա-բաթ որ մեր տանն էիք, այն օրուանի՞ց էք պառկած։

Հիւանդը տենդից վառուող աչքերով նա-յում էր Հեղինէին և, ըստ երևոյթին, չէր հասկանում, թէ ինչ էր ասում նա։

Հեղինէն աւելի խոնարհուեց նրա դէմքի վրայ։

—Բաղամեան... Բժիշկ գալի՞ս է։

Հիւանդը գլխով դրական շարժում արաւ։

—Ո՞վ է նայում ձեզ։

—Ի՞նչ...

—Ո՞վ է նայում, ասում եմ, ձեզ։

—Ծառան։

—Բժիշկն այսօր եկե՞լ է։

—Չգիտեմ։

Սաստիկ ջերմը մթագնել էր հիւանդի յի-

շողութիւնը։ Խօսելիս նրա ձայնը հազիւ էր լսւում։ Նա չէր դադարում շրթունքները լը-պստելուց, շնչում էր խիստ արագ և լսելի հեթեթոցով և վառուող, անմիտ, կարծես սարսափահար աչքերը չէր հեռացնում Հե-ղինէի դէմքից։

Հեղինէն անհանգիստ դրութեան մէջ էր. չէր իմանում գնայ, թէ մնայ, որ եկաւ բը-ժիշկը։ Նրանք լաւ ծանօթ էին իրար։ Հի-ւանդի վիճակը լուրջ մտատութեամբ քննե-լուց յետոյ բժիշկը փսփսաց Հեղինէի ականջին.

Դուք գիտէ՞ք, որ դրութիւնը շատ վը-տանգաւոր է։

—Դա պարզ է,—նկատեց Հեղինէն։

—Այս գիշեր անպատճառ կրիզիս կլինի։ Վատն այն է, որ մարդ չկայ մօտը։ Ծա-ռայի խնամքին թողնել անկարելի է։ Դեղե-րը գրեթէ ամենևին չեն գործածւում։ Ես շատ սխալուեցի, որ հէնց սկզբից չփոխա-դրեցի հիւանդանոց։ Այժմ մնում է, որ մի ֆելդշեր կամ գթութեան մի քոյր կանչենք։

—Ի՞նչ էք կարծում, եթէ մեր տուն փո-խադրենք...

—Ի՞նչ էք ասում... այս դրութեան մէ՞ջ... Անկարելի է։

—Իսկ եթէ ես մնամ։

—Դո՞ւք... Դրանով, ի հարկէ, մեծ բա-րութիւն արած կլինիք։

—Շատ բարի, կմնամ։ Այսօր մի առան-ձին գործ էլ չունիմ։

Եւ Հեղինէն մնաց:

Բժիշկը նոր էր հեռացել, որ հիւանդի սենեակը մտաւ Զաքարը: Յայտնի չէր որտեղից էր իմացել նա իր եղբօրորդու հիւանդութիւնը և թէպէտ չէր սիրում նրան և երկար ժամանակ չէր եղել նրա մօտ, բայց և այնպէս արենակցական զգացումը ստիպել էր ծերունուն այցելելու հիւանդին: Ծերունին անձամբ ծանօթ էր Հեղինէին, լաւ կարծիք չունէր նրա բարոյականի մասին, մանաւանդ Նասիբեանի մօր պատմութիւնը լսելուց յետոյ, և այժմ կասկածանքով վերաբերուեց այն բանին, որ նրան տեսաւ հիւանդի մօտ: Զաքարը նստեց հիւանդի մօտ, փորձեց խօսեցնել նրան, բայց Բադամեանը չճանաչեց ծերունուն: Հեղինէն խնդրեց Զաքարին, որ հիւանդին չանհանգստացնի, և դուրս տարաւ նրան կից սենեակը: Եղբօրորդու գրութիւնը, ըստ երևոյթին, ծանր տպաւորութիւն էր թողել Զաքարի վրայ, բայց նա չէր կորցրել ծերունիներին յատուկ սառնասրտութիւնը: Կից սենեակում նա ծանր ու բարակ նստեց աթոռի վրայ և հարցրեց.

—Էս ո՞նց եղաւ, որ մեռնում է:

Հեղինէն նայեց նրա թաւ յոնքերին, և նրան ապշեցրեց այն անսասան խաղաղութիւնը, որ արտայայտում էին նրա աչքերը, նրա դէմքի ամեն մի խորշը: Այդ պառա-

մեալ ծերունին կարծես թէ հարցնում էր մի շատ հասարակ բան:

—Ո՞րտեղից հնարեցիք, թէ մեռնում է,— նկատեց Հեղինէն դժկամակութեամբ:

—Աչքերը... աչքերը լաւ չէին,— շշնջաց ծերունին կարծես ինքն իրեն: Մի քիչ լռելուց յետոյ, նորից իր թաւ յոնքերի տակից նայեց Հեղինէի աչքերին և հարցրեց նոյն խաղաղ ձայնով.—Տէրտէրին իմաց տուե՞լ էք:

Հեղինէն այս անգամ չկարողացաւ զսպել իր զայրոյթը:

—Ինչե՞ր էք ասում, չեմ հասկանում,— բացականչեց նա:— Եկաք-չեկաք, մեռնելու և տէրտէրի մասին էք խօսում... Զօրո՞վ էք ուզում, ինչ է, որ մեռնի...

Վերջին խօսքերը Հեղինէի բերանից դուրս թռան ինքնաբերաբար, և նա մտածեց, թէ մի՞թէ այդ փտած ծերունին պիտի հանդիսանար Բադամեանի ժառանգը, քանի որ Բադամեանն ուրիշ ոչ մի աւելի մօտիկ ազգական չունէր: Այդ միտքը բոլորովին վրդովեց նրան, և նա աւելացրեց աւելի եւս զայրագին.

—Հէնց թէկուզ մեռնելիս էլ լինի, մի՞թէ ձեր տէրտէրը պիտի փրկի:

—Տէրտէրը չի փրկիլ, որդի, բայց տէրտէրի տուած հաղորդը կըփրկի:

—Ո՞նց չէ. որ հաղորդես, է, իսկոյն ոտի կըկանգնի:

—Հաղորդը դեղ խօ չի, որդի, որ առող-ջացնի։ Հաղորդը հոգու համար է, որ սրբի մեղքերից։ Մարմինը չի փրկիլ, բայց հո-գին կըփրկի։

—Հոգի՞… ի՜նչ հոգի,—բացականչեց Հե-ղինէն գրգռուած ոչ այնքան նրա խօսքե-րից, որքան նրա հանդիսա-դոգմատիքական տոնից։—Մարմինն ինքը հոգի է՝ քանի կեն-դանի է. իսկ երբոր մեռնի, հոգի էլ ո՞րտե-ղից կըլինի, որ փրկես…

Զաքարը լսում էր Հեղինէի խօսքերի տա-րափը վերին աստիճանի ապշած։ Մինչև անգամ նրան տիրել էր սրբազան մի սար-սափ, որ այնտեղ, կից սենեակում, մարդը պատրաստւում էր աւանդելու իր հոգին, իսկ այստեղ ուրանում էին այդ հոգու գո-յութիւնը, հեռաւոր և այն ահեղ դատաս-տանը, որի առաջ պատասխանատու պիտի լինէր այդ հոգին իր երկրաւոր մեղսալից կեանքի համար…

—Բաս հոգի չկայ, Ե՞լի,—հարցրեց նա։—Ու երբոր հոգի չկայ, բաս Աստծու ահեղ դատաստան էլ չկայ, Ե՞լի…

—Չկայ, բաս կա՞յ։

—Բաս տէրտէրը սուտ է ասում, Ե՞լի։

—Է՜հ, թողէք, թէ Աստուած կըսիրէք,—գրգռուած արտասանեց Հեղինէն և, որպէս-զի ծերունին երկար չխօսի, դուրս գնաց հիւանդի սենեակը։ Այնուհետև, երբ նորից

դուրս եկաւ այնտեղից, ծերունին արդէն պատրաստւում էր գնալու։

—Ես ուրիշ բան չեմ ասիլ, որդի,—ասաց Զաքարը։—Մենակ կասեմ՝ վա՜յ քու հոգուն… վա՜յ, վա՜յ, հազար վայ… Դու, որ աղջիկ ես, այդպէս ես խօսում, բաս տղերքն ինչ-պէս կըլինեն խօսելիս… Ես զարմանում եմ, որ աշխարհս դեռ դիմանում է, չի կործան-ւում, ինչպէս որ կործանուեց Սոդոմ-Գո-մորը…

—Ուրեմն, երևի շատ էլ մեղաւոր չենք, որ չի կործանւում,—կծու կերպով նկատեց Հե-ղինէն։

—Հ՛ըմ, ստախօս հալա… Աստծու համբե-րութիւնն էլ վերջ ունի…

XVIII

Զաքարը հիւանդի բնակարանից դիմեց դէպի Սանթրոսեանների տուն։ Նա վերին աստիճանի վրդովուած էր Հեղինէի վար-մունքից և ուզում էր իր սրտի մէջ ամբար-ւած մաղձը թափել այնտեղ, ուր իրեն հաս-կանում և համակրանքով էին վերաբեր-ւում։

Արևը նոր էր մայր մտել և սենեակում դեռևս բաւական լոյս էր։ Մանէն և սկեսու-րը նստած էին ճաշասենեակում։ Մանէն հաւաքում էր թէյի պարագաները։ Թէյը խմելուց յետոյ Սանթրոսեանը և Վահանը

առանձնացել էին հիւրասենեակը, որ գտնւում էր ճաշասենեակին կից և որի դուռը բաց էր։ Նրանք գործնական խօսակցութեան մէջ էին, և նրանց ձայները պարզորոշ լսւում էին ճաշասենեակում։

Սանթրոսեանը հանքային գործին կպած էր ֆանատիկոսի եռանդով։ Նա կազմել էր հսկայական ծրագիրներ ապագայի համար, բայց առայժմ Թիֆլիս էր եկել մի քանի դրամատէրերի հետ բանակցելու և կնոջն ու մօրն ամառանոց փոխադրելու նպատակով։ Թիֆլիս հասած օրը երկաթուղու կայարանում հանդիպելով Վահանին, թռուցիկ կերպով պատմել էր նրան իր գործերի դրութիւնը և այդ գործերն ընդարձակելու մտադրութիւնը. յետոյ յիշելով, որ Վահանը փող ունի, սկզբում կատակով, ապա լրջօրէն առաջարկել էր նրան, որ միանայ իր հետ և միասին աշխատեն ապագայ ընկերութեան հիմքը դնելու։ Այդ բանը նստել էր Վահանի խելքում, և նա թողել էր այդօր գիւղ վերադառնալու մտադրութիւնը, որպէսզի մանրամասնօրէն ծանօթանայ գործերին և լրջօրէն խորհրդակցի փեսայի հետ։ Սանթրոսեանն իր հետ բերել էր հանքերի զանազան նմուշներ, որոնք թափուած էին սեղանի վրայ, և այդ բոլորը մի առ մի ցոյց էր տալիս Վահանին ու բացատրում։

Մանէն ճաշասենեակից ականջ էր դնում ամուսնու և եղբօր խօսակցութեանը և շատ

ուրախ էր, որ նրանք ամէն օր զբաղուած են իրենց գործով և մի առանձին ուշադրութիւն չեն դարձնում իր վրայ։ Ամուսնու անակնկալ վերադարձից յետոյ նա այն դրութեան մէջ էր զգում իրեն, ինչ դրութեան մէջ որ, անշուշտ, զգում է իրեն յանկարծ ծուղակն ընկած թռչունը։ Սկզբում նա սարսափեց, երբ եղբօրն ամուսնու հետ տեսաւ, բայց Վահանը փեսայի ներկայութեան ժամանակ քրոջ հետ վարւում էր այնպէս, որ կարծես ոչինչ չգիտէր Մանէի գաղտնիքից և նրա հետ ոչ մի ընդհարում չէր ունեցել։ Վահանի գործադրած այդ տակտը բաւական հաշտեցրեց Մանէին եղբօր հետ։ Ինչ վերաբերում է Սանթրոսեանին, նա մի առանձին բան չնկատեց կնոջ մէջ, բացի միայն այն բանից, որ Մանէն բաւական նիհարել էր։

Զաքարը չգիտէր, որ Սանթրոսեանն եկել է, և, երբ Օսանն ասեց նրան որդու գալուստը, նա ուրախութիւնից մոռացաւ Հեղինէի հետ ունեցած վրդովեցուցիչ խօսակցութիւնը և ճաշասենեակից անմիջապէս անցաւ հիւրասենեակ։ Օսանը հետևեց նրան, իսկ Մանէն մնաց ճաշասենեակում։

Սանթրոսեանը ծերունուն ընդունեց շատ սիրալիր կերպով և կատակով յանդիմանեց նրան, որ այդպէս ուշ է գալիս իր գալուստը ողջունելու։ Զաքարն երդում-կրակ ընկաւ, թէ չէր իմանում, որ նա եկել է, թէ

չէ, որ իմանար... Ծերունին սկսեց հաւատացնել, թէ ո՛ր աստիճան սիրում ու յարգում է Սանթրոսեանին, թէ որքան երախտապարտ է նրան...

—Լաւ, այդ թողնենք,—շտապեց ընդհատել նրան Սանթրոսեանը:—Դուք ինձ այս ասացէք՝ ինչպէս էք, ինչպէս չէք: Էլի խռո՞վ էք ձեր եղբօր որդու հետ:

Ծերունին նոր յիշեց, թէ որտեղից էր եկել, և նրա աչքերի ուրախութիւնը յանկարծ փոխուեց տխրութեան: Նա գլուխը խոնարհեց կրծքին և խորը հառաչեց:

—Եղբօրս որդին մեռնում է,—ասաց նա:

—Բա՛, ինչ ես ասում, Աշոտը՞,—գրեթէ ճչաց Օսանը շանթահար:

Նոյն վայրկեանին ճաշասենեակից լսուեց ինչ-որ մի չրխկոց, որից յետոյ հիւրասենեակում տիրեց խորհրդաւոր լռութիւն:

—Բան կոտրուե՞ց,—հարցրեց Զաքարը, գլուխը կամաց բարձրացնելով:

Վահանը վերկացաւ, արագ քայլերով անցաւ, նայեց դրան շեմքից դէպի ճաշասենեակ և տեսաւ Մանէին, որ նստած էր սեղանի մօտ քարացած և մեռելի պէս գունատ: Նրանց հայեացքները հանդիպեցին իրար: Մանէն ձեռքերով պինդ բռնել էր սեղանի ծայրից, նայում էր նրան անմիտ, չռուած աչքերով և կարծես թէ հարցնում էր. «Այս ինչ է, տունը շարժւում է...»:

—Ի՞նչ պատահեց,—հարցրեց Սանթրոսեանը իր հանգիստ ձայնով:

Վահանը ետ դարձաւ:

—Ոչինչ: Մանէն էր: Բաժակ ընկաւ ձեռքից կոտրուեց:

Զաքարը ծանրօրէն երերեց գլուխը:

—Վատ նշան է... շատ վատ նշան է,—արտասանեց նա:

—Սպասիր, պարոն Զաքար, ինչպէս թէ մեռնում է,—հարցրեց Վահանը, խիստ հետաքրքրուած ծերունու հաղորդած անակընկալ նորութիւնից:

—Դէ մեռնելն ինչպէս կըլինի, որդի. մեռնում է, էլի: Այս րոպէիս նրա մօտից եմ գալիս: Ոչ ուշք կայ գլխին, ոչ բան: Հանգել գնացել է: Հետը խօսեցի, չճանաչեց:

—Բա, ինչի՞, ինչ է պատահել,—սկսեց հարցուփորձ անել Օսանը կանանց յատուկ ցաւակցական հետաքրքրութեամբ:

—Չեմ իմանում, Օսան ջան: Ես էլ պատահմունքով իմացայ: Նա ինձ ե՞րբ էր բանի տեղ դնում, որ ժամանակին իմաց տար: Որ իմաց տար, երևի մի բան կանէի, որ անտէր չմնար: Թէ չէ, հիմի ո՞վ է նրան մտիկ տուողը: Մի ծառայ ունի, մէկ էլ հրէն էն թուրքն է գնացել կողքին նստել:

—Ի՞նչ թուրք:

—Սոլիկենց Ստեփանի աղջիկը, աննամուսների աննամուսը: Թուրք, թուրքից էլ վատթար... Ասում եմ մեռնում է, տէրտէր

կանչենք, պայ հաղորդի։ Տէրտէրս ո՞րն է, հաղորդս ո՞րն է, ասում է։ Բաս, ասում եմ, հոգին։ Ուզում ես, որ մեղաւոր հոգով գնայ Աստծու անեղ դատաստանի առաջը կանգնի։ Ի՞նչ դատաստան, ինչ հոգի, ասում է։ Հոգին մարմինն է. մարմինը մեռաւ, ասում է, հոգին էլ մեռաւ։ Պըծաւ գնաց։

Բաղամեանի ծանր հիւանդութեան լուրը մի առանձին տպաւորութիւն չգործեց Սանթրոսեանի վրայ։ Թէև Բաղամեանը. իբրև հեռու-մօտիկ ազգական, նրա տուն գնում-գալիս էր յաճախ, բայց Սանթրոսեանը, թէ ամուսնութիւնից առաջ և թէ յետոյ մեծ մասամբ բացակայ լինելով Թիֆլիսից, միջոց չէր ունեցել այնպիսի մօտիկ յարաբերութիւն հաստատելու նրա հետ, ինչպէս մայրն ու կինը։

Վահանը թէև աշխատում էր արտաքուստ անտարբեր ձևանալ և նոյն իսկ այն ժամանակ, երբ Զաքարը խօսում էր Հեղինէի մասին, աչքով էր անում Սանթրոսեանին և աշխատում էր ժպտալ, բայց և այնպէս մի տարօրինակ անհանգիստ դրութեան մէջ էր. մերթ նստում էր, մերթ վեր էր կենում, ման էր գալիս սենեակում, և նրա ամբողջ ուշադրութիւնը ճաշասենեակի կողմն էր։ Յետոյ նա դուրս գնաց այնտեղ և, սեղանի վրայից խոնարհուելով դէպի քոյրը, շշնջաց.

—Աստուածդ սիրես, Մանէ, ուշքդ հաւաքիր։ Այդպէս չի կարելի։ Երեսիդ գոյն

չկայ։ Ծերունին, երևի, չափազանցնում է։ Այնպէս արա, որ բան չնկատուի։

Մանէն նստած էր արձանացած, մեծ-մեծ աչքերով նայում էր եղբօրը, և նրա անմիտ հայեացքից երևում էր, որ չէր հասկանում, թէ ինչ է ասում Վահանը։

Վահանն իր ձեռքով մի բաժակ թէյ լցրեց, դուրս տարաւ և դրեց Զաքարի առաջ։

—Այն թուրքի դատաստանը որ քեզ տան, պարոն Զաքար, ինչ կանես,—հարցրեց նա, նստելով ծերունու մօտ։

—Ես ինչ դատաստան անող եմ, որդի։ Աստծուն հայհոյողի դատաստանն Աստուած պէտք է անի։ Եւ կանի, կըտեսնես, որ կանի։

Օսանը վեր կացաւ և դուրս գնաց հարսի մօտ։

—Բա, իմացա՞ր ինչ ասեց Զաքարը։

Մանէն գլխով դրական պատասխան տուեց, կարծես զրկուած խօսելու ընդունակութիւնից։

Օսանն այն աստիճան ազդուած էր ծերունու հաղորդած անսպասելի նորութիւնից, որ չնկատեց հարսի տարօրինակ դրութիւնը։ Նա շարունակ ախ ու վաշ էր քաշում, և նրա ջրակալած աչքերն արտասուքի առատ կաթիլներ էին թափում ներքև։

Մանէն նստած էր հանգիստ, անմիտ հայեացքով նայում էր սկեսրոջ այտերի վրայով գլորուող արտասուքի կաթիլներին, լսում էր նրա երկար ու բարակ վշտահար

խոսքերը և ամենևին ձայն չէր հանում։ Նրան թվում էր, թէ վերացել է աշխարհից, կորցրել է մտածելու և զգալու ընդունակութիւնը և ամեն բան, ինչ որ տեսնում է ու լսում, կատարւում է մի ծանր մղձաւանջի մէջ։

Զաքարը չկարողացաւ երկար մնալ Սանթրոսեանի մօտ. մինչև անգամ ձեռք չտուեց թէյի բաժակին և վեր կացաւ։

—Գնում եմ տէրտէր տանեմ։ Չեմ թողնիլ, որ ջահէլ հոգին կորչի։ Ես դուրս կտանեմ այն թուրքին, դուրս կանեմ։ Ի՞նչ բան ունի, որ ներս է խծկուել։

Ծերունին ամբողջապէս դողում էր յուզումից, և դուրս գնալիս տարօրինակ կերպով առաջ էր ընկել նրա սպիտակ գլուխը։

Ճաշասենեակում նրան բռնեց Օսանը։

—Ո՞ւր ես գնում։

—Գնում եմ տէրտէր տանեմ, այն թուրքին էլ դուրս անեմ։

—Սպասիր, ես էլ եմ գալիս։

Օսանը շտապով դուրս գնաց հագնուելու, իսկ ծերունին նստեց սեղանի մօտ, Մանէի դիմաց, և սպասում էր նրան։

—Նա ջահէլ էր, մեղքեր շատ էր գործել, շա՜տ։ Ո՞վ ջահէլ ժամանակը մեղքեր չի գործում։ Բայց որ հայ-քրիստոնեան մեռնելիս չհաղորդուի, էլ ի՞նչ երեսով պէտք է գնայ կանգնի Աստծու դատաստանի առաջ։ Մեր աշխարհային դատաստանը չէ, է՜, որ խա-

բես. Աստծու դատաստանն է, վերջին դատաստանը, ահե՜ղ դատաստանը...

Մանէն նայում էր ծերունուն, լսում էր նրան և անհուն ցանկութիւն էր զգում գլուխը դնելու սեղանի վրայ և լալու, լալու, յաւիտեան լալու։

Օսանը վերադարձաւ քիշմիրի սև շալը ծածկելով ուսերին։ Շտապելուց նրա ձեռքերը դողում էին, իսկ գլուխը սովորականից աւելի խիստ կերպով էր շարժւում։

—Մանէ ջան,—ասաց նա,—բան է, որ տեսնեմ շատ վատ է, կըմնամ, չեմ գալ այս գիշեր։

Մանէն քիչ էր մնում վեր թռչէր տեղից և աղաղակէր՝ «Ես էլ եմ գալիս...», բայց նա տեղնուտեղը քարացաւ, որովհետև այդ միջոցին հիւրասենեակից դուրս եկաւ ամուսինը Վահանի հետ։

—Մայրիկ, դու էլ ես գնո՞ւմ,—հարցրեց Սանթրոսեանը։

—Բա ի՞նչ անեմ, որդի։ Ես էլ որ չգնամ, ո՞վ պէտք է մտիկ տայ այն անտէր-անտիրական որբին։ Զարմանամ նրա մօր ոսկորները, ո՞նց որ չորացել են...

—Օրիորդ Սոլիկեանը նրա մօտ է, ասում է։

—Ի՛հ, հողեմ նրա լպստած գլուխը։ Զաքարը խօ սուտ չի ասում։ Լաւ աղջիկը ի՞նչ գործ ունի ջահէլ տղի մօտ։ Նա ո՞վ, նա ո՞վ...

—Խե՜ղճ մայրիկ,—ասաց Սանթրոսեանը, երբ մայրն ու Զաքարը դուրս գնացին.—

մի հեռաւոր ազգականի համար որ այդքան վշտանում է, հապա ի՞նչ պիտի անի, որ ես լինիմ մեռնելիս։ Այն ո՞ր բանաստեղծն է, Մանէ, որ ասում է. «Ես մի՛ արցունք միայն տեսայ իսկական,—այն մօր արցունքն էր անզուգական»... Բայց ի՞նչ է պատահել քեզ. երեսիդ գոյն չկայ։ Հիւա՞նդ ես։

Մանէն ցնցուեց և ձեռքով շփեց ճակատը։

—Չգիտեմ... Բաժակը... Կարծեմ վախեցայ,—արտասանեց նա կամաց։

—Զարմանալի արարածներ էք այս կանայք,—բացականչեց Վահանն ուրախացած, որ Մանէն կարողացաւ պատրուակ գտնել իր դրութեան իսկական պատճառը ծածկելու ամուսնուց։—Բաժակ կոտրուի՝ կըվախենան, մուկ վազի՝ կըվախենան։ Բան չկայ, սիրելիս. վերկաց մի քիչ ջուր խմիր, կանցնի։ Վերկաց։

Մանէն տեղից անգամ չշարժուեց։

—Դէ, վերկաց, մի յամառիր,—խնդրեց Սանթրոսեանը։

Մանէն կամաց վերկացաւ և անհաստատուն քայլերով դուրս գնաց։

Վահանն այժմ մտածում էր, թէ ինչպէս անի, որ Սանթրոսեանին հեռացնի տնից։ Սակայն Սանթրոսեանն ինքը յայտնեց, որ այդ երեկոյ ժամը 8-ին ժամադիր է եղել մի դրամատէրի հետ և գնալու է նրա մօտ։

—Այժմ արդէն ութին մօտ է,—ասաց նա,

նայելով ժամացոյցին։—Խնդրում եմ մնացէք Մանէի մօտ, իսկ ես կաշխատեմ շուտ գալ։

Վահանը մնաց։ Սակայն շուտով տեսաւ, որ իր ներկայութիւնն աւելորդ էր, որովհետև հէնց այն րոպէին, երբ ուզում էր յորդորել քրոջը, որ զգոյշ մնայ, Մանէն վճռականօրէն խնդրեց, որ իրեն հանգիստ թողնի։

Եւ Վահանը հանգիստ թողեց Մանէին, առաջուայ փորձերից խրատուած։

XIX

Գիշերը կամաց-կամաց մօտենում էր։ Մութ ստուերներն աննկատելի կերպով դուրս էին սողում սենեակների անկիւններից, սեղանների, աթոռների տակից, իջնում էին առաստաղից, բարձրանում էին յատակից, միախառնւում էին իրար հետ, թանձրանում և կլանում առարկաները։ Եւ որքան ժամանակն անցնում էր և մութը թանձրանում, այնքան Մանէն զգում էր, որ ուղեղի մէջ ցցուած է ինչ-որ մի բան և դուրս չի գալիս այնտեղից։ Յետոյ միայն իմացաւ, որ այդ բանը սկեսրոջ խօսքերն էին՝ «որ տեսնեմ շատ վատ է, կըմնամ, չեմ գալ այս գիշեր»։ «Կըգա՞յ արդեօք, թէ ոչ»; մտածում էր Մանէն և սպասում։ Ժամանակն անցնում էր սպանիչ դանդաղութեամբ։ Ամայի սենեակներում, գիշերային անդորրութեան մէջ ականջները թշշում էին։ Քարացած օդը

լցուած էր ինչ-որ մրմունջով անըմբռնելի, խորհրդաւոր և ահաւոր, մեռնողի վերջին շունչի պէս։

Մանէն դուրս գնաց պատշգամբ։

Հսկայաշէն տների ետևից քաղաքի գլխաւոր փողոցն ուղարկում էր իր գեհեն եռուն կեանքի խուլ աղմուկը, որ գալիս էր մեռնելու այստեղ, այս խաղաղ փողոցում։ Դիմացի տան պատուհանները լուսաւորուած էին պայծառ։ Ներսը, ասեղնագործ վարագոյրների ցանցի ետևը կանանց և տղամարդկանց ստուերներ էին շարժւում և երբեմն-երբեմն շատ պարզորոշ լսւում էին նրանց խօսակցութեան և ծիծաղի ձայները։ Դաշնամուրի և ջութակի ներդաշնակ ձայների մի ամբողջ հեղեղ էր դուրս հոսում այդ պատուհաններից, մերթ ուրախ ու բուռն՝ զօրահանդէսի եկած զինուորների աղաղակի պէս, մերթ տխուր ու թախծալի, ինչպէս թաղման նուագածութիւն։ Ջութակը լեզու էր կարուել. խօսում էր, աղերսում, լալիս էր յուսահատ հեկեկանքով,—թւում էր, թէ մեռնում էր և փրկութիւն հայցում. իսկ դաշնամուրը, անհուն վիշտը սեղմած կրծքի մէջ, կարծես թէ աղօթք էր մրմնջում մեռնողի վրայ իր պեդալի խուլ ձայներով...

Մանէն զգաց, որ ինչ-որ մի բան կամաց-կամաց բարձրանում է իր սրտի խորքից և բռնում է բուկը։ Նա նստեց և տաքացած ճակատը սեղմեց պատշգամբի երկաթեայ սեան

վանդակի վրայ։ «Մեռնում է,—մտածում էր նա։—Ինչո՞ւ, ինչ է պատահել... Կարելի բա՞ն է այդ... Ո՞ւմ պատճառով... Մի՞թէ իմ... մի՞թէ ինձ համար...»։

Մի բարձրաձայն խմբական քրքիջ ուշքի բերեց նրան։ Նա գլուխը բարձրացրեց և մեքենայաբար նայեց դիմացի տան ճրագավառ պատուհաններին։ Դաշնամուրը լռել էր, իսկ ջութակը նախկին վշտահար հեծկլտանքի տեղ այժմ ինչ-որ անսանձական ձայներ էր հանում. մերթ խրխնդում էր խոզի պէս, մերթ մլաւում կատուի պէս, մերթ ծւծւում մկան պէս...

Մանէն վեր կացաւ, ներս մտաւ և անցաւ ներքին սենեակները, որպէսզի չլսի այդ անտանելի ձայները։

Սկեսուրը վերադարձաւ։ Այդ բանը, ուրախացնելու տեղ, զարմացրեց Մանէին. նա կարծես թէ վճռել էր, որ այդ գիշեր Բագրամեանը պիտի մնէր անպատճառ, հետևաբար Օսանը պիտի մնար նրա մօտ նրա աչքերը փակելու։

Սկեսուրը սաստիկ բարկացած էր· Հեղինէն չէր թողել, որ նա մնայ հիւանդի մօտ, ասելով, որ պառաւի ներկայութիւնն աւելորդ է և խանգարել միայն կարող է, ուստի նրան էլ, Զաքարին էլ պարզապէս դուրս էր արել։ Տէրտէրին անգամ ուզում էր ներս չթողնել, բայց քաշուեց։ Իսկ հիւանդի դրութիւնը շատ վատ էր. հաղորդութիւնն ըն-

դանելիս ամենևին ուշք չկար գլխին: «Չէ, չի լուսացնիլ այս գիշեր», — վերջացրեց իր պատմութիւնն Օսանը:

«Չի լուսացնիլ այս գիշեր»,—այս խօսքերն ընկան Մանէի ուղեղը և այնուհետև երկար ժամանակ պտտւում էին այնտեղ, լարուած մեքենայի անուի պէս: Խիստ անհանգիստ դրութեան մէջ, նա չէր իմանում ինչ անի, ինչ մտածի. մերթ նստում էր, մերթ վեր կենում, նորից նստում, բաց էր անում որևէ գիրք, բայց, առանց մի բառ անգամ կարդալ կարողանալու, նորից վեր էր կենում, ման գալիս, և ամբողջ ժամանակ նրա միտքը կրկնում էր մեքենայօրէն՝ «չի լուսացնիլ այս գիշեր...»: Այդ միջոցին նա ոչինչ չէր զգում. զգում էր միայն, որ սպասում է ինչ-որ մի բանի և այդ սպասողութիւնը հետզհետէ փոխւում է ջղային անհամբերութեան: Յետոյ պարզապէս տեսաւ, որ սպասում է, թէ երբ պիտի քնի սկեսուրը:

Երբ, վերջապէս, սկեսուրն առանձնացաւ իր ննջարանը, մի տարօրինակ երկիւղ պաշարեց Մանէին: Անշարժ կանգնած, նա կարճ ժամանակ ուշի ուշով ականջ էր դնում դէպի նախասենեակը, և ամեն մի շշիւն արագ զարկել էր տալիս նրա սիրտը: Յետոյ կամաց հանեց գլխի ամառուայ թեթև ծածկոցը, ծածկեց այնպէս, որ միայն աչքերն էին երևում և զգուշօրէն, կարծես մի բան գողացած, դուրս եկաւ:

Առաջին երկու փողոցն անցաւ գրեթէ վազելով. յետոյ զգալով, որ ծնկները ծալւում են և շունչը հազիւ է հա բերում, կառք նստեց:

Մի տասն րոպէից կառքը կանգ առաւ Բաղամեանի բնակարանի առաջ:

Դուռը ներսից փակ չէր: Նա ուշադրութիւն չդարձրեց այդ բանի վրայ, արագօրէն բարձրացաւ սանդուղքով, որի ժամանակ ոտներն ամեն քայլափոխին խճճւում էին շրջազգեստի փեշերի մէջ, և մտաւ առաջին սենեակը: Այստեղ, գրասեղանի վրայ, կանաչ լուսամփոփի տակ վառւում էր լամպը և մի մոմ բրոնզեայ մոմկալի մէջ: Պատուհանի տախտակի վրայ դրուած էր կանացի մի փեղոյր: Սենեակում ոչոք չըկար: Հարևան սենեակի դուռը կիսաբաց էր: Այնտեղից ոչ մի շշուկ չէր լսւում:

Մանէն կամացուկ բաց արաւ այդ դուռը, ներս մտաւ և կանգ առաւ ակամայ. զարհուրած սենեակում լսուող մի տարօրինակ շնչառութիւնից և մանաւանդ կիսախաւարից, որպիսին լինում է սովորաբար մեռնողի սենեակում գիշեր ժամանակ:

Սենեակի մի անկիւնում դրուած էր հիւանդի մահճակալը: Գլխավերը, մահճակալի ետևը, կլոր սեղանի վրայ վառւում էր մի ցածլիկ մոմկալ սև մարմարէ պատուանդանով: Ճրագը լուսաւորում էր միայն մահճակալի ետևը և մնացած փայլ էր տալիս պա-

ափի պատառի ոսկեզօծ նկարներին: Մահճակալի կողքին, բարձի մօտ, դրուած էր հասարակ կլորիկ սեղան, որի վրայ դարսուած էին դեղերի սրուակներ և ճկճկում էր Բաղամեանի ծոցի ժամացոյցը:

Զգալով, որ արիւնը սառում է երակների մէջ, Մանէն ոտների մատների վրայ մօտեցաւ հիւանդին և խոնարհուեց նրա դէմքի վրայ: Բայց այդ դէմքը պարզ նշմարել չկարողացաւ սենեակում տիրող կիսախաւարի մէջ: Այն ժամանակ առաւ մոմկալը և, գլխից բարձր բռնած, սկսեց դիտել Բաղամեանի դէմքը:

Հիւանդի աչքերը փակ էին. երեսն ալկարմիր էր կտրուել. շնչում էր ծանր ու հատու, և երբեմն չոր հազի շատ թոյլ ձայներ էին դուրս թռչում նրա բաց բերանից: Երկայն փափուկ մազերն անկարգ խոպոպիկներով շաղ էին անցել բարձի վրայ: Մանէն առաւ նրա ձեռքը և իսկոյն բաց թողեց — այնքան տաք էր ու չոր:

— Բաղամեան, — շշնջաց նա:

Հիւանդը չլսեց: Նա պառկած էր անշարժ. շնչում էր ոչ թէ քթով, այլ բաց բերանով, և այդ շունչը դիպչում էր Մանէի երեսին բաղանիքի գոլորշու պէս խոնաւ ու տաք:

— Բաղամեան, — կրկնեց Մանէն, աւելի ևս խոնարհուելով հիւանդի դէմքի վրայ: — Բաղամեան... Չե՞ս լսում.

Հիւանդի աչքերն այս անգամ բացուեցին.

ծանրօրէն, աւտոմատի աչքերի պէս, և, փոխանակ Մանէին նայելու, նայեցին ճրագի լոյսին ու նորից փակուեցին նոյն ծանրութեամբ:

Մանէն սոսկաց: Այդ աչքերը... այդ հայեացքը... անգիտակից, զգայազուրկ, ֆոսֆորային հայեացքը... Մի՞թէ արդէն մեռնում է... Մանէն մեքենայաբար նայեց չորս կողմը, կարծես ուզում էր օգնութիւն աղաղակել, բայց սենեակում, բացի իրենից և հիւանդից, ուրիշ ոչոք չկար: Նոր յիշեց, որ Հեղինէն այդտեղ պիտի լինէր, բայց նա չկար: Ծառան ևս չէր երևում: Մանէն նորից խոնարհուեց հիւանդի դէմքի վրայ, նորից սկսեց կանչել նրան, բայց Բաղամեանի աչքերն այլ ևս չբացուեցին: Հիւանդը պառկած էր առաջուայ պէս անշարժ և առաջուայ պէս շնչում էր կիսաբաց բերանով ծանր ու հատու: Հիւանդութիւնը միանգամայն փոխել էր նրա դէմքը. դա կարծես Բաղամեանը չէր, այլ բոլորովին անծանօթ մի մարդ խոր ընկած աչքերով, դուրս ցցուած այտոսկրներով և սուր քթով, որը պլպլում էր մահուան դեղնութեամբ:

Մանէն մոմկալը դրեց առաջուայ տեղը և նստեց մահճակալի մօտ դրուած աթոռի վրայ: «Սա երազ է... անշուշտ երազ է, — մտածում էր նա մեքենայաբար: — Մեռնել... ինչի՞ց... ինչո՞ւ համար... այսպէս յանկարծ... այսպէս անակնկալ...»: Նա նայ-

հացքը յառել էր հիւանդի փակ աչքերին, որոնք կիսախաւարի մէջ թւում էր թէ փակ չէին, այլ բաց էին և խոռոչները, ամբողջովին սև ու դատարկ, նայում էին առաստաղին ինչ-որ անհարկու խորհրդաւորութեամբ:

Հիւանդը տնքաց, շարժուեց, ձեռքերով ետ քաշեց վերմակը կրծքից և, խիստ տաքութեան մէջ, սկսեց զառանցել: Մանէն ցընցուեց և լարեց իր ամբողջ լսողութիւնը, բայց հիւանդի զառանցանքից ոչինչ չհասկացաւ: Անկապ խօսքեր էին միայն, որ դուրս էին գալիս հիւանդի բերանից կիսատ կամ աղաւաղուած, ինչպէս լեզուն կապուած անդամալոյծի արտասանած բառեր: Մէջ ընդ մէջ նա լեզուի ծայրով լպստում էր շրթունքները և բերանը շարժում տարօրինակ ձևերով, կարծես բերանում ատամներ չունէր և այդ անատամ բերանով ինչ-որ փափուկ բան էր ծամում: Այնուհետև հիւանդը հանդարտացաւ և նորից առաջուայ դրութեան մէջ ընկաւ:

Մանէն գամուել էր աթոռի վրայ: Նա պարզ հաշիւ չէր կարողանում տալ իրեն, թէ ինչո՞ւ եկաւ, ի՞նչ պիտի շինի այդտեղ, ի՞նչ է իր դերը: Բնազդմամբ միայն հասկանում էր, որ այդտեղ, իր կողքին պատրաստւում է ինչ-որ խիստ կարևոր մի բան, որին ինքը ներկայ պիտի լինի, չի կարող ներկայ չլինել, որովհետև այդ բանը որ կատարուի, դրանով վճռուած կըլինի իր հա-

մար ահագին նշանակութիւն ունեցող մի խնդիր՝ կեանքի և մահու չափ ահագին ու կարևոր:

Այժմ նա հանգիստ էր: Կամաց-կամաց նրան պատում էր միտքը թմրեցնող, զգացումները բթացնող այն անզօրութիւնը, որ պատում է մահապարտին իր անխուսափելի վախճանին սպասելիս: Նա ետ էր ընկել աթոռի մէջքին և անմիտ հայեացքով դիտում էր իր սեպհական ստուերը, որ խաղում էր դիմացի պատի վրայ ետեից լուսաւորող մոմի երերուն լոյսից: Ծոցի ժամացոյցը ճկճկում էր սեղանի վրայ անդուլ ու անտարբեր:

Հարևան սենեակից ինչ-որ շտապ քայլերի ձայներ լսուեցին, և նոյն րոպէին ներս մտաւ Հեղինէն արագ ու զգուշօրէն: Որովհետև մոմը լուսաւորում էր Մանէի ետևից, այդ պատճառով Հեղինէն իսկոյն չկարողացաւ որոշել, թէ ով է նստած հիւանդի մօտ. բայց երբ մօտեցաւ և տեսաւ, որ Մանէն է, զարմանքից մի զսպած ճիչ արձակեց ակամայ:

— Մանէ... ի՞նչ ես շինում այստեղ, — շշնջաց նա:

Մանէն իր մեծ-մեծ սառած աչքերով նայեց նրան և ոչինչ չպատասխանեց:

Հեղինէն յանկարծ դարձաւ դէպի հիւանդը, խոնարհուեց նրա դէմքի վրայ և սկսեց ականջ դնել նրա շնչառութեանը. յետոյ բըռնեց Մանէի ձեռքից, նշանացի հասկացրեց

նրան, որ վեր կենայ, և դուրս տարաւ հա-րևան սենեակը:

—Ինչո՞ւ ես եկել, ո՞վ ասաց, որ գաս,—շշնջաց նա, դուռը զգուշօրէն ետ դնելով:

Մանէն շարունակում էր նայել նրան իր սառած աչքերով. պարզ երևում էր, որ նրան բոլորովին այլ միտք էր զբաղեցնում, և նա չէր լսում, թէ ինչ է հարցնում ընկերուհին:

—Մեռնում է, չէ՞,—հարցրեց նա տարօ-րինակ հանգիստ ձայնով:

—Ո՞վ ասաց քեզ, թէ մեռնում է,—բացա-կանչեց Հեղինէն զայրացած:— Այն յիմար պառաւնե՞րը: Եւ դու գլուխդ կորցրած վա-զել ես այս կէս-գիշերին: Եւ, երևի, թա-գուն... Հա՞:

Մանէն չպատասխանեց:

—Լսիր, քեզ հետ եմ, ի՞նչ ես լռում... Ամուսինդ գիտէ՞, որ այստեղ ես:

—Ոչ:

—Բայց որ իմանա՞յ:

—Ի՞նչ անեմ,—ասաց Մանէն, անփութօ-րէն թոթուելով ուսերը:—Չիմանայ էլ, ես ինքս կը յայտնեմ,—աւելացրեց նա:

Հեղինէն, վերին աստիճանի ապշած, ձեռ-քերը զարկեց իրար:

—Մանէ, գժուե՞լ ես... Հասկանո՞ւմ ես ինչ ես ասում...

Մանէն նստեց: Զարմանալի անդորրու-թիւն էր տիրում նրա բոլոր շարժումների և հայեացքի մէջ:

—Այժմ ինձ համար ողջ մէկ է, — ասաց նա, շարունակ տարուած իր ներքին մտքե-րով:—Յիմարութիւն է... Բոլորը յիմարու-թիւն է...

Հեղինէին թուաց, թէ երազի մէջ է լսում այդ խօսքերը Մանէի բերանից: Ինքը, որ թէորիայով այնքան համարձակ մտքեր էր յայտնում ամուսնական կապի և ազատ սի-րոյ մասին և այնքան ծաղրում էր Մանէի հայեացքները, այժմ մնացել էր ապշած և շփոթուած նոյն այդ Մանէի առաջ, որովհե-տև այստեղ թէորիա չկար, այլ կանգնած էր ինքը մերկ իրականութիւնը, սոսկալի իր պարզութեամբ, անհոգութեամբ և արհամար-հանքով:

—Մանէ, լսիր ինչ եմ ասում,—ասաց նա առնելով ընկերուհու ձեռքերը:—Աղաչում եմ, վերկաց գնա: Աստուած է վկայ, դու քեզ կը-կործանես: Գնա: Դեռ ես վաղ է: Եթէ հարց-նեն, ասա ինձ մօտ էիր, մեր տանը: Չէ, չէ. ձերոնք գիտեն, որ այստեղ եմ: Ասա որ... մի խօսքով—հնարիր՝ ինչ ուզում ես, միայն մի ասիր, որ այստեղ էիր... Լսո՞ւմ ես, լը-սո՞ւմ ես, Մանէ ջան: Իսկոյն ծառային կա-սեմ, որ կառք կանչի:

Եւ, առանց սպասելու Մանէի պատասխա-նին, նա շտապով դուրս գնաց, բայց իսկոյն էլ վերադարձաւ:

—Զարմանալի է, մի՞թէ ծառան դեռես չի

վերադարձել. ես նրան մեր տուն ղրկեցի, որ...

—Անհոգ է,—ընդհատեց նրան Մանէն նոյն հանգիստ ձայնով.—այս գիշեր ես պէտք է մնամ այստեղ։

—Ինչո՞ւ համար։

—Հէնց այնպէս։

—Ի՞նչպէս թէ՝ այնպէս։

—Որովհետև ես այդպէս եմ ուզում։

—Մանէ, մի՛ յամառիր։ Աղաչում եմ, մի՛ յամառիր։ Դա քաջութիւն չէ, դա խելացնորութիւն է։ Ճիշտ է, Բագամեանի դրութիւնը լաւ չէ, բայց, հաւատացնում եմ քեզ, ոչինչ չի պատահիլ։ Բժիշկն այս երեկոյ այստեղ էր. ասաց, որ նրա առողջ կազմուածքը կըյաղթէ։ Վերջապէս, ես էլ մի բան հասկանում եմ, թէ ոչ։ Թոքերի պարզ բորբոքում է, որ առաջացել է մրսելուց և անզգոյշ մնալուց. ուրիշ բան չկայ։ Չես հաւատո՞ւմ ինձ։

—Երեխա՞յ եմ, ինչ է, որ ուզում ես խաբել։ Ես տեսայ նրա աչքերը. նա արդէն մեռած է... Ես կանչեմ նրան, և նա չլսի՞ ինձ... նա նայի ինձ, և չճանաչի՞...

Մանէի ձայնը դողաց, նա շրթունքները պինդ սեղմեց իրար և կուլ տուեց հեծկլտանքը։ Աչքերն առատօրէն լցուեցին արտասուքով։

—Այսքան ժամանակ ես չարչարեցի, տանջեցի նրան... չարչարեցի, տանջեցի և ինձ,—

շարունակեց նա դողդոջուն ձայնով։—Ինչո՞ւ համար, մէկ հարցնող լինի, ինչո՞ւ համար։ Որ նրան և նրա հետ ինձ այս օրին հասցրնեմ... Ես կարծում էի, թէ միայն ինձ եմ զոհաբերում, մինչդեռ... Պարտականութիւն՝ ասում էի ինձ, սրբազան ուխտ՝ ասում էի ինձ։ Բայց, ահա, թող գան և ազատեն ինձ այս յուսահատութիւնից այդ պարտականութիւնն ու սրբազան ուխտը։ Ո՞ւր են, թող գան։ Թող գան և համոզեն ինձ այժմ, որ նրա մահը ոչինչ է ինձ համար, որ վաղը, միւս օրը նրան գերեզման կըդնեն, իսկ ես, այնուամենայնիւ, կարող եմ հանգիստ շարունակել իմ կեանքը... Օ՜, եթէ գիտենայի, թէ այսքան սիրում եմ նրան...

Մանէն թաշկինակը սեղմեց աչքերին և այլ ևս չկարողացաւ զսպել ծանր, խեղդող հեկեկանքը։

Հեղինէն փորձեց նրան հանգստացնել, բայց ի զուր. Մանէի հեկեկանքը գնալով սաստկանում էր։ Հեղինէն, վերջիվերջոյ, դուրս եկաւ համբերութիւնից։

—Այդպէս չի կարելի, վերջապէս,—բացականչեց նա բարկացած։—Հազիւ հազ կարողացայ հեռացնել սկեսուրիդ և այն ծերունուն, որ չխանգարեն, հիմա դու ես եկել և ստիպում ես, որ, հիւանդին թողած, քեզմով զբաղուեմ։ Գլուխս քարովը տուի, որ մնացի։ Չէ՞ք թողնիլ, որ տեսնեմ ինչ եմ անում։ Ամբողջ վեց ժամ է, որ այստեղ եմ,

և մի րոպէ հանգստութիւն չեմ ունեցել. հիմա էլ մօտակայ գիւղաքից հեռախօսով խօսեցի բժշկի հետ, խնդրեցի, որ իսկոյն գայ և մի երկու էլ ուրիշ բժիշկ հրաւիրի կոնսիլիում անելու համար: Վազելով գնացել և վազելով էլ եկել եմ, որովհետև ամեն մի րոպէն թանկ է: Մարդն այնտեղ կռւում է մահուան հետ, և իմ ներկայութիւնն անհրաժեշտ է այնտեղ, իսկ դու ստիպում ես, որ քեզ հետ ժամս թակեմ: Սա ինչի՞ նման է, ասա խնդրեմ: Եւ դեռ ասում ես, թէ սիրում ես նրան...

Այս խօսքերն ազդեցին Մանէին. նա դադարեց հեկեկալուց և նայեց ընկերուհուն շատ խեղճացած:

—Ես քեզ ի՞նչ եմ անում որ,—նկատեց նա:

—Արանից էլ աւելի բան պէտք է անե՞ս. չես թողնում, որ մի րոպէ մնամ հիւանդի մօտ:

—Մտիր. ես քեզ ե՞րբ եմ բռնում:

—Ա՛խ... ինչպէս անեմ, որ քեզ բան հասկացնեմ: Մանէ ջան, հոգի ջան, հասկացիր ինձ. ես չեմ կարող հանգիստ իմ բանս տեսնել, քանի որ դու այստեղ ես:

—Ես քեզ չեմ խանգարիլ, Աստուած է վըկայ, Ելէն, չեմ խանգարիլ. ուզում ես, կըքարանամ նստած տեղս...

—Փա՛ւ, ինչ յամառ և անհասկացող կին ես եղել,—զայրացած նկատեց Հեղինէն և,

պէնս-նէն քթի վրայ ուղղելով, դուրս գնաց հիւանդի սենեակը:

Բժիշկները շատ չուշացան: Ամենից առաջ եկաւ Բաղամեանի անձնական բարեկամ բժիշկը: Նա այն աստիճան մտահոգ էր հիւանդի դրութեան համար, որ գրեթէ ոչ մի ուշադրութիւն չդարձրեց Մանէին: Շուտով հաւաքուեցին և միւս բժիշկները—երեք հոգի: Դրանցից մէկը հայ էր, միւսը հրէայ, երրորդը ռուս զինուորական—բոլորն էլ շտապող և վերին աստիճանի անտարբեր: Հիւանդի վիճակը մի առ մի քննելուց յետոյ չորս բժիշկները նստած էին սեղանի շուրջը և խորհրդակցում էին, որի ժամանակ երկուսը ծխում էին, մէկը մատիտով զանազան նկարներ էր գծում սեղանի վրայ ընկած լրագրի լուսանցքների վրայ և շուտ-շուտ յօրանջում էր, միւսը, զինուորականը, երկու ձեռքով ոլորում էր բեխի ծայրերը, ներքին շրթունքով բարձրացնում էր վերին շրթունքը և ցած նայելով աշխատում էր ինքն իր աչքով տեսնել իր բեխը: Նրանք խօսում էին կէս-ռուսերէն, կէս-գերմաներէն կիսատ-պռատ նախադասութիւններով՝ համեմուած լատինական տերմիններով: Յաճախ դիմում էին Հեղինէին զանազան հարցումներով, որոնց նա պատասխանում էր գերմաներէն, երևի նրա համար, որ Մանէն ոչինչ չհասկանայ:

Եւ Մանէն, յիրաւի, բոլորովին ոչինչ չէր

հասկանում բժշկական այդ խորհրդակցութիւնից, չնայելով որ լարել էր իր ամբողջ լսողութիւնը և աշխատում էր ոչ մի բառ չթողնել ականջից: Հեռու նստած, նա միանգամայն ապշած էր մնացել, թէ ինչպէս այդ մարդիկ կարողանում էին այդ աստիճան անտարբեր լինել, նոյն իսկ ծխել և յօրանջել այն միջոցին, երբ զբաղուած էին իրենց նման մի մարդու կեանքի և մահուան խնդիրը որոշելով: Եւ այդ մարդը հեռու չէր. նա այնտեղ էր, նրանց կողքին, հարևան սենեակում, որի կիսաբաց դռնից լսւում էին նրա չարագուշակ հազի ձայները:

Խորհրդակցութիւնը երկար չտևեց, և երբ բժիշկները գնացին, Մանէն վրայ ընկաւ ընկերուհու ձեռքերին և հարցրեց տենդային անհամբերութեամբ.

—Ի՞նչ որոշեցին...

Հեղինէն, շփոթուած, աշխատեց խլել իր ձեռքերը, բայց Մանէն աւելի պինդ բռնեց:

—Ասա, մի թաքցնիր:

—Նրանք ոչինչ չեն հասկանում,—գայրացած բացականչեց Հեղինէն:—Որոշեցին, թէ... Ես կըհաստատեմ, որ նրանք ոչինչ չեն հասկանում, ոչինչ...

Մանէի ձեռքերը յանկարծ թուլացան. նա ինքն ամբողջապէս կարծես փալաս կտրուեց և կամաց, երերուն քայլերով գնաց նստեց աթոռի վրայ: Նա այլևս ոչինչ չհարցրեց: Եւ ինչ հարկ կար: Ամեն ինչ այժմ պարզ էր:

տեղ փաթաթուել էր նրա երկայն մատնե-
րին, որոնց վրայ երկու մատանի,—մէկը
պարզ՝ նշանի, միւսը թանկագին շողակ-
նեայ,—պլպլում էին մոմերի լոյսերից:

—Մանէ,—կանչեց Վահանը, և նրան թըւաց, թէ այդ իր ձայնը չէր, այլ ուրիշ ձայն, ոչ-մարդկային մի ձայն, որից ինքն էլ սարսափեց:

Մանէն պառկած էր նոյն դրութեան մէջ, անշարժ, և նրա ահարկու դէմքը ծիծաղում էր առաջուայ պէս, լուռ ու քարացած:

—Մանէ,—կրկնեց Վահանը, մեքենայաբար առնելով քրոջ կախ ընկած ձեռքը:

Այդ ձեռքը թոյլ էր փալասի պէս:

Այնուհետև, այլևս չիմանալով թէ ինչ է անում, Վահանը երկու ձեռքով վրայ ընկաւ քրոջ ուսերին և բարձրացրեց նրան: Մանէի գլուխն իր ծիծաղող դէմքով ետ ընկաւ թուլացած և կախ ընկաւ, աւելի ևս երկարացնելով նրա սպիտակ նիհար վիզը:

Վահանը դիակը բաց թողեց թուլացած ձեռքերից: Դիակը վայր ընկաւ, և գլուխը քարի ծանրութեամբ խփուեց փափուկ բարձի մէջ, կզակը դէմ տալով կրծքին:

Մի րոպէ Վահանին թուաց, թէ սենեակը յանկարծ մթնեց և յատակը փախչում է ոտների տակից: Նա պինդ բռնեց մահճակալի գլխից, որ վայր չընկնի:

Նոյն րոպէին, կարծես երազի մէջ, տեսաւ Սանթրոսեանի դէմքը դիակի վրայ խո-

նարհուած և այդ դէմքի վրայ երկու անհագին աչքեր, որոնք կարծես դուրս էին պրծել խոռոչներից և խոշորացած բբերով նայում էին խելագար զարհուրանքով... Յետոյ նրա ականջին դիպաւ վայրենի մի ճիչ և ապա մի խուլ ձայն,—կարծես՝ ինչ-որ ծանր ու փափուկ մի մարմին վայր ընկաւ գորգի վրայ...

Իսկ ծղրիդն այնտեղ շարունակում էր իր անվերջ միապաղաղ ճռինչը՝ միանգամայն անտարբեր դէպի մարդկային կեանքը, որ, անզօր ու անօգ, կարծես յաւիտենական մի անէծքով, փոթորկւում էր ցաւատանջ գալարումներով և կործանւում կրքերի ողբերգական պայքարի մէջ...

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
2002-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գինն է 75 կոպէկ

ՆԱՐ-ԴՈՍԻ

Առանձին գրքոյկներով հրատարակուած
աշխատութիւնները.

1) Սպանուած աղաւնին, վիպակ, գինն է . . 30 կ.
2) Տանտիրոջ աղջիկը, վիպակ, » . 20 »
3) Նորածին մանուկը, պատկեր, » . — 3 »
4) Նեղ օրերից մէկը, պատկեր, » . 10 »
5) Աննա Սարոյեան, վէպ, Ա.
տպագրութիւն, » . 30 »
6) Նոյնը, Բ. տպագրութիւն. » . 25 »
7) Նոյնը, ռուսերէն թարգմ. » . — 25 »
8) Պայքար, վէպ » . — 75 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին

—

1

ՀՀ Ազգային գրադարան
NL0351426

46222